243
7-36

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

2004

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Նուէր

Մխիթարեան

Գրադարանին

[illegible]

[illegible]

6 Հոկ. 1971

[illegible]

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@




digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

243
Պ-36
5094-ար
1238-ևղ

# ՊԱՐՏԷԶ ՀՈԳԵՒՈՐ

ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ
ԶԱՆԱԶԱՆ ՋԵՐՄԵՌԱՆ-
ԴԱԿԱՆ ԱՂՕԹՔ·

Ըստ պատշաճաւորութեան
տեղւոյ և ժամանակի։

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի Վանս սրբոյն Ղազարու։

1823

digitised by A.R.A.R.@

5094-ա

2472-72

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Իւրաքանչիւրոք հաւատարիմ քրիստո-
նեայ ցորժամ յառնէ յանկողնոյ յառա-
ւօտուն՝ պարտի նախ կնքել զինքն նշա-
նաւ ս̅բյ խաչին, ասելով:

# ՅԱՆՈՒՆ ՀՕՐ և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. ամէն:

Եւ յետոյ մատուցանել առ ա̅ծ զա-
ղօթս հետևեալս:

Հայր մեր որ յերկինս ես՝ ս̅բ ե-
ղիցի անուն քո. եկեսցէ արքայ-
ութիւն քո. եղիցին կամք քո որպէս
յերկինս և յերկրի. զհաց մեր հա-
նապազորդ տուր մեզ այսօր. և
թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապա-
նաց. և մի տանիր զմեզ 'ի փոր-
ձութիւն. այլ փրկեա զմեզ 'ի չա-
րէ, զի քո է արքայութիւն և զօ-

digitised by A.R.A.R.@

րութ՟ն, և փառք յաւիտեանս.
Ամէն:

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք, տ՟ր ը՟ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յ՟ս: Սրբուհի մարիամ մայր ա՟յ բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս՝ այժմ, և 'ի ժամու մահուան մերոյ. Ամէն:

Հաւատամ 'ի մի ա՟ծ հայրն ամենակարօղ՝ ստեղծօղն երկնի և երկրի: Եւ 'ի յ՟ս ք՟ս որդի նորա միածին տ՟րն մեր, որ յղացաւ 'ի հոգւոյն ս՟բյ. ծնաւ 'ի մարիամայ կուսէն: չարչարեցաւ ընդ պոնտացւով պիղատոսիւ. խաչեցաւ. մեռաւ. և թաղեցաւ: էջ 'ի դըժոխս: յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց: համբարձաւ յերկինս. նստի ընդ աջմէ ա՟յ հօր ամենակարողի. ուստի գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս: Հաւատամ 'ի հոգին ս՟բ: 'ի ս՟բ կաթուղիկէ եկեղեցին: 'ի հաղորդութ՟ն ս՟բց: 'ի թողութ՟ն մեղաց: 'ի յարութ՟ն մարմնոց: և 'ի կեանս յաւիտենականս. Ամէն:

digitised by A.R.A.R.@

Գոհանամ զքէն տէր իմ և ա՟ծ իմ 'ի բոլորէ սրտէ իմմէ՝ և 'ի բնաւից մտաց իմոց, զի 'ի գիշերիս յայսմիկ արժանի արարեր զիս պահել և պահպանել, ո՛չ յաղագս իմոյ բարեգործութեան, զի իրաւի մեղաւոր եմ ես. այլ վասն քոյոյ մեծի գթութե՟ և բարերարութե՟ ։

Վասն որոյ խոնարհութե՟ աղաչեմ զքեզ. տո՛ւր ինձ զմեծագին շնորհ քո ն՟ր՝ առանց որոյ ոչինչ կարեմ առնել. որպէս զի նովաւ կարիցեմ կառավարել զիս այսօր 'ի փառս քոյոյ ա՟ծայնոյ հանդիսավէհութե՟, 'ի փրկութի՟ հոգւոյ իմոյ՝ և 'ի յօգուտ մերձաւորա՛ց իմոց ։

Այլ և օգնեա՛ ինձ ո՛վ քաղցր տ՟ր իմ, զի կարիցեմ այսուհետև ըսկսանիլ զբարիս խորհիլ, խօսիլ, և գործել, և փոխել զկենցաղավարութի՟ իմ անպատեհ, և առնել զամենայն ինչ այսօր, և 'ի բոլոր կեանս 'ի պատիւ և 'ի փառս անուան քոյ սր՟յ. Ամէն ։

Տէր իմ յ՟ս ք՟ս, թէպէտ մեղաւոր եմ ես և անարժան քոյոց

digitised by A.R.A.R.@

չնորհաց, յաղագս ծանրութեան
իմոյ չարագործութեան. սակայն
դաւանիմ ճշմարտապէս, հաւա֊
տամ բոլորով սրտիւ, և խոստո֊
վանիմ բերանով զսբ կաթուղի֊
կէ, և շառաքելական հաւատն
հանդերձ իւրայնովք մասամբք,
ըստ որում հաւատայ, և ուսու֊
ցանէ սբ եկեղեցին հռոմէական:
Եւ քանզի երբեմն յանկարծակի
հանդիպին կասկածանք բազումք
'ի զանազան փորձունս, զորօրինակ
'ի մեծամեծ հիւանդութիւնս և
յայլս սոցին նմանս՝ յորոց փըր֊
կեսցէ զիս քոյդ ամենակարող զօ֊
րութիւն, եթէ 'ի պատճառս նոցին
կորուսանիցեմ զմիտ իմ, մինչ զի
տարակուսիցիմ 'ի վր ումանց սբյ
հաւատոյն մասանց, կամ թէ
հաւանիցիմ մոլորութեց ումանց,
աղերսեմ և հայցեմ թախանձա֊
նօք 'ի քումմէ հանդիսավեհուէ,
բարեխօսութբ սրբուհւոյ ածած֊
նին և ամենից սբց, զի ներիցես
ինձ: Քանզի կամիմ ես կեալ և
մեռանիլ առանց հաւանելոյ եր֊
բէք այսպիսեաց մեղաց, այսու
սրբազանիւ հաւատով և մեծաւ
ջերմեռանդութբ 'ի գոգ սրբազա֊

digitised by A.R.A.R.@

նի մօրն իմոյ եկեղեցւոյ, որ ոչ ամփոփէ զբազուկս իւրոյ գթութեան ընդդէմ այնոցիկ, որք խոնարհութ̃բ դիմեն առ նա. ամէն:

Աղօթք առ պահապան հրեշտակն:

'Ի խորոց սրտի իմոյ հեզութ̃բ մատոյց աղաչեմ զքեզ ով գերապայծառ հոգի հրեշտակական, իշխան արքայութե̃, որ ես կարգեցեալ 'ի ժամու ծննդեան իմոյ յամենառատ աղբերէ հանդիսավեհութեանն ա̃յ՝ 'ի պահպանութիւն, և 'ի նախախնամութիւն իմոյ անարժանի անձին: Պահեա́ և պահպանեա́ զիս այսօր 'ի պատրանաց, 'ի խաբէութէ̃, և 'ի հնարից սատանայի: Եւ զի զօրութ̃բ նշանի ս̃բյ խաչին կարիցեմ յաղթահարել զա̃մ ցանկութե̃ մարմնական, զա̃մ հպարտութիւն կենցաղոյս, և զա̃մ խաբէութ̃ն հնոյ օձին: Եւ քանզի աղերսանք իմ ոչ են արժանիք, և ոչ բաւականք առ 'ի ը̃ռունիլ զոր հայցեմն, վ̃ո որոյ արա́, զի աղօթիւք քովք հաճիցի տ̃ր հեղուլ 'ի սիրտ իմ զվերնա-

digitised by A.R.A.R.@

կան շնորհ հոգւոյն սրբոյ։ Ջի ո՛չ տեսանես՝ մոլորիմ իմով ծուլութ̃բ և անհոգութ̃բ արտաքոյ հրամանաց փրկչին իմոյ, և գնամ 'ի ճանապարհ խաւարային. մի ուրեմն թողուր զիս 'ի բաց, ո՛վ պահապան հրեշտակ իմ. այլ որքան տեսանես, թէ ոսոխն մեր սատանայ կամիցի որսալ զիս ուռկանաւ մեղաց, այնքան քոյով սովորականաւ բարեգթութ̃բդ զգուշապես լեր ինձ օգնական։

Սոյնպէս և աղաչեմ զքեզ ո՛վ պատուական հրեշտակդ իմ, զի 'ի ժամու մահուան իմոյ մի՛ ձգիցէ զիս սատանայ 'ի խորս յուսահատութեան, այլ զինուորեցեալ զինուք սրբոյ եկեղեցւոյ կարիցեմ յաղթահարել զա̃մ զօրուն թունաւորի օձին։ Եւ այսպէս քոյով նպաստութ̃բդ առաջնորդեալ ինձ մինչև 'ի վերնական տեսութիւն ստեղծողին իմոյ. զի արդեամբք չարչարանաց նորին հանդերձ համայնիւք երջանկօք քաղաքակցօք կարիցեմ հրճուիլ յանզրաւականում խնդութ̃ե. Ամէն։

digitised by A.R.A.R.@

Յորժամ ելանէ ոք ՚ի տանէ ՚ի դուրս, պարտի կնքել զինքն նշանաւ ս՟բ խա-չին ասելով:

Յանուն հօր, և որդւոյ և հոգ-ւոյն ս՟բյ. ամէն:

Եւ յետոյ ասասցէ զհետևեալ աղօթս:

Խաղաղու՟ն տ՟ն իմոյ եղիցի միշտ և հանապազ ընդ իս, և ընդ համայնից ոսկերաց և անդամոց իմոց. ամէն:

Ողորմեա ո՛վ տ՟ր իմ զգնացս իմ այսօր, և զա՟մ աւուրս կենաց ի-մոց. և դի՛ր պահապան աչաց ի-մոց, զի մի տեսանիցեմ զունայ-նութ՟ի. սանձեա և զլեզու իմ, զի մի յանցանիցեմ ը՟դէմ քում հանդիսավեհութ՟ե. ամէն:

Տ՟Ր իմ յ՟ս ք՟ս որդի ա՟յ կենդան-ւոյ, աղաչեմ զքեզ միջնորդութ՟բ հնգից սրբազանից վիրաց քոյոց մարմնոյդ, զի հաճիցիս պահպա-նել այսօր զհինգ զգայութիւնս



digitised by A.R.A.R.@

մարմնոյ իմոյ, և արտամերժեցես յինէն զբնաւս խորհուրդս, և զերևակայութիւնս աղտեղիս, որք հեռացուցանեն զսիրտ իմ՚ի քէն. և դու լեր յոյս իմ, և գանձ հոգւոյ իմում. ամէն։

Յորժամ հասանի 'ի դուռն սրբոյ եկեղեցւոյն, պարտի կնքել զինքն նշանաւ սբյ՟ խաչին ասելով։

Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սբյ՟. ամէն։

Մնացէք աստ ով վատթարք և ընդունայն խորհուրդք։ Իսկ դու ով անձն իմ պատրաստ լեր 'ի տանն այ՟ առ 'ի երկրպագանել և գոհանալ զտնէ՟ այ՟ և զփրկչէն քումմէ յսէ՟ քսէ՟. ամէն։

Եւ 'ի մտանելն յեկեղեցին պարտի ասել։

Տէր իմ և ած՟ իմ, մտանեմ ես 'ի տուն քո սբ՟ առ 'ի երկրպագանել քեզ՝ գոհանալ զքէն, և խոստովանիլ զանուն քո սբ՟. վ՟զի բարի է յոյժ, առ 'ի ընդունիլ

digitised by A.R.A.R.@

զթողութիւն մեղաց իմոց, և շա-
հաւորիլ շնորհիւ քով սրբով.
ամէն:

Եւ յառնուլն զջուր օրհնութեան,
պարտի կնքել զինքն նշանաւ սբ̃յ խա-
չին ասելով:

Ցօղեա՛ յիս մշտկաւ՝ և սբ̃ ե-
ղէց. լուա՛ զիս, և քան զձիւն
սպիտակ եղէց:

Եւ ՚ի գնալն առաջի սբ̃յ սեղանոյն
պարտի ասել:

Երկրպագանեմ քեզ, և բարե-
բանեմ զքեզ տ̃ր իմ յս̃ ք̃ս, որ
զօրութե̃ սբ̃յ խաչին ազատեցեր
զբոլոր աշխարհ: Բա՛ց տ̃ր զբե-
րան իմ, զի օրհնեցեմ զանուն քո
տ̃ր, և սրբեա՛ զսիրտ իմ յամենից
ունայնութե̃ց, և ՚ի պղծոց խորհր-
դոց. զի ընդունակ լինիցիմ քոյոց
ա̃ծայնոց շնորհաց:

digitised by A.R.A.R.@

Եւ յելանելն քահանայքն 'ի սրբարանա_ տանէն, և 'ի գալն առաջի բեմին առ 'ի սկսանիլ պատարագ, պարտի ասել:

Ո՛վ բարեգութ տ̃ր իմ յ̃ս ք̃ս, հայցեմ 'ի քէն խոնարհութբ̃, զի բարեխօսութբ̃, արդեամբք, օ_ ժանդակութբ̃ք, չարչարանօք, և աղօթիւք ամենից ս̃ց հրեշտա_ կաց և հրեշտակապետաց, նահա_ պետաց, մարգարէից, առաքե_ լոց, մարտիրոսաց, հայրապետաց, և կուսանաց, այլ և շնորհօք հոգ_ ւոյն ս̃յ հաճիցիս հեղուլ 'ի սիրտ իմ զճշմարիտ զղջումն, որպէս զի կարիցեմ ճանաչել խղճմտա_ նաց իմոց զչարութիւն, և խոստո_ վանիցիմ առանց պատճառանաց զաղտեղութիւն իմոց յանցանաց: Եւ տուր ինձ տ̃ր զշնորհ քո ն̃ը, զի կարացից առնել զպատշաճա_ ւոր ապաշխարութիւն, և այս_ պէս՝ ողորմութեամբ քոյոյ բարե_ գթութեանդ ջնջեսցին մեղք իմ. ամէն:

digitised by A.R.A.R.@

Մինչ քահանայն առնէ զլուացից ձեռին, պարտ է ասել:

Ո՜վ քաղցրագունեղ յն, անկանիմ առ ոտս քո մեծաւ խոնարհութբ, զորս և բաղձամ ոռոգել, և լուանալ իսկ իմովք արտասուօք. վասն զի յիշեմ զագեղութիւն մեղաց իմոց, զորս ընդդէմ ածայնոյ քում գործեցի հանդիսավէհունէ: Որ և աղաչեմ զքեզ տր ողորմեա՛ց ինձ մեղաւորիս զի եմ աղքատ և թշուառ քո ստեղծուած, վերադնեցեալ ՛ի քէն արեամբ քոյով պատուականաւ, և մի իսպառ ըստ իմում պատժեր զիս ապարդիւնաւորութէ. տր իմ ահա յիշեցի ՛ի բոլորէ սրտէ իմմէ զսխալանս իմ, և զհատուցումն նց, և զարհուրեցայ: Ուստի մեծաւ խոնարհութբ նց խնդրեմ ՛ի քէն զթողութիւն առաջադրելով ինձ օգնութբ քոյոց շնորհաց ոչ երբէք յապագայս վերասահիլ ՛ի նոյն յանցանս, և մեծաւ զգուշութբ զհոգ ունել անձին իմոյ, և զքեզ սիրել յամէ սրտէ իմմէ. ամէն:

digitised by A.R.A.R.@

Մինչ ան խոստովանիմ առաջի քո, պարտ է և ժողովրդեան ասել:

Խոստովանիմ առաջի քո ամենակարողի, և երանուհւոյ Մարիամու միշտ կուսին, երանելոյն Միքայէլի հրեշտակապետին, երանելոյն յովհաննու մկրտչին, սրբոց առաքելոյն պետրոսի, և պօղոսի, և սբյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչին, և ամենից սրբոց, և առաջի քո հայր սուրբ. քանզի մեղայ յոյժ, խորհրդով, բանիւ, և գործով. վայ ինձ, վայ ինձ, և յաւէտ վայ ինձ: Վասն որոյ աղաչեմ զերանուհի մարիամ միշտ կոյսն, զերանելի միքայէլ հրեշտակապետն, զերանելի յովհաննէս մկրտիչն, զսբ առաքեալս պետրոս և պօղոս, զերանեալ հայրն մեր զսբն գրիգոր լուսաւորիչն և զամ սբս՝ և զքեզ հայր աղօթել վս իմ առ տր ած մեր:

digitised by A.R.A.R.@

Մինչ քահանայն ասէ աղափէոջէ,
պարտ է ասել:

Ո՛վ գթած և բարեգութ Տ՟ր իմ յ՟ս ք՟ս, միայնակ յոյս և փրկութ՟ն հոգւոյ իմոյ. հայցեմ 'ի քէն՝ ընկա՛լ զխոստովանութ՟ն իմ, և շնորհեա՛ ինձ զճշմարիտ զզջումն սրտի, զի լացեմ, և ողբացեմ ըզծուլութ՟ն իմ, և զանհոգութ՟ն իմ, զորս ը՟դէմ մեծի քում հրամանի գործեալ եմ. այլև ուսո՛ ինձ, զի զայս առնիցեմ հանդերձ խոնարհութ՟ք և մաքրութ՟ք սրտի. ամէն:

Մինչ ասէ յայս յարէ նուիրանաց,
պարտ է ասել:

Ո՛վ ա՟ծ յաւիտենական, խնդամ միշտ և հրճուիմ, զի դու ես այն որ ես, և ոչ այլ ոք է էակ, եթէ ոչ քև, և 'ի քէն. ո՛վ մեծութ՟ն անհուն, դու բարւոք գիտես զքեզ թէ զինչ ես. գիտես քաջապէս և զիս. զի դու ես տ՟մ. իսկ թէ զինչն իմ խնդրեսցես, ոչ այլ ինչ եմ իսկապէս, եթէ ոչ ոչինչ: Ո՛վ ողորմածագունեղ տ՟ր, աղաչեմ

digitised by A.R.A.R.@

և խնդրեմ 'ի քէն զթողուն յան-
ցանաց այնոցիկ արանց, որք կան
'ի մեղս մահացուս, և խոնարհա-
պէս մաղթեմ 'ի քէն՝ վն մեծագ-
նի արեան քո, մահուան իսկ և
չարչարանաց, զի ներշնչիցես 'ի
նոսա զցաւս կատարելս սակս
սխալանաց իւրեանց անցելոց, և
զապաշխարութիս իսկական վն
իւրեանց համօրէնից մեղաց, որպս
զի փառաւորիցի անուն քո՝ նոքօք
և 'ի նոսա։ Ցնծամ միշտ և խայ-
տամ ով Տր իմ ևԱծ իմ, մինչ
նկատեմ զհրեշտակս որք քեզ եր-
կրպագանեն։ Բայց ողբամ զիս
դառնապէս, մինչ տեսանեմ զմար-
դիկ, որք զքեզ անգիտանան՝ կմ
մոռանան։ Ես սակայն ընդ այնո-
սիկ երանելեաց հոգւոց քեզ յար
երկիրպագանեմ։ Այլ և ըղձամ
և կարօտիմ, զի աշխարհ ամենայն
զքեզ ճանաչիցէ տիրապէս, հոգ-
ւով իսկ և ճշմարտութբ քեզ եր-
կրպագանիցէ։ Ով Տր Թագա-
ւոր փառաց, վերացո զսիրտ իմ
'ի բարձունս, զի փառաւորեցից
զանուն քո Տր յերկինս, որպէս
հրեշտակք փառաւորեն զնա։ Եւ
զի զոր ինչ և ասիցեմ և առնէ-

digitised by A.R.A.R.@

ցեմ, վո̃ քոյոց աւնիցեմ փառաց
Թարց զիմոյն խնդրելով անձին.
ամէն:

Մինչ ասի սբ̃ ած̃, պարքին և ժողո-
վրդեանն երգել զնոյնն:

Սբ̃ ած̃. որ և հզօր. որ և ան-
մահ. ողորմեա՛ց մեզ.
Սբ̃ ած̃. որ և հզօր. որ և ան-
մահ. ողորմեա՛ց մեզ:
Սբ̃ ած̃. որ և հզօր. որ և ան-
մահ. ողորմեա՛ց մեզ:

Եւ մինչ ընթեռնուն զմարգարէականս
և զառաքելականս և զաւետարանն,
պարտ է մատուցողութբ̃ լաւ և ունկն-
դիր լինել հրամանին քհ̃յ, և յետոյ ա-
սել 'ի միասին զհաւատամքն:

Հաւատամք 'ի մի ած̃ հայրն ա-
մենակալ, յարարիչն երկնի և եր-
կրի, երևելեաց և աներևութից:
Եւ 'ի մի տր̃ Յս̃ Քս̃ յորդին այ̃,
ծնեալն յայ̃ հօրէ միածին, նախ
քան զամենայն յաւիտեանս: Ած̃
յայ̃. լոյս 'ի լուսոյ. ած̃ ճշմա-

digitised by A.R.A.R.@

ըստ յո՟յ Ճշմարտէ ծնունդ և ոչ
արարած։ Նոյն ինքն համագոյա-
կից հօր, որով ամենայն ինչ եղև
յերկինս և ՚ի վերայ երկրի, ե-
րևելիք և աներևոյթք։ Որ յա-
ղագս մեր մարդկան և վն՟ մերոյ
փրկութե՟ իջեալ ՚ի յերկնից մարմ-
նացաւ, մարդացաւ, ծնաւ կատա-
րելապէս ՚ի մարիամայ սբ՟յ կու-
սէն հոգւոյն սրբով։ Որով էառ
մարմին, հոգի, միտս, և զա՟մ որ
ինչ է ՚ի մարդ՝ Ճշմարտա՟պս և ոչ
կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ,
Թաղեալ, յերրորդ աւուր յարու-
ցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին
մարմնովն նստաւ ընդաջմէ հօր։
Գալոց է նովին մարմնովն և փա-
ռօք հօր ՚ի դատել զկենդանիս և
զմեռեալս, որոյ Թագաւորութե՟ն
ոչ գոյ վախճան։ Հաւատամք և
՚ի սբ՟ հոգին յանեղն և ՚ի կատա-
րեալն, որ ՚ի հօրէ և յորդւոյ
բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի
մարգարէս և յաւետարանս. որ
էջն ՚ի յորդանան. քարոզեաց զա-
ռաքեալն, և բնակեցաւ ՚ի սբ՟ն։
Հաւատամք և ՚ի մի միայն յընդ-
հանրական և յառաքելական ե-
կեղեցի։ ՚Ի մի մկրտութի. յապաշ-

digitised by A.R.A.R.@

խարութեն, 'ի քաւութեն և 'ի թողութեն մեղաց: 'Ի յարութեն մեռելոց: 'Ի դատաստանին յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութեն երկնից: Եւ 'ի կեանն յաւիտենականս. ամէն:

## ՄԻՒՍ ԵՒՍ ՄԻ ՈՐ ՅԵՐԵԽԱՅԻՑ, ՊԱՐՏ Է ԱՌՆԵԼ:

Ո՜վ տ͞ր իմ և ա͞ծ իմ, աղբիւր անսպառ յաւիտենական բարութեան, աղաչեմ զքեզ նկատեա՛ քոյով բնականաւ բարեգթութե͞դ 'ի չարչարանս միածնի որդւոյ քոյ. զորս կրեաց 'ի փառս քոյ, և վ͞ս փրկութե͞ն մերոյ: Նայեա՛ց 'ի հնազանդութի͞ն յարակայ, և յապաշխարութեն նր͞, և թէ ո՜րպ խնդութե͞բ կրեաց զայնքան վիշտս 'ի պատիւ քո. զայնքան դառնութիւն, զայնքան պարսաւութի͞ն, և զայնքան նախատինս, հանդերձ անտանելեօք նեղութե͞բք, զորս կրել կամ խորհիլ ոչ է կար մարդկան: Եւ զայսուիկ վասն կատարելոյ զքոյդ բարեհաճութեն: Ո՜վ բարեգութ հայր, գիտեա՛, թէ որ-

digitised by A.R.A.R.@

պէս սիրելի որդին քո և տ̃րն մեր յ̃ս ք̃ս եբարձ միայնակ 'ի վերայ փայտի սրբոյ խաչին զմեղս աշխարհի, և լուաց իւրով սրբազանիւ արեամբ զմ̃մ աղտեղութի և զբիծ մեր, մաքրելով զնա հրով իւրոյ ջերմագունեղի սիրոյն: Նոյն ինքն զոր դու կացուցեր դատաւոր տալով նմա զամենայն իշխանութի առ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, վասն մեծի սիրոյն իւրոյ կերպաւորեաց զինքն իբր յանցաւոր, և դատապարտեցաւ 'ի մահ առ 'ի զերծուցանել ըզպարտաւորս, ինքնին վճարելով զպարտս նոցին՝ գնով անմեղի արեան իւրոյ: Ո՞վ թէ որքան սաստկապէս սիրեցեր զիս տ̃ր իմ, զի վասն սիրոյ իմոյ ոչ խնայեցեր յորդին քո միածին, զինչ հատուցից քեզ ո՞վ հայր մեր ամենած̃բ, վասն այնքանոյ հայրականի և իսկականի սիրոյ քոյ, զոր միջնորդութբ̃ միածնի քոյ հեղեր 'ի վերայ իմ: Արդ՝ ահաւասիկ գովեմ զքեզ, բարեբանեմ զքեզ, գոհանամ զքէն, մեծացուցանեմ ըզքեզ, և տ̃մ զօրութբ̃ իմով խոստովանիմ զքեզ, և օրհնեմ զա-

digitised by A.R.A.R.@

նուն քո Տր։ Եւ թէպէտ անօթ-
եմ ես ապականացու՝ բծաւորե-
ցեալ, և վատթարացեալ ամենե-
քումբք ախտիւք, և ոչ ունիմ
ընդունակութիւն և զարժանաւո-
րութիւն գովելոյ զքեզ, որ ես ար-
ժանի ամ գովութեան։ Ուստի ով
Հայր մեր քաղցրագունեղ, վերըն-
ծայեմ քեզ նորապէս զնոյն միա-
ծին և զսիրելի որդին քո, հան-
դերձ խուրայնովք անտանելեօք վըշ-
տիւք, ծոմովք, աղօթիւք, հըսկ-
մամբք, և այլովք ամենեքումբք
կրիւք, որոց ընբերեաց վն փըր-
կութեան մերոյ։ Յետ այսորիկ վեր-
ընծայեմ քեզ՝ զանմեղ մահն նո-
րա, հանդերձ ամենեքումբք ար-
դեամբք չարչարանաց նր, օժան-
դակութը անարատ կուսին մա-
րիամու, և բարեխօսութը ամե-
նից սրբոց և երանելեաց, որք են
'ի փառս մշտնջենաւորս, յաղագս
քաւութեան մեղաց իմոց, և թո-
ղութեան յանցանաց բնաւից ժողո-
վրդոց, վասն կենդանեաց և մե-
ռելոց. սակս որոց պարտական
եմ աղերսել զքեզ, զի անուն քո
Տր միշտ գովիցի, քարոզիցի, և
պատուիցի յինէն, և յամենից

digitised by A.R.A.R.@

քրիստոնէից յաւիտեանս յաւի-տենից. ամէն:

Մ՚ինչ ասէ ողջոյն տուք միմեանց, պարտ է ասել:

Աղաչեմ զքեզ ո՜վ ա̅ծ իմ ամե-նակարող, և տ̅ր իմ ողորմած՝ շը-նորհեա՛ ինձ զխնդութ̅ն ընդ խա-ղաղութեան, զզգաստութի̅ն վարուց, զտեղի ապաշխարութե̅, զշնորհս և զմխիթարութ̅ն հոգւոյդ սրբոյ, և զյարատեւութ̅ն 'ի գործս բա-րիս. ամէն:

Մ՚ինչ ասէ պատարագ ք̅ս ճաշակի, պարտ է ասել:

Ընկալցի տ̅ր զպատարագս զայս 'ի ձեռաց քոց, 'ի գովութ̅ն և 'ի փառս ամենասրբոյ անուան իւրոյ, 'ի յօգուտ և 'ի կեցու̅ն մեր, և բոլորի եկեղեցւոյ, ևս և ընաւեից հաւատարմից քրիստո-նէից, և վասն հոգւոց քաւարա-նին. ամէն:

Մինչ ասի և ընդ սերոբէսն, պարտ է ասել:

Ո՛վ Տ՟ր իմ յս՟ քս՟ ճշմարիտ յոյս մեղաւորաց՝ խոստովանիմ բերանով իմով զմեղս իմ, և հայցեմ զթողութի՛ւն 'ի քէն ոպ՟ զաւազակն, զի բազումանգամ ուրացեալ եմ զշնորհս քո սբ՟, զոր պարգևեցեր ինձ 'ի փրկութի՛ն հոգւոյ իմոյ, և կորուսեալ եմ զնս՟ ը՟ վայրապար 'ի փառս սատանայի, աշխարհի, և մարմնոյ, և եղեալ եմ բազումանգամ պատճառ մեծամեծ մեղաց իմովք ագխտիւք բանիւք: Վասն որոյ հաճեաց Տ՟ր իմ ներել ինձ, և յիշել զիս, ոպ՟ ներեցեր աւազակին, որ խոստովանեցաւ ըզմեղս իւր, և շնորհեա՛ ինձ լսել զձայնն զայն, թէ այսօր ընդ իս լիցես 'ի դրախտին:

Մինչ ասի՝ առէ՛ք կերէք, պարտ է ասել:

Ողջոյն քեզ ճշմարիտ մծ՟, ծնեալ 'ի մարիամայ կուսէն, որ զենար և մեռար 'ի վերայ խաչին

digitised by A.R.A.R.@

վասն մարդկան. յորում իսկ բա-
ցեալ եղև տիգաւ կող քո տ̃ր,
ուստի բղխեաց արիւն և ջուր.
լեր ինձ աղաչեմ 'ի սնունդ, մինչ
տակաւին կենցաղավարիմ 'ի յերկ-
րի, և առածեա́ զիս 'ի յերկինս
ըն կիտոջ վերջնում իմոյ մահ-
ուան. ամէն:

Ո՜վ բարի յս̃, ո՜վ քաղցր յս̃, ո՜վ
որդի մարիամու ողորմեա́ց ինձ:
Երկրպագեմ և գովեմ զքեզ ո՜վ
տ̃ր իմ յս̃ ք̃ս, զի խաչիւ քով սըր-
բով փրկեցեր զաշխարհս, որ մե-
ռար վասն իմ, ողորմեա́ց ինձ.
ամէն:

Դու ես ստեղծօղ իմ, և փրկիչ
իմ թագաւոր իմ և ա̃ծ իմ, և տ̃ր
իմ, ո՜վ յս̃ ք̃ս որդի ա̃յ կենդան-
ւոյ ողորմեա́ց ինձ. ամէն:

Ողջոյն քեզ ճշմարիտ մարմին
ա̃ծամարդոյն յս̃ի, եդեալ 'ի վե-
րայ խաչին յաղագս իմոց յանցա-
նաց: Ողջոյն քեզ ճշմարիտ հաց
հրեշտակաց, իջեալ 'ի յերկնից
առ 'ի գնել զիս: Ողջոյն քեզ ո՜վ
կեցութ̃ն աշխարհի: Ողջոյն քեզ
բան հօր ա̃յ: Ողջոյն քեզ ընծայ
սրբազնական: Ողջոյն քեզ մար-
մին կենդանի: Ողջոյն քեզ ա̃ծ-

digitised by A.R.A.R.@

ութիւն կատարեալ։ Ողջոյն քեզ կեանք յաւիտենական ։ Ողջոյն քեզ մարմին մեծագին յ՟ի ք՟ի տ՟ն մերոյ և վերանորոգիչ անձին իմոյ, արա առիս զողորմութի՟ քո տէր իմ. ամէն։

Մինչ ատն ընդ որս և մեղ. պարտ է ասել։

Ով միշտ անքննաւոր և բարեգութ ա՟ծ, հայր ողորմութե՟ և ա՟ծ ա՟մ մխիթարութե՟, որ քոյով բարեգթութե՟ք և բարեհաճութե՟ք մխիթարես զմեզ յամենայն նեղութե մերում, անկեալ յերկիր առաջի անհնոյ քոյոյ մեծութե՟, յանձնեմ քեզ զայնոսիկ բնաւս, որոց սակս պարտական եմ ես աղօթել։ Եւ մանաւանդ զիս զմեղաւորս, զի օգնութե՟ք քոյոց շնորհաց այնպէս երկրպագանիցեմ քեզ, ո՟րպ վայելէ քում հանդիսավեհութե՟դ երկրպագանել, և մի իշխեսցեմ մեղանչել ընդդէմ քաղցրութե՟ քում, այլ սիրեսցեմ զքեզ ՚ի վեր քան զա՟մ, և զընկերն իմ իբրև զանձն իմ։ Արդ՝ արա առիս զողորմութի՟ քո, զի մի մոլո-



digitised by A.R.A.R.@

րեցայց արտաքոյ քոյոց պատուէրանաց, վ՟ն անուան միածնի որդւոյ քո, և վասն արդեանց ն՟ր, զորս վասն մեր մեղաւորացս արդիւնաւորեցաւ:

Յանձնեմ և քեզ զեկեղեցի քո ն՟ր կաթուղիկէ, և զվեհապետն նորին, և զեղբարս նորին կարտինալս, զեպիսկոպոսունս, ըզպատրիարգունս, զքահանայս, ըզխոստովանօղս, զվարդապետս, և զհանուրս կրօնաւորս: Տուր ն՟ց զշնորհ քո ն՟ր առ 'ի կատարել զհաճուն կամաց քոց, զի մի յանցանիցեն բանիւ կամ գործով, այլ լուսաւորիցեն զմեզ լուսով ճըշմարտութ՟ե, զի թողեալք զխաւար մեղաց հետևիցուք քեզ՝ որ ես լոյս ճշմարիտ: Յանձնեմ և քեզ զեպիսկոպոսն այսորիկ քաղաքի, այլև զհայրն իմ, զմայրն իմ, զեղբարս, զքորս՝ զծնօղս՝ ըզբարեկամս, զթշնամիս, և զբնաւս բարերարս իմ, որք յանձնեալք են զինքեանս խմոց աղօթից. որք և աղօթեն առ քեզ վ՟ն իմ մեղաւորիս, և վասն հոգեաց քաւարանին: Եւս յատկապէս՝ աղերսալով յանձնեմ քեզ (զայս անուն.)

digitised by A.R.A.R.@

զի տայցես նմա զշնորհ քո տ՟ր. և
օգնիցես նմա 'ի կարիս նորին հո-
գեկանս և մարմնականս, պահե-
լով զնա 'ի թշնամեաց երևելեաց
և աներևութից: Դարձեալ տ՟ր
իմ, և ա՟ծ իմ, և բարեգութ հայր
իմ՝ աղաչեմ զքեզ վասն սրբազա-
նի անուան որդւոյ քոյ յանձնե-
լով քեզ զբոլոր ժողովուրդ քրիս-
տոնէից, և մանաւանդ զիշխանս
նոցին, որք կառավարեն զն՟ս ըստ
հրամանաց ս՟բյ եկեղեցւոյ, և պահ-
պանեն զս՟բ հաւատն կաթուղիկէ
'ի ձեռաց անհաւատից, հրէից,
հերետիկոսաց, հերձուածողաց,
և խաբեբայից քրիստոնէից: Եւս
առաւել զքաղաքս զայս զի թո-
ղուցուս սմա զյանցանս սորա, և
ողորմեսցիս սմա. ազատելով զսա
'ի պատերազմաց, 'ի մահուանէ,
'ի սովոյ, զի կալով հաւատարիմ
յօրէնս քո՝ ա՟յ որում ուսուցանէ
հարսն քո տ՟ր եկեղեցի, փառաւո-
րեսցէ զանուն քո տ՟ր յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

digitised by A.R.A.R.@

## Մինչ տայ, և ընծայէ ողորմութիւն եկեղե-ցւոյ, պարտ է ասել:

Ահաւասիկ տ̃ր իմ յ̃ս ք̃ս փեսայ սիրեցեալ 'ի հոգւոյ իմմէ, ը̃ բա-րեգութնի եղանակի և ըստ խոկա-կանի խոնարհութեան սրտի իմոյ անկեալ յերկիր յանդիման քոյոյ ներկայութե̃, մաղթեմ 'ի քէն յա-ղագս իմ Թշուառացելոյ մեղա-ւորիս լինել ինձ 'ի նպաստ քոյով ա̃ծայնով շնորհիւ, ո̃պ զի մի եր-բէք իշխիցեմ խորհել, խօսիլ, և գործել զայլ ինչ բաց յայնցանէ, որք իցեն առ 'ի յառաւելուն հա-մայնի քոյոյ պատուոյ, 'ի կեցու-Թե̃ հոգւոյ իմոյ, և 'ի յօգտութի մերձաւորաց իմոց, աղաչեմ և զքեզ յանձն առնելով քեզ ըզ-բնաւս մերձաւորս, զհարս, ըզ-մարս, զեղբարս, զքորս, զհօ-գևորս, և զմարմնաւորս. զազ-գայինս, զբարեկամս, և զբարե-րարս, և զայնոսիկ՝ որք տուեալք են ինձ, կ̃մ տալոցք են զօգնութի, և զխրատ հոգեկան կամ մարմնա-կան. հայցեմ և մեծաւ խոնար-հութե̃ յանձն առնելով քեզ ըզ-

digitised by A.R.A.R.@

դերյարգոյս համայնս ողջ եկեղեցւոյ, և զժողովրդականս նոցին, զկրօնաւորս և զաշխարհականս, որք զի կարիցեն յարամնալ խոնարհապէս, և հաւատարմապէս 'ի պաշտօնս իւրեանց սրբազանս: Յանձնեմ և ես քեզ 'ի ձեռն զօրութե այսօրիկ անձառելւոյ սրբազնագործութե զամենեսեան, որք են 'ի յանձկութիս հոգւոյ, յիւրաքանչիւր նեղութիս, 'ի տկարութիս, 'ի յաշխատանս, 'ի ձախորդութիս, 'ի հալածանս թշնամեաց, 'ի տառապանս հոգեկանս կամ մարմնականս: Դարձեալ աղաչեմ զքեզ, շնորհեա հիւանդաց զառողջութի, վշտանկելոց զխնդութի, նաւելոց զնաւահանգիստ կեցութե, և այնոցիկ՝ որք են 'ի հալածանս, տուր զներպաստութի, և զօգնութի, որպս զի մի յաղթահարիցին յիւրեանց թշնամեաց: Վերստին մաղթեմ 'ի քէն խոնարհութբ, հաճեաց հասանիլ 'ի թիկունս ամենից մեղաւորաց քոյով ածայնով շնորհիւ՝ զի կարիցեն ճանաչել զյանցանս, զորս ըդէմ քում ածայնոյ հանդիսավեհութե գործեալք են. և

digitised by A.R.A.R.@

յաղագս որոց ճանաչեցելոց առնիցեն զպատկանաւոր ապաշխարութի, հանդերձ ուղղութբ վարուց իւրեանց, և համարիցին 'ի թիւս որդւոց քոց 'ի կենցաղում յայսմիկ շնորհօք, և 'ի հանդերձելում փառօք. ամէն:

Մինչ ասի, 'ի սրբութին սրբոց. պարտ է ասել, առ աղօթական մարմինն:

Ողջոյն քեզ ով մարմին քնի ծնեցեալ 'ի սրբոյ կուսէն մարիամու, մարմին կենդանի, ածութի ամբողջ, և ճշմարիտ մարդ. ողջոյն քեզ ով իսկական կեցութի, ճանապարհ և փրկութիւն աշխարհի, աղաչեմ զքեզ փրկեա զիս 'ի չարէ:

Առ աղօթական արիւնն:

Ողջոյն քեզ ով արիւն քնի երկնային, և ամենասբ ըմպելի, հեղեղ կենարար, որ լուանաս ըզմեղս աշխարհի: Ողջոյն քեզ ով արիւն պատուական ցօղեցեալ 'ի վէրէ կողին քնի բևեռեցելոյ 'ի

digitised by A.R.A.R.@

խաչին աղաչեմ զքեզ, մաքրեա՛
զիս 'ի մեղաց:

Զկնի Բարձրացուցման Մարմնոյ եւ
արեան Տ՟ն Մերոյ Յ՟սի Ք՟սի:

Տէր իմ յս՟ քս՟ որդի այ՟ կենդանւոյ, որ զայդ սրբազան մարմինդ, եւ զպատուական արիւնդ ընկալար 'ի սրբուհւոյ կուսէն մարիամայ, զոր եւ 'ի վերայ սեղանոյ սբ՟յ խաչին 'ի կողէ քումմէ սրբազանէ ցօղեցեր վասն փրկութե՟ն մերոյ, եւ նոյնով կենարարիւ մարմնով յարեար 'ի մահուանէ, եւ համբարձար 'ի յերկինս, ուստի գալոց ես 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Աղաչեմ զքեզ միջնորդութեամբ այսորիկ կենարարի մարմնոյ քոյ՝ զոր այժմ տեսանեմ 'ի վերայ սրբոյ սեղանոյս. ազատեա՛ զիս յամենից աղտեղութե՟ց մտաց եւ մարմնոյ, եւ յամենից չարեաց, այլ եւ 'ի փորձանաց ներկայից եւ ապագայից. ամէն:

Ողջոյն քեզ ով տ՟ր իմ յս՟ քս՟, բան հօր, որդի կուսին մարիամու. գառն այ՟, փրկութի՟ն աշխարհի,

digitised by A.R.A.R.@

պատարագ ո՟ր՝ բան, մարմին, և
ազնիւ բարութ՟է:

Ողջոյն քեզ ով տ՟ր յ՟ն ք՟ն, գովու-
թիւն հրեշտակաց, փառք սրբոց,
պատճառ խաղաղութ՟է. ա՟ծութ՟ի
ամբողջ, Ճշմարիտ մարդ, ծաղիկ
և պտուղ արգանդի անարատ
կուսին:

Ողջոյն քեզ ով տ՟ր իմ յ՟ն ք՟ն, Ճա-
ռագայթ հօր, իշխան խաղաղու-
թեան, դուռն երկնից, հաց կեն-
դանի, ծնունդ կուսին մարիա-
մու, և անօթ ա՟ծային:

Ողջոյն քեզ ով տ՟ր իմ յ՟ն ք՟ն, լոյս
երկնային, գին աշխարհի, խըն-
դութիւն մեր, հաց հրեշտակաց,
զուարճութիւն սրտի, թագաւոր
և փեսայ մօրն և կուսի:

Ողջոյն քեզ ով տ՟ր իմ յ՟ն ք՟ն, Ճա-
նապարհ անդորր, Ճշմարտութ՟ի
իսկական, պարգև աշխարհի, սէր
ծայրագոյն, ազնիւ սիրոյ՝ խա-
ղաղութ՟է և քաղցրութեան, հան-
գիստ մեր, և կեանք ապահով՝ ո-
ղորմեաց ինձ մեղաւորիս:

digitised by A.R.A.R.@

## Մինչ ասէ Գառն Ա̅յ ժամ այս ընդ երգ՝ պարտ է ասել։

Ո՜վ քաղցրագունեդ և ամենագութ տ̅ր իմ յ̅ս ք̅ս. աղաչեմ ըզքեզ, վ̅ս քաղցր արտասուաց երանուհւոյ կուսին մարիամու սիրեցելոյ մօր քոյ, որովք եթաց զերեսս քո՝ մինչ իջուցեալ 'ի խաչէն կրեաց զքեզ 'ի գրկի իւրում. վիրաւորեա՛ զսիրտ իմ քոյովք սըրբազանիւք վիրօք։ Զի նպաստութ̅ե քոյոց չարչարանաց յարաժամ ունիցիմ զքեզ 'ի մէջ սրտի իմոյ։ Դարձեալ հայցեմ 'ի քէն, տո՛ւր ինձ զերկիւղ քո ս̅բ և զսէր. ջերմացո՛ զիս սիրով կաթուղիկէի հաւատոյ, մաքրեա՛ զմիտս իմ. ուղղեա՛ զբանս իմ և զգործս, և շնորհեա՛ ինձ՝ զի յարամնայցէ սէր քո 'ի յիս. և տո՛ւր ինձ զշնորհ քո ն̅բ, զի մի անկանիցիմ 'ի փորձութիւն։ Լե՛ր ինձ միշտ օգնական, զի մի յանցանիցեմ ը̅դէմ քում մեծութե̅դ, և առաջնորդեա՛ ինձ մնալով միշտ 'ի սրտի իմում, և ուսուցանելով զիս, շուրջ պատեա՛ զինև, և զօրացո՛ զիս, և պահեա՛ զիս, զի օրհնի-



digitised by A.R.A.R.@

ցեմ զանուն քո սուրբ. ամէն:

Տէր իմ յ՟ս ք՟ս, աղաչեմ զքեզ, որ ոչ միայն ներեցեր թշնամեաց քոց, այլեւ աղաչեցեր զհայր վ՟ն դատապարտողաց, եւ խաչհանողաց: Քաղցրացո զսիրտ իմ, զի մի եղէց վրէժխնդիր չարեացն ինձ հասուցելոց. այլ զի իբրեւ զքեզ ներիցեմ յօժարութեամբ, եւ տեսցեմ համբերութ՟բ ամենեցունց, որք յանցեալք են ը՟դդէմ ինձ: Շնորհեա եւ տ՟ր իմ իմոց թշնամեաց զճշմարիտ ճանաչումն զի մի մնասցեն 'ի խաւարի, եւ 'ի չարականութե. զի մի զրկեսցին 'ի փառաց քոյոց չարչարանաց. ազատեա զնս 'ի ձեռաց ն՟ց, գոլով զինուորեցեալ զինու ս՟ր խաչին, եւ վերակոչմամբ քոյոյ ս՟ր անուան, այլ եւ անուամբ մօր քոյ եւ կուսի ազատեա զնս 'ի թշնամեաց յերեւելեաց եւ յաներեւութից: Արժանի արա զնս թողութե, թէ եւ բազում անգամ եղէ կամաց քոց հակառակ վշտացնելով զքեզ իմովք խորհրդովք չարիւք, բանիւք եւ գործովք, եւ յանձնեա զնս առ հայր քո երկնաւոր. ամէն:

digitised by A.R.A.R.@

Ոտանաւոր ոճին Թովմայի՝ առ սրբա-
զան հաղորդութիւն։

Երկրպագեմ թագեալ Ած քեզ
ջերմապէս.
որ ենթ այսոց ձևոց ծածկիս ճշմար-
տապէս:
Սիրտ իմ բոլոր ինքնին ըղձիւ քեզ
ենթարկի. զի դիտելով 'ի քեզ
ընաւն իսկ նուաղի:
Տեսակ ճաշակ և շօշափակ 'ի քեզ
սխալի. այլ լսելեօք հաւատա-
ցեալ միայն լինի:
Ներհաւատամ զոր ինչ ասաց Ած-
որդին. քանզի ոչինչ ճշմարտա-
գոյն քան զբան նորին:
Անդ 'ի խաչին թագուցանիւր
Ածութին. իսկ աստ գաղի 'ի միա-
սին և մարդկութին:
Բայց հաւատով զերկաքանչիւրն
դաւանելով. խնդրեմ զհայցեալն
աւազակին զղջանալով:
Մարմնոյդ զխոցս իբրև զԹով-
մաս ոչ նշմարեմ. սակայն Ած իմ
գոլ զքեզ ըստորասեմ:
Արա 'ի քեզ զիս առաւել զհա-
ւատս ունել. յուսալ 'ի քեզ բո-
լորովիմբ և զքեզ սիրել:

digitised by A.R.A.R.@

Ո՞վ յիշատակ չարչարանաց տ՟ն և
մահուան․ հաց կենդանի կեանս
շնորհօղ ազգի մարդկան։
Շնորհեա՛ իմում մտի քև միշտ
սնանիլ և կեալ, և զքեզ միշտ
քաղցր և բարի առ իմանալ։
Ո՞վ բարեգութ հաւալուսան տէր
իմ և յոյս, քոյով արեամբդ զան-
մաքրութի՟ն մաքրեա հոգւոյս։
Որոյ կաթիլ մի զընդհանուր աշ-
խարհ կարէ, զերծուցանել 'ի յան-
ցանաց և 'ի պատժէ։
Որ այժմ 'ի քեզ քօղեալդ յ՟ն և
եթ նայիմ, միշտ աղերսեմ զի լի-
նիցի ում ծարաւիմ։
Տեսից զքեզ տարաքօղմամբ քոյ-
ոց դիմաց, և տեսութե՟ երանե-
ցայց քոյոց փառաց։

Տաղ մարմնոյ և արեան ք՟ն։

Երգեա՛ լեզու փառաւորի,
զխորհուրդ մարմնոյ տ՟ն յ՟ի։
Այլև արեան պատուականի
զոր 'ի գին հանրոյ աշխարհի։
Պտուղն արգանդի հզօրեղի
արքայն եհեղ մարդկան ազգի։
Զի մեզ տուաւ և մեզ ծնաւ,
որ 'ի կուսէն ներմարմնացաւ։

digitised by A.R.A.R.@

Եւ յաշխարհի պանդխտեցաւ,
ուր սերմն բանին սփռեցաւ։
Կերպն յոր կենցաղավարեցաւ,
հրաշիւ մեծաւ պարփակեցաւ։
Յերեկոյին մեծի ընթրի,
ընդ աշակերտս իւր առբազմի։
Ընկալ զօրէնս վաղնջական,
'ի կերակուրս օրինական։
Որոց զմարմին իւր յուտելի,
և զարիւն իւր՝ տայ յըմպելի։
Բանն մարմին զհաց ճշմարտիւ,
առնէ մարմին իւրով բանիւ։
Այլև զգինին նովիմբք արիւն,
թէ և նուազի զգայութն։
'Ի հաստատել զսիրտս անարատ,
բաւական է միայն հաւատ։
Զայսքան ուրեմն սրբազնութն,
մերն յարգիցէ նուաստութն։
Քանզի ուսումն հնոյ կտակի,
նորոյս կարգի ըստորանկի։
Շնորհէ հաւատ զլիութն,
յորում նուազի զգայութն։
Ծնողի և ծնեցելոյն,
տացի գովութն վեհագոյն։
Պատիւ և երկրպագութն,
համայն և բարեբանութն։
Ելողին իսկ 'ի յերկոցունց,
զուգապէս լիցի գոհութն. Ամէն։

digitised by A.R.A.R.@

## Աղօթք ընդ պատարագին առնելի ։

Տէր իմ յս քս, որ ոչ միայն ար-ժանի համարեցար առնուլ զմերն մարմին, և համբերել այնքանեաց զանազանից չարչարանաց, և հա-լածանաց, պատժոց և մահու խըս-տագունեղի, այլ և հաճեցար մե-ծաւ քոյով շնորհիւ պարգևել մեզ յեկեղեցւոյ քում սբյ ըն սրբազ-նագունեղի հաղորդութե, որ 'ի վր սբյ սեղանոյն, և լինիլ նոյաւ ընծայ՝ ձիր, և շնորհ երկնային մինչև 'ի վախճանն յաւիտենից ։ Ուստի աղաչեմ զքեզ 'ի ձեռն զօ-րութեան և արդեանց այսորիկ ազնուագունեղի և անճառելւոյ սրբազնագործութե պատարագիս, զոր այժմ լուայ և տեսի՝ յորում երևին ընաւք գերազանց խոր-հուրդք քոյոց վարուց, չարչարա-նաց և մահուան, զի յանձն եղի-ցին քեզ այսօր հոգի և մարմին իմ, և որք գոն 'ի տան իմում. ողջ զի և մեք արդիւնաւորիցիմք ընդունիլ զներումն մեղաց մերոց, և կեալ վարուք քրիստոնէակա-

digitised by A.R.A.R.@

նօք ։ Նմա և յանձն եղիցի․քեզ 'ի ձեռն զօրութեան այսորիկ պատուականագունեղի սրբազնագործութեան բարձրացումն սրբոյ եկեղեցւոյ , միաբանութեան քրիստոնէից , բարձումն հերձուածողաց , դարձումն մեղաւորաց , և ազատումն հոգւոց քաւարանին ․ ամէն ։

Խրատք ԺԸ աշխարհականաց , որք գնան ննջեցելոյն առ 'ի լսել պատարագ ։

Մինչ քահանայն ասէ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ամէն ։ Պարտիմք և մեք զնոյնն ասել կնքելով զմեզ նշանաւ սրբոյ խաչին ։ Եւ մինչ ասի՝ խոստովանիմ առաջի այ ։ Պարտիմք և մեք ասել զնոյնն գոլով չոքեցեալք 'ի ծունկս ։ Եւ մինչ ասի․ աղաչեսցէ և զձեզ ։ Պարտիմք խաչակնքել զմեզ նշանաւ սրբոյ խաչին ։ Եւ քանիցս անգամ ասիցի խաղաղութիւն ընդ ձեզ ։ Պարտիմք խոնարհեցուցանել սակաւիկ ինչ ըզգլուխս ։ Եւ մինչ ասի ոք ամն ։

digitised by A.R.A.R.@

Պարտիմք և մեք ասել զնոյն ։ Եւ մինչ ընթեռնանին մարգարէականք, և առաքելականք ։ Պարտիմք չոքել, և մտադիւրութ̅բ ունկնդիր լինիլ։ Եւ մինչ ասի․ ալ̅յ աւետարանիս որ ըստ ։ Պարտիմք կնքել զմեզ նշանաւ սրբոյ խաչին 'ի ճակատս, 'ի բերանս, և 'ի կուրծս ։ Եւ մինչ աւարտի աւետարանն ։ Պարտիմք միաբան ասել․ Գոհութի̅ քեզ տ̅ր յ̅ս ք̅ս ։ Եւ մինչ ասի հաւատամն ։ Պարտիմք և մեք 'ի միասին զնոյնն ասել ։ Եւ մինչ ասի ։ Եւ ներմարմնացաւ հոգւով ս̅բվ ։ Պարտիմք չոքել 'ի ծունկս ։ Եւ մինչ ասի՝ Ողջոյն տուք ։ Պարտիմք համբուրել զմիմեանս 'ի յուսս, և խոնարհիլ միմեանց ։ Եւ մինչ ասի, տ̅ր տ̅ր տ̅ր ։ Պարտիմք չոքել և աղօթել ։ Եւ մինչ ասի՝ առէք և կերէք, և կամ արբէք 'ի սմանէ ։ Պարտիմք խոնարհիլ, և երկրպագանել կենարարի մարմ̅նոյ և արեան տ̅ն ։ Եւ մինչ ասի, հայր մեր որ յերկինս ։ Պարտիմք ամենեքեանս միաբան համաձայնիլ ։ Եւ մինչ ասի 'ի սրբութի̅ սրբոց ։ Պարտիմք երկրպագանել մարմ-

digitised by A.R.A.R.@

նոյ և արեան քնի տյ մերոյ՝ և բաղխել երիցս զկուրծս: Իսկ եթէ ոք կամիցի հաղորդիլ. մինչ ասի, հաւատամ 'ի հայր ած ճշմարիտ: Պարտի և ինքն ասել ըզնոյնն: Եւ յաւարտմանն պարտի ժողովել զմիտս իւր և ասել երիցս. տր ոչ եմ արժանի զի մտանիցես ը յարկաւ իմով, այլ ասա բանիւ միայն, և բժշկեսցի հոգի իմ: Եւ մինչ մատչի առ 'ի առնուլ զհաղորդութին. պարտի ասել, մարմին տն մերոյ յսի քսի պահեսցէ զհոգի իմ 'ի կեանս յաւիտենականս: Եւ սպասեսցէ անդ մինչև աւարտիցի պատարագն, և ընթեռնանիցի աւետարանն վերջին. 'ի սկզբանն էր բանն:

## Խրատք կառավարելոյ զընտանիս և զհպատակս:

Որք պարտականք են հարք և մեծաւորք տանց հոգալ, զի իւրքն ընտանիք երթիցեն 'ի լսել զտօնախմբութիս, և զօրհնաբան պատարագս, և առ 'ի ուսանիլ ըզքրիստոնէական վարդապետութին.

digitised by A.R.A.R.@

այսպէս գլխաւորք ընտանեաց ոչ֊
պարտին ստունկանել 'ի խրատե֊
լոյ, և 'ի հրամայելոյ իւրեանց
զաւակաց, մշակաց, աշխատողաց,
ծառայից, և աղախնեայց. զի յա֊
ւուրս տօնից երթիցեն 'ի պատա֊
րագ, տալով նց զպատշաճաւոր
ժամանակ. ապա թէ ոչ՝ մեղան֊
չեն մահացուօրէն, մինչ ոչ գոյ
հարկաւոր պատճառ արգելման:
Պարտին ևս ածել զնս առ ամե֊
նասուրբ սրբայնութիւս եկեղեց֊
ւոյ, տալով նոցին զժամանակ դի֊
պաւոր, առ 'ի կատարել զնոյնս:
Պարտին ևս ունիլ զբարի նախանձ
ուսուցանելոյ նոցին զվարդապե֊
տութիւն քրիստոնէական կատարե֊
լապէս. ապա թէ ոչ, գոնեայ ու֊
սուցանիցեն զհայր մերն. զողջոյն
քեզն. և զհաւատամն. այլ և ա֊
ռաքել զնոսա 'ի յուսումն ջեր֊
մեռանդութեան իրիք օրըստօրէ.
Ուսուցանել նց կնքել զինքեանս
նշանաւ սբյ խաչին: Ընդունել
զջուր օրհնեցեալ: Յանձնել զին֊
քեանս տն մերում յնի քնի, և
ամէնօրհնեցելոյ մօրն նր մարիա֊
մու ածածնին և միշտ կուսին, և
պահապանի իւրում սրբոյ հրեշ֊
digitised by A.R.A.R.@

տակին ։ Շնորհակալ լինիլ զա՟յ յաղագս բարերարութեանց ընդունեցելոց , և խնդրել ՚ի Նմանէ զներումն մեղաց իւրեանց ։

Պարտին եւ ուսուցանել, զի բանայցեն զգլուխ՝ մինչ մտանեն յեկեղեցին , կա՟մ մինչ անցանեն յանդիման պատկերի տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի , և ամենօրհնեցելոյ կուսին մարիամու ա՟ծածնին , և երկրպագանիցեն նոցին ։ Եւ մինչ սկսանին ուտել՝ խաչակնքիցեն զինքեանս և զկերակուրն , և ասիցեն. ՚ի փառս ա՟յ՝ և սրբուհւոյ ա՟ծածնին ։ Եւ մինչ ըմպեն՝ ասիցեն . Գոհութիւն քեզ ք՟ս ։

Պարտին եւ ուսուցանել նոցա , ասել զպսակ կամ զվարդարան ա՟ծածնի յա՟մում աւուր . իսկ եթէ ոչ՝ գոնեայ յաւուրս կիրակէից և տօնից ։

Եւ բօղարին, որ վարդարան թարգմանի՝ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ՝ տասն և հինգ. հայր մեր որ յերկինս . և հարիւր յիսուն ողջոյն քեզ մարիամ . որք են Գ՟ . անգամ Ե՟ . հայր մեր . և Գ՟ . անգամ յիսուն ողջոյն քեզ մարիամ ։ զի յերիս մասունս յիսուն յիսուն բաժանին , և զա֊

digitised by A.R.A.R.@

նազան անուամբ կոչին . այսինքն
խնդալի, ցաւալի, և փառաւոր
կամ փառօք լի ։ Եւ այսպիսի ան֊
ուանակոչութիս ունին վասն զա֊
նազան խորհրդոց յինքեանս ներ֊
պարունակելոց՝ որք են գլխաւոր
խորհուրդք փրկագործ տնօրէնու֊
թեան և ներմարմնութ՟ե տ՟ն մերոյ
յ՟սի ք՟սի ։ վասն որոյ է այս վար֊
դարանս յոյժ հաճոյ և ը՟ունելի
աղօթք ա՟յ և ա՟ծածնին . և ունի
՚ի բազմաց ծայրագունից հայրա֊
պետաց պարգևեցե՟լս զմեծամեծ և
զանթիւ ինտուլճէնցիաս, այսինքն
զներողութիս և զթողութիս մե֊
ղաց, և մանաւանդ պատժոցն նե֊
րանկելոց վ՟ս մեղաց, զորս պարտ
էր նմա հատուցանել ՚ի քաւարա֊
նին ։ բայց յորժամ զղջմամբ խոս֊
տովանի ոք զմեղս իւր, և ասէ
զրօզարին՝ բազում անգամ լինի՝
որ զամենայն զպարտս իւրոց յան֊
ցանացն աստ հատուցանէ, նա ևս
առաւել վարձուց և արդեանց ար֊
ժանանայ ։ և վ՟ս այս րօզարիս ե֊
ղեալք են յա՟յ անթիւք և մեծա֊
մեծք սքանչելիք . և մինչև ցարդ
լինին հիացապէս ։ Արդ՝ առաջին
յխառնն որ կոչի բաժին խնդալի,

Ներպարունակէ յինքեան զհինգ հայր մեր, և զյիսուն ողջոյն քեզ մարիամ: զորս պարտ է ասել այսպէս:

Նախ ասել մի հայր մեր, և Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զն̃ը աւետիսն զոր եբեր հրեշտակապետն գաբրիէլ առ կոյսն մարիամ՝ ասելով՝ ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք. օրհնեալ ես դու 'ի կանայս: ը̃ նմին և մտածելով զն̃ը յղութ̃ն կուսին, որ նոյնժամայն հոգւովն սրբով յղացաւ զբանն ա̃յ. և այլն:

Երկրորդին ասել՝ մի հայր մեր. Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զարբուհւոյ կուսին գնալն 'ի տեսութ̃ն եղիսաբեթի, որում և ետ զողջոյն: և եղիսաբեթի մեծաւ խնդութ̃բ ընկալեալ զմարիամ ասաց. օրհնեալ ես դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո. և այլն:

Երրորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զն̃ը ծնունդն, այսինքն, յորժամ ամենասրբուհի կոյսն ծնաւ զորդին իւր զանդրանիկ զկեանս աշխարհի. և բազմութ̃ն զօրաց երկ-

digitised by A.R.A.R.@

նաւորաց երգեցին զփառս 'ի բար-
ձունս տ՟յ. և այլն։

Չորրորդին ասել՝ մի հայր մեր. Ժ. ողջոյն քեզ մարիամ։ մտածելով զքառասնօրեայ գնալն 'ի տաճարն տ՟ն մերոյ, այսինքն յորժամ ծնօղքն նորա՝ ածին զնա յե՟ղեմ յանդիման առնել տ՟ն, զոր առընկալաւ սիմէոն 'ի գիրկս իւր՝ և օրհնեաց զա՟ծ և ասէ՝ արդ արձակես զծառայս քո տ՟ր ը՟ս բանի քում 'ի խաղաղութիւն. և այլն։

Հինգերորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ։ մտածելով զայն՝ յորժամ տ՟րն մեր յ՟ս ք՟ս երկոտասանամեայ նստեալ 'ի տաճարին ընդ վարդապետսն, լսէր 'ի նոցանէ և հարցանէր զնո՟ս. և այլն։

Վերջացաւ բաժին խնդալին։

Սկսանի ցաւալին։ Նմանապէս աստ եւս պարտ է,

Նախ ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ։ մտածելով զտ՟ն մերոյ աղօթելն 'ի պարտիզին, զտխրելն և զհոգալն, և զարիւն քրտնիլն. և այլն։

Երկրորդին ասել՝ մի հայր մեր. Ժ. ողջոյն քեզ մարիամ։ մտածելով զտ՟ն մերոյ կապիլն 'ի սիւնն,

digitised by A.R.A.R.@

և անդորրմաբար ձաղելն բազում գանիւ. և այլն:

Երրորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զՏ̃ն մերոյ փշօք պսակելն, ըզթուքն, զնախատինքն և զծաղր լինելն. և այլն:

Չորրորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով յորժամ Տ̃րն մեր յս̃ ք̃ս զծանր փայտ խաչին բարձեալ 'ի յուսն տանէր 'ի գողգոթա. ո՜հ որքան աշխատեցաւ վասն իմ. և այլն:

Հինգերորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զՏ̃ն մերոյ բևեռելն 'ի խաչին, զծարաւելն, և զբանականն հոգին իւր 'ի ձեռս հօրն աւանդելն. և այլն: վերջացաւ բաժինն ցաւալի:

Սկսանի փառաւորն: ըստ սոյն կերպի ևս ասա:

Նախ ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զՏ̃ն մերոյ յս̃ի ք̃ի պայծառ և փառաւորեալ ո̃ր յարութենն, և զերևելն աշակերտացն. և այլն:

Երկրորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածե-

digitised by A.R.A.R.@

լով զՏ՟ն մերոյ հրաշալի ո՟ք համ-բարձումն 'ի յերկինս, և զնստիլն ը՟ աջմէ հօր. այսինքն, հաւասար հօր. և այլն:

Երրորդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զգալուստ հոգւոյն ս՟բ 'ի վերայ աշակերտացն, զորս և ելից և հրազինեաց սիրովն ա՟յ. և այլն:

Չո՟րրդին ասել, մի հայր մեր. Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածելով զամեներանուհւոյ մօր և կուսին վերափոխիլն 'ի յերկինս և ան-պատում փառօք պսակիլն 'ի յա-մենասրբոյ Երր՟դուէն. և այլն:

Հինգե՟րդին ասել՝ մի հայր մեր, Ժ. ողջոյն քեզ մարիամ: մտածե-լով զհիանալի փառս ամենասրբոյ երրորդութէն, ամեներանուհւոյ կուսին, և ամենից հրեշտակաց և սրբոց երանեցելոց 'ի յերկինս, որք 'ի յաւիտեանս յաւիտենից օրհնեն զա՟ծ, և զմայլին երանա-ւէտ տեսութ՟ն ա՟յ. և այլն:

Արդ գիտելի է, զի յա՟մ անգամ, որ վճարի ասել մի հայր մեր որ յերկինս, և տասն ողջոյն քեզ մա-րիամ. պարտ է 'ի վերջն ասել, փառք հօր և որդւոյ, և հոգւոյն

ս՟բյ, ո՟պ էրն 'ի սկզբանէ և այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Իսկ պսակն ա՟ծածնին ունի յինքեան վաթսուն և երեք ողջոյն քեզ մարիամ, և եօթն հայր մեր. 'ի պատիւ և 'ի մեծարանս վաթսուն և երեք ամաց, զորս եկաց սրբուհի ա՟ծածինն 'ի կենցաղում յայսմիկ. և եօթն հայր մեր, վ՟ն եօթն պարգևաց հոգւոյն ս՟բյ՝ որովք զարդարեցաւ ամենասուրբ կոյսն: Եւ այսպէս ասելով. հայր մեր, որ յերկինս, և այլն: ողջոյն քեզ մարիամ, և այլն: և կրկնելով զնոյնս, բոլորովք ջերմեռանդութի մեր յոյժ արդիւնաւոր, առ 'ի ստանալ զշնորհս ա՟յ, 'ի ձեռն ամենօրհնեցելոյ ա՟ծածնին:

Պարտ է ևս երբեմն ասել զպսակն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ ունի յինքեան երեսուն և երեք հայր մեր. և հինգ ողջոյն քեզ մարիամ: և այս ասի 'ի յիշատակ և 'ի մեծարանս երեսուն և երեք ամացն՝ զորս եկաց տ՟րն մեր յ՟ս ք՟ս յայսմիկ կենցաղոջ: Յորմէ և մեք պարտիմք մինչ ասեմք զպսակս զայս, և կամ զա՟ծածնին և կամ զտար-.



digitised by A.R.A.R.@

դարանն, մաղթել զշնորհս, զներումն մեղաց, զզղջումն վարուց և զհամահետեւումն նոցին զօրութե՛ց, և համառօտապէս պարտի ամենայն ոք գոլ հոգունակ գործոյ հոգեկանի ողորմութե՛, որ է օգնական լինիլ վշտացելոց, աղդել և խրատել զմեղաւորս, առ որ յաւէտ են պարաւանդեցեալք հարք և մեծաւորք տանց:

Պարտական է ամ՛ ոք առ 'ի լսել զկատարեալ և զամբողջ պատարագ, մանաւանդ յաւուր տօնից պատուիրեցելոց: Եւ եթէ ոք թողուցու զսակաւ ինչ մասն պատարագին առանց լսելոյ՝ ներելի է, իսկ եթէ զմեծ մասն ինչ թողու՝ ոչ է ներելի, զի պարտական մնայ պատարագին: Ուստի պարտի իւրաքանչիւրոք խոհեմապէս զգուշանալ յոչ ելանելոյ յեկեղեցւոյն, մինչև աւարտեսցի բոլոր պատարագն: Քանզի եթէ ոք յաւուրս տօնախմբութե՛ց պատուիրեցելոց, թարց հաւաստի բանի, և հարկաւորի պատճառի, 'ի բաց թողուցու զլսումն պատարագի անհոգապէս՝ այնքանիցս մահացուօրէն մեղանչէ, որքանիցս զնոյնն

ստունկանէ : Մեղանչեն և այ-
նոքիկ, որք ոչ կամին սակս պղեր-
գութե̃, և չար սովորութե̃ գտա-
նիլ պատրաստք 'ի սկզբան պա-
տարագին, ոպ̃ այնոքիկ, որք ոչ
կամին կալ մինչև 'ի վերջն նորին:
Իսկ այնոքիկ, որք վ̃ս ճշգրտից
և պխտանաւորաց պատճառաց ոչ
կարեն յամ̃ն աւուր լսել զսըր-
բազան պատարագն՝ գոնեա պար-
տին գնալ յեկեղեցին առ 'ի ըն-
դունել զջուր օրհնեցեալ, չոքել
'ի ծունկս առաջի սրբագունեղի
սրբազնութե̃ մարմնոյ և արեան
տ̃ն, կնքել զինքեանս նշանաւ ս̃բ
խաչին, և հաւաքել առ ինքեանս
զզգայութիս, զմիտս, և զկամս.
զի մի ընդ վայր զբաղիցին:
Եւ ասել հինգ հայր մեր, և նոյն-
քանս ողջոյն քեզ մարիամ 'ի պա-
տիւ և 'ի մեծարանս հինգ խոց-
ուածոց տ̃ն մերոյ յ̃սի ք̃սի: Զոր
և պարտին աղաչել. զի վ̃ս անհը-
նոյ զօրութե̃ աղնուի և մեծագնի
արեան իւրոյ, հաճիցի ներել մե-
ղաց նոցին, և պարգևել զշնորհս.
զի յաւուր յայնմիկ զգաստանայ-
ցեն, և զօրանայցեն առ 'ի ոչ մե-
ղանչել ընդդէմ ա̃ծայնոյ հանդի-

digitised by A.R.A.R.@

սավէհութ՟ն, ոչ իւիք կերպիւ, ոչ խորհրդով, ոչ բանիւ, և ոչ գործով, այլ մանաւանդ մեծագունիւ զօրութ՟ արդեանց իւրոց չարչարանաց հաճիցի շնորհել նոցին զհոգին իւր ս՟բ, որպէս զի կարիցեն կեալ ըստ քրիստոնէականի կենցաղավարութ՟ն առ 'ի հաճութ՟ի սրբազանի կամաց նորին հանդերձ իւրայնօք ընտանեօք. այլ և պարտին շնորհակալ լինիլ զ՟նէ մրմէ յ՟նէ ք՟նէ, վ՟ բարերարութեանց ընդունեցելոց, և աղաչել զնոյնն սակս բոլորի եկեղեցւոյն, և վ՟ միաբանութ՟ իշխանաց քրիստոնէից, վ՟ դարձման հերձուածողաց, և հերետիկոսաց, և յաղագս լուսաւորութ՟ անհաւատից, վ՟ թշնամեաց և բարեկամաց, և սակս հոգեաց քաւարանին: Եւ ասելով զմի հայր մեր, և զմի ողջոյն քեզ մարիամ. մաղթել զ՟բն զայն, յանուն որոյ եկեղեցին այն՝ յորում են, կառուցեալ է. կամ յորում գոն նշխարք սրբոյն, կամ սրբոց, առ 'ի օգնել ոչ միայն ինքեանց, և ընտանեաց իւրեանց, այլ և բոլորի քաղաքին իւրեանց, երկրին, և գաւառին: Յետ այսո-

digitised by A.R.A.R.@

ցիկ պարտին առնել զքննութիւն իւրեանց խղճմտանաց, զղջալ, և ասել զհաւատամ 'ի մի ա՟ծն: Բայց եթէ ոք ոչ ունիցի զգիտաւորութիւն յա՟մում աւուր լսելոյ զպատարագ, և երթալոյ 'ի տունն ա՟յ, այսինքն՝ յեկեղեցին առ սրբագունեղ սրբազնութ՟ն մարմնոյ և արեան տ՟ն, այնպիսին պարտի ունել 'ի տան իւրում զմաքուր ինչ անօթ, յորում պահիցէ զջուր օրհնեցեալ, զոր ընկալեալ ջերմեռանդութեամբ հանդերձ, գնայցէ յանդիման ս՟րբ պատկերի տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի, կամ առաջի պատկերի սրբուհւոյ ա՟ծածնին, և անդ անկեալ 'ի ծունկս ասասցէ հինգ հայր մեր, և հինգ ողջոյն քեզ մարիամ, ը՟ս վերոյասացելոյ խրատու: Բայց սակայն հայր ընտանեացն, և մեծաւոր տանն պարտի ածել ևս ը՟ս ինքեան զիւր ընտանիս, առ 'ի առնել զնոյն կրթութի, և ուսուցանել որդւոց իւրոց, զի և նոքա արասցեն այսպէս, քանզի այսու ջերմեռանդութ՟բ և դոյնիւ ուշադրութ՟բ, ստանի 'ի տ՟նէ ա՟յ մեծամեծ շնորհ հոգւոյ և մարմնոյ: Ըստ այսմ ևս պար-

digitised by A.R.A.R.@

տին առնել՝ 'ի ժամու երեկոյի, ուսուցանելով որդւոց և ծառայից իւրեանց զնոյն ջերմեռանդութիւն, կրթելով զնս̃ 'ի վարս քրիստոնէականս, որպէս զի կեայցեն և մնայցեն յերկիւղն ա̃յ: Դարձեալ՝ է ևս գովելի իմն, զի մինչ լուիցի հնչիւն զանգակի աւագ եկեղեցւոյ, կամ այլոյ ուրուք մերձակայի, որ իցէ նշան վերացուցման մարմնոյ և արեան տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի, իւրաքանչիւրոք 'ի յընտանեացն չոքիցի 'ի ծունկս, և երկիրպագանիցէ հոգւով և ճշմարտութբ̃ յ̃ի ք̃ի կենագործողին աշխարհի, և յիշիցէ թէ վերացումն այն նշան իցէ բարձրացուցման տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի վասն կեցութե̃ մերոյ 'ի վերայ խաչափայտին, և խնդրիցէ 'ի նմանէ զներումն մեղաց իւրոց. այսուքիկ լինին 'ի տունս, և 'ի խանութս, և 'ի ճանապարհս. և եթէ ոք ոչ կարիցէ չոքել 'ի ծունկս, գոնեայ բանայցէ զգլուխն 'ի նշան քրիստոնէականի վերապատուութե̃, և վերացուցանիցէ զմիտսն առ ա̃ծ բաղխելով զկուրծս, և հայցելով 'ի նմանէ զներումն:

digitised by A.R.A.R.@

### Խրատք վասն բարբառոյ խոստովանելոյ զմեղս:

Նախ քան զխոստովանութիւնն խորհեա՛ց 'ի քեզ, թէ զիա՞րդ` և ըստ որում ընդդէմ ա̅յ իցես մեղուցեալ, ըստ թուոյն, ըստ ժամանակին, ըստ տեղւոյն, ը̅ անձին, ըստ արժանաւորութե̅, և ը̅ այլոց պարագայից, թէ խորհրդով, թէ բանիւ, և թէ գործով: Եւ այս իսկապէս ելուղեա՛ 'ի քեզ զզջումն մեղաց ոչ վասն ամօթոյ, կամ հարկի, կամ ունայնի փառասիրութե̅, այլ վ̅ս բարեգունեղին` քաղցրագունեղին իսկ ա̅յ, զի բարկացուցեր զնա: Յետ որոյ առաջադրեա՛ քեզ շնորհօքն ք̅ի որքան կար է փախչիլ 'ի մեղաց և 'ի մոլութե̅ց. և հետևիլ առաքինութե̅ց. և սիրել զա̅ծ վասն իւր ինքեան, և զընկերս վ̅ ա̅յ. որոց իսկ բարութե̅ցն խնդակցիլ, և չարութե̅ցն ցաւակցիլ, և յա̅մէ սրտէ քումմէ զկեցութիւն քո հոգալ:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք յառաջ քան զխոստովանութիւնն :

Ամենակարող ա̃ծ, և իրաց ամենից գերագունեղ տ̃ր, որ ըստ ինքեան ես իմաստնագունեղ, բարեգունեղ, արդարագունեղ, և ողորմածագունեղ: Պատուեմ ըզքեզ, սիրեմ 'ի բոլորէ հոգւոյ իմմէ, և 'ի համայնից իմոց զօրութե̃ց 'ի վեր քան զա̃մ. վ̃ս որոյ զղջամ իսկապէս և ցաւիմ հաւատապէս, զի այսքանիւք մեղօք իմօք զքոյդ ա̃ծային հանդիսավէհութիւն զայրացուցեալ եմ, զորս իսկ մեղս այնքան ապաշաւեմ, ատեմ, մինչ զի եթէ այժմ առնելիք էին, ոչ իւիք հաւանէի առնել զնոսա: Եւ քանզի դու միայն ես հայր ողորմութե̃ց, ուրեմն ինձ զներումն շնորհեա, զոր հայցեմ խոնարհապէս, զոր և յուսամ ընդունիլ առ 'ի քէն, վ̃ս մեծագնելի արեան փրկչին իմոյ սիրեցելոյ որդւոյ քոյ: Այլ և առաջադրեմ ինձ նպաստութ̃բ քոյոյ շնորհի, զլիագոյն պատուիրանացքոց պահպանումն, զփախուստ յառթից մեղանչելոյ, զդառնագոյն և զկատարելագոյն

digitised by A.R.A.R.@

յանցանաց իմոց զխոստովանութիւն. և առաջադրեցելոց ապաշխարութեանց զամբողջ վճարումն: Այլ արդ՝ վ՟ս վճարառութեան զիս բոլոր քեզ ընծայեմ, ընդ առիս և կրից իմոց, զորս ըղձամ, զի բարեհաճութ՟բ առընդունիցիս 'ի միութիւն արդեանց որդւոյ քո տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի: Եւ որ ինչ անյաջողութիւն ինձ գխպիցի, ըմբերեցից վ՟ս մեծագունեղի սրբագունեղի իսկ քոյոյ անուան, որում և զիս ծառայ զոհ մշտնջենաւոր ասեմ, և տ՟նագրեմ:

Յորժամ մեղանչես, վաղվաղակի ողբա և հեծեծեա, ոչ վասն այնորիկ, զի զպատիժ կրելոց իցես, այլ վ՟ս այնորիկ, զի զ՟տր քո զայրացուցեր, զայնքան բարերարն քո, զայնքան սիրողն զքեզ, զայնքան կեցութեան քոյոյ զկարօտն, մինչ զի զորդին եւս իւր 'ի պատճառս քո մատնեաց. հեծեծեա ուրեմն, և մի երբէք թողուր քեզ զմեղս առնել:



digitised by A.R.A.R.@

### Աղօթք յառաջ քան զխոստովանութեանն :

Ո՛վ բարեգութ տր̃ իմ յս̃ քս̃, աղաչեմ զքեզ 'ի բոլորէ սրտէ, և 'ի բնաւից մտաց իմոց, ընկա՛լ ըզխոստովանութիւն իմ, զոր կամիմ առնել այսօր առաջի քո, և տո՛ւր ինձ ճշմարիտ զղջումն վասն բնաւից իմոց յանցանաց : Ո՛վ քաղցրագունեղ յս̃' առաքեա՛ 'ի հոգի իմ և 'ի միտս իմ զլոյս ճշմարտութե̃ քո առ 'ի գիտել և ճանաչել զհանուրս մեղս' և զյանցանս իմ, զորս պա՛րտիմ խոստովանիլ առաջի քո . և առ 'ի ուսուցանել ինձ, զի կարիցեմ լռութե̃ սիրոյ' և ջերմեռանդութե̃, մատչիլ առ այսքան ահաւոր խորհուրդ ապաշխարութեան . ամէն :

Յետոյ գնալ պարտիմք առ խոստովանահայրն . և խաչակնքել ըզդէմս մեր ասելով' յանուն հօր . և այլն : և ասել խոստովանիմ առաջի այ̃, որպէս 'ի վերոյ : և ապա սկսանիլ պատմել մանաւորապէս զգործեցեալ մեղս :

digitised by A.R.A.R.@

## Աղօթք զկնի խոստովանութեան ։

Եղիցի քեզ Տ՟ր աղերսեմ արդեամբք երանուհւոյ միշտ կուսին ծնողի քո մարիամու, և համայնից սրբոց, հաճելի և ընդունելի այս խոստովանութիւն իմ․ և որ ինչ պակաս մնաց ինձ այժմ և յայլում ժամու՝ թէ 'ի բաւականութենէ զղջման, թէ 'ի պարզութ՟է արտաբերման, և թէ յամբողջութենէ խոստովանութ՟է, լցցէ գթութ՟ի քո և ողորմութ՟ի, որովք և հաճիցիս լիապէս և կատարելապէս արձակել զիս 'ի յերկինս ։ Որ կեաս և թագաւորես ընդ հօր և ընդ սրբրոյ հոգւոյն ա՟ծ 'ի յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

## Աղօթք զկնի խոստովանութեան ։

Ով տէր իմ և փրկիչ իմ յ՟ս ք՟ս, աղաչեմ զքեզ, հաճեա՛ց քոյով շնորհիւ վերընդունել զխոստովանութ՟ի իմ․ և լի՛ց զպակասութ՟ի սորին քոյով անհնին բարեգթութ՟եդ․ շնորհեա՛ ևս զներումն իմոց բնաւից յանցանաց քոյով ո

ողորմութե՟դ. զի արժանի եղէց 'ի փառս քոյս մեծագոյնս ընդունել զկենարար մարմին, և զարիւն քո սբ՟. ամէն:

Աղօթք յառաջ քան զհաղորդութիւն:

Ո՜վ Տ՟ր իմ յս՟ քս՟, իրաւի ես ոչ եմ արժանի ընդունել զքեզ, սակայն վասն կարևորութե՟ իմոյ գամ առ քեզ, զի հիւանդութե՟ իմ քև բժշկեսցի, և խաւար մտաց իմոց քև լուսաւորեսցի, աղքատութիւն իմ քև փարթամասցէ, և գործք իմ բարիք քև արդիւնաւորեսցին. ամէն:

Յիշեա՛ ո՜վ Տ՟ր իմ, զի ետուր ըզքեզ 'ի մահ վասն իմ, և զկենարար մարմին և զարիւն քո բաշխեցեր 'ի կենդանութե՟ իմ. արա՛ ուրեմն, զի լինիցին սոքա 'ի քաւութե՟, և 'ի թողութե՟ մեղաց իմոց. և մի՛ 'ի դատապարտութե՟ հոգւոյ իմում, որովք արժանաւորեսցայց պարակցիլ ընդ սրբոց քոց, և տեսութե՟ երանեցայց քոյոց փառաց:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք սրբոյն Օգոստինոսի :

Տէր իմ յս̃ քս̃, ճանաչեցից զիս, ճանաչեցից զքեզ. մի՛ զայլ ինչ ըղձանայցեմ եթէ ոչ զքեզ. զի ատեցից զիս, և սիրեցից զքեզ. խոնարհեցուցանիցեմ զիս, և բարձրացուցանիցեմ զքեզ. զոչ ինչ խորհիցիմ, եթէ ոչ զքեզ. մեռուցանիցեմ զիս, և կենդանի լիցեմ 'ի քեզ: Զոր ինչ գայցէ առ իս, ընդունիցիմ 'ի քէն. հալածիցեմ զիս, և հետևիցիմ քեզ, և միշտ բաղձայցեմ հետևիլ քեզ: Փախիցիմ յինէն, և դիմիցեմ առ քեզ, և արժանի լինիցիմ պաշտպանիլ 'ի քէն. երկիցեմ 'ի յիս, և երկնչիցիմ 'ի քէն, և լիցեմ 'ի ընտրելոց քոց. տարաձայնիցիմ ինձ, և համաձայնիցիմ քեզ. և հնազանդիլ կամիցիմ վս̃ քոյ: Ո՛չ իւիք զգածիցիմ, եթէ ոչ քև: Նկատեա՛ առ իս, զի սիրեցեմ ըզքեզ. կոչեա՛ զիս, զի տեսանիցեմ զքեզ: Եւ 'ի յաւիտեան զմայլիցիմ քև. ամէն:

digitised by A.R.A.R.@

Եւ ապա հասցէ՛ր առ հաղորդութեան ոք՝ առնելով. Մարմին փրկական ձեռօք. որպէս 'ի ձեռօք:

## Աղօթք զկնի հաղորդութեան:

Ո՛վ տ՟ր իմ յ՟ս ք՟ս, հաց կենդանի, և զկեանս շնորհօղ ազգի մարդկան, անհնապէս զքէն շնորհակալ լինիմ, որ արժանի արարեր զիս զմեղաւորս քոյով շնորհիւ թարց իմոց արդեանց, հաղորդիլ կենարար մարմնով և արեամբ քով: Ուստի աղաչեմ զքեզ, լիցի սա ինձ զէն հաւատոյ, և վահան ամրութե կամաց իմոց, համբարձումն սրտի, և մտաց իմոց առ քեզ, և լրումն ծայնոյ քոյոյ սիրոյ, արտախլումն բնաւից վատթարութեց, և 'ի ծաղկումն համայնից առաքինութեց. աներկեանութիւն 'ի շաւիղս բարեգործութե, և զերծումն յամենից փորձութեց, զի քև՝ և 'ի շաւիղս քոյս պանծացեալ աՃապարիցեմ 'ի հարսանիս քոյս երկնայինս, և խնդակցեցիմ քոյոց սիրելեաց. զի դու ես լոյս Ճշմարիտ՝ կեանք, քաղցրութե և յոյս մեր. ամէն:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Կերպ յանձն առնելոյ զինքն յամենայ-
նում առաւօտ առ սրբուհի կոյսն մարիամ
ա̄ծածին ։

ՈՎ ԱՄԵՆԱՍՐ-
բուհի կոյս մարիամ, մայր
այ, Թագուհի երկնից,
բարեխօսդ մեղաւորաց, և ապա-
ւէնդ վշտացելոց, թէպէտ ես ա-
մենևիմբ եմ անարժան գոլոյ քոյդ
ծառայ ։ Սակայն շարժեցեալ 'ի
յըղձէ քեզ ծառայելոյ, և ապա-
ւինեցեալ 'ի քոյդ ամենամեծ առա-
քինութն, ընտրեցի զքեզ այսօր
առաջի պահապանի իմոյ հրեշտա-
կի, և առաջի հանուրց զօրաց երկ-
նայնոց լինել 'ի սեփական տիրու-
հութի, 'ի պաշտպանութիւն, և 'ի
մայրութիւն ։ Եւ հաստատապէս
յառաջադրեմ միշտ ծառայել քեզ
յօժարութբ կամաց, և առնել,
զի և այլք նմանապէս ծառայիցեն
քեզ ։ Արդ՝ մաղթեմ 'ի քէն ով

ամենաբարեգութ մայր, միջնորդութիւն պատուականի արեան որդւոյ քո միածնի ցօղեցելոյ վասն իմ յերկիր, զի ընկալցիս զիս 'ի թիւս այլոց քոյոց ջերմեռանդից պաշտողաց, 'ի ծառայութիւն մշտնջենական, և այց առնիցես ինձ յիմս գործառնութիւնս: Ժտեա՛ ուրեմն վն իմ զշնորհս գործունեայս, որովք մարթիցիմ այնպէս կենցաղավարիլ 'ի բնաւս խոկմունս, 'ի բանս և 'ի գործս, մինչ զի ոչ ինէք անհաճոյ գտանիցիմ յաչս քոյս ամենամաքուրս` և ոչ ինէք յանցաւոր առաջի որդւոյ քո միածնի: Յիշեա՛ զիս ո՛վ մայր ողորմութե՛, և մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց 'ի ժամու մահուան իմոյ, մինչև չուիցէ հոգի իմ յայսմանէ տառապանաց մարմնոյ ճշմարիտ ապաշխարութե՛ իւրոցն յանցանաց. ամէն:

## Աղօթք առ սրբուհի Ածածինն:

Ո՜վ սրբուհի կոյս մարիամ քաղցրագունեղ` թագուհի շնորհաց` բարեխօսդ մեղաւորաց` և ապաւէնդ վշտացելոց, կարկառեա՛ զաչս քոյոյ

digitised by A.R.A.R.@

բարեգթութե՟ յաղաչանս խոստա-
նի քոյոյ ծառայի, և տո՛ւր ինձ
շնորհիւ քով համարիլ 'ի թիւս
քոյոց սիրելեաց, և պահպանեա՛
զիս 'ի մէջ քոյոց կուսականաց
դրկաց: Ո՞վ մաքրագունեղ կոյս,
մաքրեա՛ զսիրտ իմ յամենից մե-
ղաց, բա՛րձ և տարամերժեա՛ յի-
նէն զա՟մ ինչ, որ անհաճոյ է ա-
ռաջի քոյոց աչաց: Արբեա՛ զհոգի
իմ յամենից ցանկութե՟ց երկրա-
նոց, և վերացո՛ 'ի սէր երկնայնոց
բարեաց, և մշանջենականաց: Ով
ամենասրբուհի կոյս, բարեխօս լեր
վա՟ իմ առ որդիդ քո այժմ և միշտ
և 'ի կետի մահուան իմոյ, զի
միջնորդութե՟ քով զերծանիցիմ
'ի հրոյն յաւիտենականէ, և զկնի
այսորիկ թշուառացելոյ կենցա-
ղոյս քև զմայլեցիմ 'ի դրախտին:
Մի՛ ուրեմն դարձուցանիցես ո՛վ
կոյս ամենամաքուր, զաչս քոյոց
շնորհաց յինէն յանցաւորէս, զի
յանձն առնեմ զհոգի և զմարմին
իմ քում բարեգթութե՟: Փութա-
ցի՛ր զերծուցանել զիս 'ի բնաւից
չարեաց, և 'ի կասկածանաց այ-
սորիկ կենցաղոյս, և հաճեա՛ց բա-
րեխօսել վասն իմ առ որդիդ քո

digitised by A.R.A.R.@

միածին, զի շնորհեսցէ ինձ զնե-րումն յանցանաց, զճշմարիտ հաւատ, զյոյս հաստատուն, և զսէր ջերմեռանդ, զշնորհս իսկ հոգւոյն սրբոյ, առ 'ի առնել միշտ զբարեգործութիւն իւր: Այլև կամիցի իւրով բարեգթութեամբն պահպանել զքաղաքս զայս 'ի պատերազմէ, 'ի մահուանէ, և 'ի սովոյ. և ազատեսցէ զիս և զբնաւ ազգայինս, և զբարեկամս, իսկ և զհանուրս հաւատարիմ քրիստոնեայս յամենից չարեաց. ամէն:

Ջերմեռանդութիւն առ Եօթն Վէրս Գլխաւորս Ամենաօրհնեալ Կուսին Մարիամու:

## Առաջին Վէրն:

Երկրպագեմ քեզ տ̃ր իմ յ̃ս ք̃ս. և աղաչեմ զքեզ յիշատակաւ սրբոյն այնորիկ սրտադունեղի, որ թափանցեաց 'ի սիրտ ամենասրբուհւոյ մօր քոյ և կուսի, մինչ յայտնեցաւ նմա 'ի ծերունւոյն սիմէոնէ չարչարելուն քո կարծրագոյն, մահ քո խստագոյն. զի հաճիցիս շնորհել ինձ զկատարեալ ճանաչելութիւն, և զճշմա-

digitised by A.R.A.R.@

ըստ ապաշխարութե՛ն իմոցն յան-
ցանաց ։
Հայր մեր որ յերկինս ։
Ողջոյն քեզ մարիամ ։

## Առ Երկրորդ Վէրն ։

Երկրպագեմ քեզ տ̃ր իմ յս̃ քս̃, և աղաչեմ զքեզ միջնորդութ̃ վերին այնորիկ, զոր կրեաց մայր քո ամենօրհնեցեալ, մինչ ազդեցութ̃ հրեշտակին փախչելով 'ի հալածմանէ հերովդէի, ը̃ սրբոյն յովսեփայ իւրում մաքրագունեղի փեսային, էած զքեզ 'ի յեգիպտոս, յանձն առնելով զմեծամեծ տառապանս 'ի ճանապարհի․ զի հաճիցիս շնորհել ինձ զօգնութի՛ն ընդդէմ փորձութե՛ց, և զնպաստութի՛ն ընդդէմ պատրանաց և խաբէութե՛ց թշնամւոյն դժոխայնոյ ։
Հայր մեր որ յերկինս ։
Ողջոյն քեզ մարիամ ։

## Առ Երրորդ Վէրն ։

Երկրպագեմ քեզ տ̃ր իմ յս̃ քս̃, և աղաչեմ զքեզ միջնորդութ̃ վերին այնորիկ, զոր կրեաց ամենա-

digitised by A.R.A.R.@

սրբուհի մայր քո 'ի ժամուն յայնմիկ, յորում էր կորուսեալ համարէր զքեզ, մինչև եգիտ զքեզ 'ի տաճարին, յորում վիճաբանէիր ընդ գիտնոց. զի հաճիցիս շնորհել ինձ զկատարեալ ներումն իմոց բնաւից յանցանաց՝ և սրբել զհոգի իմ քոյով աստուածայնով շնորհիւ:
Հայր մեր որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

### Առ Խորհուրդ Վեցերորդն:

Երկրպագեմ քեզ Տէր իմ Յիսուս Քրիստոս, և աղաչեմ զքեզ միջնորդութեամբ մեծագունեղի վերին այնորիկ, զոր ընկալաւ ամենասրբուհի մայր քո, մինչ գուժեցեալ եղև նմա դառնագունեղ լուրն այն, թէ պաշարեցեալ էիր դու 'ի չարագործաց, ըմբռնեցեալ յանհաւան հրէից, ամբարշտապէս կապեցեալ, խստաբարոյապէս ձաղեցեալ, և փշով պսակեցեալ. զի հաճիցիս ընծեռել ինձ զշնորհս առ 'ի ծառայել քեզ մաքրութեամբ, խոնարհութեամբ, և երկայնմտութեամբ, մինչև 'ի վախճան:
Հայր մեր որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

digitised by A.R.A.R.@

## Առ հինգերորդ վէրն :

Երկրպագեմ քեզ տէր իմ յիսուս, և աղաչեմ զքեզ միջնորդութբ կարծրագունեղի վիրին այնորիկ, զոր կրեաց ամենասրբուհի մայր քո, մինչ եաես զքեզ 'ի կրելն 'ի վր̃ սրբազնագունեղից ուսոց քոց զծանրաբեռնութի սրբոյ խաչին, զոր բարձեալ տանէիր 'ի լեառն կառափման. զի հաճիցիս պարգևել ինձ զճշմարիտ ապաշխարութի, և 'ի վշտակրութիւնս քում ա̃ծայնոյ հանդիսավէհութե՝ իմոյ անձին յանձնարարութի :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ մարիամ :

## Առ վեցերորդ վէրն :

Երկրպագեմ քեզ տէր իմ յիսուս, և աղաչեմ զքեզ միջնորդութբ սաստկագունեղի վիրին այնորիկ, զոր կրեաց ամենասրբուհի և ցաւագնեցեալ մայրն քո, մինչ եաես զքեզ 'ի մեծամեծ չարչարանս՝ բևեռեցեալ 'ի վերայ սբ̃յ խաչափայտին, յորում սրագունեղիւք բևեռօք ձեռք քո սրբազնագունեղք և

digitised by A.R.A.R.@

տաք էին սեւեռեցեալք, և զքեզ բարձրացուցեալ 'ի վեր 'ի նշաւակ բոլորի աշխարհի. զի հաճիցիս տալ ինձ զշնորհս, որովք յառաջ քան զմեռանիլն իմ՝ կարիցեմ ը̄ղձանիլ ջերմեռանդապէս և արժանա̄պս զարբաղնուն քոյոյ սրբազունեղի և կատարելագունեղի մարմնոյ և արեան. և մեռանիլ հաւատարմապէս 'ի մէջ քոյոց բազկաց:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ մարիամ:

## Ե. ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԻՆ:

Երկրպագեմ քեզ տ̄ր իմ յ̄ս ք̄ս, և աղաչեմ զքեզ միջնորդութ̄ կարծրագունեղի վերին այնորիկ, զոր կրեաց ամենասրբուհի մայր քո վշտագնեցեալ, մինչ ետես ըզքեզ մեռեալ և թաղեցեալ, բոլորովիմբ խոցոտեցեալ, և տգեղացեալ. զի հաճիցիս 'ի վախճանի կենաց իմոց մխիթարել զիս քոյով շնորհիւ, և տալ ինձ վայելել զքեզ զկնի մահուան իմոյ 'ի փառս յաւիտենականս:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ մարիամ:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք առ սրբուհին Աստուածածինն :

Ո՜վ ամենասրբուհի կոյս՝ ով մայր ողորմութեան, և ապաւէն մեզ թշուառից մեղաւորաց, աղաչեմ զքեզ 'ի ձեռն այնոցիկ վշտաց քոց, որոց 'ի մեծարանս է խոկում կարի և ընձի մատուցի զաղօթս վերոգրեալս, զի հաճիցիս մաղթել վն իմ 'ի սիրեցելոյ որդւոյ քումմէ զշնորհս ցաւակցութեն յանցանաց իմոց անցելոց, և զյարամնայութիւն յիւրում սրբազանի պաշտաման 'ի փառս տն այ օրհնեցելոյ 'ի յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Զերծանութիւնք առ եօթն խնդութիւնս, որովք զմայլէր տիրուհին մեր 'ի յերկինս :

## Առ առաջին խնդութիւնն :

Խնդա ով հարսն անարատ հոգւոյն սբյ, հանդերձ բերկրանօքն զորս ունիս արդ 'ի դրախտին : Քանզի սակս քոյոյ խնկականի մաքրութեան և կուսութեն բարձրա֊

ցար 'ի վեր քան զհրեշտակս, և գերակայացար 'ի վեր քան զամենս: Ողջոյն քեզ, և այլն:

## Առ երկրորդ խնդութիւն:

Խնդամ ով ճշմարիտ մայր այ̃ հանդերձ զուարճութեն, զոր ունիս 'ի դրախտին: Քանզի ոպ̃ արեգակն աստ 'ի յերկրի լուսաւորէ զբոլոր աշխարհ՝ այսպէս դու քոյովք ճառագայթիւք զարդարես և պայծառացուցանես ըզդրախտն բոլոր: Ողջոյն քեզ մարիամ. և այլն:

## Առ երրորդ խնդութիւն:

Խնդամ ով ճշմարիտ դուստր այ̃ հանդերձ հրճուանօքն, զոր ունիս արդ 'ի դրախտին: Քանզի հանուրք քահանայապետութիք հրեշտակաց և հրեշտակապետաց, աթոռոց և տէրութեց, և համայնք հոգիք երանելեաց պատուեն և մեծարեն զքեզ. և վերաճանաչեն իբր մայր ստեղծողին իւրեանց, հպատակին իսկ յամենայնի քում նշմարութե: Ողջոյն քեզ. և այլն:

digitised by A.R.A.R.@

## Առ չորրորդ խնդրուածն ։

Խնդա՛ ով աղախին ամենասրբոյ երրորդութեան հանդերձ ուրախութեան, զոր ունիս 'ի դրախտին ։ Քանզի զընաւս շնորհս, զորս հայցես 'ի քումմէ քաղցրագունեղէ և հնազանդագունեղէ որդւոյ, խակոյն քեզ շնորհէին ։ Եւ մանաւանդ ոպ ասէ սբն բեռնարտոս՝ ոչ ումեք աստ 'ի յերկրի զեղանի շնորհ, եթէ ոչ նախ անցանիցէ 'ի ձեռանէ քումմէ դերամեծարէ ։ Ողջոյն քեզ, և այլն ։

## Առ հինգերորդ խնդրուածն ։

Խնդա՛ ով իշխուհիդ պարզագունեղ հանդերձ բերկրանօքն, զորս ունիս 'ի դրախտին ։ Քանզի դու միայն արդիւնաւորեցար գոլ ընդունակ այսքանում արժանապատուութեան, 'ի մէջ հանուրց երանելեաց, որք են 'ի յերկինս, և կաս մերձաւորագոյն քան զայլս առ ամենասուրբ երրորդութիւն ։

Ողջոյն քեզ, և այլն ։



digitised by A.R.A.R.@

## Առ Վեցերորդ Խնդութիւն :

Խնդա՛ ով յոյժ մեղաւորաց և ապաւէնդ վշտացելոց հանդերձ զուարձութեամբն, զոր ունիս 'ի դրախտին : Քանզի զընաւս քոյս ծառայս ջերմեռանդս, որք գովաբանեն և վերյարգեն զքեզ յայսմիկ աշխարհի, վարձատրելոց է հայրն յաւիտենական իւրով սրբազնագունեղիւ շնորհիւ, և 'ի հանդերձելումն իւրովք սրբազնագունեղիւք փառօք : Ողջոյն քեզ մարիամ. և այլն :

## Առ Եօթներորդ Խնդութիւն :

Խնդա՛ ով մայր դուստր և հարսն ա̃յ : Քանզի համայնք շնորհք և բերկրութիւնք, որովք զմայլիս 'ի դրախտին, ոչ երբէք են նուազելոցք, այլ մանաւանդ ճոխանալոցք, մինչև յօր դատաստանի, և յարամնալոցք 'ի յաւիտեանս յաւիտենից . ամէն : Ողջոյն քեզ . և այլն :

digitised by A.R.A.R.@

Լիթանեայք առ սբ՟ տիրածինն ամենե-
բանեալ:

Տէր ողորմեա՛ց:
Քս՟ ողորմեա՛ց:
Տէր ողորմեա՛ց:
Քս՟ լո՛ւր մեզ:
Քս՟ յա՛ր լուր մեզ:
Հայր երկնաւոր Ած՟ . ողորմեա՛ց մեզ:
Որդի փրկիչ աշխարհի Ած՟ . ողոր-մեա՛ց մեզ:
Հոգիդ սբ՟ Ած՟ . ողոր:
Սբ՟ Երրորդութիւն մի Ած՟, ողոր-մեա՛ց մեզ:
Սրբուհի մարիամ . աղօթեա՛ վսն՟ մեր:
Սբ՟ Ածածին . աղօ:
Սբ՟ կոյս կուսանաց . աղօ:
Մայր Քսի՟ . աղօ:
Մայր Ածային շնորհաց . աղօ:
Մայր մաքրագունեղ . աղօ:
Մայր ողջախոհագունեղ . աղօ:
Մայր անարատ . աղօ:
Մայր ամբիծ . աղօ:
Մայր սիրելի . աղօ:
Մայր սքանչելի . աղօ:
Մայր ստեղծողին . աղօ:
Մայր կեցուցչին . աղօ:

digitised by A.R.A.R.@

Կոյս խոհեմագունեղ․ աղօ։
Կոյս գերյարգելի․ աղօ։
Կոյս քարոզելի․ աղօ։
Կոյս կարող․ աղօ։
Կոյս բարեգութ․ աղօ։
Կոյս հաւատարիմ․ աղօ։
Հայելի արդարութե̃․ աղօ։
Աթոռ իմաստութե̃․ աղօ։
Պատճառ մերոյ խնդութեան․ ա֊
ղօթեա՛ վասն մեր։
Անօթ հոգեւորական․ աղօ։
Անօթ պատուելի․ աղօ։
Անօթ յարգական ջերմեռանդու֊
թեան․ աղօ։
Վարդ խորհրդական․ աղօ։
Աշտարակ դաւթեան․ աղօ։
Աշտարակ փղոսկրեայ․ աղօ։
Պալատ ոսկեղէն․ աղօ։
Տապանակ ուխտի․ աղօ։
Դուռն երկնից․ աղօ։
Աստղ առաւօտեան․ աղօ։
Կեցութի̃ հիւանդաց․ աղօ։
Ապաստան մեղաւորաց․ աղօ։
Մխիթարիչ վշտացելոց․ աղօ։
Օգնական քրիստոնէից․ աղօ։
Թագուհի հրեշտակաց․ աղօ։
Թագուհի նահապետաց․ աղօ։
Թագուհի մարգարէից․ աղօ։
Թագուհի առաքելոց․ աղօ։

digitised by A.R.A.R.@

Թագուհի մարտիրոսաց. աղօ:
Թագուհի խոստովանողաց. աղօ-
թեա՛ վասն մեր:
Թագուհի կուսանաց. աղօ:
Թագուհի ամ սրբոց. աղօ:
Գառն այ, որ բառնաս զմեղս աշ-
խարհի:
անսա՛ մեզ տր:
Գառն այ, որ բառնաս զմեղս աշ-
խարհի:
յար լո՛ւր մեզ տր:
Գառն այ, որ բառնաս զմեղս աշ-
խարհի:
ողորմեա՛ց մեզ:
Քս լո՛ւր մեզ:
Քս յար լո՛ւր մեզ:

## Աղօթք:

Ած անճառելւոյ ողորմութեն, որ ոչ միայն մարդ՝ այլև որդի մարդոյ լինիլ հաճեցար. և ծնանելով 'ի կուսէ զմայր 'ի յերկրի ունեցեր՝ որ զած ունէիր հայր 'ի յերկինս, տո՛ւր մեզ աղերսեմք՝ նորին զյիշատակն ջերմեռանդապէս հըռչակել, նորին զմայրութիւն գերազանցապէս գերյարգել. նորին գերազանցագունեղն արժանապատ-

ութեն զմեզ խոնարհագլէս են֊
թարկել, որ զքեզ հոգւով սրբով
յղացաւ, զքեզ կուսութբ ծնաւ.
և զքեզ 'ի յերկրի ինքեան հպա֊
տակ ունեաց, զորդ մեր յն քն:
Որ կեաս և թագաւորես ը հօր,
և ը սբյ հոգւոյն 'ի յաւիտեանս.
ամէն:

Լիտանիայ առ տէրն մեր յիսուս քրիս֊
տոս:

Տէր ողորմեա՛ց:
Քս ողորմեա՛ց:
Տր ողորմեա՛ց:
Յս լո՛ւր մեզ:
Քս յա՛ր լուր մեզ:
Հայր երկնաւոր ած. ողորմ:
Որդի փրկիչ աշխարհի ած. ողոր:
Հոգիդ սբ ած. ողոր:
Սբ Երրորդութի մի ած. ողոր:
Յս որդի այ կենդանւոյ. ողոր:
Յս ճառագայթ հօր. ողորմ:
Յս ճաճանչ լուսոյ յաւիտենա֊
կանի. ողորմ:
Յս թագաւոր փառաց. ողոր:
Յս արեգակն արդարութե. ող:
Յս որդի մարիամու կուսին. ող:
Յս սքանչելի. ողորմ:

digitised by A.R.A.R.@

Յս̄ ա̄ծ հզօր· ողորմ։
Յս̄ հայր հանդերձելոյ յաւիտե-
նին· ողորմ։
Յս̄ մեծի խորհրդոյ հրեշտակ· ող։
Յս̄ կարողագունեղ· ողորմ։
Յս̄ համբերողագունեղ· ողոր։
Յս̄ հնազանդագունեղ· ողոր։
Յս̄ հեզ և խոնարհ սրտիւ· ող։
Յս̄ ողջախոհութե̄ սիրօղ· ողոր։
Յս̄ իսկական սիրող մեր· ողոր։
Յս̄ ա̄ծ խաղաղութե̄· ողորմ։
Յս̄ հեղինակ կենաց· ողորմ։
Յս̄ օրինակ առաքինութե̄· ող։
Յս̄ նախանձաւոր հոգւոյ· ող։
Յս̄ ա̄ծ մեր· ողորմ։
Յս̄ ապաւէն մեր· ողորմ։
Յս̄ հայր աղքատաց· ողորմ։
Յս̄ գանձ հաւատացելոց· ող։
Յս̄ քաջ հովիւ· ողորմ։
Յս̄ լոյս ճշմարիտ· ողորմ։
Յս̄ իմաստութի̄ յաւիտենական·
ողորմ։
Յս̄ բարութի̄ անհուն· ողորմ։
Յս̄ ճանապարհ մեր և կեանք·
ողորմեա́ց մեզ։
Յս̄ ցնծութի̄ հրեշտակաց· ողոր։
Յս̄ վարդապետ առաքելոց· ող։
Յս̄ ուսուցիչ աւետարանչաց· ող։
Յս̄ արիութի̄ մարտիրոսաց· ող։

digitised by A.R.A.R.@

Յ՟ն լոյս խոստովանողաց. ող։
Յ՟ն պսակ սրբ՟ց ամենից. ողորմ։
Այցելու մեր լեր.
անսամ մեզ յիսուս։
Քաւարար մեր լեր.
յար լուր մեզ յ՟ն։
Յամենից մեղաց՝ զերծո զմեզ յ՟ն։
՚ի ցասմանէ քումմէ. զերծ։
Յորոգայթից դիւին. զերծ։
՚ի յոգւոյ պոռնկութ՟ե. զերծ։
՚ի մահու յարակայէ. զերծ։
՚ի ստունկանմանէ քոյոց ներշնչ-
մանց. զերծ։
Վասն խորհրդեան ներմարմնութե
քոյ սր՟բյ. զերծ։
Վ՟ն ծննդեան քոյ. զերծ։
Վասն մանկութ՟ե քոյ. զերծ։
Վասն ա՟ծայնագունեղից քոյոց վա-
րուց. զերծ։
Վասն քոյոց աշխատանաց. զեր-
ծո զմեզ յ՟ն։
Վասն հանդիսի և չարչարանաց
քոց. զերծ։
Վասն խաչի և միայնակի թաղեց-
ման քոյ. զերծ։
Վասն քոյոց վշտակրութ՟եց. զեր-
ծո զմեզ յ՟ն։
Վասն մահու քոյ և թաղման.
զերծո զմեզ յ՟ն։

digitised by A.R.A.R.@

Վասն քոյոյ յարութեան. զերծո զմեզ յ͞ս:
Վ͞ն քոյոյ համբարձման. զերծո:
Վասն քոյոյ ցնծութեան. զերծո զմեզ յ͞ս:
Վասն քոյոյ փառաւորութեան. զերծո զմեզ յ͞ս:
Գառն ա͞յ, որ բառնաս զմեղս աշխարհի:
անսա՛ մեզ տ͞ր:
Գառն ա͞յ, որ բառնաս զմեղս աշխարհի:
յար լո՛ւր մեզ տ͞ր:
Գառն ա͞յ, որ բառնաս զմեղս աշխարհի:
ողորմեա՛ց մեզ:
Յ͞ս անսա՛ մեզ:
Յ͞ս յար լո՛ւր մեզ:

## Աղօթք:

Տէր յ͞ս ք͞ս, որ ասացեր, հայցեցէք և առնուցուք, խնդրեցէք և գտանիցէք, բաղխեցէք և բացցի ձեզ, աղաչեմք տո՛ւր մեզ հայցողաց զիղձ ա͞ծայնոյ քոյոյ սիրոյ, զի զքեզ սրտիւ բոլորով, բանիւ, և գործով սիրեսցուք, և 'ի քումմէ գովութենէ ոչ երբէք դադա֊



digitised by A.R.A.R.@

րիցուք, որ կեաս և թագաւորես ա̃ծ ընդ հօր, և ը̃ս սբ̃յ հոգւոյն, 'ի յաւիտեանս. ամէն:

Քոյոյ մարդկութե̃ ա̃ծութեամբ օծեցելոյ տ̃ր յ̃ս ք̃ս՝ զերկիւղ համանգամայն և զսէր արա՛ մեզ ունել յարակայապէս, քանզի ոչ երբէք 'ի քումմէ հոգաբարձութենէ անտես առնես, զորս ընդ սերտութե̃ քոյոյ սիրելութե̃ներհաստատես, որ կեաս և թագաւորես ա̃ծ 'ի համայն յաւիտեանս. ամէն:



digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

# ԵՕԹՆ ՍԱՂՄՈՍՔ

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

### Սաղմոս Զ.

ՏԷՐ ՄԻ ՍՐՏՄՏՈՒ-ԹԵամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեաց ինձ Տէր. զի հիւանդ եմ. բժշկեա զիս Տէր, զի խռովեցան ոսկերք իմ։

Եւ անձն իմ յոյժ խռովեցաւ. եւ դու Տէր մինչեւ յերբ։

Դարձիր Տէր, և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր վասն ողորմութեան քո։

Զի ոչ ոք է ի մահու որ յիշէ զքեզ. իսկ ի դժոխս ո՞ խոստովանեսցի քեզ։

Վաստակեցայ ես ի հեծութեան

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

# ԵՕԹՆ ՍԱՂՄՈՍՔ
## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ:

Սաղմոս. Զ:

ՏՐ ՄԻ՛ ՍՐՏՄՏՈՒ-
թ՟բ քով յանդիմաներ
զիս. և մի՛ բարկութ՟բ
քով խրատեր զիս:
Ողորմեա՛ց ինձ տ՟ր, զի հիւանդ-
եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի
խռովեցան ոսկերք իմ:
Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու
տ՟ր մինչև յե՞րբ:
Դարձ տ՟ր, և փրկեա՛ զանձն իմ.
կեցո՛ զիս տ՟ր ըստ ողորմութեան
քում:
Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ ըզ-
քեզ, կամ 'ի դժոխս խոստովան
առնիցի առ քեզ:
Վաստակեցայ ես 'ի հեծութեան

digitised by A.R.A.R.@

իմում, լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ա̃մ թշնամեաց իմոց։

'Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ո̃ք գործէք զանօրէնութի̃։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տ̃ր աղօթից իմոց, և տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ա̃մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն ս̃բյ. այժմ և միշտ՝ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Սաղմ. լա̃։

Երանի, որում թողութի̃ եղև մեղաց և ծածկեցան ա̃մ յանցանք նորա։

Երանի առն, որում ոչ համարի տ̃ր զմեղս նո̃ր. և ոչ գոյ նենգութի̃ 'ի բերան նո̃ր։

Լռեցի ես, և մաշեցան ա̃մ ոսկերք իմ առ աղաղակել ինձ առ

digitised by A.R.A.R.@

ւէր զօրհանապազ 'ի տուէ, և 'ի գիշերի ։

Ծանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ, դարձայ 'ի թշուառութեան իմ, զի հարան յիս փուշք ։

Զմեղս իմ ցուցի քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի 'ի քէն ։

Ասացի՝ թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց ։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք 'ի ժամ ընդունելի ։

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց. որք առ նոսա ինչ ոչ մերձենան ։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղուէ յայսմանէ, որ շուրջ եղև զինև ։

Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ, ոյք պաշարեցին զիս ։

Իմաստուն արարից զքեզ, և խելամուտ 'ի ճանապարհի յոր գնասցես, և հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ ։

Մի լինիք որպէս զձի՝ և զջորի, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, 'ի սանձս՝ և 'ի գանգանաւանդս ճմլեսցես զկղակս նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին ։

Բազում տանջանք են մեղաւո-

digitised by A.R.A.R.@

րաց. բայց դուք յուսան 'ի տէր՝ ողորմութին տն շուրջ եղիցի զնոքօք։ Ուրախ լերուք՝ եւ ցնծացէք արդարք, 'ի տր պարծեցարուք ամենեքեան, դուք ուղիղ էք սրտիւք։ Փառք հօր, եւ այլն։

### Սաղմ. Լէ։

ՏՐ մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս, եւ յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո։

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս զբեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։

Նեխեցան, եւ փտեցան վէրք իմ՝ յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ, եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ, զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք, եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Զարչարեցայ, եւ խոնարհ եղէ մին-

digitised by A.R.A.R.@

չև յոյժ, մունչէի առ հեծութե̃
սրտի իմոյ։

Տ̃ր առաջի քոյ է ա̃մ ցանկութ̃ն
իմ, և հեծութիւն իմ 'ի քէն ոչ
ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և ե-
թող զիս զօրութ̃ն իմ. լոյս աչաց
իմոց, և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ
առաջի իմ մերձեցան, և կացին.
և մերձաւորք իմ հեռի եղեն յի-
նէն։

Բռնադատէին զիս, և խնդրէին
զանձն իմ, որք խորհէին չար 'ի
վ̃ր իմ. խորհեցան զանօրէնութ̃ն,
և զնենգութ̃ն զօրհանապազ խոր-
հեցան։

Այլ ես ո̃պ խուլ՝ զի ոչ լսէ, և
որպէս համր՝ որ ոչ բանայ զբե-
րան իւր։

Եղէ ես ո̃պ մարդ՝ որ ոչ լսէ, և
ոչ գոն խօսք 'ի բերան ն̃ր։

Ես 'ի քեզ տ̃ր յուսացայ. և դու
լուիցես ինձ տ̃ր ա̃ծ իմ։

Ասացի թէ մ̃ի ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. 'ի սասանիլ ոտից
իմոց, 'ի վերայ իմ մեծամեծս խօ-
սեցան։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ,

digitised by A.R.A.R.@

և ցաւք իմ առաջի իմ են յա՟մ
ժամ:
Զանօրէնութիւս իմ պատմեցից, և
հոգացայց վս՟ մեղաց իմոց:
Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդա-
նիք են, և զօրացեալ են քան զիս.
և բազումք են, որք ատեն զիս ՚ի
տարապարտուց:
Որք հատուցին ինձ չար փոխա-
նակ բարւոյ, չարախօսէին զինէն,
զի ես երթայի զհետ արդարուե՟:
Մի թողուր զիս տէր ած՟ իմ, և
մի ՚ի բացեայ առնիր յինէն, հայ-
եաց յօգնել ինձ՝ տր՟ փրկուե՟ իմոյ:
Փառք հօր, և այլն:

## Սաղմ. Ծ՟:

Ողորմեա ինձ ած՟ ըստ մեծի ո-
ղորմութե՟ քում, և ըստ բազում
գթութե՟ քում քաւեա զանօրէ-
նութիւս իմ:
Առաւել լուա զիս յանօրէնութե՟
իմմէ, և ՚ի մեղաց իմոց սուրբ ա-
րա զիս:
Զանօրէնութիւս իմ ես ինձէն գի-
տեմ, և մեղք իմ առաջի իմ են
յա՟մ ժամ:
Քեզ միայն մեղայ տէր, և չար ա-

digitised by A.R.A.R.@

ռաջի քո արարի ։
Որպ արդար երեւեսցիս 'ի բանս քո,
եւ յաղթեսցես 'ի դատելն քո ։
Անօրէնութբ յղացայ, եւ 'ի մեղս
ծնաւ զիս մայր իմ ։
Դու տր զճշմարտութին սիրեցեր,
զանյայտս, եւ զծածկեալս իմաս-
տութե քո յայտնեցեր ինձ ։
Ցօղեա՛ յիս մշտկաւ, եւ սբ եղէց.
լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց ։
Լսելի արա՛ ինձ տէր զցնծութի եւ
զուրախութի, եւ ցնծասցեն ոսկերք
իմ տառապեալք ։
Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց ի-
մոց, եւ զամ անօրէնութիւնս իմ
քաւեա՛ յինէն ։
Զսիրտ սբ հաստատեա՛ յիս ած, եւ
զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի ի-
մում ։
Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց
քոց, եւ զհոգի քո սբ մի՛ հաներ
յինէն ։
Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկութե
քո, եւ հոգւով պետութեան քո
հաստատեա՛ զիս ։
Ուսուցից անօրինաց զճանապար-
հս քո, եւ ամբարիշտք առ քեզ
դարձցին ։
Փրկեա՛ զիս յարենէ ած, ած փրկ-

digitised by A.R.A.R.@

կու͞ե իմոյ, և ցնծասցէ լեզու իմ
յարդարութ͞ե քում:
Տէր եթէ զշրթունս իմ բանաս,
բերան իմ երգեսցէ զօրհնու͞ն քո:
Թէ կամեցեալ էիր զպատարագս
մատուցանէաք, բայց դու ո՛չ ող-
ջակէզս իսկ ոչ հաճեցար:
Պատարագ ա͞յ հոգի խոնարհ, ըզ-
սիրտ ս͞բ և զհոգի խոնարհ ա͞ծ ոչ
արհամարհէ:
Բարի՛ արա տէր կամօք քովք սիով-
նի, և շինեսցին պարիսպք երու-
սաղէմի:
Յայնժամ հաճեսցիս ընդ պատա-
րագս արդարութեան, յորժամ
ուխտից պատարագս հանցեն 'ի
սեղան քո զուարակս:
Փառք հօր, և այլն:

Սաղմ. ճ͞ա:

Տէր լո՛ւր աղօթից իմոց, և ա-
ղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի՛
դարձուցաներ զերեսս քո յինէն:
Յաւուր նեղութ͞ե իմոյ խոնար-
հեցո՛ առ իս զունկն քո, յորում
աւուր կարդամ առ քեզ վաղվա-
ղակի լո՛ւր ինձ:
Սպառեցան ո͞պ ծուխ աւուրք իմ,

digitised by A.R.A.R.@

և ոսկերք իմ՝ ո͞պ խուիւ չորացան ։
Հարայ ես ո͞պ խոտ, և ցամաքե֊
ցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել
զհաց իմ ՚ի ձայնէ հեծութ͞ե իմոյ ։
Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ,
Նմանեցայ ես հաւալուսան անա֊
պատի ։
Եղէ ես ո͞պ բու աւերակի. տքնե֊
ցայ, և եղէ ես որպէս ճնճղուկ
միայն ՚ի տանիս ։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօր֊
հանապազ, և գովիչք իմ ինև երդ֊
նուին ։
Զմոխիր որպէս զհաց կերի, և
զըմպելին իմ արտասուօք խառ֊
նեցի ։
Յերեսաց բարկութ͞ե սրտմտու֊
թ͞ե քո, զի դու բարձրացուցեր,
և խոնարհեցուցեր զիս ։
Աւուրք իմ ո͞պ հովանի անցին,
և ես ո͞պ խոտ ցամաքեցայ ։
Դու տէր յաւիտեան կաս, և յի֊
շատակ քո յազգէ մինչև յազգ ։
Դու յարուցեալ գթասցիս ՚ի վ͞ր
սիոնի, ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ ։
Հաճեցան ծառայք քո ͞ը քարինս
նորա, և ՚ի հողս նորա գթասցին ։
Երկիցեն հեթանոսք յանուանէ

digitised by A.R.A.R.@

քումմէ, և ամ թագաւորք երկրի 'ի փառաց քոց։

Շինէ տէր զսիոն, և երևեսցի փառօք իւրովք 'ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։

Գրեսցի այս յազգ յայլ, ժողովուրդ որ հաստատեալ է՝ օրհնեսցէ զտէր։

Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի սրբութենէ իւրմէ, տր յերկնից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել 'ի սիոն զանուն տն, և զօրհնութիւն նր յերուսաղէմ։

Ժողովիլ ժողովրդոց 'ի միասին, և թագաւորաց ծառայել տեառն։

Պատասխանի ետ նմա 'ի ճանապարհի զօրութե իւրոյ, զնուազութի աւուրց իմոց ասա ինձ, և մի հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց, զի յազգէ յազգ են ամք քո։

'ի սկզբանէ տր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։

digitised by A.R.A.R.@

Ամենեքեան ոպ̃ զձորձս մաշես֊
ցին, և որպէս զվերարկուս փո֊
խեսցես զնոսա, և փոխեսցին։
Բայց դու նոյն ես, և ամք քո ոչ
անցանեն. որդիք ծառայից քոց
բնակեսցին 'ի նմա, և զաւակ նց̃
յաւիտեան յաջողեսցի։
Փառք հօր, և այլն։

## Սաղմ. ճիթ։

'Ի խորոց կարդացի առ քեզ տր̃,
տր̃ լո՛ւր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն
աղօթից իմոց։
Թէ զանօրէնութիս քննես տր̃,
տր̃ ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի
քէն է քաւութի։
Վս̃ անուան քո համբերի տէր,
համբերեր անձն իմ բանի քում,
յուսացաւ անձն իմ 'ի տր̃։
'Ի պահէ առաւօտու մինչև յերե֊
կոյ, 'ի պահէ առաւօտու յուսա֊
ցաւ իսրայէլ 'ի տր̃։
'Ի տն̃է է ողորմութի բազում, և
'ի նմանէ է փրկութի, և նա փրկ֊
կեսցէ զիսրայէլ յա̃մ նեղուե̃ց նր̃։
Փառք հօր, և այլն։

digitised by A.R.A.R.@

## Սաղմ. ճխբ:

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութե̃ քով:

Լուր ինձ արդարութե̃ քով, և մի մտաներ 'ի դատաստան ը̃ ծառայի քում, զի ոչ արդարասցի առաջի քո ա̃մ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յա̃մ 'ի գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ ո̃պ երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանեցիմ այնոցիկ, ոյք իջանեն 'ի գուբ:

Լսելի արա ինձ յառաւօտու զողորմութիւս քո, զի ես 'ի քեզ տ̃ր յուսացայ:

digitised by A.R.A.R.@

Ցո՛յց ինձ Ճանապարհ, յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես ա̃ծ իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Վ̃ն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութ̃բ քով հանցես 'ի նեղութ̃է զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զա̃մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քոյ եմ:

Փառք հօր, և այլն:

### Մաղթանք:

Տէ՛ր մի՛ յիշեր զյանցանս մեր, կա՛մ ծնողաց մերոց, և մի՛ առնուր ըղվրէժ 'ի մեղաց մերոց:

digitised by A.R.A.R.@

Տէր ողորմեա՛ց։
Քս՟ ողորմեա՛ց։
Տր՟ ողորմեա՛ց։
Քս՟ լո՛ւր մեզ։
Քս՟ յա՛ր լուր մեզ։
Հայր երկնաւոր Ած՟. ողորմեա՛ց մեզ։
Որդի փրկիչ աշխարհի Ած՟, ողորմեա՛ց մեզ։
Հոգիդ սբ՟ Ած՟. ողոր։
Սբ՟ երրորդութիւն մի Ած՟. ողորմեա՛ց մեզ։
Սբ՟ մարիամ. աղօթեա վս՟ մեր։
Սբ՟ Ածածին. աղօ։
Սբ՟ կոյս կուսանաց. աղօ։
Սբ՟ միքայէլ. աղօ։
Սբ՟ գաբրիէլ. աղօ։
Սբ՟ ռափայէլ. աղօ։
Ամ՟ սբ՟ հրեշտակք, և հրեշտակապետք. աղօթեցէք վս՟ մեր։
Ամ՟ սբ՟ կարգք երանեալ հոգւոց. աղօթեց։
Սբ՟ յովհաննէս մկրտիչ. աղօթեա՛ վասն մեր։
Ամ՟ սբ՟ նահապետք, և մարգարէք. աղօթեցէ՛ք։

digitised by A.R.A.R.@

Սուրբ պետրոս · աղօ :
Սուրբ պօղոս · աղօ :
Սբ անդրէաս · աղօ :
Սբ յակովբոս · աղօ :
Սբ յովհաննէս · աղօ :
Սբ Թովմաս · աղօ :
Սբ յակովբ · աղօ :
Սբ փիլիպպոս · աղօ :
Սբ բարթուղիմէոս · աղօ :
Սբ մատթէոս · աղօ :
Սբ սիմոն · աղօ :
Սբ թադէոս · աղօ :
Սբ մատաթիաս · աղօ :
Սբ բառնաբաս · աղօ :
Սբ ղուկաս · աղօ :
Սբ մարկոս · աղօ :
Ամ որ առաքեալք, և աւետարանիչք · աղօթեց :
Ամ որ աշակերտք քնի · աղօթեցէք վասն մեր :
Ամ որ անմեղ մանկունք · աղօ :
Սբ ստեփաննոս · աղօ :
Սբ լօրէնցիոս · աղօ :
Սբ վինչենցիոս · աղօ :
Սբք Փաբիանոս, և սեբաստիանոս · աղօթեցէք :
Սբք յովհաննէս, և պօղոս · աղօթեցէք :
Սբք կոզմաս, և դամիանոս · ա-



digitised by A.R.A.R.@

ղօթեցէք վասն մեր։

Սուրբ կերվասիոս, և բրօթա֊սիոս. աղօթեցս։

Ամ՝ նք մարտիրոսք, աղօթեցէք վասն մեր։

Սուրբ սեղբեստրոս. աղօ։

Սուրբ գրիգոր. աղօ։

Սուրբ ամբրոսիոս. աղօ։

Սուրբ օգոստինոս. աղօ։

Սուրբ հերոնիմոս. աղօ։

Սուրբ գրիգոր լուսաւորիչ. աղօ֊թեա՛։

Սուրբ մարթինոս. աղօ։

Սուրբ նիկողայոս. աղօ։

Ամ՝ հայրապետք, և խոստովա֊նողք. աղօթեցէք վն մեր։

Ամ՝ սուրբ վարդապետք. աղօ։

Սուրբ անտոն. աղօ։

Սուրբ բէնեդիկտոս. աղօ։

Սուրբ բեռնարդոս. աղօ։

Սուրբ տոմինիկոս. աղօ։

Սուրբ ֆրանչիսկոս. աղօ։

Ամ՝ նք քահանայք, և կրօնա֊ւորք. աղօթե։

Ամ՝ նք միայնակեացք, և անա֊պատաւորք. աղօթեցս։

Սրբուհի մարիամ մագդաղենա֊ցի. աղօ։

Սրբուհի ագաթա. աղօ։

digitised by A.R.A.R.@

Սրբուհի Լուկիա. աղօ։
Սրբուհի Ագնէս. աղօ։
Սրբուհի Կեկիլիա. աղօ։
Սրբուհի Կատարինէ. աղօ։
Սրբուհի Անաստասիա. աղօ։
Ամ՟ սրբուհիք կուսանք, և այրիք. աղօթեցէք։
Ամ՟ սրբք, և սրբուհիք այ՟, բարեխօսեցէք վասն մեր։
Քաւիչ լեր. խնայեա՛ 'ի մեզ տր՟։
Քաւիչ լեր. անսա՛ մեզ տր՟։
Յամ՟ չարէ, ազատեա՛ զմեզ տէր։
Յամ՟ մեղաց. ազատեա՛։
'Ի բարկութե՟ քումմէ. ազատեա՛ զմեզ տէր։
'Ի տարաժամ, և յանկարծական մահուանէ, ազատեա՛ զմեզ տր՟։
'Ի դաւաճանութենէ դիւին, ազատեա՛։
'Ի բարկութենէ, և յատելութե՟, և յամ՟ չար կամաց, ազատեա՛։
'Ի յոգւոյ պոռնկութե՟. ազա։
'Ի կայծականց, և մրրկաց, ազատեա՛։
'Ի յաւիտենական մահուանէ. ազատ։
Վն՟ խորհրդոյ նր՟ մարդեղութեան քո. աղ։
Վն՟ գալստեան քո. աղ։

Վ՚ն ծննդեան քո․ աղ։

Վ՚ն մկրտութեան, և ՚նը պահոց քոց․ աղ։

Վասն խաչի, և չարչարանաց քոց․ աղաչեմ։

Վասն մահուան, և թաղման քո․ աղաչեմ։

Վ՚ն ՚նը յարութեն քո․ աղաչեմ զմեզ տէր։

Վասն հրաշալի համբարձման քո․ աղաչեմ։

Վ՚ն գալստեան հոգւոյն ս՟բյ մխիթարչի․ աղաչ։

՚ի յաւուր դատաստանին, աղաչեմ զմեզ տր։

Մեղաւորքս, զքեզ աղաչեմք լուր մեզ։

Զի խնայեսցես ՚ի մեզ, զքեզ աղաչեմք լուր մեզ։

Զի ներեսցես մեզ, զքեզ աղաչեմք լուր մեզ։

Զի զմեզ առ ճշմարիտ ապաշխարութիւն ժամանեցուցանել հաճեսցիս, զքեզ։

Զի զեկեղեցի քո ՚նը հովուել, և պահպանել հաճեսցիս, զքեզ աղաչեմք լուր մեզ։

Զի զտէրն առաքելական, և զամենայն եկեղեցական կարգս ՚ի

digitised by A.R.A.R.@

սրբակրօնութե՛ն պահպանել հաճեսցիս․ զքեզ աղ:

Զի զթշնամիս եկեղեցւոյ սրբոյ խոնարհեցուցանել հաճեսցիս․ զքեզ աղաչ:

Զի թագաւորաց․ և իշխանաց քրիստոնէից զխաղաղութի, և զճշմարիտ միաբանութի պարգևել հաճեսցիս․ զքեզ աղ:

Զի համայնից ժողովրդոց քրիստոնէից զխաղաղութի, և ըզմիութիւն շնորհել հաճեսցիս․ զքեզ աղաչ:

Զի զմեզ 'ի նր ծառայութե քում զօրացուցանել, և պահպանել հաճեսցիս․ զքեզ աղաչ:

Զի զմիտս մեր առ երկնային փափաքմունս ուղղեսցես․ զքեզ աղաչեմք լուր մեզ:

Զի տմ բարերարաց մերոց ըզմշտնջենաւոր բարիս հատուսցես․ զքեզ աղ:

Զի զհոգիս մեր, և եղբարց, մերձաւորաց, և բարերարաց մերոց, 'ի յաւիտենական դատապարտութենէ ապրեցուսցես․ զքեզ աղաչ:

Զի զպտուղս երկրի տալ, և պահպանել հաճեսցիս․ զքեզ աղ:

digitised by A.R.A.R.@

Զի տ՟մ հաւատացեալ ննջեցելոց
զհանգիստ յաւիտենական պար-
գևել հաճեսցիս. զքեզ աղաչէ,
Զի մեզ անսալ հաճեսցիս. ըզ-
քեզ աղաչէ:
Որդի ա՟յ. զքեզ աղ:
Գառն ա՟յ, որ բառնաս զմեղս աշ-
խարհի. խնայեա՛ ՚ի մեզ տ՟ր:
Գառն ա՟յ, որ բառնաս զմեղս աշ-
խարհի. անսա՛ մեզ տէր:
Գառն ա՟յ՝ որ բառնաս զմեղս աշ-
խարհի. ողորմեա՛ց մեզ:
Ք՟ս լո՛ւր մեզ:
Ք՟ս անսա՛ մեզ:
Տ՟ր ողորմեա՛:
Ք՟ս ողորմեա՛:
Տ՟ր ողորմեա՛:
Հայր մեր՝ որ յերկինս:

## Սաղմ. Կ՟Թ:

Ա՟Ծ յօգնել ինձ նայեա՛ց, և տ՟ր
յընկերել ինձ փութա՛:
Ամաչեսցեն, և յամօթ լիցին որք
խնդրէին զանձն իմ. դարձցին
յետս, և ամաչեսցեն, որք խոր-
հէին ինձ չար:
Դարձցին առժամայն ամաչեցեալք,
որք ասէին ինձ վա՛շ վաշ:

digitised by A.R.A.R.@

Ցնծասցեն, և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան՝ որք խնդրեն ըզքեզ տէր :

Ասասցեն յամ ժամ, մեծ է ա̅ծ՝ որք սիրեն զփրկութ̅ի քո :

Ես աղքատ և տնանկ եմ, ա̅ծ օգնեա՛ ինձ. օգնական և փրկիչ իմ ես դու, տ̅ր մի՛ յամենար :

Փառք հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն ս̅րբ. Ն. այլն :

Կեցո՛ զծառայս քո. ա̅ծ իմ զյուսացեալս 'ի քեզ :

Լե՛ր մեզ տ̅ր աշտարակ հզօր. յերեսաց թշնամւոյն :

Մի՛ մեղիցէ մեզ թշնամին. և որդի անօրէնութ̅ե մի՛ չարչարեսցէ զմեզ :

Տ̅ր մի՛ ըստ մեղաց մերոց առներ մեզ. և մի՛ ըստ անօրէնութ̅ե մերում հատուցաներ մեզ :

Աղօթեսցուք վասն Հայրապետին մերոյ (Ա̅Ն) :

Տ̅ր պահպանեսցէ զնա. և կենդանի և երանելի արասցէ զնա 'ի վ̅ր երկրի. և մի՛ մատնեսցէ զնա 'ի հոգի թշնամեաց իւրոց :

Աղօթեսցուք վ̅ս բարերարաց մերոց :

Հաճեա՛ց տէր հատուցանել ա̅մ բարերարաց մերոց վասն անուանն

քոյ զկեանս յաւիտենականս. ա-
մէն:

Աղօթեցուք վասն հաւատացելոց ննջե-
ցելոց:

Զհանգիստ յաւիտենական պար-
գեւեա նց տր, եւ լոյս մշտնջենա-
ւոր ծագեսցի նց. հանգիցեն ՚ի
խաղաղութե. ամէն:

Վ҃ն հիւանդաց եղբարց մերոց:

Կեցո զծառայս քո՝ ա҃ծ իմ զյու-
սացեալս ՚ի քեզ:

Առաքեա նց տէր օգնութի ՚ի սրբ҃յ՝
եւ ՚ի սիովնէ պաշտպանեա զնս:

Տ҃ր լուր աղօթից իմոց. եւ աղա-
ղակ իմ առ քեզ եկեսցէ:

Աղօթեցուք:

Ա҃ծ, որում յատուկ է ողորմելն
միշտ՝ եւ ներելն, ընկալ զաղաչանս
մեր. զի զմեզ եւ զա҃մ պաշտօնեայս
քո՝ զորս յանցանաց շղթայն կա-
պեաց, ողորմութի քոյոյ գթութե
մարդասիրապէս արձակեսցէ:

Լուր աղաչեմք տէր զմաղթանս
պաղատողացս. եւ ներեա մեղաց
խոստովանողացս առ քեզ. զի հան-
գիտապէս մեզ զներողութի շնոր-
հիցես ով բարեգութ՝ եւ զխաղա-
ղութի:

Զանձաւելի մեզ տէր զողորմա-

digitised by A.R.A.R.@

ծութե̃ն քո բարեգթալէս ցոյց. ո̃վ զի 'ի միասին զմեզ և 'ի բնաւից մեղաց քաւեցեր, և 'ի պատժոցն, զորս վասն նոցին արժանաւորիմք, ազատեցեր:

Ա̃ծ որ վ̃ մեղաց մերոց ցասնուս. և ապաշխարութե̃ զիջանիս, ըղմաղթանս ժողովրդեան քո պաղատողի քաւիչ նկատեա. և ըղհարուածս քոյոյ ցասման, զորս վ̃ մեղաց մերոց արժանաւորիմք՝ յետս դարձո:

Ամենակարող մշտնջենաւոր ա̃ծ, ողորմեա՛ց ծառային քում հայրապետին մերում (ԱՆ), և առաջնորդեա՛ նմա ըստ քոյին բարեգթութե̃ն 'ի ճանապարհն յաւիտենական փրկութե̃, զի քև պարգևողիւդ, քոյոց հաճոյից ցանկասցի, և ամենայն զօրութե̃ կատարեսցէ:

Ա̃ծ, յորմէ են ս̃բ փափաքմունք, ուղիղ խորհուրդք, և արդար գործք. տո՛ւր ծառայից քոց զխաղաղութիւնն զայն՝ զոր աշխարհս տալ ոչ կարէ. զի և սիրտք մեր պատուիրանաց քոց հնազանդեսցին, և երկիւղ թշնամեացն 'ի բաց բարձցի, և ժամանակք մեր



digitised by A.R.A.R.@

քոյին հովանաւորութե անդորրականք լիցին:

Կիզեա՛ հրով սբյ հոգւոյն զերիկամունս և զսիրտս մեր տր. զի քեզ անարատ մարմնով ծառայեսցուք, և սուրբ սրտիւ հաճոյասցուք:

Հաւատացելոց ած, ամենեցուն ստեղծող և փրկիչ, հոգւոց ծառայից քոց և աղախնեաց՝ զթողութե համայնից շնորհեա՛ մեղաց. զի զներողութիւնն, որում միշտ ցանկացան, բարեպաշտականօք պաղատանօք առընդունիցին:

Արարմանց մերոց, աղաչեմք տր, ներշնչելով նախաժամանեա՛, և օգնելով յաջողեա՛, զի համայնք մեր աղօթք, և գործք 'ի քէն միշտ սկսանիցին, և քև սկսեցեալ աւարտիցին:

Ամենակարող մշտնջենաւոր ած, որ կենդանեաց տիրես 'ի միասին և մեռելոց, և ամենեցուն ողորմիս. զորս հաւատով և գործով քոյս լինելոց գոլ նախածանաչես. պաղատօղքս զքեզ աղաչեմք, զի վս որոց զմաղթանս հեղուլ վճռեցաք, զորս և կամ ներկայ կենցաղս դեռևս 'ի մարմնի ունի կալեալ, կամ ապագայն արդ մերկացեալ

digitised by A.R.A.R.@

'ի մարմնոյ վերընկալու, բարեխօ-
սութբ ամենից սրբց քոց, գթութ
քոյոյ մարդասիրութբն, ամենից
յանցանաց ներեանց զթողութիւն
առընկալցին. 'ի ձեռն տն մերոյ
յսի քսի որդւոյ քոյ, որ ը քեզ
կեայ և թագաւորէ 'ի միութեան
հոգւոյն սրբ այ, ընդ տմ յաւի-
տենանս յաւիտենից. ամէն:

Տէր լուր աղօթից իմոց:
Ու աղաղակ իմ առ քեզ եկեսցէ:
Լուիցէ մեզ ամենակարող և ողոր-
մած տրն. ամէն:
Հաւատացելոց հոգիքն ողորմու-
թբն այ հանգիցեն 'ի խաղաղու-
թե. ամէն:

Կերպ առնելոյ ողջոյն քեզ մարիամ յա-
ռաւօտուն, 'ի միջօրէի, և յերեկոյի. յորժամ հնչէ զանգակն պարտիմք ծա-
նալ զծնկունս, և խաչակնքելով զդէմս
մեր ասել:

Հրեշտակ տն աւետեաց կուսին
մարիամու, և յղացաւ 'ի հոգւոյն
սրբ: Ողջոյն քեզ մարիամ. և այլն:
Ահաւասիկ կամ աղախին տն, և-

ղիցի ինձ ըստ բանի քում: Ողջոյն քեզ Մարիամ, և այլն:

Եւ բանն մարմին եղև, և բնակե-ցաւ 'ի մեզ: Ողջոյն քեզ Մարիամ, և այլն:

## Աղօթք:

Զշնորհս քո աղաչեմք տէր, 'ի միտս մեր ներհեղ. զի որք հրեշտակին աւետեօք զք՟ի որդւոյ քո զմարմնաւորութիւնն ճանաչեցաք, չարչարանօք նորին և խաչիւ ժամանեսցուք 'ի փառս յարութեան տ՟ր մերով յ՟սիւ ք՟սիւ. ամէն:

## Մեղանօրհնէք:

Օրհնեցէք և բարեբանեցէք: Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան տ՟ր, և դու տաս կերակուր ն՟ց 'ի ժամու: Բանաս զձեռն քո, և լցուցանես զա՟մ կենդանի օրհնութ՟: Փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն ս՟բ. և այլն:

Տ՟ր ողորմեայ:

Ք՟ս ողորմեայ:

digitised by A.R.A.R.@

Տ̃ր ողորմեա՛ց ։
Հայր մեր, և այլն ։

### Աղօթեսցուք ։

Օրհնեա՛, աղաչեմք տ̃ր, զմեզ և զայսոսիկ զքո պարգևս, զորս 'ի քումմէ առատութ̃ենէ ընդունելոց եմք. տերամբ մերով յ̃իւ ք̃իւ. ամէն ։

Եւ ապա կնքէ աջոյ ձեռամբ 'ի վերայ սեղանոյն ասելով ։

Յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն ս̃բյ. ամէն ։

### Գոհութի̃ զկնի սեղանոյն ։

Խոստովան եղիցին առ քեզ տ̃ր ա̃մ գործք քո, և ս̃րբք քո օրհնեսցեն զքեզ ։
Փառք հօր. և այլն ։
Մատուցանեմք քեզ գոհութիւնս ամենակարող ա̃ծ, վ̃ս համայնից բարերարութ̃եցդ քոյոց, որ կեաս և թագաւորես 'ի յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

digitised by A.R.A.R.@

## Ճանապարհորդական ։

'Ի ճանապարհս խաղաղութե̃ և բարեյաջողութե̃ ուղղեսցէ զմեզ ամենակարող և ողորմածն ա̃ծ ։

Օրհնեալ տ̃ր ա̃ծ ի̃էլի · զի յայց ել, և արար փրկութի̃ ժողովրդեան իւրոյ ։

Եւ յարոյց մեզ զեղջիւր փրկուե̃ 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ ։

Ո̃պ խօսեցաւ բերանով սրբոց, որք յաւիտենից մարգարէքն էին ։

Փրկութ̃ի 'ի թշնամեաց մերոց, և 'ի ձեռաց ա̃մ ատելեաց մերոց ։

Առնել զողորմութիւն առ հարս մեր, և յիշել զկտակարանս սրբութե̃ իւրոյ ։

Զերդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի, զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց ։

Պաշտել զնա սրբութ̃բ և արդարութ̃բ առաջի ն̃ր զա̃մ աւուրս կենաց մերոց ։

Եւ դու մանուկ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր · գնասցես առա֊

digitised by A.R.A.R.@

Ջի տ՟ն պատրաստել զճանապարհս
նորա ։
Տալ զգիտութիւն փրկութե՟ ժո-
ղովրդեան նորոյ 'ի թողութի՟ ա՟ծ
մեղաց մերոց ։
Վ՟ս գթոյ ողորմութե՟ տեառն ա՟յ
մերոյ, որով երևեցաւ մեզ արե-
գակն 'ի բարձանց ։
Ծագել զլոյս 'ի վերայ այնոցիկ,
որք նստէին 'ի խաւարի և 'ի ստ-
ուերս մահու. ուղղել զոտս մեր
'ի ճանապարհս խաղաղութե՟ ։
Փառք հօր, և այլն ։
Եւ հրեշտակն ռափայէլ ուղեկից
լիցի մեզ 'ի ճանապարհի. որպէս
զի խաղաղութբ՟, առողջութբ՟, և
խնդութբ՟ դարձցուք առ մերայինս ։
Տ՟ր ողորմեա՛ց ։
Ք՟ս ողորմեա՛ց ։
Տ՟ր ողորմեա՛ց ։
Հայր մեր ։
Կեցո՛ զծառայս քո, ա՟ծ իմ յու-
սացեալքս 'ի քեզ ։
Առաքեա՛ 'ի մեզ տէր զօգնութի՟
'ի ս՟բյ. և 'ի սիոնէ պաշտպանեա՛
զմեզ ։
Լե՛ր մեզ աշտարակ հզօր յերե-
սաց թշնամւոյն ։
Մի՛ մեղիցէ մեզ թշնամին. և որ-

digitised by A.R.A.R.@

գի անօրէնութեան մի՛ չարչարես-
ցէ զմեզ ։

Օրհնեալ տէր զօրհանապազ, ա-
ռաջնորդեսցէ մեզ ած փրկիչ մեր ։
Զճանապարհս քո տր ցոյց մեզ ․
և զշաւիղս քո ուսո՛ մեզ ։

Երանի թէ յաջողեալ էին ճա-
նապարհք մեր ․ 'ի պահել զարդա-
րութիւնս քո ։

Եղիցին դժուարինք 'ի դիւրինս ․
և առապարք 'ի ճանապարհս
հարթս ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ
է վն քոյ ․ 'ի պահել զքեզ յամ
ճանապարհս քո ։

Տր լո՛ւր աղօթից իմոց ։
Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ ։

## Աղօթեսցուք ։

Ած, որ զորդիսն իսրայէլի ցա-
մաք ոտիւք ը մէջ ծովուն գնա-
ցուցեր, որ և երից մոգուց առ
քեզ աստեղբ առաջնորդեալ՝ զու-
ղի յայտնեցեր, տո՛ւր մեզ աղա-
չեմք զյաջող ճանապարհ, և ըղ-
ժամանակ անդորր, զի հրեշտա-
կի քոյ սբյ ուղեկցութբ առ այն-
յո փութամք 'ի տեղին ժամ-

նել, և այս 'ի նուաճանդխոս յաւիտենական կենացն հասանել երջանկապէս կարասցուք. ամէն։

Ա̃ծ, որ զաբրահամ ծառայ քո 'ի յուր քաղաքէն քաղդէացւոց հանեալ ը̃ ա̃մ ճանապարհս խորոց պանդխտութե̃, անվտանկ պահեցեր. աղաչեմք, զի և զմեզ զծառայքս քո պահպանել հաճիցիս։ Լեր մեզ Տ̃ր 'ի զինուորութեան նպաստ, 'ի ճանապարհի մխիթարութի̃, 'ի տօթոյ հովանաւորութիւն, յանձրեւս և 'ի ցուրտս վերաբարձիչ, 'ի հակառակութեան օգնիչ, 'ի սահեցման գաւազան. և 'ի նաւակոծութեան նաւահանգիստ. զի որպէս խորայէլ.քև առաջնորդեալ, յո փութամք՝ յաջողապէս ժամանեսցուք, և անդրէն առ մերայինս դարձցուք. ամէն։

Լո́ւր աղաչեմք Տ̃ր պաղատանաց մերոց, և զճանապարհ ծառայից քոց 'ի յաջողութի̃ քոյոյ կենագործութե̃ տրամադրեա́. զի յա̃մ վտանգից այսր ճանապարհի և կենաց քոյով միշտ պաշտպանի ցիմք օգնութբ̃. ամէն։

Շնորհեա́ աղաչեմք ամենակարող Ա̃ծ, զի ժողովուրդ քո 'ի ճանա֊

digitised by A.R.A.R.@

պարհս կեցութեան ընթանայցէ, և երանելոյն Յովհաննու նախընթացին քո յորդորմանն հետևելով, առ այն զոր քարոզեաց՝ անդորրապէս ժամանեսցէ, այսինքն առ տէրն մեր յն̃ քն̃, որ կեայ և թագաւորէ ը̃ քեզ 'ի միութեան հոգւոյն սբյ յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

Տաղ ասելի մինչ հասանիցեն 'ի նաւահանգիստ, կամ մինչ դառնացեն առ մերայինս, և կամ մինչ ունիցեն զխնդրուած ինչ հոգևոր կամ մարմնաւոր:

Զքեզ ած գովաբանեմք,
Տէր իսկ զքեզ խոստովանիմք:
Ըզքեզ հայր մեր անժամանակ,
յար մեծարէ երկիր համակ:
Քեզ և հրեշտակք ամենեքեան,
երկինք և պետք համանգամայն
Քեզ քերովբէք, և սերովբէք,
երգեն և ոչ լռեն երբէք:
Սբ սբ սբ ած զօրաց,
ըստ յայտնութեան տեսանողաց,
Երկինք երկիր լի են քոյովք,
վայելչութեան մեծի փառօք:

digitised by A.R.A.R.@

Ըզքեզ երամք յարգեցելոց,
բարեբանեն առաքելոց։
Մարգարէից թիւ գովելի,
Ճառէ զքեզ գոլ պատուելի։
Խումբ գերափայլ մարտիրոսաց,
զքեզ պատմէ տիեզերաց։
Ըզքեզ մինչև 'ի ծագս երկրի,
դաւանէ ս̃բ եկեղեցի։
Ըզհայր մեծի վայելչութե̃,
զորդիդ միակ քոյ իսկութե̃։
Զմխիթարիչ քո սուրբ հոգին,
պատուէ միշտ նոյն եկեղեցին։
Քս̃ փառաց դու թագաւոր,
որ յարակայ որդի ես հօր։
Առ 'ի փրկել զազգ մարդկային,
դու բնակեցար յարգանդ կուսին։
Ըզխայթ մահու դու յաղթելով,
զերկինս բացեր մեզ հաւատով։
Դու ընդ աջմէ հօր ն̃յ,
'ի փառս նստիս միշտ գերյարգոյ։
Դու դատաւոր ես գոլ գալոց,
սպասխ 'ի քեզ յուսացելոց։
Մաղթեմք ուրեմն օգնել մեզ տ̃ր,
զորս արեամբ քով վերագնեցեր։
Շնորհեա դասիլ 'ի փառս անճառս,
ընդ ս̃րբս քո 'ի քեզ զյանձնեալս։
Ըզժողովուրդ քո տ̃ր կեցո՛,
զժառանգութի̃ քո բարձրացո՛։
Այլև դու տէր զնս̃ օրհնեա՛,

digitised by A.R.A.R.@

և յաւիտեան զնոսա հովուեա՛,
Մեք հանապազ զքեզ օրհնեսցուք,
և զանուն քո տ̃ր գովեսցուք:
Ըզքո ծառայս այսօր կամեա՛ց,
գոլ և պահիլ առանց մեղաց:
Ողորմեա՛ց մեզ տ̃ր ողորմեա՛ց,
և գթութե̃ 'ի մեզ նայեա՛ց.
Ողորմութի̃դ լիցի 'ի մեզ,
ո̃պ և մեք յուսամք 'ի քեզ:
'Ի քեզ անձինք մեր յուսացան,
մի̃ տրտմիցին 'ի յաւիտեան.
Ամէն:

Աղօ̃թք:

Տ̃Ր, որոյ ողորմութի̃ն անթիւ է, և գանձ բարութե̃ն անհուն. քում ամենագթածի մեծվայելչուե̃ զգոհուե̃ վ̃ս մեզ առ 'ի քե̃ շնորհեցելոց պարգևաց մատուցանեմք, աղաչելով միշտ զքո̃դ բարեգթութի̃, զի որ խնդրողաց զհայցելիսն շնորհես, զնոսա ևս ոչ երբէք 'ի ձեռաց թողլով առ փառս ապագայս տրամադրիցես, տ̃ր մերով յ̃սիւ ք̃սիւ. Ամէն:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Յաղագս նախապատրաստութե̄ քրիս-
տոնէաբար մեռանելոյ:

ԱՄԵՆԱԲԱՐԵ-
գութ մայր յոյս կոյս
մարիամ, ձեռնտու և
նպաստ մեղաւորաց, ըստ գթութե̄
ողորմութե̄, հա՛ս 'ի թիկունս ինձ
եղկելւոյս նախ քան զժամանելն
յանկարծահաս և անակնունելի
մահուան, զի մի յանկարծակի և
անպատրաստ յաշխարհէ յայսմա-
նէ ելանիցեմ: Եւ վասն չարչա-
րանաց և մահուան միածնի որդ-
ւոյ քո սիրեցելոյ, պաշտպանեա՛
և խնամարկեա՛ զիս. զի հրաժա-
րեցեալ 'ի մեղաց, և 'ի սատանայէ,
և հեռացեալ 'ի գործոց նր̄, ճշ-
մարիտ զղջմամբ, մաքուր խոստո-
վանութե̄, և արժանաւոր ապաշ-
խարութե̄, հաշտեցիմ ընդ որդ-

digitised by A.R.A.R.@

ւոյ քում միածնի 'ի փոխելն իմ 'ի կենցաղոյս ։ Եւ արա առ [illegible] զողորմութիւն քո երանուհի մայր ա̃ծյ 'ի ժամուն յայնմիկ ահեղի, մինչ շունչն իմ պակասեսցի, և լեզուս կարկամեալ ոչ կարասցէ բողոքել առ քեզ, աչք իմ նուաղեսցին, և լսելիք իմ խցեսցին. յայնժամ յիշեա մայր անարատ զաղերսանս իմ, զորս այժմ գըթութե քում մայրականի վերանուիրեմ, և հաս ինձ 'ի յօգնութի[ւն] 'ի վերջին ժամուն յայնմիկ նեղութե. զի զերծանիցիմ 'ի հրեշտակացն չարաց, և 'ի սպասաւորացն սատանայի, և դասիցիմ ը̃ հաւատացելսն ք̃նի, ը̃ ծառայս և ը̃ բարեկամս որդւոյ քոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Կերպ ասելոյ զտէրունական հայր մե[ր]
[illegible] քրիստոնէաբար մեկնելոյ։

Հայր մեր, որ յերկինս ։

Հայր յաւիտենական և ա̃ծ ա̃րր մարտուէ, դու որդւոյ քոյ միածնի ա̃ն մերոյ յ̃ի ք̃ի հայր ես բնութ̃բ, իսկ մեզ քրիստոնէից

հայր ես շնորհիւ. քանզի ստեղ-
ծեր զմեզ 'ի պատկեր քո, և յոր-
ժամ էաք մեղօք որդիք բարկու-
թե՛, 'ի ձեռն արեան որդւոյ քոյ
արարեր զմեզ որդեգիրս շնորհաց,
ժառանգս կենայն յաւիտենակա-
նաց: Եւ թէպէտ երկին քեզ ա-
թոռ է, սակայն յերկրի միշտ առ
մեզ նայիս, և հայրական հոգա-
բարձութբ նախախնամես: Արդ՝
առ քեզ համբառնամ զաչս իմ,
որ բնակեալդ ես 'ի յերկինս,
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն.
առ քեզ փափաքի անձն իմ որ-
պէս եղջերու յաղբերս ջուրց.
քանզի ստեղծեր զիս 'ի քեզ, և
ոչ հանգարտի սիրտ իմ մինչև
դարձցի, և հանգիցէ 'ի քեզ. քզի
ուր հայրն իմ է, անդ են և հայ-
րենիք իմ, անդ են և ժառան-
գութիք իմ, և բաժին իմ յերկ-
րին կենդանեաց. առ քեզ ուրեմն
հառաչէ սիրտ իմ, և գայ զկնի
քոյ անձն իմ: Եւ երանի թէ ըն-
կալցի զիս աջ քո. վասն զի լաւ
է ինձ ողորմութ քո քան զկեանս
իմ. ո՜հ թէ երբ ազատեցայց յաք-
սորանաց աստի, և կամ երբ զեր-
ծայց 'ի բանտէ աստի, կամ երբ

digitised by A.R.A.R.@

մատից 'ի տուն հօր իմոյ, և երբ մխիթարիցես զիս. երբ հանցես զիս 'ի գբոյ յայսմանէ տառապանաց, և երբ եկից երևեցայց երեսացդ քո. երբ տեսից զքեզ դէմ յանդիման, և երբ լցուսցես զիս ուրախութ͞բ երեսաց քոց։ Ահա ես եղէ 'ի մահ իմում 'ի հովիտս արտմու͞ե 'ի տեղւոջ՝ յուրում զետեղեաց զիս յանցաւորութիւն նախամօրն. արդ քոյով օրհնութ͞բ գնացից 'ի զօրութ͞է 'ի զօրութիւն, մինչև տեսից զքեզ ա͞ծ աստուածոց 'ի սիոնի։

Ներգործութիւն հաւատոյ՝ որ է առաջին աստիճան ելանելոյ վերինն։

## Ս͞բ եղիցի անուն քո։

Գամ առ քեզ տ͞ր նախ 'ի ձեռն կենդանի և ճշմարիտ հաւատոյ, զի առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինիլ քեզ, և թարց դաւանելոյ զքեզ ա͞ծ ճշմարիտ, անհնարին է մասնակից լինել քոյոց պարգևաց։ Իսկ արդ զինչ են կեանք մեր 'ի վերայ երկրի, եթէ ոչ ընթացք առ երկինս 'ի ձեռն

digitised by A.R.A.R.@

հաւատոյ և յուսոյ. քանզի հան֊
գիստ և մերձաւորութի՟ն, կա՛մ ըմ֊
բռնումն և վայելումն կատարեալ
սիրոյն պահեցեալ լինի 'ի հայրե֊
նիսն: Զի յայնժամ գիրկս ար֊
կեալ համբուրես զորդիդ առ քեզ
'ի հեռաստանէ անդրէն դարձեալ,
և զպատմուճանն առաջին ագու֊
ցանես նմա: Արդ հաւատամ տ՟ր,
զի դու ես որ էն, այսինքն, ա՟ծ
ամենակարող, ամենիմաստ, և ա֊
մենաբարի. և դու ես սիրեցելոց
քոց հանդերձեալ հատուցումն բա֊
րի և վարձ մեծագին: Հաւատամ
թէ փրկիչն իմ կենդանի է, և 'ի
վերջին աւուր 'ի հողոյ յառնե֊
լոց եմ, և 'ի մարմնի իմում տե֊
սանելոց եմ զա՟ծ փրկիչն իմ: Այ֊
սու հաւատով կեալ և մեռանիլ
ցանկամ, և վ՟ն այսր հաւատոյս՝
'ի չարչարանս, 'ի նեղութիս, 'ի
յանձկութիս, 'ի հիւանդութիս,
և 'ի մահու հաստատ կացից, և
մնացից աներկիւղ, և թէ 'ի յա֊
ջողութիս, և թէ 'ի ձախորդու֊
թիւնս, ո՟ր արարից զանուն քո,
ոչ երկմտելով երբէք 'ի յա՟ծայ֊
նոյ կարողութենէ քումմէ, և 'ի
հայրական բարեգթութ՟է քումմէ:



digitised by A.R.A.R.@

Ուրեմն զօրացո՛ տ̅ր զմիտս իմ, և յաւել ինձ զհաւատս վ̅ն փառաց անուան քոյ ս̅բյ. զի հաստատապէս հաւատայցեմ տեսանել ըզբարութ̅ն քո յերկրին կենդանեաց, զկնի ելանելոյ յաշխարհէ աստի:

## Ներգործութ̅ի յուսոյ, որ է երկրորդ աստիճան ելանելոյ յերկինս:

### Եկեսցէ արքայութ̅ի քո:

Արքայութիւն տեսեմք զայն՝ որ պատրաստեցեալ է մեզ 'ի սկզբանէ աշխարհի. քանզի կորզեցեր զմեզ յիշխանութ̅է խաւարի, և փոխեցեր զմեզ յարքայութ̅ի որդւոյ քո սիրեցելոյ, զի լիցուք ժառանգակիցք նորա ը̅դ յուսոյն կենացն յաւիտենականաց. քանզի եթէ 'ի կեանս յայսոսիկ միայն յուսացեալք եմք, ողորմելիք եմք քան զա̅մ մարդիկ: Տէր բաժին ժառանգութ̅ե իմոյ, և բաժակի իմոյ՝ դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութ̅ի իմ յիս. քանզի աստ օտար և պանդուխտ եմք, և ոչ ունիմք զքաղաք մնա-

digitised by A.R.A.R.@

ցական, այլ ապառնեւոյն ակն ունիմք: Արդ՝ պարծիմք յուսով փառաց որդւոյն ա̃յ. և ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք 'ի նեղութիս մեր, գիտելով թէ նեղութի զհամբերութի գործէ, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս, և յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ: Եւ այսպէս բազում նեղութիք պարտ է մեզ մտանել յարքայութին ա̃յ. բայց յոյս այսքանից վարձուց է մխիթարութի ա̃մ աշխատութե. քանզի ոչ են արժանիք չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որք յայտնելոց են 'ի մեզ: Արդ յառաջագոյն տեսից զքեզ տ̃ր առաջի իմ յա̃մ ժամ, զի ես ընդաջմէ իմմէ, զի մի սասանեցայց: Վ̃ն այսորիկ ուրախ եղեցի սիրտ իմ. եւ և մարմին իմ բնակեսցի յուսով: Խաղաղութ̃ յայսմ և 'ի սոյն նինջեցից և հանգեայց, զի դու տ̃ր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զիս: Եւ զինչ է ակնկալութի իմ, եթէ ոչ դու տ̃ր. և կար զօրութե իմոյ 'ի քէն է: Ընկալ զիս ը̃ բանի քում և կեցից, և մի յամօթ առներ զիս 'ի

digitised by A.R.A.R.@

յուսոյ իմմէ։ 'Ի քեզ Տէր յուսացայ. մի ամաչեցից յաւիտեան։

## Ներգործութիւն սիրոյ, որ է երրորդ աստիճան ելանելոյ յերկինս։

### Եղիցին կամք քո։

Եւ զինչ է կամք քո, ով ամենասիրելի Հայր, եթէ ոչ սիրել զքեզ 'ի բոլորէ սրտէ, որպէս և հրամայես. բայց տուր զոր հրամայես, և հրամայեա զոր կամիս. քանզի տեսանես թէ զորքան արգելմունս կամաց քոց, և զորքան խափանմունս սիրոյն որ առ քեզ, 'ի պատճառս ապականացու այսորիկ մարմնոյս կրեմք, որ ծանրացուցանէ զհոգին։ Կամիմ սիրել զքեզ, և հաճեալ եմ յօրէնս քո ըստ ներքին մարդոյն, բայց տեսանեմ զայլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց։ Արդ տուր ինձ, զի մի սիրելով զանձն իմ կորուսից զնա. այլ փրկաւէտ ատելութեամբ պահեցից 'ի կեանսն յաւիտենից. վանեա 'ի սրտէ իմմէ զսնոտի սէր աշխարհիս, և հաստատեա զքոյդ

digitised by A.R.A.R.@

երկնային, զի մի՛ յելանելն իմ 'ի կենցաղոյս մերկնիցէ զիս 'ի քէն. տո՛ւր զի սիրով սիրոյ քոյ մեռայց յ՟ծիս, որ սիրով սիրոյ իմոյ հաճեցար մեռանիլ 'ի խաչին։

ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՍՐԲԱՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ, ՈՐ Է ՉՈՐ-ՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ԵԼԱՆԵԼՈՅ ՅԵՐԿԻՆՍ։

Զհաց մեր հանապազորդ։

Ո Տ՟ իմ որ մինչև ցայսօր կերակրես զիս 'ի մանկութենէ իմմէ. և երանի թէ մինչև 'ի ծերութ՟ն իմ, և 'ի պակասիլ զօրութ՟ն իմոյ ոչ թողուցուս զիս. քանզի պանդխտանալով յանապատիս, կարօտանամ կերակրոց հոգւոյ և մարմնոյ. և երկնչիմ թէ մի՛ գուցէ նքթիցիմ 'ի ճանապարհի. և քանզի ոչ հացիւ միայն կեայ մարդ, այլ և ա՟մ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ քումմէ, ուրեմն կերակուր հոգւոյ է բան և խորհուրդ քո, և մանաւանդ հացն այն հրեշտակաց, և մանանայն ճշմարիտ, այսինքն, մարմին և արիւն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. ո՟ր ինքն ասաց, մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և

digitised by A.R.A.R.@

արիւն իմ ճշմարիտ ըմպելի․ յորժամ եթէ ոք կերիցէ, ոչ մեռանիցի 'ի յաւիտեան: Տո՛ւր ինձ ուրեմն 'ի մտանելն իմ 'ի ճանապարհըս հասարակաց, և 'ի չուելն իմ յանապատէ յայսմանէ 'ի հայրենիսն իմ, կերակրիլ 'ի թոշակէն ա՟ծայնոյ․ մինչև հասանիցիմ 'ի լեառն փառաց քոց․ ուր զընտրեցեալս քո կերակրես 'ի պարարտութէ՟ տան քոյ:

Թուղթ ԲՆ Ղեղայ, որ է հինգերորդ առփիճան եղանելոյ յերկինս:

## Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր:

Գիտեմ տ՟ր, զի ոչինչ պիղծ կարէ մտանել յարքայութին երկնից․ և ոչ թողուս զոք անդր, եթէ ոչ զհաշտեցեալն ը՟ քեզ, և ընդ ընկերի իւրում․ իսկ ես որ եմ եղկելի և անթիւ պարտուց պարտական, զի՞նչ արարից: Ահա 'ի քէն է տ՟ր ողորմութի՟, և առատ առաջի որդւոյ քոյ փրկութի՟, որ եկն 'ի բառնալ զյանցանս մեր, և կեցուցանել զմեղաւորս: Արդ՝

digitised by A.R.A.R.@

փառն սիրոյ Նորին, մի՛ մատներ 'ի դատաստան ը ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի. այլ նայեա՛ց յերեսս քնի որդւոյ քո, և թո՛ղ զսխալանս իմ, որպէս և ես թողում իմոց մերձաւորաց. և մանաւանդ 'ի ժամուս յայսմիկ, որ գամ երևիլ առաջի դատաւորին իմոյ, և ընդէմ արեամբն յնի քնի զձեռագիր պարտուց իմոց, զի զմայլեցայց յերևիլ փառաց քոց:

## Յաղթութն փորձութեց, որ է վեցերորդ աստիճան ելանելոյ յերկինս:

## Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն:

Բանզի զի՞նչ է կեանք մեր, եթէ ոչ փորձութիւն հանապազորդական 'ի վերայ երկրի, յորում մեծ է պատերազմ ը թշնամեաց հզօրից, որոց ընդդիմամարտելոյ ոչ եմք բաւականք, եթէ ոչ դու տր մարտնչիցիս փոխանակ մեր, որ ես հզօր 'ի պատերազմի: Ո՛վ հաւատարիմ ած, մի՛ արկաներ զմեզ 'ի փորձութն առաւել քան

digitised by A.R.A.R.@

զկարն մեր, այլ արա՛ ը փորձումն
և զելս, և մանաւանդ 'ի ժամու
ճելից իմոց յաստի կենցաղոյս: Հա՛ս
ինձ 'ի յօգնութն 'ի կասկածե֊
լի յայսմիկ պատերազմի, այսինքն,
'ի յետին պահու մահուան, յո֊
րում հաւաստի երանութիւն իմ,
և պտուղ ամ վաստակոց իմոց:
Զօրացո՛ զիս, զի մի յաղթեցայց
'ի փորձութենէ, և լոյս տուր որ
աչաց իմոց, զի մի երբէք ննջե֊
ցից 'ի մահ, և մի գուցէ ասիցէ
թշնամին թէ յաղթեցի նմ: Տո՛ւր
ինձ առնուլ զապառաւինութիւն այ,
զի կարող լինիցիմ 'ի դիմի հար֊
կանել չարին յաւուրն չարութե,
և զամ նետս մուխս չարին շիջու֊
ցանել. քանզի եթէ դու 'ի մեր
կոյս իցես, ո՛վ իցէ մեզ հակա֊
ռակ. թէ և գնացից 'ի մէջ ստ֊
ուերաց մահու՝ ոչ երկեայց 'ի չա֊
րէ, զի դու որ ը իս ես:

digitised by A.R.A.R.@

Ազատութ͞ն 'ի յաւիտենական մահուա-նէ, որ է եօթներորդ աստիճան ելա-նելոյ չարէին:

## Այլ փրկեա զմեզ 'ի չարէ:

Բազում չարիք սաստ զմեզ տառապեցուցանեն, և առ քեզ Տ͞ր դիմել ստիպեն, զի հայցեսցուք 'ի Նոյանէ փրկել. աշխարհ 'ի չարի կայ, և սատանայ 'ի հնարագործութ͞ե. և մեք զաւակք եմք մեղաց. իսկ մեղքն կատարեալք զմահ ծնանին, և մահ մեղաւորին չար է, քանզի զրկէ 'ի գերագոյն բարւոյ. ուրեմն Տ͞ր ընկալուն մեր 'ի քէն է, զի յաւուր չարի փրկեսցես զմեզ. քանզի ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ ամենեքեան որք իջանեն 'ի դժոխս, այլ կենդանիքս: Ուրեմն փրկեա զանձն իմ ողորմած Տ͞ր, և զերծո՛ զիս 'ի մահուանէ. պահեա զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի գայթակղութ͞է. զի հաճոյ եղէց քեզ յերկրին կենդանեաց, և մատուցից քեզ զպատարագ օրհնութեան:



digitised by A.R.A.R.@

Մաղթանք վասն քրիստոնէաբար մե-ռանելոյ :

Տէ̅ր ողորմեա՛ց :
Ք̅ս ողորմեա՛ց :
Տ̅ր ողորմեաց :
Հայր երկնաւոր ա̅ծ . ողորմեա՛ց ինձ :
Որդի փրկիչ աշխարհի ա̅ծ . ող:
Հոգիդ ս̅բ ա̅ծ . ող:
Ս̅բ Երրորդութիւն մի ա̅ծ . ող:
Սրբուհի մարիամ . աղօթեա՛ վ̅ս իմ:
Ա̅մ ս̅բ հրեշտակք՝ և հրեշտակա-պետք . աղօթեցէ՛ք վասն իմ:
Ս̅բ աբէլ . աղօթեա՛ վ̅ս իմ:
Ա̅մ պարք արդարոց . աղօթեցէ՛ք վասն իմ:
Ս̅բ աբրահամ . աղօ:
Ս̅բ յովհաննէս մկրտիչ . աղօ:
Ամենայն ս̅բ նահապետք, և մար-գարէք . աղօ:
Ս̅բ պետրոս . աղօ:
Ս̅բ պօղոս . աղօ:
Ս̅բ անդրէաս . աղօ:
Սուրբ յովհաննէս աւետարա-նիչ . աղօ:
Ա̅մ ս̅բ առաքեալք և աւետարա-նիչք . աղօ:
Ա̅մ ս̅բ աշակերտք ք̅սի . աղօ:

digitised by A.R.A.R.@

Ամ որ անմեղ մանկունք · աղօ:
Սբ ստեփաննոս · աղօ:
Սբ լաւրենտիոս · աղօ:
Ամ որ մարտիրոսք · աղօ:
Սբ սեղբեստրոս · աղօ:
Սբ գրիգոր · աղօ:
Սբ օգոստինոս · աղօ:
Ամ որ հայրապետք, և խոստո_ վանողք · աղօ:
Սբ բենեդիկտոս · աղօ:
Սբ ֆռանչիսկոս · աղօ:
Ամ որ միայնակեացք, և անա_ պատաւորք · աղօ:
Սրբուհի մարիամ մագդաղենա_ ցի · աղօ:
Սրբուհի լուկիա · աղօ:
Ամ սրբուհիք կուսանք, և այ_ րիք · աղօթեցէք:
Ամ սբք, և սրբուհիք այ, բարե_ խօսեցէք վասն մեր:
Քաւիչ լեր · և խնայեա ինձ տր:
Քաւիչ լեր · և անսա ինձ տր:
Քաւիչ լեր · և ազատեա զիս տր:
'Ի բարկութենէ քումմէ, ազատեա զիս տր:
'Ի վտանգէ մահու · ազա:
'Ի չար մահուանէ · ազա:
'Ի պատժոց դժոխոց · ազա:
Յամենից չարեաց · ազա:

digitised by A.R.A.R.@

'Ի յիշխանութե̄ սատանայի․ աղա։
Վասն ծննդեան քոյ սրբազանի․ աղաւթ։
Վ̄ն խաչի, և չարչարանաց քոց․ աղաւթ։
Վ̄ն մահուան, և թաղման քո․ աղաւթ։
Վ̄ն փառաւոր յարութե̄ քո․ աղա։
Վասն զարմանալի համբարձման քոյ․ աղա։
Վասն շնորհաց հոգւոյն ս̄բյ մխիթարչի․ աղաւթ։
'Ի յաւուր դատողութե̄․ աղաւթ։
Մեղաւորս զքեզ աղաչեմ, լո՛ւր ինձ։
Զի ինձ խնայեսցես, զքեզ աղաչեմ։
Տէր ողորմեա՛ց։
Ք̄ն ողորմեա՛ց։

## Աղօթք վ̄ն համբերելոյ 'ի հիւանդութեան։

Խօսեցայց առ տ̄ր, զի ես հող և մոխիր եմ, ստուեր փախըստական, և գոլորշի առժամանակեայ․ յիշեա՛ տ̄ր, զինչ է կար գոյութե̄ իմոյ․ յիշեա՛ զի ո̄պ կաւ ստեղծեր զիս, և միւսանգամ յեր-

կիր դարձուցանես ։ Արդ՝ մի սրտ֊
մտութե̃ քով մարտնչիր ը̃ իս. զի
զինչ է զօրութիւն իմ, թէ համբե֊
րել կարիցեմ. կամ զինչ ժամա֊
նակ, զի հանդարտիցի անձն իմ.
միթէ զօրութե̃ վիմա՞ց իցէ զօրութե̃
իմ, կա՞մ մարմինք իմ իցե՞ն պղնձիք.
զի նետք տ̃ն 'ի մարմնի իմում են,
որոց սրտմտութե̃ ծծէ զարիւն իմ,
և ահ տ̃ն զարհուրեցուցանէ զիս ։
Արդ զինչ, մի թէ յերկինս բա֊
ցից զբերան իմ, կա՞մ ը̃դէմ դար֊
ձայց բանից սրբոյն. այլ մնա֊
ւանդ ասացից, թէ տ̃ր ետ զզօ֊
րութե̃ և զառողջութե̃, և տ̃ր էառ.
որպ̃ տ̃ն հաճոյ թուեցաւ, այնպ̃ս
եղև. եղիցի անուն տ̃ն օրհնեալ.
այսպէս ասեմ տ̃ր, և այսպէս ի֊
մանամ. արդար ես տ̃ր, և ուղիղ
է դատաստան քո. արդարև ես
մեծագունից վշտաց արժանի եմ
ըստ իմում դատողութե̃. արդ ճա֊
նաչեմ զձեռն հօրդ, որ գթութե̃
խրատէ զիս, և ոչ իբրև զաջ դա֊
տաւորի պատժէ զիս. բայց խնդ֊
րեմ 'ի քէն հայր բազմագութ,
զի յիշիցես զտկարութի̃ իմ, որ
ոչինչ ունիմ զօրութե̃, եթէ ոչ 'ի
քէն կազդուրիցիմ։ Տո՛ւր ուրեմ̃ն

digitised by A.R.A.R.@

յինձ զշնորհս համբերութ̃ե. զի տանիլ կարացից ցաւոց իմոց. և ահաւասիկ պատրաստ է սիրտ իմ ընդունիլ զինչ և պատահիցի ինձ: Արա՛ տ̃ր իմ, զի համբերութ̃բ ստանայցեմ զհոգի իմ. վասն որոյ և ստէպ նայիմ յերեսս ք̃ի քոյ, զի յիշելով զծանրագոյն չարչարանս նորին, զորս վ̃ն մեր կրեաց 'ի մարմնի իւրում, և ես նովին մտածութ̃բ սպառազինիլ ջանայցեմ: Նա եղև քեզ հնազանդ մահուչափ, և մահու խաչի. իսկ ես և ոչ արեամբ չափ զդէմ ունիլ կարացի. սակայն իմանամ, թէ զորչափ բռնադատութ̃ն կրիցեմ, մինչ խայթոցք հիւանդութ̃ե, և ցաւք մահու անկանին 'ի վ̃ր իմ: Արդ՝ զզօրութ̃ի իմ առ քեզ պահեցից, զի դու ես ապաւէն իմ. դու ես պաշտպան կենաց իմոց. փորձեա՛ զիս տ̃ր և քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամունս իմ, և զսիրտ իմ: Գիտեմ զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն որք յայտնելոց են 'ի մեզ. սակայն զի որպէս պարտ էր ք̃ի չարչարիլ, և այսպէս մտանել 'ի փառս իւր, նմա-

digitised by A.R.A.R.@

նայէս և ես քրիստոնեայ գոլով
եթէ ոչ կերպարանակից եղեմ գըլ-
խոյ իմում, և ոչ անցանիցեմ ը̃
հուր և ը̃ ջուր, ոչ եղանիցեմ 'ի
հանգիստ: Պահեա՛ ուրեմն զիս
այժմ 'ի տապոյ աստի, ո̃պ պա-
հեցեր զերիս մանկունս 'ի հնոցին
բաբելոնի, զի օրհնեցից զանուն քո
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԻՂՁ 'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԷ 'Ի ՄԷՋ ՀԻՒԱՆ-ԴՈՒԹԵ̃:

Իմաստութի̃ յաւիտենական որ
հասանիս 'ի ծագաց մինչև 'ի
ծագս աշխարհի հզօրեղապէս, և
կարգաւորես զա̃մ քոյով քաղցրու-
թբ̃. հարեր զիս այսու հիւանդու-
թեամբ և տկարութբ̃ մարմնոյս.
բայց կարգաւորեա՛ զսա քաղցրու-
թբ̃ 'ի փառս քո և 'ի փրկութիւն
իմ, որ զա̃մ կշռով, և թւով, և
չափով տրամադրես:

Ո՜վ հայր ամենակարօղ, յորմէ ա̃մ
տուրք բարիք և ա̃մ պարգեւք կա-
տարեալք իջանեն, և ա̃մ տրամա-
դրութիւնք անձանց մերոց 'ի քէն
առորաբաշխին, ո̃պ և այս հիւան-
դութիւն, զոր այժմ կրեմ. նայ-

եայ 'ի վշտագնեցեալ ծառայ քո, և տրամադրեա՛ զիս ըստ քում հաճութե̃. քանզի դու ես որ կառավարես զա̃մ, և դու պահես զամենայն ոսկերս մեր, և մի 'ի նոցանէ առանց քո ոչ փշրեսցի: Հերք գլխոց մերոց թուեալ են առաջի քոյ, և 'ի ձեռս քոյ է ժառանգութի̃ մեր. դու հարկանես և դու բժշկես. կեցուցանես և մեռուցանես. թէ կեամք և թէ մեռանիմք՝ քոյ եմք տ̃ր. եղիցին կամք քո օրհնեալ: Եթէ զբարիս ընկալաք 'ի ձեռանէ քումմէ, չարեացս ևս համբերել պարտիմք. որք սակայն ոչ եղիցին չարիք, և. թէ ընդունիցիմք ըստ հաճոյից քոց, որ զմեզ խրատես իբրև զորդիս առ 'ի կրթութի̃, զի չարիք այսոքիկ գործակիցք լիցին մեզ 'ի բարին: Տէր ես ծառայ քո եմ, և որդի աղախնոյ քո. արա՛ ընդ իս, ո̃պ և հաճոյ եղիցի առաջի քոյ, և ո՛վ իցեմ ես, որ ը̃դէմ դառնայցեմ քեզ. քանզի ո՛վ ը̃դիմացաւ քեզ, և ընկալաւ զխաղաղութի̃: Ահաւասիկ ես կաւ, և դու բրուտ, կազմեա՛ և թրծեա՛ զիս 'ի հնոցի յայսմիկ նեղութե̃. զի լինիցիմ

digitised by A.R.A.R.@

քեզ անօթ պատուական: Ո՜վ բժիշկ, որ բանիւ բժշկես զա̃մ հիւանդութի̃ հոգւոյ և մարմնոյ, բժըշկեա զիս տ̃ր, և բժշկեցայց հոգւով. կեցո զիս տ̃ր, և կեցից ես մարմնով. 'ի քեզ վստահանամ, և ոչ 'ի բժիշկս և 'ի դեղս. քանզի եթէ դու ոչ կանգնիցես զտուն մարմնոյ իմոյ, 'ի նանիր վաստակին շինօղք նորա: Դու ուրեմն դեղոց այսոցիկ տուր զզօրութի̃, զի զկատարումն իւրեանց ունիցին 'ի յիս. ապա թէ ոչ, զհամբերութի̃ գործեա յանձին իմում. քանզի նա է դեղ ստոյգ և զօրաւոր ընդդէմ ա̃մ հիւանդութե̃ց մարմնոյ իմոյ, զոր մինչև ցայս վայր սնուցի փափկութ̃բ, և սածեցի հեշտասիրութ̃բ, և խօթացուցի զմարմին իմ. դու ուրեմն ը̃ն հաճոյից քոց խորտակեա զմարմին իմ, զի կեցցէ թշուառացեալ հոգի իմ 'ի յաւիտեանս. ամէն:

Յանձնարարութի̃ն հոգւոյ 'ի ձեռս արարչագործին:

Արդէն իսկ առողջ և կարող գոլով յանձն առնեմ զիս քեզ քս̃, զի

digitised by A.R.A.R.@

մի՛ գուցէ ՚ի նուաղելն իմ ոչ կարիցեմ զգաստապէս յանձն առնել քեզ զնոյն: Երկնչիմ ՚ի ժամէն յայնմանէ, յորում ՚ի մէջ կենդանեաց գոլով, ոչ ճանաչիցեմ զգոյն իմ. ըստ որում տեսի զբազումս, որք ունելով զառաւօտուն շնչոյ և զկեանս, ոչ գիտէին զինքեանս գոլ կենդանիս: Ո՜վ յայնմ պահու՝ յորում հոգին շարժի, և սարսափի ՚ի փոխմանէ, և յելանելոյ ՚ի բանտէ մարմնոյ իւրոյ՝ ընկալցի զնա, եթէ դու ստեղծօղդ ՚ի բաց մերժիցես: Ո՜վ համբերօղ յս՝ յիշեա՛ զի և դու ՚ի յետին անձկութեանդ արտասուեցեր, և ըզքեզ թողեցեալ և լքեցեալ գոլ ամբաստանեցեր, և զհոգիդ քո ամենամաքուր ՚ի ձեռս հօր յանձն արարեր, աղաղակեցեր, և անշընչացար: Ահա ես և առ քեզ աղաղակեմ, զի դու փրկիչ իմ ընկալցիս զհոգի իմ, մինչ որպիսեաւ և իցէ հիւանդութբ ՚ի մարմնոյ աստի ելանիցէ: Յիշեա՛ ով բարի յս, զի ՚ի խաչին զբազուկս քո տարածեցեր, զկողս քո բացեր, և ըզգլուխդ խոնարհեցուցեր. զի ա՛հա հոգի իմ լքեցեալ յամենից ստեղ-

digitised by A.R.A.R.@

ծուածոց, զապաւինու̅ն խնդրէ,
'ի բաղուկս քո դիմէ, և 'ի գոգ
քո անկանի. ներեա՛ ուրեմն աղա_
չեմ ողորմելւոյ այսմիկ առ քեզ
մերձենալ, և մի անտի 'ի բաց մեր_
ժիցես, մինչև անցանիցէ բարկու̅ն
քո. քանզի անդ աներկևանալէս
կայցէ, և անդ 'ի ապաստանորացն
դժոխոց թաքչիլ կարիցէ: Արդ՝
'ի ձեռս քո տ̅ր յանձն առնեմ զհո_
գի իմ, զոր դու ստեղծեր, և
նորոգեցեր, մի՛ անտես առներ
զստեղծուած քո. ահա թողում
զաշխարհ և փութամ առ քեզ
գալ. հեռանամ յերկրաւորացս,
զի առ քեզ մերձենայցեմ. ելանեմ
'ի բնակութենէ մարմնոյս, և դի_
մեմ 'ի բնակարանս հրեշտակաց.
ընկա՛լ զիս 'ի յարկս քո յաւիտե_
նից, և մի՛ մերժեր զիս յերեսաց քոց,
զի դու ես յոյս իմ 'ի մանկութ̅է
իմմէ: Նայեա՛ց տ̅ր 'ի ծառայ քո.
զի դու ես ա̅ծ փրկիչ իմ. նուա_
ղեցաւ սիրտ իմ և մարմին իմ,
բաժին իմ ա̅ծ յաւիտեան. առա_
ջի քոյ է ա̅մ ցանկութ̅ի իմ, և առ
քեզ տենչայ հոգի իմ. օգնեա՛ ինձ
ա̅ծ փրկիչ իմ, և փրկեա՛ զիս վ̅ն
փառաց անուան քոյ. ամէն:

digitised by A.R.A.R.@

Յորժամ հիւանդն կայ 'ի վտանգի, առ-եալ զխաչելութիւն տ͞ն 'ի ձեռն ասաս-ցէ զաղօթս :

Երկրպագեմ քեզ յ͞ս ք͞ս, և օրհ-նաբանեմ զքեզ. զի 'ի ձեռն խաչի քոյ փրկեցեր զաշխարհս, և 'ի ձեռն արեան քոյ հեղեցելոյ յեր-կիր վերանորոգեցեր զմեզ: Զգեա՛ զիս առ քեզ ո՛վ բարի յ͞ս, որ ա-սացեր, թէ յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս. պահեա՛ զիս հզօր ձեռամբ քով, զի մի ոք յափշտակելով զիս, մեկ-նիցէ 'ի քէն: Ո՛վ հոգիդ ք͞ի սուր-բեա զիս, արիւն ք͞ի մաքրեա՛ զիս, մարմին ք͞ի կեցո՛ զիս, ջուր կո-ղին ք͞ի արբո՛ զիս, չարչարանք ք͞ի զօրացո՛ զիս: Բարի յ͞ս լո՛ւր ինձ, 'ի մէջ վիրաց քոց ծածկեա՛ զիս, և մի թողուր զիս որոշիլ 'ի քէն, 'ի ժամու մահուան իմոյ կո-չեա՛ զիս, և հրամայեա՛ առ քեզ գալ, զի ը͞ն ս͞բս քո օրհնեսցեն զքեզ 'ի յաւիտեան: Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, և զհոգի քո ս͞ր մի հաներ յինէն. մի կորուսանիցէ զիս անօրէնութիւն իմ, զոր ստեղծ ամենազօր բարերարութիւն քո: Նայ-

digitised by A.R.A.R.@

եա՛ց յիս աչօք ողորմութե̃ քոյ, և
լո՛ւր ինձ՝ որ յուսացեալս եմ 'ի
քեզ, և գթա՛ յիս, որ լի եմ թըշ-
ուառութ̃բ: Ո՛չ լեր աղբիւր բա-
րութե̃ն. ո՛չ լեր փրկաւէտ պա-
տարագ մատուցեալ 'ի վ̃ր խաչա-
փայտին. ո՛չ լեր պատուական և
մեծագին արիւն հեղեալ 'ի վիրաց
տեառն իմոյ յ̃ի ք̃ի 'ի լուացում̃ն
մեղաց աշխարհի: Յիշեա՛ տէր
զստեղծուած քո, զոր արեամբ քով
վերագնեցեր. քա՛ւ լիցի ինձ պար-
ծիլ, բայց միայն 'ի խաչ տ̃ն մերոյ
յ̃ի ք̃ի, որով ինձ աշխարհ 'ի
խաչ ելեալ է, և ես աշխարհի:
Ահա տեսանեմ զքեզ քաղցրագու-
նեղ փրկիչ կախեալ 'ի խաչին բազ-
կատարած, ունելով զգլուխ քո
խոնարհեցեալ, պատրաստ առ 'ի
ողջագուրել զմեզ, և սիրալի ձայ-
նիւ հրաւիրես զամենեսեան ասե-
լով, եկա՛յք առ իս ա̃մ աշխատեալք
և բեռնաւորք, և ես հանգուցից
զձեզ: Ահաւասիկ գամ առ քեզ
տ̃ր, արա՛ ը̃ իս ըստ բանի քում,
և հանգո՛ զիս. քանզի գամ վաս-
տակեցեալ և ծանրաբեռնեալ մե-
ղօք իմովք. արա՛ զքաղցրութիւն
ընդ ծառայի քում, որ զցաւս և

digitised by A.R.A.R.@

զաշխատութիւնս մեր բարձեր 'ի վե-
րայ խաչին . ամէն :

Վասն Թուէնոց :

Եկայք երկիրպագցուք այնմիկ Թագաւորին, որում կեան ամե- նեքեան : Զհանգիստ յաւիտենա- կան պարգևեա՛ նմա տէր : Եւ լոյս մշտնջենաւոր ծագեսցի նմա :

'Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում :

Եղիցին ականջք քո 'ի լսել ձայն աղօթից իմոց :

Թէ զանօրէնութիւնս քննես տէր, տէր ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն :

Վասն անուան քոյ համբերի տէր, համբերեր անձն իմ բանի քում, յու- սացաւ անձն իմ 'ի տէր :

'Ի պահէ առաւօտու մինչև յերե- կոյ, 'ի պահէ առաւօտու յուսա- ցաւ իէլ 'ի տէր :

'Ի տէրն է ողորմութիւն բազում, և 'ի նմանէ է փրկութիւն . և նա փրկ- կեսց զիէլ յամ նեղուէց նր :

digitised by A.R.A.R.@

Զհանգիստ յաւիտենական պար-
գեւեա՛ նց տր ։

Եւ լոյս մշտնջենաւոր ծագիցի նց ։

Զգործս ձեռաց քոց տր մի՛ անտես
առներ ։

Լուայ ձայն յերկնից, որ ասէր
ցիս ։ Երանի մեռելոց, որք 'ի տր
ննջեցին ։

Զոմ զոր տայ ինձ հայր, առ իս
եկեսցէ. և որ գայ առ իս, ոչ հա-
նից զնա արտաքս ։

Ես եմ յարութի և կեանք, որ հա-
ւատայ յիս՝ թէև մեռանի՝ կեց-
ցէ, և ոմ որ կենդանի է և հա-
ւատայ յիս, ոչ մեռանիցի 'ի յա-
ւիտեան ։

Զհանգիստ յաւիտենական պար-
գեւեա՛ նց տր ։ Եւ լոյս մշտնջե-
նաւոր ծագիցի նոցա ։

'Ի դրանց դժոխոց ազատեա՛ տր
զհոգիս նոցա ։ Եւ հանգիցեն 'ի
խաղաղութե ։

Տէր լուր աղօթից իմոց. և աղա-
ղակ իմ առ քեզ եկեսցէ ։

Աղօթեսցուք ։

Հաւատացելոց ամենեցուն
հաստիչ և փրկիչ, հոգւոց ծա-

digitised by A.R.A.R.@

ռայից քոց և աղախնեայց, զթա-ղուն համայնից շնորհեա մեղաց, զի զներողութիւն քո՝ որում միշտ փափաքին բարեպաշտիւք առատա-նայցեն մաղթանօք ։

Վասն Ծառայողաց Եկեղեցականաց, կամ քահանայից ։

Տէր, որ 'ի մէջ առաքելականաց քահանայից զծառայս քո պետա-կանաւ կամ թէ քահանայականաւ արարեր արժանապատուութ ձո-խանալ ։ Շնորհեա աղաչեմք, զի նոցին և յարակայի դասակցիցին վիճակակցութեն. տր մերով յսիւ քսիւ. ամէն ։

Վս հօրն, և մօրն ։

Տէր որ զհայր և զմայր պատուել մեզ հրամայեցեր, ողորմեայց բա-րեգթաբար հոգւոց հօր և մօր ի-մոյ. և թող զմեղս նց, զի ես տեսանել զնս 'ի յուրախութ յա-ւիտենականի պայծառութեն ար-ժանի արա, տր մերով յսիւ քսիւ. ամէն ։

digitised by A.R.A.R.@

## ՎԷ։ Ննջեցելոց Եղբարց Մերձաւորաց և Բարեկամաց։

Ո՜վ առատաբաշխիչ ներողութ, և մարդկային կեցութեան սիրող, աղաչեմք զքոյդ բարեգթութիւն, զի մերոյ ժողովոյն զեղբարս, զմերձաւորս, և զբարեկամս, որք 'ի կենցաղոյս յայսմանէ անդրաչուեցին բարեխօսութեամբ երանուհւոյն մարիամու միշտ կուսին, և սրբոց քոց ամենից առ մշտնջենաւորն երանութեան վիճակակցութեան ժամանել արժանաւորեսցես, տեառն մերով յիսուսիւ քրիստոսիւ. ամէն։

## 'Ի յաւուր Թաղման Ննջեցելոյն։

Ողորմեա աղաչեմք տէր հոգւոյ ծառայի քո, կամ աղախնոյ քո, զի վախճանեալ 'ի կենցաղոյս կենդանասցի քեզ, և զոր ինչ մարմնոյ բեկանելութեան, կենցաղավարութեամբ խակ մարդկայնով համագործեաց, դու ներմամբ ողորմածագութեամբ քոյոյ բարեգթութեան, ջնջեա, և մաքրեա տէրամբ մերով յիսուսիւ քրիստոսիւ. ամէն։



digitised by A.R.A.R.@

Ը՟ծ ներողութեանց ք՟ո, տուր հոգւոց ծառայից, և աղախնեայց քոց, որոց զտարեդարձականն յիշատակեմք զօր թաղման, զտեղի յարազոլացութե՛, զհանգիստ երանութե՛, և զլոյս պայծառութե՛, տ՟ն մերով յ՟սիւ ք՟սիւ. ամէն:

## Լիթանիայ վ՟ս մեռելոց:

ՏՐ ողորմեա՛ց:
Ք՟ս ողորմեա՛ց:
Տէր ողորմեա՛ց:
Յ՟ս լո՛ւր մեզ:
Ք՟ս յա՛ր լուր մեզ:
Հայր երկնաւոր ա՟ծ. ողորմեա՛ց ամենից հաւատացելոց մեռելոց:
Որդի փրկիչ աշխարհի ա՟ծ. ողոր:
Հոգիդ ս՟բ ա՟ծ. ողոր:
Ս՟ երրորդութի մի ա՟ծ. ողոր:
Սրբուհի մարիամ, աղօթեա՛ վ՟ս հաւատացելոց մեռելոց:
Ս՟ ա՟ծածին. աղօ:
Ս՟ կոյս կուսանաց. աղօ:
Ս՟ միքայէլ. աղօ:
Ա՟մ ս՟բք հրեշտակք և հրեշտա-

կապետք. աղօթեցէք վ՟ հաւա֊
տացելոց մեռելոց:

Ս՟բ յովհաննէս մկրտիչ. աղօ:

Ս՟բ պետրոս. աղօ:

Ս՟բ պօղոս. աղօ:

Ս՟բ յովհաննէս. աղօ:

Համայնք ս՟բք առաքեալք, և ա֊
ւետարանիչք. աղօ:

Ս՟բ ստեփաննոս. աղօ:

Ս՟բ լաւրէնտիոս. աղօ:

Ա՟մ ս՟բ մարտիրոսք. աղօ:

Ս՟բ գրիգոր. աղօ:

Ս՟բ ամբրոսիոս. աղօ:

Համայնք ս՟բք հայրապետք, և
խոստովանողք. աղօ:

Սրբուհի մարիամ մագդաղենա֊
ցի. աղօ:

Սրբուհի կատարինէ. աղօ:

Ա՟մ սրբուհիք կուսանք, և այ֊
րիք. աղօթեցէք:

Համայնք ս՟բք և սրբուհիք ա՟յ,
բարեխօսեցէք վասն հաւատա֊
ցելոց մեռելոց:

Այցելու լե՛ր տ՟ր, խնայեա՛ նոցա
տէր:

Քաւարար լե՛ր նոցա, և յար լո՛ւր
մեզ տ՟ր:

՚Ի համայնէ չարէ, զե՛րծո՛ զնոսա
տէր:

digitised by A.R.A.R.@

'ի բարկութենէ քումմէ · զեր:
'ի յիշխանութենէ դիւին · զեր:
'ի բոցոյ հրոյն · զեր:
'ի բանտէ ստուերաց մահու , զեր:
Վասն ամբծի քոյոյ յղացման · զեր:
Վ̄ն քոյոյ ծննդեան · զեր:
Վասն քաղցրագունեղի քոյոյ ան-
ուան · զեր:
Վ̄ն բազմութեան քոյոյ ողորմու-
թեան · զեր:
Վ̄ն սաստկագունեղից չարչարա-
նաց քոց · զեր:
Վ̄ն մեծագունեղի քոյոյ արեան ·
զերծո՛:
Վասն սրբագունեղից քոյոց խոց-
ուածոց · զեր:
Վասն պատուականի քոյոյ մահ-
ուան · զեր:
Մեղաւորքս · Զքեզ աղաչեմք
լո՛ւր մեզ:
Որ զմարիամ արձակեցեր , և ա-
ւազակին լուար · Զքեզ:
Որ զկեցուցանելիս կեցուցանես
ձրի · Զքեզ:
Զի զծնօղս , զմերձաւորս , և զբա-
րերարս մեր 'ի պատժոց դժո-
խոց ապրեցուցանել հաճեսցիս ·
Զքեզ:
Զի զամենայն հաւատացեալ ննջե-

digitised by A.R.A.R.@

ցեալս 'ի յաւիտենական դատա֊
պարտութենէ ազատել հաճես֊
ցիս. զքեզ:

Զի ամենայն հաւատացելոց ննջե֊
ցելոց, որոց 'ի յերկրի յիշատակ
յատկապէս ոչ լինի, ողորմիլ
հաճեսցիս. զքեզ:

Զի նոցա ամենեցուն խնայել և
ներել հաճեսցիս. զքեզ:

Զի զկարօտութիւն նոցա լցուցա֊
նել հաճեսցիս. զքեզ:

Զի ջոկք հրեշտակաց պայծառա֊
պէս օգնիցեն. զքեզ:

Զի դասք նահապետաց և մար֊
գարէից նպաստք նոցա լինի֊
ցին. զքեզ:

Զի առաքելոց երամք փառաւորք
առընդունիցին զնոսա. զքեզ:

Զի զօրք մարտիրոսաց պայծա֊
ռազգեցից պարառնիցեն զնո֊
քօք. զքեզ:

Զի խոստովանողաց սրբոց պարք
նց առաջնորդիցեն. զքեզ:

Զի հրճուելոց կուսանաց խումբք
նց յար հետևիցին. զքեզ:

Զի առ ստեղծիչն իւրեանց՝ որ
զնոսա 'ի կաւոյ երկրի կեր֊
պացոյց, անդրադառնալ բաւի֊
ցեն. զքեզ.

digitised by A.R.A.R.@

Զի դէմ հեզլին և քաղցերն յնէ նոցա բարեգթալէս երևեցի. ղ.քեզ:

Զի առ աջակողմն քո 'ի վիճակս ընտրեցելոց զնոսա վերընդունե-ցիս. ղ.քեզ:

Որդի ա̃յ աղբիւր գթութեան. ղ.քեզ:

Որ զբանալիս ունիս մահու և դժո-խոց. ղ.քեզ:

Գառն ա̃յ, որ բառնաս զմեղս աշ-խարհի, շնորհեա՛ ն̃ց զհանգիստ:

Գառն ա̃յ, որ բառնաս զմեղս աշ-խարհի, շնորհեա՛ ն̃ց զհանգիստ:

Գառն ա̃յ, որ բառնաս զմեղս աշ-խարհի, շնորհեա՛ ն̃ց զմշտնջե-նաւորն հանգիստ:

Ք̃ն անսա՛ մեզ:

Ք̃ն յար լո՛ւր մեզ:

Տէր ողորմեա՛ց:

Ք̃ն ողորմեա՛ց:

### Աղօթք:

Քեզ ա̃ր յանձն առնեմ զհոգի ծառայի քոյ, կամ աղախնոյ քոյ, զի վախճանեա՛լ 'ի կենցաղոյս կեն-դանասցի 'ի քեզ. և զմեղս զորս ակարութե̃ մարդկայնոյ կենցաղա-

digitised by A.R.A.R.@

վարութե՛ է գործեալ, դու նե՛ր-
մամբ քոյոյ ողորմածագունեղն
գթութեան ջնջիցես. տ՟ր մերով
յ՟իւ. ք՟իւ. ամէն:
Հայր մեր, որ յերկինս:

## ԵՐԳ Ժ՟ ՄԵՌԵԼՈՑ:

Յաւուր յայնմիկ յաւուր ցասման,
բնաւք կենցաղք յաճիւն դառնան,
ը՟ս գուշակի և ը՟ս դաւթեան:
Որքան երկիւղ է լինելոց,
մինչ դատաւորն է առգալոց,
զհամայնս յանկարծ տարայրելոց.
Փողն ահաբեկ յորժամ հնչի,
'ի գերեզմանս համրոյ երկրի,
բնութի բոլոր յատեան ածի:
Մահն և բնութին յոյժ երկիցեն,
մինչ ստեղծուածք համ յառնիցեն,
զի դատողին համարս տայցեն:
Գիրք գրեցեալ յառաջ բերի,
բոլորն յորում պարունակի.
ուստի աշխարհ իսկադատի,
Մինչ դատաւորն յատեանն նստցի.
որինչ թաքչի արտաբացցի,
ոչինչ անվրէժ յայնժամ թողցի:
Զինչ անդ թշուառս եմ ոգելոց,
կամ զո՞ր միջնորդ աղերսելոց.
մինչ են հազիւ արդարք կելոց:

digitised by A.R.A.R.@

Արքայդ սարսելւոյ մեծութեն,
զձիր ընձեռօղ կենդանութեն,
կեցո՛ զիս աղբիւր գթութեն:
Յիշեա՛ յ͞ն գթած տ͞ր իմ,
որ մարմնացար 'ի պատճառս իմ,
մի՛ մերժեր զիս մինչ դատեցիմ:
'Ի խնդրել զիս նստար խոնջեալ,
փրկեցեր զիս 'ի խաչ ելեալ,
տուր զի լցեմ քև փրկեալ:
Արդար դատող վրէժխնդրութեն,
զձիր շնորհեա ինձ թողութեն,
յառաջ քան զօր դատողութեն:
Իբր յանցաւոր միշտ տագնապիմ,
զի շառագնեն մեղք զերեսս իմ,
ինձ մաղթողիս ներեա՛ տ͞ր իմ:
Որ զմարիամ արձակեցեր,
աւազակին խոկ ներեցեր,
զյոյս ինձ եւ մեծ շնորհեցեր:
Աղերսանք իմ ոչինչ արժեն,
բայց գթութ͞բդ առ քեզ ելցեն,
զի մի գեհեանք զիս կիզիցեն:
'Ի մէջ օդեաց զտեղի շնորհեա,
յայծեաց 'ի բաց զիս որոշեա,
յաջակողման քում զետեղեա:
Մինչ զանիծեալս տարհերքիցես,
հրոյն կիզման առմանիցես,
զիս ͞ը օրհնեալս հրաւիրիցես:
Դիմօք կորիւք զքեզ աղերսեմ,
զսիրտ իմ փղձկե͞լ քեզ նուիրեմ,

digitised by A.R.A.R.@

զհոգ վախճանի իմ քեզ յանձնեմ ։
Որ արտասուաց օրն այն խիկ է,
մինչ յաճիւնից նա յառնիցէ,
որ ըստ մեղաց դատելի է ։
Սմին ուրեմն ած ներեա,
գթութեբ քում յս խնայեա,
և զհանգիստ յարաշնորհեա ։
Ամէն ։

Մաղթանք վս ժամու ննջման ։

Յանուն հօր, և որդւոյ, և հոգ-ւոյն սրբոյ . ամէն ։
Զգիշերս հանգիստ, և զվախ-ճանս կատարեալս շնորհեսցէ մեզ տրն ամենակարօղ . ամէն ։
Օգնութի է մեզ յանուանէ տն, որ արար զերկինս և զերկիր ։
Հայր մեր ։ Ողջոյն քեզ ։
Խոստովանիմ առաջի այ, և այլն ։

Աղօթք ։

Այց արա աղաչեմք տր բնակու-թեաս այսմիկ, և զամ նենգութի թշնամւոյն 'ի սմանէ 'ի բաց մեր-ժեա, և հրեշտակք քո սբք բնա-կեսցեն 'ի նմա, որք և զմեզ 'ի խա-ղաղութե պահպանեսցեն, և օրհնութե



digitised by A.R.A.R.@

քո լիցի 'ի վերայ մեր միշտ, տէրամբ մերով յ͞սիւ ք͞սիւ. ամէն:

## Առ պահապան հրեշտակն:

Ո՛վ հրեշտակ ա͞յ, որ ես պահապան իմ, յանձն առնեմ զիս քեզ, լուսաւորեա զիս աղաչեմ այսօր. գթութ͞բ վերնականաւ պաշտպանեա իսկ զիս, հովուեա և կառավարեա. ամէն:

Ա͞ծ, որ զարմանալի կարգաւ զսպասաւորութիւն հրեշտակաց, և մարդկան տնօրինես, շնորհեա մեզ այցարար, զի որովք քեզ յանդիման եղելովք պաշտօն քեզ 'ի յերկինս մատուցանի, նոքօք և կեանքն մեր 'ի յերկրի պաշտպանիցի. տէրամբ մերով յ͞սիւ ք͞սիւ. ամէն:

## Յիշատակ Ա͞ծածնին:

Ո՛վ ամենասրբուհի մայր մերոյ փրկչին, որ ես դուռն ընդ անցս երկնից, և աստղ ծովու:

Օգնեա աղաչեմք ժողովրդեանն գթեցելոյ, որպէս զի զարթիցէ նոցին այցելուն:

Դու որ ծնար 'ի սքանչումն բնու-

Թէ զորն քո արարիչ, կոյս նախ-
կնագոյն, և վերջնագոյն:
Որ 'ի բերանոյն գաբրիէլի ընկա-
լար զողջոյնն զայն, մեղաւորացս
յար գթած:
Հրեշտակ տն աւետեաց կուսին
մարիամու, և յղացաւ 'ի հոգւոյն
սբյ: Ողջոյն քեզ, ևն:
Ահաւասիկ կամ աղախին. ևն:
Եւ բանն մարմին եղև. ևն:
Զշնորհս քո աղաչեմք. և այլն, որ-
պէս 'ի վերոյ. 107:

Աղօթք:

Ած որ զպարգևս յաւիտենակա-
նաց կենաց երանուհւոյն մարիա-
մու ծնուցելով կուսութբ սեռի
մարդկայնոյ ընծայեցեր, շնորհեա
մեզ աղաչեմք, զի զնա վասն մեր
բարեխօսել զգասցուք, որով ար-
ժանաւորեցաք զպարգևիչն կե-
նաց ընդունիլ, զտէրն մեր յս քս.
ամէն:
Ողջոյն քեզ թագուհի երկնից.
Աւէ տիրուհի հրեշտակաց.
Սալվէ արմատ կենաց:
Ողջոյն քեզ դուռն յորմէ լոյս աշ-
խարհի ծագեցաւ:

digitised by A.R.A.R.@

Ո՛ղջ լեր ո՛վ ամենագեղեցիկ. և
վ՟ն մեր զ՟քն աղերսեա՛:
Արժանացո՛ զիս գովել զքեզ կոյս
սրբազան:
Եւ տո՛ւր ինձ զօրութ՟ին ընդդէմ
Թշնամեաց քոց:

Աղօթ․ :

Շնորհեա՛ ամենակարօղ աստուած՝ նուաստութեան մերում զնպաստ, զի որք զյիշատակ սրբուհւոյ ա՟ծածնին միշտ առնեմք, օգնութ՟ն նորին բարեխօսութեն 'ի մերոց յառնիցեմք յանիրաւութեց, տ՟ր մերով յ՟իւ ք՟իւ. ամէն:

Ուրախ լեր Թագուհի երկնից ա-
լէլուիայ:
Քանզի զոր 'ի քեզ կրել արժա-
նաւորեցար, ալէլուիայ:
Յարեաւ ահա որպէս ասացն, ա-
լէլուիայ:
Խնդա՛ և ուրա՛խ լեր կոյս մարիամ,
ալէլուիայ:
Զի ճշմարտապէս յարեաւ տ՟րն,
ալէլուիայ:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք։

Ած որ յարութե̃ որդւոյ քո տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի զաշխարհս հրճուեցուցեր, շնորհեա աղաչեմք զի 'ի ձեռն ծննդի ն̃ր կուսին մարիամու ընդունիցիմք զխնդութիւն կենաց մշտնջենաւորաց, նոյնով յ̃իւ ք̃իւ տէրամբ մերով. ամէն։

Ողջ լե՛ր թագուհի մայր ողորմութե̃, կեանք, քաղցրութի̃, և յոյս մեր ողջ լե՛ր։ Առ քեզ վերագոչեմք աքսորեցեալ եւայի որդիքս։ Առ քեզ յար հառաչեմք, հեծեծելով և ողբալով յայսմանէ արտասուաց վայրէ. աղէ ուրեմն ո՛վ փաստաբան մեր, դարձո՛ առ մեզ զողորմածագունեղ հայեցուածս քոյոց աչաց։ Եւ զյ̃ս բարեբանեցեալ պտուղ որովայնի քո զկնի այսր աքսորականի վայրիս ցո՛յց մեզ. ո՛վ համեղաբարոյ, ո՛վ գթած, ո՛վ քաղցր կոյս մարիամ։ Աղօթեա վասն մեր ս̃բ ա̃ծածին։ Զի խոստամանցն ք̃ի արժանաւորիցուք։

digitised by A.R.A.R.@

## Աղօթք ։

Ամենակարող և մշտնջենաւոր
ա̃ծ, որ փառաւորի մօրն և կու-
սին մարիամու զհոգի և զմար-
մինն հոգւոյն ս̃բյ գործակցութ̃բ
նախապատրաստեցեր, մինչ զի վայ-
ելչական տաղաւար արժանաւորե-
ցաւ լինիլ որդւոյ քում։ Տո՛ւր մեզ
աղաչեմք, զի որք նորին յիշատա-
կաւն հրճուիմք, նորին և գթա-
ծին բարեխօսութ̃ն 'ի չարեաց
մեզ առկացելոց, և 'ի յաւիտենա-
կանէ զերծանիցիմք մահուանէ,
տ̃ը մերով յ̃իւ ք̃իւ. ամէն ։

## Աղօթք վերջ այս անձնողինն ասելիք ։

Լուսաւորեա՛ տ̃ր ա̃ծ աղաչեմք
զխաւար մեր, և զնենգութիւնս
բոլորի այսորիկ գիշերիս տարա-
մերժեա՛ 'ի մէնջ, զի դու ես այ-
ցելու մեր. տ̃ը մերով յ̃իւ ք̃իւ.
ամէն ։

Գոհանամք զքէն Թագաւոր ա̃ծ
ամենակարող, յաղագս համայնից
բարերարութեանց քոց 'ի քէն առ
մեզ եղելոց ։ Աղաչեմք տ̃ր հատո՛
ամենից մերոց յանուն քո ո̃ը բա-

digitised by A.R.A.R.@

րերարաց, զկեանս յաւիտենա֊
կանս, վասն բարեաց զորս արա֊
րին մեզ։ Հոգւոց ամենեցունց հա֊
ւատացելոց ննջեցելոց շնորհեա և
ողորմութ՟ին տ՟յ հանգիցեն 'ի խա֊
ղաղութ՟ե․ ամէն։

## Այլ ևս աղօթք։

Ո՜վ մշտնջենաւոր և ողորմած
ա՟ծ, ահաւասիկ ես նուաստագու֊
նեղ ստեղծուած քո, ըստ կարի
իմում և գիտութ՟ե անկեալ յեր֊
կիր առաջի քոյոյ մեծութ՟եդ, վե֊
րընծայեմ քեզ զհամայնս գոհու֊
թիս, զորս կարէ հաւատարիմ ոք
ծառայ նուիրել իւրում տ՟ն առա֊
տաբաշխի, վ՟ս անթուելեաց բա֊
րերարութ՟եցն, զորս մինչև ցայժմ
ինձ արարեր։ Եւ հայցեմ 'ի քէն
վ՟ս քոյոյ գթածի բարեհաճութ՟եդ,
մի անտես առնիցես զիս, զի մի
անկանիցիմ յաչաց քոց․ այլև գո֊
հանամ զքէն, և բարեբանեմ ըզ֊
քեզ, վ՟ս զի յաւուր յայսմիկ բա֊
րեգթապէս պահպանեցեր զիս,
ազատեցեր, և պահեցեր 'ի բազ֊
մաց վտանգից՝ ը՟ն հոգւոյ և ըստ
մարմնոյ, թէև վասն մեղաց իմոց

digitised by A.R.A.R.@

արժանի էի 'ի բաց մերժիլ 'ի քէն։ Ուստի 'ի խորոց սրտի իմոյ ապաշաւեմ զյանցանս զորս գործեցի այսօր ընդդէմ քում հանդիսավէհութ̃եդ, վ̃ ոչ սիրելոյ ըզքեզ, և վ̃ ոչ ընդունելոյ և պահելոյ զպատուիրանս քո, ըստ որում պարտ էր ինձ առնել։ Արդ շնորհեա ինձ ով Մարդասէր տ̃ր անցուցանել զգիշերս զայս խաղաղականաւ հոգւով, Թարց անկանելոյ 'ի ցնորս դիւականս. քանզի 'ի ձեռս քոյ յանձն առնեմ 'ի գիշերիս յայսմիկ, և զա̃մ աւուրս կենաց իմոց զհոգի և զմարմին իմ. պահեա ուրեմն պահպանեա և ազատեա զիս 'ի գիշերիս յայսմիկ, և յա̃մ ժամու 'ի փառս քո, 'ի պատիւ ամ̃ներանեցելոյ սրբուհւոյ կուսին Մարիամու, 'ի փըրկութ̃ն հոգւոյ իմոյ, և յօգուտ մերձաւորաց իմոց. ամէն։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

## Աղօթք իւրաքանչիւր անձին հաստատացելոյ ՚ի Քս։ Զոր արարեալ է սբյ հռն Ներսէսի Հայոց կաթողիկոսի։

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈվանիմ, և երկրպագանեմ քեզ հայր և որդի, և սբ հոգի. անեղ և անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց, և մարդկան, և ամ եղելոց. ողորմեա քո արարածոցս:

Հաւատով խոստովանիմ, և երկրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սբ երրորդութն և մի ածութիւն. արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և անգիտութն, և լուսաւորեա զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ. ողորմեա

ինձ բազմամեղիս ։

Հայր երկնաւոր, ած ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս՝ և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին՝ և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս ։

Որդի այ ած ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սբյ կուսէն մարիամայ, վն մերոյ փրկութե. խաչեցար՝ և թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց և համբարձար առ հայր. մեղայ յերկինս՝ և առաջի քո. յիշեա զիս ոպ զաւազակն՝ յորժամ գաս արքայութբ քով. և ողորմեա։

Հոգի այ ած ճշմարիտ, որ իջեր 'ի յորդանան, և 'ի վերնատունն. և լուսաւորեցեր զիս մկրտութբ սբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քոյ. մաքրեա զիս վերստին ածային հրովդ քո՝ ոպ հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա։

Անեղ բնութի, մեղայ քեզ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս,

digitised by A.R.A.R.@

վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա՛։

Տեսօղ ա՟մի մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ 'ի դպրութե՟ կենաց. և ողորմեա՛։

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ՝ կամաւ և ակամայ, գիտութե՟՝ և անգիտութե՟. թողութի՟ շնորհեա՛ մեղաւորիս. զի 'ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի ա՟ծութեդ քո զգայարանօք իմովք, և ա՟մ անդամօք մարմնոյս. և ողորմեա՛։

Ամենախնամ տ՟ր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո տ՟ր՝ ոչ ևս հայիլ յարատ. և ականջաց իմոց, ոչ ախորժել լսել զբանս չարութե՟. և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն. և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն. և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութի. և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յա՟մի. և ողորմեա՛։

Հուր կենդանի ք՟ս, զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբո-

քեւ յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց. և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութեն քո 'ի սրտի իմում. և ողորմեա։

Իմաստութիւն Հօր յա՛, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել՝ և խօսել՝ և գործել առաջի քո յամ՛ ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից, և 'ի գործոց փրկեա զիս. և ողորմեա։

Կամեցօղ բարեաց՝ Տ՛ր կամարար՝ մի թողուր զիս 'ի կամս անձինի մոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմ։

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ՝ ատել զմեղս. և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ող։

Խնամօղ արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ, 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց՝ և 'ի մարդոց անիրաւաց, և յամ՛ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողոր։

Պահապան ամ՛ի քն՝ աջ քո հովա.

digitised by A.R.A.R.@

նի լիցի 'ի վերայ իմ, 'ի տուէ և
'ի գիշերի, 'ի նստիլ 'ի տան՝ և
'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել՝
և 'ի յառնել. զի մի՛ երբէք սասա-
նեցայց. և ողորմ:

Ած իմ, որ բանաս զձեռն քո, և
լնուս զա՛մ արարածս ողորմութբ
քով. քեզ յանձն առնեմ զանձն
իմ. դու հոգա՛, և պատրաստեա՛
զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝
յայսմ հետէ մինչև յաւիտեան.
և ողորմ:

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս
'ի չար սովորութեց իմոց 'ի բարի
սովորութի. և բևեռեա՛ 'ի հոգի
իմ զսոսկալի օր մահուն, և զեր-
կիւղ գեհեննոյն, և զսէր արքայ-
ութեն. զի զղջացայց 'ի մեղաց, և
գործեցից զարդարութի. և ողոր-
մեա՛:

Աղբիւր անմահութեան աղբերա-
ցո՛ 'ի սրտէ իմմէ զարտասուս ա-
պաշխարութե, որպ պոռնկին. զի
լուացից զմեղս անձին իմոյ՝ յա-
ռաջ քան զելանելն իմ յաշխար-
հէս. և ողորմ:

Պարգևի՛չ ողորմութե, պարգևեա՛
ինձ ուղղափառ հաւատով, և բա-
րի գործով, և սբ մարմնոյ և ա-

digitised by A.R.A.R.@

րեան քո հաղորդութե՟ գալ առ-
քեզ. և ողորմ:

Բարերար տէր, հրեշտակի բար-
ւոյ յանձն արասցես զիս, քաղց-
րութե՟ աւանդել զհոգի իմ, և
անխռով անցուցանել ը՟ չարութի՟
այսոցն, որք են 'ի ներքոյ երկ-
նից. և ողորմ:

Լոյս Ճշմարիտ քո՟ արժանաւորեա՛
զհոգի իմ ուրախութե՟ տեսանել
զլոյս փառաց քոց 'ի կոչման ա-
ւուրն. և հանգչել յուսով բարեաց
յօթևանս արդարոց՝ մինչև յօր մե-
ծի գալստեան քո. և ողորմ:

Դատաւոր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս և
զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաս-
տան ընդ ծառայիս քո, այլ փր-
կեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն,
և լսելի՛ արա ինձ զերանաւէտ կո-
չումն արդարոց յերկնից արքայու-
թե՟դ. և ողորմ:

Ամենողորմ տ՟ր՝ ողորմեա՛ ամենայն
հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օ-
տարաց, ծանօթից՝ և անծանօթից.
կենդանեաց, և մեռելոց. շնորհեա՛
և թշնամեաց իմոց՝ և ատելեաց
զթողութի՟՝ որ առ իս յանցանաց.
և դարձո՛ զնոսա 'ի չարեացն, զոր

digitised by A.R.A.R.@

ունէին վ՟ իմ. զի ողորմուե՟ քում
արժանի եղիցին. և ողորմ՟։
Փառաւորեալ տ՟ր՝ ընկալ զաղա-
չանս ծառայիս քո՝ և կատարեա՛
՚ի բարի զխնդրուածս իմ. բարե-
խօսութ՟բ սրբուհւոյ ա՟ծածնին, և
յովհաննու մկրտչին, և սրբոյն ստե-
փաննոսի նախավկային, և ս՟ին
գրիգորի մերոյ լուսաւորչին. և
ս՟ց առաքելոցն՝ և մարգարէից
և վարդապետաց և մարտիրոսաց՝
և ս՟ց հայրապետաց՝ և ճգնաւո-
րաց՝ և կուսանաց. և ա՟մ ս՟ց քոց
երկնաւորաց՝ և երկրաւորաց. և
քեզ փառք և երկրպագութիւն
անբաժանելի ս՟բ երրորդութ՟դ՝
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանք։

Վասն սրբուհւոյ անարատ մօր
քո և կուսի, տ՟ր ընկալ զաղաչանս
մեր, և կեցո՛ զմեզ։

Քարոզ։

Ս՟ զա՟ծածինն՝ և զա՟մ ս՟ս բա-
րեխօս արասցուք առ հայր ՚ի յեր-
կինս. զի կամեցեալ ողորմեսցի, և

digitised by A.R.A.R.@

գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տր ած մեր՝ կեցո՛ և ողորմ։

## Աղօթք։

Ընկալ տր զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սբ ածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբց քոց։ Լո՛ւր մեզ տր, և ողորմեա՛. ներեա՛, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութբ փառաւորել զքեզ ը որդւոյ և ընդ սբյ հոգւոյդ. այժմ, և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Օրհնեալ տր մեր յն քն, ամէն։ Հայր մեր, որ յերկինս։

digitised by A.R.A.R.@

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ աղօթք առաւօտեան:

Բան. ձդ:

ԱՐՔԱՅ ԵՐԿՆԱՒՈՐ թագաւոր բարձրեալ. որ բոլորից, ամենից ակնկալութի, ստեղծօղ տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց. կազմիչ հանդերձելոց. տուիչ լուսոյ, առիթ առաւօտու, պատրաստիչ վաղորդայնի, երեւեցուցիչ երեկորի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, իմաստութեն գործօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմարիչ քնոյ, պարգեւիչ ննջման. շնչոյ յարակարգութեն, զգայութեն տեւողութեն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անրջոց, փոխարկութիւն ղարհուրմանց, այլայլութեն տխրու-



digitised by A.R.A.R.@

թ̃եց, խափանիչ խիթմանց, ը̃ար-
ձակիչ կարծեաց, համադրութ
ծփմանց, ահագնութ̃ե խարդախ-
մանց, հարուածիչ դիւաց, փա-
խուցիչ ախտից, ընկղմիչ գայթագ-
ղութ̃եց: Պաշտպանեա՛ երկնաս-
տեղծ ձեռամբդ, զօրացո՛ բարձրա-
ցեալ քո աջովդ, ամփոփեա՛ ամե-
նակալդ թևօք, ծածկեա՛ ա̃ծեան
խնամօքդ, ամրացո՛ վերակացութ̃
վերնայնոցդ, շուրջանակի պար-
պեա՛ գումարտակօքդ անմահից, 'ի
յամենուստ պարփակեա՛ կցորդութ̃
հրեշտակացդ. վանեա՛ զը̃դիմամար-
տըն իմ զլինուորութ̃ զուարթնոցդ,
պատապարեա՛ զսասանեալս ա̃ծած-
նիդ մաղթանօք. զբանակս անդ-
րանկացդ բարեկարգեա՛ ինձ պա-
հապան: Բա՛ց ը̃ աչացս դիմաց,
և զմտացս իմ տեսանելիս, ըղ-
գա՛ստ արա ընդ ոգւոցս և զծան-
րաբեռն կրիցս դանդաղութի. վե-
րացո՛ տ̃ր 'ի զգայութեանցս զմա-
ծեալս յիմարութի. բա՛րձ միայն
բարեգործ զպատրուակիս թանձ-
րութիւն: Ընդ սկզբան բերմանս
լուսոյ զողորմութի քո ծագեա՛.
ը̃ ելից արևուն՝ արդարութ̃ե ա-
րեգակնդ 'ի յանձկութիւն սրտիս

digitised by A.R.A.R.@

մայցէ. Ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստիցս խորհրդարան Ջա- հեսցի. խաչիդ տեառնագրութեն ընդ շունչս և ընդ մարմինս հա- մասփիւռ տարածեսցի: Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ դու յար- մարեալ տաղաւարս պահպանու- թեան որ 'ի սմին: Զի դու ես ած անքննին, առ ամենեսին բա- ւական, և յամենայնում բովան- դակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Սրբոյն Հօրն Գրիգորի Նարեկացւոյ ա- սացեալ մաղթանք զօրաւորք առ հա- րաց գիշերայնոյ:

Բան. ԺԲ:

Ընկալ բարեգթութեամբ տէր ած հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ՝ առ պատկառեալս դի- մօք. փարատեա ամենապարգև՝ զամօթական տխրութիւնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծան- րութիս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիս. աւարեա

մինչ յաղթօղ՝ զխաբողին հաճու-
թիս. բացադրեալ մերնային զմոլե-
լոյն մառախուղ. կնքեալ կեցուցիչ
զկորուսչին ընթացմունս. ցրուեալ
ծածկատես՝ զըմբռնողին չար գըր-
մունս. խորտակեալ անքննին՝ զմոր-
տողին գխմեցմունս: Տեառնադրեալ
քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ-
յարկիս. պարփակեալ քո ձեռամբդ
զառասատաղ տաճարիս. գծագրեալ
քո արեամբդ՝ զմուտ սեմոց սե-
նեկիս. կերպացո՛ զքո նշանդ՝ ՚ի
հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո
աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաք-
րեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան
անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝
զտառապեալ անձն ոգւոյս. ան-
խարդախ արասցես զքո շնորհեալ
շունչ մարմնոյս. կացուսցես շըր-
ջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ.
կարգեսցես ՚ի դիմի՝ ընդդէմ դի-
ւացն դասու: Տո՛ւր հանդիստ
քերկրութե մահահանգոյնս նիրհ-
ման ՚ի խորութե գիշերիս, բա-
րեխօսութե հայցուածոց սրբոյ
ածածնիդ՝ և ամ ընտրելոց: Ամ-
փոփեալ պարուրեալ զպատուհան
տեսութեց՝ զդայարանացս իմա-
ստից, անզարհուրելի զետեղմամբ,

digitised by A.R.A.R.@

'ի ծփական խռովութեանց կեն-
ցաղական զբաղմանց, անրջական
երազոց, խօլականաց ցնորից. յի-
շատակաւ քո յուսոյդ՝ անմնաւե-
լի պաշտպանեալ: Եւ սթափեալ
վերստին 'ի ննջմանէ ծանրութե̃,
ամենազգաստ արթնութբ̃, հոգե-
նորոգ զուարթութբ̃, 'ի քեզ ար-
ձանացեալ, զայս ձայն մաղթա-
նաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ա-
մենօրհնեալ Թագաւոր փառաց ան-
ձառելից՝ փառաբանողաց երկնա-
գումար խմբից երգակցեալ՝ յեր-
կինս առաքել: Զի դու փառա-
ւորեալ ես յամենայն արարածոց՝
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Նորին սբ̃յն Գրիգորի Նարեկացւոյ ա-ղօթք զօրաւորք:

### Բան. խա̃:

Որդի այ̃ կենդանւոյ օրհնեալ
յա̃մի, հօրդ ահաւորի անքննին
ծնունդ. որ անկարանայ առ 'ի քէն
և ոչինչ: Որ 'ի ծագել անստուեր
նշուլից՝ ողորմութե̃ քո փառաց,

digitised by A.R.A.R.@

հալին մեղք, հալածին դևք, ջընջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն. ապառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն. և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ա՟մի: Որ ո՟չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութե՟ քո. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզնին. 'ի տարր գոյից՝ և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ա՟մի և յա՟մի, ամենայն լրմամբ օրհնեալդ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր, և հոգւոյդ ս՟բյ փառք յաւիտեանս. ամէն:

digitised by A.R.A.R.@

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅՆ,
ԱՅԼ ՄԱՂԹԱՆՔ ԳԻՇԵՐԱՅԻՆ:

ԲԱՆ. ՂԶ՟:

Ո՜վ յաւիտենական, բարերար, և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու, և լոյս 'ի խաւարի. յոյս ակնունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութ՟բ քո դարձուցանես յայգ զստուերս մահու. աննուազ ծագումն, և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութե՟ քո խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութե՟ամ եղելոց, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա: Ա՟ծ իմ, և թագաւոր իմ. կեանք իմ, և ապաւէն իմ. յոյս իմ, և վստահուՙն իմ, յն՟ քն՟ ա՟ծդ՟ա՟մի. սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սր՟ց. մխիթարութի՟ վշտաց, և քաւարան մեղուցելոց. որ գի-

digitised by A.R.A.R.@

տես զիմ յառաջ քան զլինել նոցա: Առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշերի, և 'ի դիւէ չարէ: Ով զի զյիշատակ սոսկալի, և սբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութիւն շնչոյ, կեցից պահպանեալ ը̅ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ: Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քոյ նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք ածականօք՝ ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն. բազուկ քո հովանասցէ, և աջ քո կնքեսցէ: Վասն զի գթած ես, և ողորմած. և անուն քո կոչեցեալ է 'ի վ̅ր ծառայից քոց: Եւ քեզ ը̅ հօր՝ հոգւովդ սրբով փառք, և իշխանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

digitised by A.R.A.R.@

## Նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ պաղատանք առ սբ ածածինն :

### Բան. Ձ:

Եւ արդ՝ 'ի վեր այսքանեաց յուսահատութեանց, եւ անհարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, ծայրից բարկութեանց, տագնապեալ ոգւով՝ թախծութեան խապառ, աղաչեմ զքեզ սբ ածածին: Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրեւ օդ. մաքուր որպէս լոյս. անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան. գերաղանց քան զլինակութիւն անկոխելին սրբութեանց. երանաւոր խոստմանն տեղի. եդեմ շնչական. ծառ կենացն անմահից բոցեղէն սրոյն պարունակեալ: 'Ի բարձրեալն հօրէ զօրացեալ եւ հովանացեալ. հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ. բնակութիւն որդւոյն յարդարեալ, եւ տաղա-



digitised by A.R.A.R.@

ւարեալ։ Մխածինն հօր, և քեզ անդրանիկ. որդի քո ծննդեամբ, և տէր արարչութե՛։ Ընդ անաղտ մաքրութեն՛դ՝ և անբիծ բարի. ը̄ անարատ սրբութեն՛դ՝ և խնամակալ բարեխօս։ Ընկա՛լ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս, և միասն ընծայեա՛ ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝ 'ի քոյդ պաղատանս։ Հինեա՛ միացն զմեղուցելոյս դառն հեծութի՛ ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց, ունկդ կենաց պտղոյն օրհնութե՛։ Զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութենդ պաշտպանեալ և լուսաւորեալ՝ կեցից քո՛ւ որդւոյ քոյ և տ̄ն։

Օժանդակեա՛ թևոցդ աղօթիւք խոստովանեալ մայրդ կենդանեաց՝ և ելցն իմ յերկրէս հոմոէ, աւանց լլկանաց հեռանել 'ի կեանս օթևանացդ պատրաստութե՛. զի թեթևացի կատարածն իմ՝ ինձ ծանրացելոյս անօրէնութե՛։ Արասցես առն ինձ բերկրութե՛ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն եւայի։ Բարեխօսեա՛, խնդրեա՛, աղաչեա՛. զի ըստ անճառելի մաք-

digitised by A.R.A.R.@

րութե̃դ՝ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութի̃։ Արդաւուք օգնեա՛ վտանգեցելոյս՝ գովեա՛լդ 'ի կանայս. ծո՛ւնր խոնարհեցո՛ առ իմ հաշտութի̃՝ ծնօղդ ա̃յ. ընդ իմում թշուառիս հոգւո՛ խորա՛ն բարձրելոյն. ձե՛ռն տուր անկելոյս՝ տաճա՛ր երկնային։ Փառաւորեա՛ զորդիդ քո 'ի քեզ՝ ա̃ծօրէն ինձ հրաշագործել քաւութի̃ և ողորմութիւն. աղախի՛ն ա̃յ և մայր. բարձրասցի՛ պատիւ քո ինև, և ցուցցի՛ փրկութի̃ իմ քև։ Եթէ զիս դո՛ցես տիրամայր. թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի. թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ. թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ. թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բա՛րեշնորհ. թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ մի՛շտ ս̃բ կոյս. թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ յա̃յ. թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծի՛չդ անիծից. թէ զծփեալս հաստատեսցես՝ հա՛նգիստ. թէ 'ի խռովութե̃ցս յուզմանց փոխեսցես զիս՝ խա՛ղաղարար. թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գո՛վեալ. թէ վ̃ն իմ մտցես 'ի հան-

digitised by A.R.A.R.@

դէս՝ մահու նահանջիչ. Թէ զգառ֊
նութիւնս իմ անուշեսցես՝ քաղց֊
րութիւն. Թէ զբաժանմանն իմ
խորոց քակտեսցես՝ հաշտութ̃ի.
Թէ զանմաքրութ̃իս իմ բարձցես՝
եղծման ընդոտնիչ. Թէ զմատ֊
նեալս մահու փրկեսցես՝ կենդա֊
նի՛ լոյս. Թէ զլալեացս ձայն հառ֊
ցես՝ բերկրութիւն. Թէ զխորտա֊
կեալս կազդուրեսցես՝ դեղ կե֊
նաց. Թէ 'ի կործանեալս յիս ակն֊
արկեսցես՝ հոգելից. Թէ ողոր֊
մութ̃ե ինձ պատահեսցես՝ կամկ
նուիրեալ. օրհնեալդ միայն 'ի շըր֊
թունս անբիծս լեզուաց երջան֊
կաց: Այս կաթիլ մի կաթին՝ քումդ
կուսութ̃ե՝ յանձն իմ անձրևեալ՝
կենաց ինձ զօրէ. մայրդ բարձրե֊
լոյ ա̃ն յ̃ւի արարչին երկնի, և
յնաւ̃ին երկրի: Զոր անձառապէս
ծնար բովանդակ մարմնով, և հա֊
մայն ա̃ծութ̃ե, որ փառաւորեալ
է ը̃ հօր, և հոգւոյն սրբոյ՝ էու֊
թ̃ե, և անքննութ̃ե մերոյին բնու֊
թ̃եա միացելով ամենայն և յամե֊
նայնում. մի յերրորդութ̃են. նմա
փառք յաւիտենից յաւիտեանս.
ամէն:

digitised by A.R.A.R.@

## Սբյն Ներսիսի Լամբրոնացւոյն աղերս մաղթանաց՝ խօսք ընդ Յսի ։

ԱՅԼ ԴՈՒ ՆԱՅԵԱ յիս ամենակարող տէր իմ յս̃, յանթուառ փառացդ և շնորհաց, տալով անարժան քո ծառայիս զանխռով միտս՝ 'ի յոյս հանդերձեալ քոյ յուսոյդ: Տե՛ս տր̃ թէ որքան վտանգիմք յաղցաւոր կենացս կրից 'ի զանազան հողմոց բքաբեր շնչմանց երեքալեանն խռովութ̃, թշուառացեալ մտացս երևեալ: Չունիմ տէր, պտուղ գործոց քեզ նուէր հաշտութե. քանզի զոր ունել կարծէի՝ մաշեալ պակասեաց՝ 'ի քում ահաւորութեդ եկեալ գիտութե: Եւ ես մերկ՝ և թափուր, կիսամեռ՝ և ոգեկործան, միայն զմարդասիրութե ոտիցդ կախիմ՝ բուռն հարեալ զգմանէ, և ոչ երբէք ըզթողուլն տխորժեմ: Հան զիս 'ի չարս շաւղաց, զորս բերանով ի֊

մով աղարտեմ: Եւ ուսո՛ զճանա-
պարհս քո ուղիղս, որում կամօք-
սրտիւ վկայեմ: Անկայ 'ի մահիճս
մեղաց՝ և ես ինքեն զգարշութի
մեղացս բողոքեմ: Տո՛ւր զբժշկու-
թի ախտացեալ հոգւոյս, որ ա-
ռողջացուցանել զայլս խաբեմ:
Զուխտս հօծեալս բանի յեկեղե-
ցիդ անդրանկաց առաջի ա̃մ եր-
կիւղածաց քոյ նուիրեմ: Կերի-
ցեն տնանկք, և յագեսցին 'ի սմա-
նէ և օրհնեսցեն զքեզ, որ զտ̃րդ
խնդրեն: Զաղօտացեալ քո լոյս
բարեկամացն քոյ ցուցանեմ, յի-
շեսցեն սովաւ, և դարձցին առ
տ̃րդ՝ որք 'ի ծագաց երկրէ քումդ
գիտուն փափաքեն: Քեզ փառք
պարծանք և գրաւ աշխարհի՝ 'ի
յերկինս փառաւորեալ, յաւի-
տեանս յաւիտենից:

Նորին ներբողեան՝ համբառնալ առ ա̃ծ հո-
գին ա̃ծ:

Ո՜վ տ̃ր՝ և դաստիարակ, հեղ՝ և
խնամօղ ա̃ծ իմ հոգի, ընչեա՛ 'ի
մրրկեալ ծովս խորհրդոյս զսիւգ
շնորհիդ՝ որով խաղաղի. և որպէս
միշտ երախտիւք քո ստացար զիս

digitised by A.R.A.R.@

քեզ պարտական գովեստի, լի՛ց և այժմ զբերան իմ օրհնութ̃ե ̃տր ցնծալի. Թէպէտ և ես անարժան տաճար լինել քում հանգստի, այլ դու ա՛ռատ ա՛ռ միայն գործի հնչման քո ձայնի. և զանձա-խորհրդոյ քոյ հանճար տարփալի, բացեալ փայլեցո՛ խնդրողաց նո-րին առաջի: 'ի փառս պատուոյ մեծի քոյ անուան ս̃բդ սիրելի, և ինձ կշտամբանս բարբառ բերա-նոյս ժխտօղ ծառայի:

Գործեալ նորին Ներսէսի Լամբրոնա-ցւոյ՝ աղօթք անձին, որ 'ի ծորցութե̃ եղէ, նաւ 'ի Կիպրոս:

Այլ շուրջ պատեալ 'ի տարա-կուսանացս յա̃մ կողմանց սրտի-շաղախեալքս, և ունկնդրութեան կարօտեալքս՝ նայիմք առ քեզ փոյձ տկար բնութե̃ս քահանայա-պետդ յո̃: Ո՞վ որ վասն մեր մեղա եղեր, զի մեք լիցուք վ̃ քոյ ար-դարութի̃: Ո՞վ որ վասն մեր եր-կրաւոր եղեր, զի մեք լիցուք վ̃ քոյ երկնաւոր: Ո՞վ որ վասն մեր հաց եղեր, զի մեք 'ի ճաշակելն զքեզ՝ սրբեսցուք: Տո՛ւր զզարա-

digitised by A.R.A.R.@

թեալ վշտօք մարմնին քո՝ ա̅մ սրտի սրբարար կերակուր: Մատուցանեմ զարեան քոյ վտակ անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան անմեղունե զմայլումն: Զգեամ զփրկական քոյ զխաչդ զօղելոցս 'ի ծով աշխարհիս առ քեզ վերածիչ: Կարօտայաք շնորհի՝ սփռեամ: Լքաք 'ի գործոց՝ քաւեամ: Խարխափեմք զխաւար՝ Ճառագայթեամ: Կործանեցաք 'ի հաւատոց՝ հաստատեամ: Դու ես յոյս, դու ես լոյս. դու ես կեանք, դու ես քաւութիւն. դու ինքն և անմահութ̅ի: Քեզ սպասեն յեցեալքս 'ի շնորհս քո. 'ի քէն կարօտին առնուլ փրկութ̅ի խառնեալքս 'ի մարմինդ քո. զքեզ ունին քաւիչ քահանայ՝ գենեալ արեամբ հօտս քո: Հայեաց յամենեսեան. սփոփեամ զարակուսանս մեր քոյին վաստակովքդ: Հանդարտացո՛ զխռովութիս մեր՝ քոյին խաղաղութեամբ: Հանգո՛ զաշխատանս մեր 'ի քոյ օթեվանդ. ուր դու գնացեր ո՛վ տ̅ր, և խոստացար: Արժանացո՛ զքոյսս՝ փառաւորել զքեզ այդր ընդ հօր, և ը̅ նք հոգւոյդ յաւիտեանս. ամէն:

ՆՈՐԻՆ ՆԵՐՍԷՍԻ ԱՂՕԹՔ ԱՌԱՋԷԱՒ ԱՌ- ԽԱՉԵԼԵԱԼՆ ՅՍ:

Առ քեզ ակնարկեմ, աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ, թէ ընդէր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սրբութիւն. կամ ընդէր փափաքեմ մաքրութեան, մինչ դու ես իմ մաքրութիւն: Այսուհետև ուսեալ, եթէ դու ես իմաստութիւն մեզ յԱյ տուեալ արդարութիւն, և սրբութիւն. առ քեզ ծարաւիմ, քեզ փափաքեմ, քեզ տռփամ. տուր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զովացուցիչ՝ աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանս յաւիտենից: Ծարաւիմ ըմպել 'ի կրկին վտակաց կողից, որով և սըրբեալ սիրով քո զմայլիմ: Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդանացեալ անմահ ես լինիմ: Փափաքեմ ողջագուրել զխոցուած ձեռացդ, որով հասեալ առ քեզ պատկիմ: Տռփամ ակնարկել ըզդէմսդ, որոյ ապտակաւն 'ի վիրաց իմոց բժշկիմ: Վաղվաղակի լո՛ւր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ: Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձկանդ սիրոյ: Տը-

digitised by A.R.A.R.@

չորեցայ յառ քեզ տարփանացդ ո՛վ վասն իմ խաչեալ: Թալկացայ, յորժամ առ քեզ ակնարկեմ ո՛վ վասն իմ ապտակեալ: Եւ աղաղակեմ, ցո՛յց ինձ զդէմս քո. լսեցո՛ ինձ զբարբառ քո. զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ: Ե՛րբ եկից՝ երևեցայց քեզ: Արդ՝ լո՛ւր ինձ, և արբեցո՛ զիս վաղվաղակի քո գիտութ̃էդ և սիրով. զի և յինէն, որ հաւատամ 'ի քեզ, բղխեսցեն աղբիւրք ջրոց կենդանութ̃է:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@




digitised by A.R.A.R.@

## Աղօթք առ ամենաօրհնեալն կոյսն մարիամ ա̄ծածին ։

ՓԱՌԱՒՈՐԵԱԼ և ամենօրհնեալ սըրբուհի միշտ կոյս ա̄ծածին մարիամ բարեխօսեա՛ վասն իմ մեղաւորիս առ միածին որդին յ̄ս ք̄ս տ̄ր մեր, զի զօրութեամբ ս̄բյ պատարագիս, զոր դառնակսկիծ չարչարանօք իւրովք սահմանեաց 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ՝ ողորմեսցի ինձ, շնորհելով զթողութիւն ա̄մ մեղաց իմոց՝ յորոց լիով սրտիւ զղջամ, և առաջադրեմ այլ ոչ ևս մեղանչել, միջնորդութ̄բ իւր ամենազօր օգնութեան. ամէն ։

digitised by A.R.A.R.@

Նշանակութիւնք խորհրդոց ութն պատարագին 'ի վերայ չարչարանաց տն մերոյ յի քի ։

## Աղօթք ։

Տէր իմ յն քն, որ վասն փրկութեան մերոյ հաստատեցեր զխորհուրդ սուրբ պատարագիս, 'ի յիշատակ չարչարանաց քոց · աղաչեմ զքեզ, տուր ինձ այնքան շնորհ և օգնութիւն, զի կարացից մտադրութբ լսել զնա, և նովաւ շահիլ զպտուղ չարչարանաց քոց · ամէն ։

Քահանայն երթայ 'ի սեղանն՝ նշանակէ զքնի երթալն 'ի պարտէզն ։

## Աղօթք ։

Տէր իմ յն քն որդի այ կենդանւոյ՝ որ 'ի մերձենալ ժամու չարչարանաց քոց սկսար տրտմիլ և տխրիլ, շնորհեա ինձ, զի յօժարութբ համբերեցից ամ նեղութեց իմոց վասն սիրոյ քոյ, որ ես ած սրտի իմոյ, և զօրութն չարչարանաց քոց եղիցի ինձ փրկարար · ամէն ։

digitised by A.R.A.R.@

Քահանայն սկսանելն զպատարագ՝ նը-շանակէ զտէր աղօթելն ՚ի մէջ պարտիզին։

Աղօթք։

Տէր իմ Յս՟ Քս՟ որդի այ՟ կենդանւոյ, որ աղօթելով ՚ի մէջ պարտիզին կամեցար զօրանալ ՚ի հրեշտակէ, շնորհեա ինձ, զի զօրութ՟բ սուրբ աղօթից քոց՝ հրեշտակ քո միշտ օգնեսցէ ինձ յա՟մ աղօթս իմ. ամէն։

Քահանայն յորժամ ասէ զխոստովանըն, նշանակէ զտէր անկանելն ՚ի վերայ երեսաց և զերկրպագելն արեամբ։

Աղօթք։

Տէր իմ Յս՟ Քս՟, որ աղօթելով քոյ ՚ի մէջ պարտիզին առ հայրն երկնաւոր, ՚ի սաստիկ տրտմութ՟էդ հոսեցեր զքրտունս արեան յա՟մ երակաց քոց. շնորհեա ինձ, զի և ես յիշելով զչարչարանս քոյ հանապազ հեղից յաչաց իմոց զաղբիւրս արտասուաց. ամէն։

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ ելանէ 'ի բեմն և համբուրէ զնա, նշանակէ յորժամ քս գնաց 'ի դէմ յուդայի, և համբուրիւ մատնեցաւ 'ի նմանէ:

Աղօթք:

Տր իմ յս քս, որ յանձն առեր համբուրիւ մատնիլ 'ի յանօրէն յուդայէ. շնորհեա ինձ, զի մի երբեք մատնեցից զքեզ, այլ զի սիրեցից և բարի արարից ամենից զրպարտողաց և հալածչաց իմոց. ամէն:

Քահանային գնալն 'ի Գրքին կողմն՝ նշանակէ զնի կապիլն 'ի հրէից:

Աղօթք:

Տր իմ յս քս, որ յանձն առեր կապիլ 'ի հրէից, աղաչեմ զքեզ՝ արձակեա զիս 'ի կապից մեղաց իմոց, և կապեա զիս կապանօք ամենասուրբ օրինաց քոց՝ որպէս զի զամ զօրութբ հոգւոյ և մարմնոյ կարացից քեզ անդադար ծառայել. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ առնէ պծամամութն, նշանակէ զՏէր առաքէին 'ի տան քահանայապետին Աննայի:

## Աղօթք:

Տէր իմ Յիսուս Քրիստոս որ յանձն առեր տանել երբեւ զմեղապարտ առաջի քահանայապետին Աննայի և անիրաւաբար ապտակիլ 'ի ծառայէ նորին, շնորհեա զի մի երբեք անկայց 'ի մեղս, այլ շնորհ հոգւոյդ սրբոյ զիս միշտ զօրացուսցէ 'ի պահել զպատուիրանս քո:

Քահանայն յորժամ առնէ՝ Տէր ողորմեա, նշանակէ զպետրոսի ուրանալն զՏէր 'ի տան քահանայապետին Կայիափայի:

## Աղօթք:

Տէր իմ Յիսուս Քրիստոս որ 'ի տան Կայիափայի երիցս անգամ ուրացեալ եղեր 'ի պետրոսէ վիմէ, աղաչեմ զիս յընկերութենէ ամբարիշտ մարդոց, զի մի ըստ չար օրինակի նոցին և ես գործելով զմահացու մեղս, 'ի քէն հեռացայց. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ խաղաղութիւն տա-
ժողովրդեանն, նշանակէ զՏէր հայի
'ի պետրոս, և զնորա զղջումն:

Աղօթք:

Տէր իմ Յս Քս, որ հայելով 'ի մե-
ղուցեալն պետրոս բղխեցուցեր
յաչաց նորա զարտասուս ապա-
շխարութեան, շնորհեա և ինձ հա-
նապազ լալ զմեղս իմ, և ոչ եր-
բէք զքեզ բարկացուցանել մեղօք
իմովք, որ ես ած իմ, և բարու-
իմ. ամէն:

Քահանայն յորժամ կարդայ զաղօթսն
զգերքն, նշանակէ զՏէր ածելն առ պի-
ղատոս:

Աղօթք:

Տէր իմ Յս Քս, որ յանձն առեր
գնալ յատեանն պիղատոսի, և
առաջի նորին դատիլ և ամբաստ-
անիլ, ուսո ինձ աղաչեմ զքեզ
յաղթահարել զամ նենգութիւն
ամբարիշտ մարդոց, և մինչ բա-
րի գործովք դաւանիլ զամենա-
սուրբ հաւատ քո. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ 'ի մէջ սեղանոյն աղօթէ ձայն կարդալոյ զԱւետարանն. նշանակէ զՏեառն տանելն առ Հերովդէս:

Աղօթք:

Տէր իմ յս̃ քս̃, որ առաջի Հերով-դէի համբերութե̃ լուար չարախօ-սացն քոց, և յանձն առեր զկապա-կանս նոցա. շնորհեա ինձ, զի մի՛ անխրատութեամբ զրպարտողաց իմոց տառապեցուսցեն զիս, և մի՛ սրբ-բազան խորհուրդք քո արհամար-հեսցին կատականօք յանօրէն մար-դոց. ամէն:

Քահանայն յորժամ կարդայ զԱւետա-րանն՝ և ասէ զհաւատամքն՝ նշանակէ զհրէից յետս տանելն զՏեառն առ Պիղատոս:

Աղօթք:

Տէր իմ յս̃ քս̃, որ 'ի Հերովդէէ առ Պիղատոս կրկին դարձեալ՝ զնոսին վերստին բարեկամս լինել կամեցար, շնորհեա ինձ, զի մի՛ եր-կեայց 'ի թշնամութէ մարդկան, այլ 'ի թշնամութէ նոցա պտուղ ինչ շահեցայց, զի քեզ նմանակից յայսմ լինել կարացից. ամէն:



digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ բանայ զվակասն՝ նշանակէ զհրէից թերհաւատութեանն զՔս 'ի զգեստուց ։

## Աղօթք ։

Տ̄ր իմ յ̄ս ք̄ս, որ յանձն առեր մերկանալ 'ի զգեստուցդ՝ զի մերկացեալ մարմնով եւ առաւել զանհարեալ լինէիր վ̄ն իմ. շնորհեա ինձ, զի կատարելապէս խոստովանելով զմեղս իմ մերկացայց զհին մարդն, եւ զգեցայց զնորն, զի մի երբեք գտցես զիս ունայն յառաքինութեանց. ամէն ։

Քահանայն սպաս դնելն՝ նշանակէ զՔ̄ի ծեծելն 'ի հրէից ։

## Աղօթք ։

Տ̄ր իմ յ̄ս ք̄ս, որ յանձն առեր կապել 'ի սիւնն իբրեւ զմեղապարտ, եւ թոյլ ետուր հրէից զքեզ անողորմաբար գան հարկանել. շնորհեա ինձ զի յօժարութ̄ ընկալայց 'ի քէն զհարուածս գթութ̄ քո. եւ զի մի երբեք կամեցայց զքեզ գան հարկանել մեղօք իմովք. ամէն։

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ ծածկէ զսկիհն՝ նշանակէ զՏեառն ծածուկ պահելն 'ի հրէից:

Աղօթ․:

Տ՛ր իմ յ՛ս ք՛ս, որ վասն իմ ընկալար 'ի գլուխ քո զփշեղէն պըսակն. շնորհեա ինձ զի 'ի վերայ երկրի համբերութ՛բ ընդունելով զփորձութիւնս, և զտառապանս, արժանի եղէց քեզ պսակակից լինել յերկինս. ամէն:

Քահանայն յորժամ լուանայ զձեռս իւր՝ նշանակէ զՊիղատոսի լուանալն զձեռս, և զասելն, թէ քաւեալ եմ ես յարենէ արդարոյ այդորիկ:

Աղօթ․:

Տ՛ր իմ յ՛ս ք՛ս որդի ա՛յ կենդանւոյ, որ թէպէտ անմեղ գտար առաջի պիղատոսի դատաւորին, սակայն յանձն առեր զկապանս, և զամբաստանութիւնս հրէից. շնորհեա ինձ, զի անմեղութ՛բ կեցից յայսմ աշխարհի, և ոչ երբէք խռովեցայց՝ յորժամ զրպարտեցիմ 'ի թշնամեաց իմոց. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ դառնայ առ ժողովուրդն, և ասէ ողջո՛յն տուք միմեանց, Նշանակէ յորժամ Պիղատոս արտաքս եհան զՔս̃ առ ժողովուրդն:

## Աղօթք:

*Տր̃ իմ յս̃ քս̃, որ վասն իմ մեղաւորիս առաջի հրէից ծաղր լինիլ յանձն առեր. շնորհեա՛ ինձ աղաչեմ զքեզ՝ զի մի՛ սնափառութե̃ հպարտացայց, այլ զի յաւուր յետին ահաւոր դատաստանին կարացից քոյին ամբիծ զգեստուքն զարդարիլ. ամէն:*

Քահանայն ասէ լուռ արժան և իրաւ, Նշանակէ զՔի̃ դատապարտելն ՚ի մահ:

## Աղօթք:

*Տր̃ իմ յս̃ քս̃, որ վասն իմ յանձն առեր դատապարտիլ ՚ի մահ խաչին, շնորհեա՛ ինձ, զի ես եւ վն̃ սիրոյ քո յօժարութե̃ յանձն առից զամ̃ սաստիկ և զանողորմ տանջանաց պատիժս, և զի մի՛ զընկերին իմ անզգամութե̃ դատեցից. ամէն:*

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ յիշատակէ զկենդանիս՝ նշանակէ յորժամ քս զխաչն 'ի յուսն բարձեալ գնայր 'ի Գողգոթայ ։

Աղօթք ։

ՏՐ իմ յս քս, որ վս իմ մեղաւորիս զխաչափայտն յուսդ բարձեր․ շնորհեա զի և ես զխաչն նեղութեց յօժար սրտիւ յանձն առից, և վս քոյոյ սիրոյդ անտրտունջ համբերեցից նց․ ամէն ։

Քահանայն յորժամ դնէ զՅեսս 'ի վէ սկիհին, նշանակէ զպատարագումն քսի որ է պատկերին 'ի վէ դաստառակին Վերոնիկայ ։

Աղօթք ։

ՏՐ իմ յս քս, որ հասեալ 'ի տեղի խաչելութեն ասացեր ցլալագին կանայսն, մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց ձերոց․ շնորհեա ինձ աղաչեմ զքեզ, զի լացից զմեղս իմ, և ուսո ինձ զսէր, և զողորմութիւն, զի հաճոյ գտայց առաջի աչաց քոց․ ամէն ։

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ օրհնէ զընծայսն, նշանակէ զՏեառն ընծայելն 'ի վերայ խաչին:

## Աղօթք:

Տէր իմ յիսուս Քրիստոս, որ վասն իմ 'ի խաչ ելանել կամեցար, բեւեռելով ընդ քեզ զմեղս մեր և զմահ մեր. աղաչեմ զքեզ, բեւեռեա՛ ընդ երկիւղ քոյ զմարմին իմ, զի պահելով զպատուիրանս քո՝ քեզ խաչակից լինիլ արժանացայց. ամէն:

Քահանայն բարձրացուցանելով զսուրբ նշխարն նշանակէ, յորժամ 'ի վեր բարձրացուցին զխաչեալն Քրիստոս:

## Աղօթք:

Տէր իմ յիսուս Քրիստոս, որ վասն իմ մեղաւորիս յանձն առեր խաչիւն 'ի վեր բարձրանալ յերկրէ. աղաչեմ զքեզ, բարձ յինէն զսէր և զցանկութիւն աշխարհիս, և բարձրացո զհոգի իմ հայիլ միշտ 'ի յերկնային բարիսն, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ բարձրացուցանէ զսկիհն՝ նշանակէ զհեղումն սուրբ արեանն քի։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ 'ի փրկարար վէրացդ քոց բղխեցուցեր զաղբիւրս շնորհաց, հեղլով զարիւն քոյ սբ 'ի թողութիւն մեղաց մերոց. շնորհեա ինձ, զի յորժամ ցանկունք մարմնոյ զիս շարժեն 'ի մեղս՝ ապաւինեցայց 'ի վէրս քո, յորոց զգեղս, և զփրկութիւն ընդունիլ արժանի եղէց. ամէն։

Քահանայն յորժամ յիշատակէ զննջեցեալս, նշանակէ զաղօթելն քի 'ի խաչին վասն ազգի մարդկան։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ 'ի վերայ խաչին վս փրկութեան ազգի մարդկան, և վս խաչողացն զքեզ աղօթեցեր առ հայր քո երկնաւոր. շնորհեա ինձ զհեզ և զգթած հոգի, զի ըս օրինակի, և հրամանի քում սիրեցից զթշնամիս իմ, և 'ի սրտէ բարի արարից նց. ամէն։

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ զհուրծն բաշխելով տայ. փշուր և մեզ մեղաւորաց, նշանակէ զդարձուածն երանեալ աւազակին :

Աղօթք :

Տ͞Ր իմ յ͞ս ք͞ս, որ զփառս արքայութեան երկնից շնորհեցեր խաչակցին քում բարի աւազակին. նայեաց 'ի յիս աչօք գթութեան քո, զի 'ի ժամ մահուան իմոյ արժանի եղէց լսել 'ի քէն, որ ես փրկիչ իմ, այսօր ընդ իս լիցես 'ի դրախտին. ամէն :

Քահանայն ասելով զհայր մերն՝ նշանակէ զէօթն բանսն, զոր խօսեցաւ ք͞ս 'ի վ͞ր խաչին :

Աղօթք :

Տ͞Ր իմ յ͞ս ք͞ս, որ 'ի մէջ այլոց բանից զկուսածին մայրդ՝ յովհաննու յանձն արարեր, և զյովհաննէս մօրդ. շնորհեա ինձ վ͞ն գթութեանդ քո, զի և ես ընդ քեզ միաւորեցայց կապանօք հրաբորբոք, և փոխարինական սիրոյդ. և 'ի մէջ ալէկոծութեց և վտանգից աշխարհիս այսորիկ՝ բարութիւնդ քո զիս պաշտպանեսցէ. ամէն :

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ բեկանէ զսրբագործեալ նշխարն՝ նշանակէ յորժամ ք͞ս առանդեաց զիւր ս͞բ հոգին:

Աղօթք:

Տէ՛ր իմ յ͞ս ք͞ս, որ վ͞ս սիրոյ իմոյ մեռանելով 'ի վերայ խաչին՝ աւանդեցեր զս͞բ զհոգիդ 'ի ձեռս հօր. շնորհեա՛ և ինձ հոգևորապէս ընդ քեզ մեռանիլ, և 'ի ժամ մահուան իմոյ 'ի ձեռս քո աւանդել զհոգի իմ. ամէն:

Քահանայն յորժամ զմասն ս͞բ նշխարին արկանէ 'ի սկիհն, նշանակէ զիջումն ք͞սի 'ի դժոխս:

Աղօթք:

Տէ՛ր իմ յ͞ս ք͞ս, որ խորտակելով զզօրութիւն մահու և սատանայի՝ իջեր առ արդարսն 'ի դժոխս, և ազատեցեր անտի զհոգի հարցն սրբոց. հեղ զզօրութիւն ա͞ծային արեան քո 'ի հոգիս հաւատացելոց ննջեցելոց. զի արձակեալք 'ի մեղաց մտցեն 'ի փառսն յաւիտենականս. ամէն:



digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ առնէ փառս ա՛յ՝ նը-շանակէ զատարջն Եղամայ 'ի ժամ մահ-ուանն տե՛ն մե՛ր օտարանջելեալն զոր փեսոյն:

## Աղօթք:

Տէ՛ր իմ յս՛ քս՛, որ համբերելով անտանելի տանջանաց՝ արարեր զի բազումք բաղխելով զկուրծս իւրեանց դառնային, և լային զմեղս իւրեանց. շնորհեա՛ և ինձ ար-դեամբք չարչարանաց քոց 'ի խորոց սրտէ զղջանալ 'ի մեղաց իմոց, և մի՛ ևս երբէք անկանել 'ի նոյնս. ամէն:

Քահանայքն ճաշակելն զմարմինն տե՛ն՝ նշանակէ զթաղումն տե՛ն:

## Աղօթք:

Տէ՛ր իմ յս՛ քս՛, որ 'ի նորափոր գե-րեզմանի ծածկիլ և թաղիլ կամե-ցար. տո՛ւր ինձ զսիրտ նոր, և զհոգի նոր, զի և ես թաղեալ, և ծածկեալ ընդ քեզ արժանացայց մասնակից լինել յարութե՛ն քում. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ մաքրէ զմատուռն և զինքեան՝ նշանակէ զծածումն տր̃ մարմ-նոյն քր̃ի, և զպատելն տր̃ կտաւով:

## Աղօթք:

Տէր իմ յս̃ քս̃, որ յետ մահուան քո յանձն առեր իւղով անուշիւ-օծանիլ, և ս̃բ կտաւով պատիլ 'ի յովսեփայ, և 'ի նիկոդիմոսէ. տուր ինձ կարողութի̃, զի արժանի եղէց ս̃բ հոգւով ճաշակել զամենաս̃բ մարմինդ քո. ամէն:

Քահանայն յորժամ աղօթէ յետ ճաշակ-մանն, նշանակէ զյարութիւն քր̃ի:

## Աղօթք:

Տէր իմ յս̃ քս̃, որ յարուցեալ 'ի մեռելոց 'ի կնքեալ գերեզմանէն կոխելով զզօրութիւն մահու ար-տաքս ելեր. շնորհեա ինձ, զի և ես ելանելով արտաքս 'ի մեղաց իմոց նորոգեցայց նորոգութե̃ կե-նաց, և ը̃ քեզ յառնելով արժանի եղէց մտանել 'ի փառսն քո. ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ խաղաղութիւն տայ ժողովրդեանն՝ նշանակէ զՔի երեւելն Ածածնէ, և առաքելոց իւրոց:

Աղօթք:

Տէր իմ յս քս, որ զկնի յարութեան քո բազում սիրով մխիթարեցեր զմայր քո, և զաշակերտս քո՝ երևելով նց․ շնորհեա զի և ես եթէ ոչ յայսմ աշխարհի, սակայն ՚ի հանդերձելումն զփառս քո դէմ յանդիման տեսանել արժանացայց․ ամէն:

Քահանայն յորժամ առնէ զվերջին աղօթսն, նշանակէ զքառասուն օր շրջելն Քի ընդ առաքելոց իւր:

Աղօթք:

Տէր իմ յս քս, որ զաւուրս քառասուն սիրելաբար շրջեցար ընդ առաքելս քո, ուսուցանելով նոցա զխորհուրդս հաւատոյ մերոյ․ ուսո՛ և ինձ ուղղել զիմ զգործս իմ ըստ կամաց քոց, զի մի երբեք խոտորեցայց ՚ի ճանապարհաց պատուիրանաց քոց․ ամէն:

digitised by A.R.A.R.@

Քահանայն յորժամ տայ զշեփին խա֊ղաղութե՛ նշանակէ զՔի համբարձումն յերկինս :

## Աղօթք :

Տէր իմ յս քս, որ յետ քառասուն աւուրց առաջի աշակերտաց քոց փառաւորապէս համբարձար յեր֊կինս. շնորհեա ինձ, զի վասն սի֊րոյ քո զաշխարհս արհամարհե֊լով միշտ յաւիտենական բարեացն ցանկացայց, և ընդ քեզ հրճուիլ յարքայութեան քում արժանի եղէց. ամէն :

Քահանայն յորժամ օրհնութե՛ տայ ժո֊ղովրդեանն, նշանակէ զէջումն Հոգւոյն Սբյ 'ի վր առաքելոց :

## Աղօթք :

Տէր իմ յս քս, որ հաճեցար առա֊քել յերկնից զհոգին քո սբ 'ի վերայ աշակերտաց քոց որք 'ի միա֊սին աղօթէին, սրբեա զսիրտ իմ յամ աղտեղութենէ, որպէս զի հոգին սբ գտանելով զիս իւր ար֊ժանի բնակարան՝ զարդարեսցէ զիս պարգևօք շնորհաց իւրոց. ամէն :

digitised by A.R.A.R.@

Քահանային յորժամ ընթեռնու զյետին աւետարանն, նշանակէ զպարզութիւն որ հաւատոյն Ք՟ի, և զմկրտութիւն, զոր առնէին առաքեալքն ։

## Աղօթք ։

Տ՟Ր իմ Յ՟ս Ք՟ս, որ առաքեցեր զաշակերտսն քո քարոզել ա՟մ ազգաց զս՟բ մարդեղութիւնդ քո, և մկրտել զնոսա յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն ս՟բ. շնորհեա՛ ինձ ամբիծ պահել զուղղափառ հաւատ քո, զոր ընկալայ 'ի մկրտութե՟ իմում, և զա՟մ պատուիրանս քո յօժարութ՟բ կատարել մինչև 'ի մահ, որպէս զի արժանի եղէց 'ի հանդերձելումն զքեզ ը՟ հօր, և ընդ հոգւոյդ ս՟բ օրհնել. ամէն ։

## Զղջումն ։

Տ՟Ր իմ ա՟ծ Յ՟ս Ք՟ս, զղջանամ և փոշիմանիմ ես բոլորով սրտիւ իմով յամենայն մեղաց իմոց, վ՟ զի դառնացուցի զամենասուրբ բարութիւնդ. և առաջադրեմ այլ ոչ ես մեղանչել միջնորդութ՟բ քոյին ամենազօր օգնութեանդ. ամէն ։

digitised by A.R.A.R.@

## Աղօթք առ հինգ վէրսն Քսի:

Հեզութեամբ ոգւոյ իմոյ անկեալ առ ոտս քոյս սրբազանս՝ ով բարի Յսի, աղերսանօք մաղթեմ 'ի քէն. բեւեռեա՛ 'ի սրտի իմում զհինգ առաքինութիւնս զայսոսիկ, զհաւատս, զյոյս, զսէր, զապաշխարութիւն, և զհնազանդութիւն ոչ երբէք մեղանչելոյ ընդդէմ քում ածայնոյ հրամանի:

## Առ վէրս աջոյ ձեռին Յսի Քսի:

Աղաչեմ զքեզ լնուլ տենչանաց հոգւոյ իմոյ՝ ով բարի Յսի. շնորհեա՛ ինձ միջնորդութեամբ վիրաց աջոյ ձեռին քո զհաստատութիւն հաւատոյ. քանզի ահա ուխտեմ հաւատալ զբնաւս մասունս հաւատոյն քրիստոնէականի, և պատրաստեմ զիս վասն նոյնոյ հաւատոյ հեղուլ զարիւն իմ, վասն զի ծնեցեալ եմ ես յայսմիկ սրբազանում հաւատոյ, յայսմիկ սնեալ եմ, և յայսմիկ կամիմ մեռանել:

digitised by A.R.A.R.@

## ԱՌ ՎԷՐՍ ՁԱԽՈՅ ՁԵՌԻՆ ՅՍ̃Ի ՔՍ̃Ի:

Միջնորդութե̃ սրբազանի ձախոյ ձեռին քոյ խոցեցելոյ աղաչեմ զքեզ ով բարի Յս̃, ամրացո́ զյոյս կեցութե̃ իմոյ հաստատեցելոյ 'ի քեզ. օրհնեցեալ լիցի քոյդ բարեգթութիւն, որ միշտ քաջալերես զիս 'ի յընդունիլ զթողութի̃ մեղաց իմոց. ոչ երբէք դադարեցայց 'ի պատմելոյ զքոյդ ողորմութի̃, զի լուացեր զիս արեամբ քով պատուականաւ, և ետուր զանձն քո 'ի մահ վ̃ս սիրոյ իմոյ. արդ տուր ինձ զյոյս կատարեալ, զի 'ի քեզ միայն ապաւինեցից.

## ԱՌ ՎԷՐՍ ԱՋՈՅ ՈՏԻՆ ՅՍ̃Ի ՔՍ̃Ի:

Միջնորդութե̃ սրբազանի աջոյ ոտին քոյ խոցեցելոյ ով բարի Յս̃, ուղղեա́ զիս 'ի ճանապարհս սիրոյ քոյ ա̃ծայնոյ. քանզի կամիմ սիրել զքեզ մինչև յաւիտեան. ոչ միայն վասն բարերարութե̃ն զոր ինձ արարեր, այլ և վ̃ս քոյոյ արժանապատուութե̃. և զի դու ասացեր որ սիրէ զիս, սիրեսցի 'ի հօրէ իմմէ:

digitised by A.R.A.R.@

Առ Տէր յաղագս ոտին Յսի Քսի :

Միջնորդութե̃ սրբազանի ձախոյ ոտին քոյ խոցեցելոյ ով բարի Յս̃, շնորհեա ինձ զզղջումն մեղաց իմոց. վայ է ինձ եղկելւոյս, երանի թէ ոչ երբէք անզգամեալ էի առաջի քոյ. բայց դու ով Տ̃ր իմ անոխակալ, տուր ինձ զարտասուս մաքսաւորին, և զզղջումն պոռնկին, զի լայցեմ զտիւ և զգիշեր վ̃ս թշուառութ̃ն իմոյ :

Առ Տէր սրբազանի կողին Յսի Քսի :

Որդ՝ ուր գտանեմ զանդորրութ̃ն մտաց, եթէ ոչ 'ի խոցուածս կողի քոյ սրբազանի ով բարի Յս̃. ես ցարդ ապստամբեցայ 'ի քոյոց սրբոց պատուիրանաց. բայց այժմ դառնամ առ քեզ ոպ̃ զանառակ որդին, և առաջադրեմ ինձ այսուհետև փախչիլ 'ի մեղաց և գործել զարդարութ̃ն, տուր ինձ ուրեմն զքոյդ երկայնմտութ̃ն, որ համբերեցեր վասն իմ 'ի վերայ խաչին :

digitised by A.R.A.R.@

Ներգործութիւն մաղթողական՝ առնելի յետ առաւօտու ։

Ո՜վ յաւիտենական Ած իմ, ա
հաւասիկ ես տարածեալ առաջ
այնչափ մեծութեան փառաց քոյ
և խոնարհաբար երկրպագանե
լով՝ մատուցանեմ քեզ զիմ խոր
հուրդս, զբանս՝ և զգործս իմ
այսօրինակ աւուր ։ Եւ դիտեմ առ
նել զբնաւն վն սիրոյ քոյ՝ և վն
փառաց քոյ ․ վասն լցուցանելոյ
զԱծային կամս քո ․ վասն ծառայ
ելոյ քեզ, գովելոյ զքեզ, և օրհ
նելոյ զքեզ․ վն լինելոյ լուսաւո
րեալ 'ի խորհուրդս սբ հաւատոյ
քոյ ․ և վն հաստատի առնելոյ ըղ
փրկութիւն իմ, և յուսալոյ յո
ղորմութեն քո․ վն վճարելոյ ար
դարութե քում Ածայնոյ, յաղագս
այնքան ծանրագոյն մեղաց իմոց․
և վն ընդունելոյ զշնորհս Ածային,
և զՃշմարիտ դարձումն ամենայն
մեղաւորաց ։ Նաև դիտեմ գործել
այսօր զիմ ինչ 'ի միութեն ամե
նամաքուր դիտաւորութեցն՝ զոր
ունեցան 'ի կեանս յայս՝ Յն, և

digitised by A.R.A.R.@

Մարիամ, և ա՟մ սուրբք՝ որք են յերկինս, և արդարքն՝ որք են յերկրի։ Եւ կամէի կարող լինիլ՝ ստորագրել յատուկ արեամբս զայս դիտաւորութիւն իմ. և կրկնել զայն այնքանիցս յա՟մ բոպէի՝ որքան լինիցին բոպէքն յաւիտենականութեան։

Ընկա՛լ ամենողորմ ա՟ծ իմ, զբարեյօժար սիրտ իմ, և տո՛ւր ինձ զս՟բ օրհնութիւն քո հանդերձ գործարական շնորհիւ միով, առ ՚ի ոչ գործել այսօր զմահուչափ ինչ մեղս։ Ամէն։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

# ՀԱՄԱՌՕՏ

## Կրթութ՟ե Հանապազօրեայ

## 'Ի սփոփանս հոգւոց քաւարանին ։

### Խրատ առ ընթերցօղս ։

Յամենայն առաւր ասասցես զեր-
կու ողջոյն քեզ մարիամ.
զմի մ՟ն նոցա ամենեցուն, որք
կատարեն զծ՟է կրթութիւս զայս. և ըղ-
ձուան՝ մ՟ն այնոցիկ որք առանձին յմ՟ է-
ղանակաւ գործակից լինին սիրով առ 'ի
հրապարակել զարտոնակ զգործս զայս
ծ՟է ։ Եւ որպէս զի հաւապաստեալն նա-
քան զնա յորդորեսցին առ այս, յայսմ
լինի, զի թէ այնոցիկ, որք զսոյն կրթու-
թ՟ի 'ի կիր առնուն՝ հասանել է մինչև յաւ-
ուր աւելի քան զպատն թիւր. ուստի
իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ զմայլելէ օր
ըստ օրէ յարգեսցէ այնչափ ողջունից ։

digitised by A.R.A.R.@

Յորդորակ առ որ կրթութիւն այս:

Տանջին խստագոյնս ո՛վ քնասէր եղբայր, անհամար հոգւք 'ի հուր քաւարանին, հեռացեալք 'ի ծայրագոյն բարւոյն, որում միայնոյ անձառ տենչանօք փափաքին: Սէ-
են գոտերք և հարուածք երկնաւոր փեսային, սիրեցեալք յոյժ յաղագս սիրոյն, որով փոխեցան 'ի 'կենաց աստի. բայց դեռ պարտապանք ամենայն արդարութեան վ՛ ժամանակեան պատժոյ, որ մեղաց նոցա արժանահաս, բայց յաստի ոչ վճարեալ: Եւ զի անձամբ անձին այլազգ հատուցանել անկարնան, բայց եթէ կրելով զտանջանս, վ՛ այսորիկ անհնար է նոցա ելանել անտի մինչև են վճարեալ տանջանօք զպարտիս իւրեանց, ըստ այնմ. Թէ Ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն. Մատթ. Ե. 6:

Աւաղ ա՛ծ յաղագս սիրոյն, որով զնոսա և զքեզ սիրէ, հաճեցաւ, զի դու յօգուտ նց՝ և քեզ յար-

digitised by A.R.A.R.@

գիւնս՝ կարօղ լիցիս յառաջ կեանս մատուցանել, յօժանդակութիւնոցա զարդիւնս և զարիւնն յս̃ի քս̃ի առ 'ի փրկել զն̃ս յանհնարին տանջանաց անտի: Հապա մի զրկեր զնոսա յայսմ օգնութենէ, և մի զքեզ յայսպիսի արդեանց: Մի անցցէ առ քև օր, առանց յարդելոյ զգանձս զայս մեծագին առ 'ի ազատել զն̃ս: Շարժեսցէ զքեզ հաճութիւն, զոր տացես այսուիկ ա̃յ, որ այնչափ սիրէ զնոսա: Շարժեսցեն զքեզ 'ի ցաւակցութիւն տանջանքն, զոր կրեն հոգիք ընկերաց քոց, թերևս և ազգականաց քոց, և սիրելի բարեկամաց, 'ի ցաւակցութի՝ զոր եկեսցէ օր՝ յորում գուցէ 'ի զուր խնդրեսցես զն̃ս քո եթէ դու ոչ ցուցեր զայն վասն ն̃ց: Շարժեսցեն զքեզ ուժգին պաղատանքն, զոր մատուսցեն զն̃ս քո՝ մանաւանդ 'ի ժամանել նոցա քոյին միջնորդութեամբ 'ի փառս, ուստի եկեսցեն քեզ աներկևան մեծամեծ բարութիւնք, եթէ առժամանակեայք, և եթէ հոգևորք և յաւիտենականք: Ամենեցուն օժանդակեա՛, զի ամենեքին են արժանաւոր. բայց յամե-

digitised by A.R.A.R.@

նեցունց մարթ է քեզ որ ըստ օրէ ընտրել զայն, որ քեզ ցուցեալ լինի, 'ի սակս պատճառաց՝ զոր առ իւրաքանչիւր որ եօթնեկին համա- ռօտիւ դացես նշանակեալ։ Զայս ինչ ունիմ ասել քեզ, զի համա- ռօտ կրթութիւս այս ջերմ սրտիւ համապազօր անթերի կատարեալ՝ պտղաբերեաց բազմաց, նաև յաշ- խարհի աստ, զմեծամեծ շնորհս. զոր նոյնգունակ և քեզ ըղձանամ.

ողջ լեր։

# ԿՐԹՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ԿԻՒՐԱԿԷԻ։

Աղաչեմ զԱծ վասն հոգւոյ բարերարա-նցն, և մանաւանդ վն այնորիկ, զոր նա ինքն ճանաչէ առաւել քան զամենեսեան լքեալ և զորս 'ի մասնաւոր օժանդա-կութիւն։ Եւ եթէ յայսմ աւուր հաղոր-դեսցիս ընդ խորհրդոյն՝ հայցեա՛ զայն 'ի սփոփանս նորա։

## ՊԱՏՃԱՌ։

Քանզի որչափ առաւել մեծ է կարօտութիւն նր, այնչափ յաւէտ եղիցի քեզ նա շնորհա-պարտ վն երախտեացն, և խնդ-րեսցէ վն քո յԱյ, զի ոչ նա լքցէ զքեզ երբէք բարձմամբ շնորհաց իւրոց, և ոչ դու թողցես զնա եր-բէք յանցանօք քո։



digitised by A.R.A.R.@

## Աղօթք :

Տէր ա̃ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վասն պատուական արեանն, զոր ա̃ծորդին քո յս̃ եհեղ 'ի պարտիզին, ազատեա՛ զհոգիս քաւարանին, և առանձինն 'ի մէջ ամենեցուն զայն, որ առաւել լքեալն է. ժամանեցո՛ զնա 'ի փառս քո, ուր բարեբանելով օրհնեսցէ զքեզ 'ի յաւիտեան. ամէն :

Հայր մեր. Ողջոյն քեզ. 'Ի խորոց կարդացի :

## ՎԱՍՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ :

Աղաչեա՛ զա̃ծ յաճախապէս վասն հոգւոյն, որ առաւել մերձ է ելանել 'ի քաւարանէն :

## ՊԱՏՃԱՌ :

Քանզի այնչափ առաւելագոյն եռանդեամբ անձկայ նա միանալ ընդ ա̃յ, որչափ առաւել հուպ է յաւարտ լուրոց տանջանաց : Աղէ 'ի բաց արա դու առ 'ի նմանէ զամենայն զկիրճիմն. և նա փոխարէն մեծի պարգևացդ՝ առընկալցի.քեզ

զշնորհս խզելոյ իսպառ զնրբին յօդակապսն, որք տակաւին արգելուն զքեզ նուիրել զանձն քո բոլորովին այ̃. զորմէ գուցէ կախեալ կայ փրկութ̃ին քո յաւիտենական :

## Աղօթք :

Տէր ած̃ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վասն պատուական արեանն, զոր ած̃որդին քո յս̃ եհեղ 'ի գանակոծ լինելն իւրում, աղաչեմ զհոգիս քաւարանին, և աւանձինն 'ի մէջ ամենեցուն՝ զայն, որ առաւել մերձ է մտանել 'ի փառս քո. ոպ̃ զի վաղվաղակի սկիզբն արասցէ օրհնել զքեզ և գովել 'ի յաւիտեան. ամէն :

Հայր մեր. Ողջոյն քեզ. 'Ի խորոց :

digitised by A.R.A.R.@

# ՎԱՍՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ։

Աղաչեա՛ զԱ̃ծ յատկապէս վ̃ն այնր հոգ-ւոյ, որում ըստ առաքինեաց արդարու-թեան՝ պարտ էր հասանել յետոյ քան զա-մենեցուն ելանել ՚ի քաւարանէն։

## ՊԱՏՃԱՌ։

[illegible]քուսմն, և խորին խոնարհութեն, որո՛վ անկեալ կայ նա ը̃ այնպիսի երկարատև տանջանօք՝ յորդո՛ր լի-ցին քեզ ՚ի կարծել զաւելորդութիւ-նը̃։ Ո՞վ թէ որչափ եղիցի քեզ նա շնորհապարտ։ Երանի՜ է քեզ, և թէ մաղթեսցէ վասն քո ՚ի մ̃նէ զշնորհս սիրելոյ յաստիս խոնար-հութը̃ զյետին տեղիս, որպէս զի բարձրասցիս առ յ̃ոյ ՚ի հանդեր-ձեալն։

## Աղօթք։

Տէր ա̃ծ ամենակալ, մաղթեմ ՚ի քէն վասն պատուական արեանն, զոր ա̃ծորդին քո յ̃ս եհեղ ՚ի դառ-նակսկիծ փշովք պսակին խորում, ազատեա՛ զհոգիս քաւարանին, և առանձինն ՚ի մէջ ամենեցուն զայն,

digitised by A.R.A.R.@

որում պարտ էր հուսկ յետոյ ելանել յայնչափ տանջանաց անտի. ոպ̃ զի մի յապաղեսցէ բարեբանել զքեզ 'ի փառսն քում, և օրհնել զքեզ 'ի յաւիտեան. ամէն:
Հայր մեր. Ողջոյն քեզ. 'Ի խորոց:

## ՎԱՍՆ ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ։

Աղաչեա զա̃ծ մասնաւորապէս վն̃ հոգւոյն, որ առաւել ճոխ է արդեամբք:

## ՊԱՏՃԱՌ։

Բանզի հոգին այն առաւել սիրէ զա̃ծ, և գերքան զամենեսեան սիրեցեալ է առ յա̃յ: Որչափ գերագոյն եղիցին յերկինս փառք նր̃, այնչափ ազդողագոյնս մաղթեսցէ վասն քո զճշմարիտ սէրն ա̃յ 'ի վեր քան զա̃մ ինչ, առանց որոյ չէք ճշմարիտ արդիւնք, և ոչ իմէք կարես ակնունիլ, բայց եթէ յաւիտենական մահուան:

### Աղօթք:

Տէր ա̃ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վն̃ պատուական արեանն,

digitised by A.R.A.R.@

զոր ածորդին քո յս եհեղ ի հրա-
պարակս եկմ՝ մինչ բարձեալ տա-
նէր զխաչն 'ի վերայ սրբազան ու-
սոց իւրոց, ազատեա՛ զհոգիս քա-
ւարանին, և տխրապէս զայն, որ
առաւել ճոխ է արդեամբք առա-
ջի քո. ած զի 'ի գերագոյն փառս՝
որ նմա համդերձեալ մնայ, գո-
վեսցէ զքեզ բարձրաձայն, և օրհ-
նեսցէ 'ի յաւիտեան. ամէն:
Հայր մեր. Ողջոյն քեզ. 'ի խորոց:

## ՎԱՍՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ:

Աղաչեա՛ զՏր մասնաւորապէս վս այնր
հոգւոյ քաւարանին, որ առաւել ջեր-
մեռանդն էր առ ամենասբ խորհրդոյ հա-
ղորդութեն:

## ՊԱՏՃԱՌ:

Քանզի յոյժ սիրելի է նա յա-
ղագս այսօրինակ տն մերոյ յի քի.
ուստի ժառեսցէ 'ի նմանէ անպա-
գար՝ տալ քեզ զշնորհս ընդունե-
լոյ զնա արժանապէս 'ի կենդա-
նութե և 'ի մահուան՝ առ յապա-
հով գրաւական յաւիտենից փըր-
կութե քո:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք:

Տէր ա͞ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վ͞ն պատուական մարմնոյ և արեան յ͞սի ա͞ծորդւոյ քո, զոր նա ինքն յառաջնում գիշերի չարչարանաց իւրոց ետ 'ի կերակուր և յըմպելի իւրոց սիրելի աշակերտաց, և եթող համօրէն եկեղեցւոյ իւրում 'ի մշտնջենաւոր պատարագ և 'ի կենդանարար կերակուր իւրոց հաւատացելոց, աղաչեմ զհոգիս քաւարանին, և մանաւանդ զառաւել ջերմեռանդն խորհրդոյս աներկրական սիրոյ. ո͞ղ զի նովիմբ բարեբանեսցէ զքեզ ը͞ն որդւոյ քում միածնի, և ը͞ն ս͞բյ հոգւոյդ 'ի փառս քո 'ի յաւիտեան. ամէն:

Հայր Մեր. Ողջոյն քեզ. 'Ի խորոց:

# ՎԱՍՆ ՈՒՐԲԱԹՈՒ։

Աղաչեա՛ զա̃ծ մտանաւորապէս վ̃ս այնց հոգւոց քաւարանին, որոց վ̃ս առաւել պարտական ես աղօթս տանելոյ։

## ՊԱՏՃԱՌ։

Սոյն իսկ պարտաւորութի՛ւն քո է ստիպողագոյն պատճառ առնելոյ զայս։ Եւ եթէ՛ 'ի բանիս յայսմիկ ունիս զպարտս արդարութե՛, զոր գիտես, մի՛ յապաղեր հատուցանել զայն, զի մի՛ անկցի 'ի վերայ քո ահագին վրէժխնդրութի՛ւն ա̃յ, զորոյ և յաստի կեանս ունիք զսարսափելի օրինակս։

## Աղօթք։

Տէր ա̃ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վասն պատուական արեանն, զոր ա̃ծորդին քո յ̃ս յայսմ աւուր եհեղ 'ի վերայ խաչին, մանաւանդ յամենայնէ ձեռաց և յոտից իւրոց. ազատեա՛ զհոգիս քաւարանին, և տիրապէս զայնոսիկ, որոց վ̃ս առաւել պարտական եմ աղաչել զքեզ, ո̃պ զի մի՛ լիցի վ̃ս իմոց

յանցանաց չվերածել զհոսս վաղ-վաղակի առ 'ի գովել զքեզ 'ի փառսն քում և օրհնել 'ի յաւի-տեանս. ամէն։

Հայր Մեր. Ողջոյն քեզ. 'ի խորոց։

# ՎԱՍՆ ՇԱԲԱԹՈՒ։

Աղաչեմ զ̅ք մասնաւորապէս վ̅ր այնր հոգւոյ քաւարանին, որ առաւել ջեր-մեռանդն եղև ամենաս̅բ կուսին։

## ՊԱՏՃԱՌ։

Բանզի այսու մեծապէս հա-ճեսցես զկոյսն մարիամ. որոյ սոխ-պեալ 'ի հայցուածոց այսր հոգ-ւոյս յիւրմէ սիրեցելոյ, առըն-կալցի քեզ զշնորհս լինելոյ հաւ-սատուէ̅ ջերմեռանդ նորին, ուս-տի և յապահովս առնելոյ զ̅ք խնա-մօք պաշտպանուէ̅ ն̅ր զփրկութի-ն քո յաւիտենական։

## Աղօթ̅ք։

Տէր ա̅ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն մ̅ո պատուական արեանն որ բղխեաց 'ի կողէն յ̅ի ա̅ծորդ-



digitised by A.R.A.R.@

ւոյ քո 'ի տես աչաց, և 'ի կանխ
անտանելի՝ ամենայնք մօր իւրոյ,
ազատեմ զհոգիս քաւարանին, և
առանձինն 'ի մէջ ամենեցուն զայն,
որ եղև առաւել ջերմեռանդն մե-
ծի տիրուհւոյս. ո՜չ զի խակ և խակ
ժամանեսցէ 'ի փառս քո՝ առ 'ի
գովել զքեզ 'ի նմա, և զնա 'ի
քեզ զա՜մ յաւիտեանս. ամէն:
Հայր մեր. Ողջոյն քեզ. 'ի խորոց:

## Սաղմոս. ՃԻԹ:

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր
Տէր լո՛ւր ձայնի իմում:
Եղիցին ականջք քո, 'ի լսել զձայն
աղօթից իմոց:
Թէ զանօրէնութիւն քննես Տէր,
Տէր ո՛ կարէ կալ առաջի քոյ, զի
'ի քէն է քաւութիւն:
Վասն անուան քո համբերի տր,
համբեր անձն իմ բանի քում,
յուսացաւ անձն իմ 'ի Տէր:
'Ի պահէ առաւօտու մինչև յերե-
կոյ, 'ի պահէ առաւօտու յուսա-
ցաւ Իսրայէլ 'ի Տէր:
'Ի Տնէ է ողորմութիւն բազում և
'ի նմանէ է փրկութիւն, և նա փրկ-
եսցէ զԻսրայէլ յամ անօրէնութեանց նր:
Փառք Հօր, և այլն:

digitised by A.R.A.R.@

## Մ՟աղթանք։

Հոգւոյն հանգուցելոց քն՟ ած՟ արա՛ հանգիստ և ողորմութի՟. և մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութի՟ յանցանաց։

Տէր ողորմեա՛։ Երիցս։

Ո՜վ որդի ա՟յ անոխակալ և բարեգութ՝ գթա քո արարչական սիրովդ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութե՟ քո. արա՛ արժանի ողորմութե՟, քաւութե՟, և թողութե՟ մեղաց։ Դատաւորեալ պայծառացո՛ ը՟ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես տ՟ր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց, և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութի՟ և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

# ՏԵՏՐԱԿ

## ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻՆ․

Որ ասացեալ լինի 'ի պա-
տիւ ամենասրբուհւոյ
Ա̃ծածնին ։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

## Խորհրդածութիւն ամենայն Ռօզարին, այսինքն Վարդարանին :

Ռօզարն՝ այսինքն վարդարանն, 'ի մէջ ուղղափառաց՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ պսակ ինչ՝ կամ հիւսուած հոգևոր՝ բանիւք խորհրդականօք յաւետարանէ քաղեցելովք իբրև վարդիւք բաղհիւսեալ, զոր կուսին կուսանաց մօրն այ̃ մատուցանեմք . զի հիւսուածն կամ պսակն յատկապէս 'ի գլուխս կուսանաց դնի առ 'ի զարդ : Արդ վարդարանն հիւսի հնգեակ կրկնութ̃ տէրունական աղօթից, և յիսնեակ կրկնութ̃ հրեշտակական ողջունատուութ̃ն : Ուստի վարդարանն երիցս կրկնեալ բաղհիւսէ զթիւ հարիւր և յիսուն ողջունատուութեանց, ը̃ թուոյ դաւթեան սաղմոսացն . յորմէ և զերբեակն զայն վարդարան՝ անուանեցին սաղմոսարան երանուհւոյ կուսին :

Հնգիցս 'ի վարդարանի կրկնեմք զաղօթսն տէրունական, զի զհին-

digitised by A.R.A.R.@

դեցուցց վերայն քնի նորոգեսցուք զյիշատակ: Եւ տասն ողջունատուութի հրեշտակական առ իւրաքանչիւր հայր մեր յարեմք, զի յուշ լիցին մեզ տասնաբանեայ պատգամքն այ: Իսկ 'ի բոլոր վարդարանի անդ յիսնեակ կրկնութի առնեմք ողջունի, զի զլիակատար ներումն մեղաց, որ յիսնեակ թուով յոբելինին 'ի մբ գիրս նշանակի, 'ի ձեռն բարեխօսութե երանուհւոյ կուսին՝ արդեամբք տէրունեան չարչարանացն ընդունիցիմք: Բայց որպէս զի միտք աղօթողին մի վրիպեսցին 'ի պտղոյ սորա, որովհետեւ դժուարին երեւ յանչափ կրկնութիս նոյն բանից՝ անզբաղ մտադրել, բարեպաշտօրէն կարգեցաւ, զի իւրաքանչիւր վարդարան հնգեակ խորհրդածութիք կատարեսցի, որոց 'ի խոկումն զբաղեսցին միտք, մինչ բերանն զբանսն արտասանիցէ:

Առ առաջին վարդարան՝ նշանակեալ են հնգեքին խնդութիք ամենաբ տիրամօրն՝ հնգեակ տասնեկօք բաղհիւսեալք, որովք լցաւ երանուհին յուրախալի անօրէնութիւնն քնի:

Որք և են այսոքիկ։

Աւետումն տ̅րունական ներմարմ-
նութեան։
Այցելութիւն եղիսաբեթի։
Ծնունդն ք̅ի։
Ընծայումն ք̅ի 'ի տաճարն։
Գիւտ մանկանն յ̅ի 'ի մէջ վար-
դապետաց։
Յերկրորդում վարդարանի լինի
յիշատակ հնգեցունց տնօրէնու-
թեց չարչարանացն ք̅ի։

Որք են այսոքիկ։

Աղօթելն և ըմբռնումն տ̅ն 'ի պար-
տիզին։
Ձաղկումն տ̅ն։
Պսակումն ք̅ի փշովք։
Բառնալն ք̅ի զխաչն։
Խաչելութիւն ք̅ի։
Յերրորդում վարդարանի յառաջ
բերին հնգեքին փառաւորական
տնօրէնութիւքն՝ կատարեալք յետ
մահուանն ք̅ի։

Որք են այսոքիկ։

Յարութիւն տ̅ն։
Համբարձումն նորին յերկինս։
Գալուստ հոգւոյն ս̅բ 'ի մարիամ

digitised by A.R.A.R.@

և յաշակերտսն ։

Վերափոխումն երանուհւոյ կու-
սին. և Պսակումն նորին ։

Յորոց յայտ է բազմապատիկ օ-
գուտ կիրառութե վարդարանիս.
այսինքն, զի սովաւ նորոգի յիշա-
տակ ամ անօրէնութեց կենացն
քի, և երանուհւոյ կուսին, և
գլխաւոր մասանց հաւատոյ ։ Եւ
այս համառօտ կրթութիւն այն-
չափ առաւել օգտակար է առ ա-
մենեսին, որչափ առաւել դիւրին
է կիրառութի սորա քան զգրոց.
զի հնար է 'ի կիր արկանել զսա
նաև այնց, որք ոչ գիտեն զգպրուի,
և կուրաց, և 'ի ձի և 'ի կառս
հեծելոց, և 'ի խաւարի նստելոց.
Բայց ոչ երբէք պարտ է զմոռա-
ցութե արկանել զանօրէնութիւն,
զորովք միտ և ուշ մեր պատադե-
լոյն են, թէ և 'ի սկզբան անդ
դժուարին թուիցի միշտ 'ի մտի
ունիլ զայնս ։ Վասն զի սակա-
ւուց վարժութի զամ դիւրա-
ցուցանէ ։ Այո՝ թեթև ինչ է
տասնեակ կրկնութիւն, բայց բա-
զում մտաց ցնդութիւն բերէ, և
տաղտկութի, թէ ոչ առ իւրա-
քանչիւր տասնեակ, զմի 'ի անօ-

digitised by A.R.A.R.@

րհնութեանց 'ի ձեռն առնուցուս ։ Եւ թէ զխորհրդածութիւն նոցա զանց արասցես, մերժացեալ գտանիս 'ի փրկութեան 'ի քաղցր յիշատակէ անօրհնութեանց կենացն քոյ, և մարմնոյ ։

Եղանակ դնորին՝ առնելոյ զմարդարանն ։

Որպէս զի դիւրաւ և զգուշագոյն կարօղ լիցին բարեպաշտքն զառաջեդեալ խորհրդածութիւնս պահել 'ի մտի՝ յասել զմարդարանն, օրինակ իմն յոյժ դիւրին և պատշաճական յայսմ վայրի առաջի արասցուք ։ Յառաջ ք̃ զսկսանիլն զտասնեակ ինչ, զանօրէնութիւնն զոր խոկալ ունիս յայնմ, համառօտիւ բեր 'ի միտ, զի ապա պահեսցես 'ի մտի մինչև յաւարտ տանելն ։ Յետ այսոցիկ 'ի սկսանիլն զտ̃րունական աղօթս, դիր թէ կաս առաջի այ̃ որ̃դ հօր. և 'ի սկսանիլն զհրեշտակական ողջունատուութիւն, առաջի երանուհւոյ կուսին որպէս մօր. զի խորհուրդքս զնոքօք պատաղեալ՝ մի տատանեսցի աստ և անդ ։ Կամ՝ զմտան-

ած, թէ շրջիս յայն տեղիս, ուր
անօրէնութիւնքն այնոքիկ կատարե
ցան, և դիր թէ կաս անդ, ով թէ
այնք առաջի աչաց քոց լինէին:
Եւ զայս դիւրին իմն է առնել
ախորժմամբ ոգւոյ և զգայութե
ով երբեմն յորժամ պարապոր
դատանիմք, համարիմք զմեզ յածիլ
ընդ ամ եւրոպիա, և տեսանել
զզարմանալիս, կամ շրջիլ 'ի զմիւ
նիա, 'ի բիւզանդիա, 'ի յամիթ
և 'ի բերիա. կամ յայլ հեռաւոր
տեղիս, յոր և միտք մեր ձգիցին:
Եւ այր ոմն իմաստուն և բարե
պաշտօն, որ զամս աւելի քան ըզ
վաթսուն ունէր սովորութ առնել
զվարդարանն յամ օր, ասէ զան
նէ, թէ ոչ եգիտ եղանակ՝ լաւա
գոյն քան զայն՝ զոր արդ ասա
ցաք: Որ և յաւարտ իւրաքանչիւր
տասնեկի իբրև 'ի զուարթութե
սրտին յայսոսիկ բանս բերկրու
ձեղայր: Այսինքն է յաւարտ ա
ռաջնոյ տասնեկին ասէր: Տան
հաւարեցս օրհնեացեն պտէղ նոյս ծայր
փառաւորեալ ծառեան, և այլն: Եւ
յետ երկրորդի տասնեկին ասէր:
Քոան հաւարեցս օրհնեացեն պտէղ. և
այլն: Սոյնպէս և զկնի երրորդին,

չորրորդին, և հինգերորդին ասէր. զորս գոցես յիւրաքանչիւր կարգի՝ պատշաճական վայելչական օգտակար և բերկրական բանիւք յօրինեալ:

ԹԷ ԶԻ՞Ր ՏԱՌՆ՝ ՅՈ՞Ր ՕՐ ՊԱՐՏ ԻՑԷ ԱՌՆԵԼ:

Սորա՝ յաւուր կիրակէի և հինգշաբաթի 'ի դէպ է խորհիլ զանօրէնութեան երրորդ կարգի, որք փառաւորականք ասին:
Յաւուր երկուշաբաթի և երեքշաբաթի և շաբաթու, զանօրէնութիւնս առաջնոյ կարգի, որք ուրախականք անուանին:
Իսկ 'ի չորեքշաբաթի և յուրբաթի՝ զանօրէնութիւնս երկրորդ կարգի, որք տրտմականք կոչին:

ԽՐԱՏ ՅԱՂԱԳՍ ՆԵՐՔԻՆ ԱՌՆԵԼՈՅ ԶԱՄԵՆԱՅՆ ԶՎԱՐԴԱՐԱՆՆ:

Սորա նախ քան զսկսանիլ զամենայն վարդարանն, գրեցից վերծանողացդ գիտել: Զի ում որ յեղբայրակցութեն գրեալ է ամենայն վարդարանին, պարտի յա̃մում աւուր ասել զԵ վարդարանն. և

Թէ ո՛չ բովանդակ զհարիւր յի
սունն, գոնեա տասասցէ միայն զյի
սունն՝ ըստ իւրաքանչիւր աւուր
խորհրդոյ և խրատու. զորս յա
ռաջակայդ գրելոց եմք: Ապա թ
ողք՝ և յամսում աւուր ոչ կարից
ասել, 'ի յուրբաթու, 'ի շաբա
թու, և 'ի կիրակէի պարտի ա
սել. որովհետև գրեալ է յընկե
րակցուն ո̃ւք վարդարանին. զի մ
զրկեսցի 'ի շահաւէտութ̃ անտի նո
Եւ դարձեալ յառաջ քան զսկսա
նիլ վարդարանին ասասցէ զխորա
կին պիտանի առ այս, թէ որպէ
պարտ իցէ ասել զՈ̃ւք վարդարանն
այս է: Թէ եղբարք իցեն ասա
ցողքն, և թէ քորք, լիցին յեր
կուս դասս: Եւ ապա այն որ խո
հեմ թուի, և հմուտն իցէ 'ի մէջ
պատրաստի եղեալ եղբարցն, նա
ԶՈ պատշաճի աւուրն՝ զխորհուրդ
բանին ասասցէ, թէ վասն որոյ
իրաց իցէ խոկալի. և այլքն ընկ
մեռանդապէս խոկասցեն զ'ի նմանէ
ասասցեալ բանն: Եւ ապա սկսե
ցի խոհեմ եղբայրն այն իւր դա
սակցօքն. և ասասցէ զՀայր մեր ո
յերկինս. մինչև ցայն տեղին որ ա
սէ. որպէս յերկինս և յերկրի: Եւ

digitised by A.R.A.R.@

ապա միւս դասակիցքն սկսեսցեն
ասել. զհաց մեր հանապազորդ, մինչև
'ի վերջն ուր ասի. ամէն:

Եւ ապա այն՝ որ զհայր մերն
սկսաւ, սկսեսցի նաև զողջոյն քեզ
մարիամ, և ասասցէ մինչև յայն տե-
ղին որ ասէ. Եւ օրհնեալ է պտուղ
որովայնի քո յս: Եւ 'ի միւս կողմն
ասիցեն. սրբուհի մարիամ մայր այ.
մինչ 'ի վերջն, որ ասէ. Եւ 'ի ժամու
մահու մերոյ. ամէն: Եւ այսպէս աւար-
տեսցեն զտասնեակ ողջոյնն զայն:
Եւ ապա սկսեսցին զերկրորդ տաս-
նեակն, և նա որ զխորհուրդն ասաց
յառաջն, կրկին նա ասասցէ զխո-
կալի խորհուրդն, բայց զհայր մերն
նա սկսեսցի՝ որ յառաջ զհաց մերն
ասաց: Եւ զողջոյնն ևս նա սկսես-
ցի, որ նախ զսրբուհին ասաց: Եւ
այսպէս դաս առ դաս ասասցեն
մինչև աւարտեսցի վարդարանն:
Ապա թէ միայնակ իցէ աղօթօղն,
զամենայնն ինքն պարտի ասել, որ-
պիսի ոք և իցէ:

Նաև առ դիւրագոյն խոկումն նց
խորհրդոցն, այր ոմն գիտուն, և
բարեպաշտ ուսուցանէ զկերպ իմն
գերազանց. զոր և ջերմեռանդ ոք
եթէ կամեսցի՝ կարէ առնել. այս-

digitised by A.R.A.R.@

ինքն՝ յիւրաքանչիւր տասնեակս ողջունի մինչ ժամանիցէ անդ՝ օրհնեալ է պտուղ որովայնի քո Յ̅ս· խոկասցէ զբանս ինչ· զոր օրինակ, 'ի խոկման խորհրդոյ ուրախութեան յառաջնում տասնեկի խոկասցէ զայս, զոր կոյսդ յղացար: Յերկրորդում· զոր յայցելութեան բարձար: Յերրորդում· զոր կոյսդ ծնար: 'Ի չորրորդում, զոր 'ի տաճարին ընծայեցեր: 'Ի հինգերորդում, զոր 'ի տաճարին գտեր:

Նմանապէս 'ի խոկման խորհրդոյ չարչարանացն· յառաջնում տասնեկի խոկասցէ զայս, որ վասն մեր զքրտունս արեան հոսեաց:

Յերկրորդում· որ վ̅ս մեր ձաղկեցաւ:
Յերրորդում· որ վ̅ս մեր փշօք պսակեցաւ:
'Ի չորրորդում· որ վ̅ս մեր զխաչն եբարձ:
'Ի հինգերորդում· որ վ̅ս մեր խաչեցաւ:

Նոյնպէս և 'ի խոկման խորհրդոյ փառաւորութեան, յառաջնում տասնեկի խոկասցէ զայս· որ յարեաւ 'ի մեռելոց:

Յերկրորդում· որ համբարձաւ յերկինս:
Յերրորդում· որ զհոգին ս̅բ առաքեաց:
'Ի չորրորդում· որ զքեզ վերափոխեաց:
'Ի հինգերորդում· որ զքեզ 'ի յերկինս պսակեաց:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Խորհուրդք ամենաս̃բ վարդարանին : Որ
յաղագս ուրախութե̃ն ս̃բ ա̃ծածնին . և
տ̃ռ ծննդեան ք̃ի :
Եւ ասասցեն յաւուր երկուշաբթի,
երեքշաբթի, և շաբաթու : Սկսանե-
լով այսպէս :

Ասի Հայր մեր , և տասն ող-
ջոյն մարիամ ասեմք և
խորհիմք զառաջին խորհուրդն ու-
րախութե̃ն ամենասուրբ վարդարա-
նին : Զի յորժամ ամենակարողն
ա̃ծ՝ քաղցրացաւ աշխարհիս, և
կամեցաւ փրկութ̃ի առնել մարդ-
կան , նախ առաքեաց զգաբրիէլ
հրեշտակապետն . որ եկն զողջոյն
կուսին մարիամու, և յղացաւ ՚ի
հոգւոյն սրբոյ : Հայր մեր , որ
յերկինս ես . ս̃բ եղիցի անուն քո .
եկեսցէ արքայութ̃ի քո . եղիցին
կամք քո որ̃պ յերկինս՝ և յերկրի :
Տոյ . Զհաց մեր հանապազորդ



digitised by A.R.A.R.@

տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ ըզ-
պարտիս մեր, որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց. և մի՛ տա-
նիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փըր-
կեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է ար-
քայութիւն և զօրութիւն, և փառք
յաւիտեանս. ամէն:

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք,
տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի
կանայս, և օրհնեալ է պտուղ որո-
վայնի քո յիսուս:

Տօնս. Սրբուհի մարիամ մայր այ
բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս՝
այժմ և 'ի ժամու մահու մերոյ.
ամէն:

### Եւ յաւարտին փառաց ողջունիցն ասասցես:

Տասն հազարից օրհնեսցեն ըզ-
քեզ կոյս մայր փառաւորեալ մա-
րիամ, ամ հրեշտակք և հրեշտա-
կապետք, և ընդհանուր ոգիք երկ-
նայնոյ պալատին: Ընդ որոց յու-
սամք զքեզ երբեմն տեսանել և
պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մա-
րիամ ասեմք, և խորհիմք զերկ-
րորդ խորհուրդն ուրախութեան ամե-



digitised by A.R.A.R.@

նամբ վարդարանին: Զի յորժամ նք կոյսն լուաւ զձայնն գաբրիէլի, և յղացաւ 'ի հոգւոյն սրբոյ, փութապէս գնաց 'ի լեռնակողմն. և էջ 'ի քաղաքն յուդայ և եմուտ 'ի տունն զաքարիայ, և ետ ողջոյն եղիսաբեթի:

Հայր մեր, որ յերկինս:

Ողջոյն քեզ մարիամ:

## Ե. ՎԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓԱՌԱՒՈՐ ՈՂՋՈՒՆԻՑՆ ՏԱՍՆԵԱԿ:

Բռան հազարիցս օրհնեսցեն ըզքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ամ՟ նք նահապետք՝ և մարգարէք, անմեղ մանկունք, նք յոհաննէս մկրտիչն, և ամ՟ սրբք հնոյ կտակին: Ընդ որոց յուսամք ըզքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զերրորդ խորհուրդն ուրախութե ամենամբ վարդարանին: Զի երբև եհաս ժամանակ ծնանելոյ տիրամօրն, ծնաւ անձառաբար զտրն մեր յս քս 'ի բեթղեհէմ հրէաստանի՝ 'ի քաղաք դաւթի 'ի մսուրն անբանից. յայն-

digitised by A.R.A.R.@

ժամ հրեշտակք յերկնից իջեալ երգեցին. փառք 'ի բարձունս այ և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ մարիամ:

ԵՒ ՎԻՆԻ ԵՐՐՈՐԴ ՓԱՌԱՒՈՐ ՈՂՋՈՒՆԻՑՆ ՏԱՍՆԵԱԿ:

Երեսուն հազարերգս օրհնեցէն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ. ամ նք առաքեալք, աշակերտք ան, աւետարանիչք, և ամ մարտիրոսք փառաւորեալք: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զչորրորդ խորհուրդն ուրախութեան ամենանբ վարդարանին: Զի յորժամ տրն մեր յս քս եղև քառասնօրեայ, և լցան աւուրքն սրբութե, ըստ օրինացն մովսէսի, ածին զյս 'ի տաճարն սողոմոնի՝ յանդիման առնել տն. և սիմէոն ծերունին էառ զնա 'ի գիրկս իւր, և օրհնեաց զած ասելով. արդ՝ ար-

digitised by A.R.A.R.@

ձակեա՛ զծառայս քո տ՟ր ըստ բա-
նի քում 'ի խաղաղութի՟։
Հայր մեր որ յերկինս ։
Ողջոյն քեզ մարիամ։

Եւ յետ Լուսաւորչին քառասնից ողջունեցին
ասասցէս ։

Քառասուն հազարիցս օրհնեա-ցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ա՟մ ս՟բ խոստովանողք, եպ՟սունք, վարդապետք, միան-ձունք, անապատականք, կուսանք, այրիք, և ամուսնացեալք։ Ընդ-որոց յուսամք զքեզ երբեմն տե-սանել՝ և պատուել յերկինս. ա-մէն ։

Մի հայր մեր, և տասն ողջոյն մա-րիամ ասեմք, և խորհիմք զհին-գերորդ խորհուրդն ուրախութե՟ ամենա՟բ վարդարանին։ Զի յոր-ժամ տ՟րն մեր յ՟ս ք՟ս եղև երկո-տասան ամաց, տարան զնա ծնօղքն իւր 'ի տաճարն, և կորուսին զմա-նուկն յ՟ս. և յետ երից աւուրց գտին զնա 'ի մէջ վարդապետաց, որ նստեալ հակաճառէր ընդ նո՟. ւսէր 'ի նոցանէ, և ուսուցանէր մ՟ե արքայութե՟ ա՟յ ։

Հայր մեր որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

Եւ զկնի հինգերորդ տասանց ողջու-
նիցն ասասցես:

Յիսուն հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մա-րիամ, ա՟մ սրբք. աննա մայր քո, և մարիամունք ազգականուհիք քո, և բարեկամուհիքդ՝ մագդաղենա-ցին, և մարթա. և ա՟մ սրբուհիք, կուսանք, այրիք, և արամբիք: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տե-սանել՝ և պատուել յերկինս. ա-մէն:

Եւ յետ այսորիկ ասա:

Փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն
սբյ:
Այժմ և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից. ամէն:
Ո՛ղջ լեր թագուհի մայր ողորմու-
թե՟, և այլն:

Գտի՛ք 'ի վերջն տետրակիս, ուր գրեալ
կայ իւր կարգն:

Խորհուրդ ամենասուրբ վարդարանին : Որ յաղագս ցաւակցութեան ամենասուրբ ա̄ծածնին . և զի որ չարչարանացն քոյ : Եւ ասասցեն յաւուր երեքշաբաթի, և ուրբաթու : Սկսանելով այսպէս :

*Ք̄ս լեալ հնազանդ վ̄ն մեր մահու֊չափ և մահու խաչի :*

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զառաջին խորհուրդ չարչարանացն ք̄ի : Զի յորժամ մերձեցաւ ժամանակ չարչարանացն ք̄ի, եառ ընդ ինքեան զպետրոս զյակովբոս և զյովհաննէս, և ել 'ի լեառն ձիթենեաց . և առանձինն եղեալ, աղօթեաց առ հայր, ասելով . հա՛յր եթէ հնար լինչ իցէ, անցո՛ զբաժակս զայս յինէն : Հայր մեր, որ յերկինս ես . սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութի քո . եղիցին կամք քո՝ ոպ̄ յերկինս և յերկրի :

Փոխ . Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր . և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . և մի՛

digitised by A.R.A.R.@

տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն՝ և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն:

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք, տր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յս:

ծնր. Սրբուհի մարիամ մայր այ՝ բարեխօսեա վն մեր մեղաւորացս՝ այժմ և 'ի ժամու մահու մերոյ. ամէն:

Եւ յաւարտին սաղմոսաց ողջունիցն ասասցէս:

Տասն հազարիցս օրհնեսցեն ըզքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ամ հրեշտակք և հրեշտակապետք, և ըհանուր ոգիք երկնայնոյ պալատին: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զերկրորդ խորհուրդ չարչարանացն քնի: Զի յորժամ քս 'ի պարտէզին աղօթէր, յուդաս մի յերկոտասանիցն գնաց և մատնեաց ըզ

նա հրէից. իսկ հրէայքն առեալ
զգունդս 'ի քահանայապետից,
սուսերօք և բրօք եկին, կալան և
կապեցին զՅս̃. և տարան 'ի յա-
տեան՝ առաջի պոնտացւոյ պիղա-
տոսի, առ 'ի խաչել զնա վս̃ մե-
ղաց մերոց:

Հայր մեր, որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

## ԵՒ ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՓԱՌԱՆՑ ՈՂՋՈՒՆԻՑՆ ՏԱՌԱՊԵԱ:

Բազում հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ. ո̃մ ո̃ք նահապետք և մարգարէք. անմեղ մանկունք. ո̃ք յովհաննէս մկրտիչն. և ո̃մ սր̃ք հնոյ կտակին: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել, և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զերրորդ խորհուրդ չարչարանացն քո̃ի: Զի յորժամ տր̃ն մեր յս̃ քս̃ եկաց յատեանն պիղատոսի, և յետ բազում հարցափորձութեանցն՝ զենւորքն պիղատոսի փշեղէն պսակ կազմեցին, և եդին 'ի գլուխն քո̃ի.



digitised by A.R.A.R.@

և յորժամ ոլորէին, արիւնն գայր յերեսն 'ի վայր վ̃ մեղաց մերոց:
Հայր մեր, որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

## ԵՒ ՎԷՄՆ ԵՐՐՈՐԴ ՓԱՌԱՒՈՐԱՆՑ ՈՂՋՈՒՆԻՑ ԱՍԱՍՑԷՍ:

Երեսուն հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ա̃մ սուրբ առաքեալք աշակերտք ո̃ն, աւետարանիչք, և ա̃մ մարտիրոսք փառաւորեալք: Ընդ որոց յուսամք զքեզ երբե̃ն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զչորրորդ խորհուրդ չարչարանացն ք̃ի: Զի յետ բազում գանից և նախատանացն՝ ծանր խաչափայտ կազմեցին, և եդին 'ի վերայ ուսոյն ք̃ի. և տարան 'ի գողգոթա առ 'ի խաչել զնա վասն մեղաց մերոց:
Հայր մեր, որ յերկինս:
Ողջոյն քեզ մարիամ:

digitised by A.R.A.R.@

## Եւ զկնի չորրորդ փառացն ողջունիցն ասասցէս:

Բարեբանութիւն հազարից օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ամ որ խոստովանողք, եպիսկոպոսունք, վարդապետք, միանձունք, անապատականք, կուսանք, այրիք, և ամուսնացեալք: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք ընդ հինգերորդ խորհուրդ չարչարանացն քնի: Զի յորժամ զորն մեր յն քն 'ի վերայ խաչին տարածեցին, զձեռսն և զոտսն բևեռեցին, և բարձրացուցին 'ի վերայ խաչին, յայնժամ խաւար եղև ընդ ամենայն աշխարհ. արեգակն, և լուսինն խաւարեցան. վէմք պատառեցան. և բազում սրբոց գերեզմանք բացան. և մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. և յիններորդ ժամուն աղաղակեաց յն 'ի խաչին. էլի էլի լամա սաբաքթանի, ընդէր թողեր զիս. և խոնարհեցոյց զգլուխն, և աւանդեաց զհոգին առ հայր.

digitised by A.R.A.R.@

և խոցեցեալ զմարմին տեառն ՚ի
խաչէն՝ եդին ՚ի գերեզմանի:
Հայր մեր, որ յերկինս:
Ողջոյն քեզ Մարիամ:

Եւ ասի հինգերորդ փառաց ողջու-
նից տասնեակս:

Յիսուսն հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ Մարիամ, ա̃մ ս̃բք, Աննա մայր քո, և Մարիամունք ազգականուհիք քո. և բարեկամուհիքդ՝ Մագդաղենացին, և Մարթա. և ա̃մ սրբուհիք, կուսանք, այրիք և արամբիք: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Եւ յետ այսորիկ ասա՛:

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ:
Այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:
Ողջ լեր Թագուհի մայր ողորմութե̃. և այլն:

Գտի՛ր ՚ի ներքոյ թերթակիս:

Խորհուրդ ամենասուրբ վարդարանին :
Որ յաղագս փառաւորութե՛ որք ծածա-
նեն . և վ՛ս յարութե՛ քոյ :
Եւ ասասցեն յաւուր կիրակէի, և հինգ-
շաբթու : Սկսանելով այսպէս :
Ա՛ծ յօգնել ինձ նայեա՛ց :
Եւ տ՛ր յընկերել ինձ փութա՛ :
Փառք հօր : Այժմ և միշտ :
Ալէլուիա :

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զա-ռաջին խորհուրդ փառաւորութե՛ն ք՛ի : Զի յորժամ զտ՛րն մեր յ՛ս ք՛ս եդին 'ի գերեզմանի, յե՛րրդ աւուր՝ ը՛ լուսանալ միաշաբաթին, իւր ա՛ծային ամենակարօղ զօրութե՛ն յարեաւ 'ի մեռելոց . և երևեցաւ մարիամու . և ապա երկոտասան առաքելոցն ամենեցուն . և դրօ՛քն փակելովք եմուտ առ աշակերտսն՝ և ասէ խաղաղութի՛ ընդ ձեզ :

Հայր մեր, որ յերկինս ես . սր՛բ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութի՛ քո . եղիցին կամք քո, ո՛պ յերկինս՝ և յերկրի :

digitised by A.R.A.R.@

Փոխ. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր ըզմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն:

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք. տ̄ր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յ̄ս:

Փոխ. Սրբուհի մարիամ մայր ա̄յ՝ բարեխօսեա՛ վ̄ն մեր մեղաւորացս՝ այժմ և 'ի ժամու մահու մերոյ. ամէն:

Եւ յաւարտել տասանց ողջունիցն ասասցէս:

Տասն հազարիցս օրհնեցէն ըզքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ա̄մ հրեշտակք և հրեշտակապետք, և ը̄հանուր ոգիք երկնային պալատին: Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն:

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զերկ-

digitised by A.R.A.R.@

րորդ խորհուրդ փառաւորութե՟ն
ք՟ն ։ Զի յետ յարութե՟ն իւրոյ
ք՟ն տ՟րն մեր զաւուրս քառասուն
շրջեցաւ 'ի վ՟ր աշխարհի. և ապա
իւր ա՟ծային ամենակարող զօրուե՟ն
համբարձաւ յերկինս, և նստաւ
ընդ աջմէ տ՟յ հօր ։

Հայր մեր, որ յերկինս ։
Ողջոյն քեզ Մարիամ ։

ԵՒ ՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՍԱՆՑ ՈՂՋՈՒՆԻՑՆ
ՏԱՍԱՆԵԱԿ ։

Քսան հազարիցս օրհնեսցեն
զքեզ կոյս մայր փառաւորեալ Մա-
րիամ, ա՟մ ս՟բ նահապետք և մար-
գարէք. անմեղ մանկունք. սուրբ
յովհաննէս մկրտիչն, և ա՟մ ս՟բք
հնոյ կտակին ։ Ընդ որոց յուսամք
զքեզ երբեմն տեսանել, և պատ-
ուել յերկինս. ամէն ։

Մի հայր մեր, և տասն ողջոյն Մա-
րիամ ասեմք, և խորհիմք զեր-
րորդ խորհուրդ փառաւորութե՟ն
ք՟ն ։ Զի յորժամ ք՟ն համբարձաւ
յերկինս, առաքեաց զխոստացեալ
հոգին ս՟բ 'ի վ՟ր առաքելոցն. և
առաքելա՟ն լցան հոգւոյն սրբով.
և գնացեալ քարոզեցին ընդ ա՟մ

digitised by A.R.A.R.@

աշխարհ վասն արքայութեն նոյ։
Հայր մեր, որ յերկինս ։
Ողջոյն քեզ մարիամ ։

### Եւ զկնի Երրորդ պատանց ողջունիցն ասասցէս ։

Սրբեսուն հազարից օրհնեցեն զքեզ կոյս մայր փառաւորել մարիամ, ծմ սուրբ առաքեալք, աշակերտք նն, աւետարանիչք, և ծմ մարտիրոսք փառաւորեալք։ Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել և պատուել յերկինս. ամէն ։

Մի հայր մեր, և տասն ողջոյն մարիամ ասեմք, և խորհիմք զչորրորդ խորհուրդ փառաւորութեն քոյ զի իբրև եհաս ժամանակ վախճանելոյ տիրամօր կուսին, առաքեաց որդին մեր յոյ քո զգաբրիել հրեշտակապետն, որ եբեր զբրաբիոն ծաղիկն մարիամու ծծածնին, մեծարելով զնա ՚ի յերկնային տաւագաստն, որ է արքայութին երկնից. զի վերափոխեցաւ նա յերկինս ։

Հայր մեր, որ յերկինս ։
Ողջոյն քեզ մարիամ ։

digitised by A.R.A.R.@

ԵՒ ԶԿՆԻ ՆՈՐՈՐԴ ՓԱՌԱՑ ՈՂՋՈՒՆԻՑՆ ԱՍԱՍՑԷ:

Բառաստուն հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ Մարիամ, ամ̃ ն̃ք խոստովանողք, եպիսկոպոսունք, վարդապետք, միանձունք, անապատականք, կուսանք, այրիք, և ամուսնացեալք: Ընդ որոց յուսամք ըզքեզ երբեմ̃ն տեսանել՝ և պատուել յերկինս . ամէն :

Մի հայր մեր, և տասն ողջոյն Մարիամ ասեմք, և խորհիմք ըզհինգերորդ խորհուրդ փառաւորութ̃են ք̃ի : Զի յորժամ սուրբ կոյսն փոխեցաւ յերկինս, յայնժամ հայրն ա̃ծ՝ և որդին միածին՝ և հոգին ա̃ծ՝ կազմեցին զԹագ, և եդին 'ի գլուխ տիրամօր կուսին Մարիամու . և պսակեցին զնա անմահական Թագիւն, և նստուցին 'ի վերայ լուսեղէն աթոռոյ . և կոչեցաւ Թագուհի երկնի և երկրի . որ է բարեխօս առ Տ̃ր վասն մեր, և վ̃ն ամ̃ ուղղափառ քրիստոնէից :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ Մարիամ :

digitised by A.R.A.R.@

Եւ զկնի հինգերորդ փառացն ողջունից ասասցես :

Յիսուսն հազարիցս օրհնեսցեն զքեզ կոյս մայր փառաւորեալ մարիամ, ամ սրբք. աննա մայր քո, և մարիամունք ազգականուհիք քո, և բարեկամուհիքդ՝ մագդաղենացին, և մարթա. և ամ սրբուհիք, կուսանք, այրիք, և արամբիք : Ընդ որոց յուսամք զքեզ երբեմն տեսանել՝ և պատուել յերկինս. ամէն :

Եւ յետ այսորիկ ասա :

Փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ :
Այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Եւ ապա զհետևեալ աղօթս զկնի իւրաքանչիւր յիսնից ասել պարտ է հանապազ :

Ո՛ղջ լեր թագուհի մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր՝ ո՛ղջ լեր : Առ քեզ կե-

digitised by A.R.A.R.@

բաղոչեմք աքսորեցեալ եւայի որ-
դիքս ։ Առ քեզ յար հառաչեմք
հեծեծելով, և ողբալով յայսմա-
նէ արտասուաց վայրէ ։ Ա՛ղէ ու-
րեմն ո՛վ փաստաբան մեր, դարձո՛
առ մեզ զողորմածագունեղ հայեց-
ուածս քոյոց աչաց ։ Եւ զյ͠ս զօրհ-
նեալ պտուղ որովայնի քո յետ
այսր աքսորականի վայրիս ցո՛յց
մեզ ․ ո՛վ համեղաբարոյ, ո՛վ գթած,
ո՛վ քաղցր կոյս մարիամ ։ Աղօթեա՛
վ͠ն մեր սուրբ ա͠ծածին․ զի խոստ-
մանցն ք͠նի արժանաւորեսցուք ։
Գթած հայր սուրբ տոմինիկոս․
յիշեսջիր զգործս քո, և կա՛ց ա-
ռաջի վեհագոյն դատաւորին՝ վ͠ն
ժողովրդոց քոց աղքատաց․ ամէն ։

կշ ։ Արժանացո՛ զիս գովել զքեզ
կոյս օրհնեալ ։

պխ ։ Եւ տո՛ւր ինձ զօրութի͠ն ընդդէմ
թշնամեաց քո ։

փոխ ։ Բարեխօսեա՛ վասն մեր երա-
նելի տ͠ր հայր տոմինիկոս ։

պխ ։ Զի արժանի լիցուք խոստ-
մանցն ք͠նի ։

փոխ ։ Փրկեա՛ տ͠ր զծառայս, և զա-
ղախնայս քո ։

պխ ։ Ա͠ծ իմ զյուսացեալս՚ի քեզ ։

փոխ ։ Լե՛ր մեզ տ͠ր աշտարակ հզօր ։

digitised by A.R.A.R.@

տն ։ Յերեսաց թշնամւոյն ։
փոխ ։ Տէր լո՛ւր աղօթից իմոց ։
տն ։ Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ ։

## Աղօթեսցուք ։

Զմաղթանս ծառայից քոց լո՛ւր ողորմած ա̃ծ․ զի որք ժողովեալ եմք կատարել զյիշատակ վարդա֊րանի երանուհւոյ կուսին մարիա֊մու ածածնին, նորին բարեխօսու֊թեամբն զերծեալ լիցուք այժմ 'ի նեղութենէս․ ամէն ։

Ած ամենակալ՝ խնդրեմք 'ի քէն պարգևեա́ մեզ, ոպ̃ զի 'ի մեղաց մերոց, որովք ծանրացեալ եմք մերձ յընկղմիլ, օժանդակութբ̃ ե֊րանելւոյն տօմինիկոսի հօրն մե֊րոյ խոստովանողին քոյ, և սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ՝ յա֊րուցեալ կանգնեսցուք․ ամէն ։

Ամենակալ և մշտնջենաւոր ա̃ծ․ յորոյ ձեռինդ կան ա̃մ իշխանու֊թիք, և ա̃մ իրաւունք թագաւո֊րութե̃ց, հայեաց յօգնութե̃ քրիս֊տոնէից․ զի ազգն անհաւատից, և հերձուածողաց, որք իւրեանց զաւրութբ̃ն խրոխտան, աջով

քոյին կարողութե̃դ մանրեսցին.
ամէն:

Նայեա՛ տ̃ր 'ի մաղթանս մեր. և պատրաստեա՛ զճանապարհս ծառայից քոց 'ի յաջողուածս, և 'ի փրկութե̃ն, զի զկնի փոփոխման ճանապարհիս այս, և կենաց՝ միշտ պաշտպանեսցես քոյին օգնականութե̃դ. ամէն:

Արձակեա՛ տ̃ր զհոգիս տ̃մ հաւատացելոց ննջեցելոց՝ յտ̃մ կապից յանցանաց. զի յարուցեալ 'ի մէջ սրբոց քոց, զմայլեսցին 'ի յաւիտենական փառսն ք̃իւ տ̃ր մերով.
ամէն:

Ա̃ծային օգնականութիւնն միշտ մնասցէ ը̃ մեզ. ամէն:

Ողջոյն Թագուհի երկնաւորաց. մայր Թագաւորին հրեշտակաց, ով մարիամ ծաղիկ կուսանաց, որպէս զվարդ և զշուշան սփռեա՛ զաղաչանս մեր առաջի որդւոյ քոյ վ̃ փրկութե̃ հաւատացելոց. ամէն:

Օրհնեսցէ զմեզ սրբուհի կոյսն մարիամ հանդերձ գթած զաւակաւն իւրով. ամէն:

digitised by A.R.A.R.@

Ջերմեռանդութիւն առ Երանուհի կոյսն Մարիամ։

Մեծ ոմն ծառայ այ և Երանուհւոյ կուսին Մարիամու՝ ազդեալ յայ ուխտա աղաչել զմայրն ողորմութեան, յայտնել նմա՝ թէ զորպիսի ինչ կարէր յայս կեանս 'ի պատիւ նր առնել, որ լինէր նմա առաւել հաճոյ՝ և ընդունելի. որովհետև տեսանէր, զի աշխարհս՝ և Ջերմեռանդք նոյնոյ կուսին ծառայէին նմա պէսպէս կրթութեք։ Եւ այսպէս՝ աղաչելով և հարցանելով զանձն իւր ոքէ այս՝ խոստագոյն ճգնութք ծոմապահութեք, և այլոց կուշկոճմանց՝ արժանի եղև զի 'ի վախճանի բազմաց ամաց երևեցաւ նմա Թագուհին երկնից, և ասաց ցնա։ Յոյժ հաճոյ եղև ինչ՝ որդեակ իմ սիրելի խնդրուածն քո. Վայ եկեալ եմ այսր 'ի մխիթարել զքեզ։ Արդ գիտասջիր, զի չիք ինչ այնպէս հաճոյ, և ընդունելի առաջի իմ, որպէս ընկերակցիլ ինչ՝ առ 'ի գոհանալ զամենանք երրորդութեն՝ յաղագս անհատանելի շնորհացն, զորս ընկալայ 'ի ժամու Վերափոխման իմոյ յերկինս։ Քանզի նախ 'ի հօրէն

digitised by A.R.A.R.@

յաւիտենականն ճոխացուցայ շքեղազար-
դութ̃ե բարձրագոյն իշխանութ̃ե 'ի վեր
քան զամ̃ դասս անձնէրանէաւ զուարթնոց։
Երկրորդ՝ 'ի յորդւոյն օծեցայ գերա-
գոյն իմաստութ̃ե. 'ի վեր քան զամ̃ հրեշ-
տակական միտս ։

Երրորդ՝ 'ի հոգւոյն ս̃բյ լցայ սաստիկ
սիրով· զոր ոչ հնար ումեք ճառել, կամ
ըմբռնել։ Ուստի ո՛չ ջերմեռանդ սիրե-
լի իմ, այնպէս պարտաւոր ճանաչեմ
զիս ամենաս̃բ երրորդութ̃ե, մինչ զի յա-
ւիտեան ոչ այլ ինչ կամիմ, բայց եթէ
փառաւորել զանուն ս̃բ նր̃ մշտնջենա-
ւոր օրհնութ̃ք, և գոհաբանութ̃ք։
Արդ՝ ո՛ք ցանկայ յառաջադէմ լինել 'ի
փրկութ̃ի իւր, և անպարակոյս ստանալ
զփառաւոր պաշտպանութ̃ի իմ. և այնու-
նեւ. թէ ընդունելոց է զշնորհն, զոր
յինէն խնդրէ, եթէ իցէ այն հարկաւոր
առ փրկութ̃ի իւր յաւիտենական, կամիմ
զի 'ի ծունկս անկեալ երկիրպագցէ հօրն
յաւիտենականի, և ասասցէ զմի հայր
մեր, և զմի ողջոյն, և զմի փառք հօր՝
յարելով զինի զաղօթս։

*Երկրպագանեմ քեզ՝ հայր յա-
ւիտենական հանդերձ ամ̃ դա-
սուք երկնայնոց, այ̃դ խմում և
ա̃նդ. և անբաւապէս գոհանամ*

digitised by A.R.A.R.@

ղքէն 'ի կողմանէ ամենհրամանուհւոյ կուսին ամենասիրեցելոյ դըստեր քոյին յաղագս ամ շնորհաց, և բարութեցն արարելոյ նմա. և յատկապէս յաղագս այնորիկ իշխանութե որով ճոխացուցեր զնա՝ վերափոխեալ յերկինս։

Արարեալ Վերափոխին խոնարհական երկրպագութի առնելով զՀայր մեր, և զՈղջոյն, և զՓառք Հօր, որպէս 'ի վերոյ, ասասցէ այսպէս։

Երկրպագանեմ քեզ՝ որդի յաւիտենական, հանդերձ ամ դասուք երկնայնոց, այդ իմում, և տնդ, այլև փրկչիդ. և անհնարս գոհանամ ղքէն 'ի կողմանէ ամենհրամանուհւոյ կուսին մօր քոյ ամենասիրեցելոյ՝ յաղագս ամ շնորհաց, և բարութեանցն արարելոյ նմա. և յատկապէս յաղագս այնորիկ ծայրագոյն իմաստութե, որով լուսազարդեցեր զնա՝ վերափոխեալ յերկինս։

Աւարտեալ զերկրպագութիւն, որպէս՚ի վերոյ՝ առնելով զհայր մեր, և զողջոյնն, և զփառք հօրն. ասասցէ:

Երկրպագանեմ քեզ՝ ամենասուրբ հոգի մխիթարիչ, Ա՟յդ իմում, և Տ՟նդ. և անզրաւա՟պս գոհանամ զքէն, հանդերձ ամենայն խմբիւն երկնայնով, անուամբ ամեներանելի կուսին քոյ ամենասրբեցելոյ՝ յաղագս ա՟մ շնորհաց, և բարուեցն արարելոց նմին. և յատկապէս՝ յաղագս այնորիկ կատարելագունեղի, և Ա՟ծայնոյ սիրոյն. որով բորբոքեցեր զնորին ամենասուրբ, և ամենամաքուր սիրտն՝ ՚ի ժամու ամենափառաւոր վերափոխման նո՟ր յերկինս. և ես խոնարհաբար մաղթեմ ՚ի քէն անուամբ քոյոյ ամենապատուական հարսինդ, առնել ինձ զշնորհ թողութե՟ մեղաց իմոց ծանրագունից՝ յառաջնոյ կենէն, յորում կարացի մեղանչել՝ մինչև ցայս առաջիկայ ժամս յինէն գործելոց. յաղագս որոյ ցաւիմ անչափապէս՝ հանդերձ առաջադրութեամբ յանձն առնլոյ մահուանդ զմահ, քան թէ վերստին վշտացուցանելոյ երբեք զհանդիսամե֊



digitised by A.R.A.R.@

հութեդ ծ̃ային: Եւ վ̃ գերա-զանցագունեղ արդեանցն, և զօ-րաւորագունեղ պաշտպանութե-նոյնոյ հարսին քոյ ամենասիրելւոյ՝ հայցեմ 'ի քէն, շնորհել ինձ, (և այս անուն անձին) զպատուականա-գունեղ պարգևն շնորհաց քոց, և սիրոյդ ծ̃այնոյ. տալով ինձ զլու-սաւորութիւնս զայնոսիկ, և զօգ-նութիս յատկականս, որովք նա-խատեսչութին քո յաւիտենական յառաջագոյն սահմանադրեաց կա-միլ զիս փրկել, և առ ինքն ածել:

Եւ յետոյ ասասցէ երեք անգամ զՈղ-ջունեալ աղօթս:

Սրբուհին մարիամ, և ա̃մ սր̃ք ա̃յ բարեխօսեսցեն վասն մեր առ ա̃ծ, զի արժանի լիցուք մեք 'ի նը-մանէ օգնիլ, և փրկիլ. ամէն:

Առ նոյն Երանուհի կոյսն:

Սերապատուեմ զքեզ, կոյս ա-մենասրբուհի, Թագուհի երկնից, տիրուհի և իշխուհի ընդհանուր տիեզերաց. և յարգեմ զքեզ իբ-րև զզուարթ հօրն յաւիտենակա-

digitised by A.R.A.R.@

նի, որպէս զմայր որդւոյ Նորին
ամենասրբականի, և իբր զհարսն
հաճոյագունեղ հոգւոյն սբ̃յ. և
տարածեալ առ ոտս մեծի վայել-
չութեան փառաց քոց, հանդերձ
ա̃միւ, և մեծագոյն խոնարհութե̃
մաղթեմ 'ի քէն, վ̃ն այնր ա̃ծայ-
նոյ սիրոյն, որով եղեր մեծապէս
ճոխացուցեալ՝ և առատացեալ 'ի
վերափոխիլդ յերկինս, առնել ինձ
զայսչափ շնորհս՝ և զողորմութին
ընդունելոյ զիս 'ի ներքոյ ապա-
հովագունեղ, և ամենահաւատա-
րիմ պաշտպանութե̃ քոյ, և գրե-
լոյ զիս 'ի թիւ այնոցիկ ամե̃ներ-
ջանիկ և բարեբախտ ծառայից
քոց՝ զորս կրես 'ի կրծի քում
կուսականի քանդակեալս ։ Հա-
ճեա՛ց, մայր՝ և տիրուհի իմ ամե-
նագութ, ընդունիլ զայս ողորմե-
լի և անմաքուր սիրտս ։ Ա՛ռ ըն-
կա՛լ զմիտս, զյիշողութի̃ս, զկամս,
և զայլ ա̃մ զօրութիս՝ և զզգայու-
թիւնս ներքինս և արտաքինս ։
Ընկա՛լ զաչս իմ, զականջս, զբե-
րանս, զձեռս՝ և զոտս իմ. և ուղ-
ղեա՛ զնոսին ը̃ բարեհաճութեան
որդւոյ քո, զի գիտեմ ես յա̃մ
շարժմունս նոցին՝ տալ նմա ըզ-

digitised by A.R.A.R.@

փառս անվախճանս : Եւ մի այնր իմաստութե՛ն, որով պայծառացոյց զքեզ նոյն ամենասիրելի որդին քո, աղաչեմ զքեզ՝ և աղերսեմ, զի ընկալցիս մի իմ զլոյս և զպայծառութի՛ն մտացս. առ 'ի ճանաչել բարեպէս զիս և զմեղս իմ, զոչինչ գոլն իմ. և մանաւանդապէս զսկիզբն մեղաց իմոց. այսինքն զտափմունս հոգւոյ, և զցանկութիս մարմնոյ. առ 'ի կարող լինելոյ ատել զնոսին, և արտաքսել յինէն. և ես զլոյս մի ճանաչելոյ զդարմանականութեան դժոխային թշնամւոյն, և զնորին բաղխմունսն գաղտնիս և յայտնիս: Եւ յատկապէս՝ ո՛վ մայր ամենագթած, կողկողագին աղաչեմ ըզքեզ, զի առընկալցիս վասն իմ զշնորհս (այս անուն:)

Եւ ապա ասէ երէք անգամ:

Անբիծ կոյս եղական,
հեզ քան զամենեսեան.
զմեզ 'ի մեղաց զատեա՛,
հեզս, ողջախոհս արա՛:

digitised by A.R.A.R.@

### Աղօթեսցուք:

Ներեա՛, աղաչեմք տ՟ր, յանցանաց ծառայիցս քոց. զի որք քեզ հաճոյանալ գործովք մերովք ոչ զօրեմք, միջնորդութեամբ ծնողի որդւոյ քոյ տ՟ն մերոյ փրկեսցուք. նովին տ՟ր մերով յ՟սիւ ք՟սիւ. ամէն: Օրհնեսցէ, և պահպանեսցէ զմեզ ամենակարող և ողորմած տ՟րն, հայր՝ և որդի՝ և հոգին ս՟բ. ամէն:

Աղաչեա՛ զամենաս՟բ կոյսն, զի առընկալցի քեզ յա՟յ զբարի մահ, և զխաղաղութիւն 'ի մէջ իշխանաց քրիստոնէից:

### Վ՟ն բարի մահուան:

Ուսոյց երանուհի կոյս ա՟ծամայրն՝ սրբուհւոյն մեքթիլտեայ կուսին զներքոյ գրեալ կերպս ողջունելոյ զնա յա՟մ աւուր 'ի պատիւ ամենաս՟բ երրորդութեան, և խոստացաւ նմա՝ թէ պահելով զնոյնն, լինելոց էր նմին այցելու 'ի մահուան նորա:

Ամփոփեա՛ նախ զմիտս 'ի ծունր եւ 'ի մատներ յիշատակումն մահուան. եւ յետ ասելոյդ զտասնեքին Ողջոյն քեզ Մարիամն, ասա՛ այսպէս:

Ո՛վ տիրուհի իմ սրբուհի Մարիամ. որպէս Հայրն ամենակարողութե՛ իւրով արար զքեզ կարողագունեղ. այսպէս՝ աղաչեմ զքեզ, լե՛ր ինձ աւընթեր 'ի ժամու մահուան 'ի բաց մերժելով յինէն զա՛մ կարողութի հակառակ:

Յետոյ՝ Վերոգրեալ ներկերութ Ողջոյն քեզ Մարիամն, ասասցես այսպէս:

Ո՛վ տիրուհի իմ սրբուհի Մարիամ. որ՛ որդին ա՛յ արար զքեզ արժանի այնքան ճանաչման, եւ պայծառութե՛, մինչ զի լուսաւորես զբոլոր երկինս. այսպէս՝ 'ի ժամու մահուան լուսաւորեա՛, եւ զօրացո՛ զոգի իմ. զի մի՛ զարաուվեցայց 'ի մոլորութենէ, կամ 'ի ագիտութե՛ իմեքէ:

Վերջապէս ընկնի ասելոյդ ընթերցողդ ող-ջոյնն Մեծա Մարգարութե ասասցես:

Ո՛վ տիրուհի իմ սրբուհի մա-րիամ. ո՟պ հոգին սուրբ եհեղ 'ի քեզ լիապէս զա՟ծային սէրն, այս-պէս դու 'ի մահուան հեղ յիս զքաղցրութի նոյն սիրոյն, յորժէ ինձ համեղասցի ա՟մ դառնութի. ամէն:

Աղօթք, և ողջունաբանութի առ ամե-ներանուանի կուսին:

Մեծարեմ, և սիրեմ, և օրհ-նեմ զքեզ յա՟մ սրտէ՝ ո՜վ ամե-նամաքուր կոյս գերարժանաւոր մայր ա՟ն իմոյ. և մատուցանեմ քեզ զանչափ գոհութիս վ՟ա ա՟մ բարերարութեանց եղելոց առ իս քոյին միջնորդութե յայսմ գիշե-րի, և 'ի բոլոր ժամանակս կե-նաց իմոց: Եւ այսօր յանձն առ-նեմ զիս բոլոր քում մայրական գթութե, և զօրաւոր պաշտպա-նութե. ո՟պ զի ա՟մ խորհուրդք և բանք իմ լիցին 'ի պատիւ՝ և 'ի փառս միածնի որդւոյ քոյ, և 'ի

digitised by A.R.A.R.@

փրկութիւն հոգւոյ իմոյ՝ և մերձաւորաց իմոց: Ո՛վ կոյս ամենաբարեգութ, ազատեա՛ զիս այսօր՝ և միշտ յա՟մ վտանգից հոգւոյ, և մարմնոյ. ամէն:

Ո՛ղջ լեր Թագուհի, մայր ողորմութեան. կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ո՛ղջ լեր: Առ քեզ հառաչեմք հեծեծելով, և ողբալով յայսմ հովտի արտասուաց: Ա՛ղէ ուրեմն, ո՛վ փաստաբան մեր, դարձո՛ զաչս ողորմութե՟ քո առ մեզ. և ցո՛յց մեզ զկնի այսր աքսորանացս զպտուղն որովայնի քո զյ՟ս: Ո՛վ գթած, ո՛վ բարեբարոյ. ո՛վ քաղցր կոյս մարիամ. ամէն:

## Աղօթք առ պահապան հրեշտակն:

Ո՛վ դ՟ու հրեշտակ պահապան և առաջնորդ իմ. աղաչեմ զքեզ, հաճեա՛ց խնամ ածել 'ի վերայ իմ. որպէս զի մի երբէք՝ որով և իցէ փորձութե՟ անցից զպատուիրանօք տ՟ն իմոյ՝ և մի կորուսից զսէր ն՟ր. այլ քոյին օգնականութ՟բ, և խնամարկութ՟բ փախչելով միշտ 'ի վատթար կենակցութե՟ց, և յայլ ա՟մ պատճառէ մեղաց, և կենցաղա-

վարելով միշտ ը՟ բարի անձանց և ընդ բարեպաշտ ծառայից ա՟յ, հաւից յաղթութ՟ե ընդդէմ աշխարհի, և մարմնոյ. և զկնի այս ողորմելի կենացս, եղէց ածեալ 'ի քէն 'ի յաւիտենական արքայութիւնն ա՟յ միոյ հօր, որ ընդ որդւոյ՝ և ընդ հոգւոյն ս՟բ կենդանի է, և թագաւորէ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք առ ս՟բն, որ է յատուկ բարեխօսն մեր։

Ո՛ ս՟բ (այս անուն.) փառաւորեալ, և ամենասիրելի խնամակալու իմ. ողջունեմ, և յարգեմ զքեզ յա՟մ սրտէ. և գոհանամ զա՟յ, որ ըզքեզ յայսքան փառս ընտրեալ է. և օրհնութ՟ք լուրովք նախաժամանեալ քեզ. աղաչեմ զքեզ ջերմեռանդութ՟բ՝ և մեծարանօք համարիլ զիս յանձնեցեալ քում զօրաւոր միջնորդութ՟ե, ընդունելով վ՟ս իմ յա՟յ տ՟նէ մերմէ զթողութ՟ի մեղաց իմոց, և զա՟ծային շնորհս նր. այլև զյարատևութ՟ի 'ի նմին մինչև 'ի վախճան։ Դարձեալ աղաչեմ զքեզ, տանիլ միշտ 'ի վ՟ր



digitised by A.R.A.R.@

իմ զինամ․ և ազատել զիս յո̃մ վտանգից, և 'ի պատճառաց զայրացուցանելոյ զո̃ր․ և վերջապէս ը̃ունիլ վ̃ իմ յո̃ծայնոյ հանդիսավեհուէ̃ն զշնորհս, զի մի տեսից ես զմահ՝ յառաջ քան թէ իցեմ զինեցեալ ո̃ք խորհրդովք եկեղեցւոյ, և թարց առաջնկայութեան ամենասրբուհւոյ կուսին՝ և քոյ․ ո̃ղ զի յետ աստեացս արժանի եղէց 'ի ձեռն չարչարանաց յո̃ի քո̃ի ո̃ն մերոյ, և միջնորդութ̃ե քում ուրախանալ 'ի վերին գաւառին 'ի միասին ը̃ քեզ, և ը̃ ո̃մ երանելեացն արքայութե̃․ ամէն ։

Պատասխանատրական յորդորակ անձնա֊
ն̃է տնուանն

# ՄԱՐԻԱՄՈՒ։

Եթէ զերկինս խնդրես ո՛վ դու,
կարդա՛ զանունն մարիամու ։
Զի զմարիամ կարդացողին,
բացեալ լինի դուռն երկնային ։
Ցանունն մարիամու ցնծան,
զուարթունք, և երկնայինք համ֊
մայն ։

digitised by A.R.A.R.@

Դժոխք, երկիր, ծով, հեթերք
դողան,
բայց քրիստոնեայք ուրախանան։
Մեղք, և խաւար՝ ի բաց փախչին,
ախտ, ցաւք, և վէրք ՝ի միասին։
Գերեաց ոտնակապք լուծանին,
և նաւաստեաց՝ ծովք հանդարտին։
Յանունն մարիամու ծնծան,
զուարթունք, և երկնայինք հա-
մայն։
Դժոխք, երկիր, ծով, հեթերք
դողան,
բայց քրիստոնեայք ուրախանան։
Փառք մարեմայ դստերն հօր,
և ՝ի նմանէ ծնելոյն մօր։
Հոգւոյն սբյ հարսին հզօր,
՝ի յաւիտեանս. ոչ մէն մի օր.
ամէն։
Յանունն մարիամու ծնծան,
զուարթունք, և երկնայինք հա-
մայն։
Դժոխք, երկիր, ծով, հեթերք
դողան,
բայց քրիստոնեայք ուրախանան։

Կցուրդ։

Ապաւէն ՝ի նեղութե է անունն մարիամայ, ամ ումեք՝ որ ջերմեռանդութե զնա կարդայ։

Փոխ : Եղիցի անուն ամենէրանու-
հւոյ և միշտ փառաւորեալ կու-
սին մարիամայ օրհնեալ:

Տուն : Յայսմհետէ մինչև յաւի-
տեան :

Աղօթեսցուք :

Ով, որ կամեցար՝ զի ամենէրա-
նուհւոյ մարեմայ մօր միածնի որդ-
ւոյ քոյ՝ անուն կոչեսցի մարիամ,
որ է փառաւոր և ամենաքաղցր
անուն :

Շնորհեա քաւիչ, զի զորոյ անուննն
պատուեմք յերկրի, զնորա խնա-
մածութիւննն զգասցուք յերկինս,
քնիւ տր. մերով. ամէն.

Գովեալ, և բարձրացուցեալ լի-
ցի յարաժամ, ընդ անուանն յսի
անուննն մարիամ:

digitised by A.R.A.R.@

# ԸՆ՛Ն ՀՈԳԻՈՅ

## Յորում գտանեն պիտանի աղօթք ։

[illegible]

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

# ՋԵՐՄԵՌԱՆԴՆ ՀԱՅՑՈՒԱԾՔ

## Աղօթեալ ըստ իւրաքանչիւր աւուրց շաբաթու:

### Յաւուր կիրակէի:

Տէր իմ և արարիչ, առաջի քոյ անկանիմ այսօր մեղուցեալ անձամբ, խոնարհաբար աղաչելով զքո անբաւ գթութիւնդ, պարգևել ինձ թշուառացելոյս զշնորհս քո, առ 'ի սրբութեամբ անցուցանել զօր կիրակէիս՝ ի պատուիրանաց քոց, և մօր մերոյ սրբոյ եկեղեցւոյ: Եւ խնդրեմ 'ի քէն տալ ինձ զզղջումն ամենայն մեղացս, զոր ապերախտութեամբ գործեցի ընդդէմ աստուածային մեծվայելչութեան քո, ընդդէմ հոգւոյ իմոյ, և ընդդէմ ընկերի իմոյ: Պաղա-

digitised by A.R.A.R.@

տիմ առ քեզ, տ̅ր ամենակալ, մի՛ հայեսցիս 'ի բազմութի̅ն յանցանաց իմոց, այլ միայն 'ի քո ամենազեղ և անբաւ գթութիւնդ: Տէր իմ բարձրեալ՝ խոնարհաբար գոհանամ այսօր վ̅ն ա̅մ պարգևաց և բարերարութե̅ց, զոր արարեր ինձ անարժանիս. արա՛ զնոյնս և այսօր: Գոհանամ զքէն վ̅ն ստեղծանելոյդ զիս, և փրկելոյդ պատուական արեամբ, և վ̅ն մեծի երկայնմտութե̅դ, զի ոչ պատժեցեր զիս ըստ բազմութե̅ն մեղաց իմոց. այլ վարեցար ընդ իս ը̅ս բազում գթութե̅ն քո: Արդ՝ պարգևեա՛ ինձ զշնորհս քո, առ 'ի անցուցանել զառաջակայ շաբաթս՝ առանց բարկացուցանելոյ զքեզ, 'ի պատիւ քոյոյ կենդանարար ծննդեան, ցաւալի թլփատութե̅ն, սքանչելի յարութե̅ն, և ամենակեցուցիչ առաքման հոգւոյն սրբոյ: Եւ զայս ակար պաղատանս իմ մատուցանեմ վասն ամենեցուն՝ որք գտանին 'ի ձախորդութիւնս հոգևորս կամ մարմնաւորս, զի մխիթարեսցես զնոսա, և սփոփեսցես՝ ըստ քոյին անբաւ իմաստութեանդ: Եւ միանգամայն աղաչեմ 'ի պա-

digitised by A.R.A.R.@

տիւ մահուան քոյ՝ և չարչարանաց. զի լուսաւորեսցես զմիտս ամենայն մեղաւորաց, զի ապաշխարեսցեն յայսմ աշխարհի. և առհասարակ վ՟ն ամենեցուն՝ որոց սակս մայր մեր ս՟բ եկեղեցի յորդորէ զմեզ աղօթել առ քեզ: Եւ յաղօթելս իմ ը՟ղ դիտաւորութ՟ե եկեղեցւոյ՝ հաղորդս արա զիս փառաւորեալ յարութ՟ե քոյ, և ցաւագին չար֊չարանաց քոց. ամէն: Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութ՟ե:

Ասա զսաղմոսս զայս 'ի ժման յետ ի֊րաժանելոյ աղօթից:

### Յաւուր Երկուշաբաթի:

Տէր իմ ամենագութ, խոնար֊հութ՟ սրտի խոստովանիմ, զի բար֊կացուցեալ եմ զքեզ: Եւ վասն զի այսօր է առաջին օրն շաբա֊թու, խնդրեմ 'ի քէն զթողութի և զներումն մեղաց իմոց, աղաչե֊լով խոնարհեալ անձամբ զքո ան֊չափ գթութ՟ին. զի տացես ինձ զշնորհ քո ըղձալի, սկիզբն առնել զօրհանապազ աշխատիլ վ՟ն փրկու֊

թէ հոգւոյ իմոյ, որոյ վասն աշխատութի՟ն յանձն առեր մինչեւ 'ի մահ: Փրկիչ իմ յո՟, կողկողագին պաղատիմ առ քեզ, տուր ինձ զշնորհս քո, առ 'ի սկսանիլ զա՟մ գործս իմ 'ի պատիւ եւ 'ի փառս քո, եւ 'ի փրկութիւն իմ, յարատեւեալ մինչեւ 'ի վախճան: Տէր իմ եւ ա՟ծ իմ քեզ ընծայեմ այսօր զհոգի եւ զմարմին իմ, եւ զա՟մ ժամանակաւոր բարիս. եւ աղաչեմ, զի հաճեսցիս առաջնորդել ինձ ը՟ բարեսէր կամաց քոց. քանզի պատրաստ եմ յա՟մի կատարել զկամս քո, եւ ոչ զիմ: Իսկ ես խնդրեմ 'ի քէն ողորմութի՟ վ՟ա ա՟մ հոգւոց քաւարանին, մանաւանդ վ՟ա այնոցիկ՝ որոց պարտական եմ վ՟ա ազգականութե՟ եւ արենակցութե՟, կա՟մ վ՟ա հոգեւոր եւ մարմնաւոր բարերարութե՟ց, որպ՟ս ս՟բ մայր մեր եկեղեցի յորդորէ զմեզ: Իսկ 'ի վեր քան զա՟մ աղաչեմ զքեզ՝ տուր ինձ զշնորհս քո, առ 'ի վճարել զքաւարանի պատիժս յայսմ աշխարհի, զի 'ի մահուան իմում արդեամբք դառնակսկիծ չարչարանաց քոց կարասցիմ մտանել 'ի փառս արքայութե՟, առ 'ի օրհնել

digitised by A.R.A.R.@

և փառաբանել զքեզ յաւիտեան ։

Ողորմեա՛ ինձ Ած ըստ ։

✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱

## Յաւուր Երեկշաբաթի ։

Տէր իմ և Ած իմ, հեղում այսօր զանձն իմ առաջի Ածային փառաց քոց․ խոստովան լինիմ զտկարութիւն, զանկայունութիւն և զաղքատութիւն իմ․ սակայն աղաչեմ զաղբիւրդ քաղցրութեան, պարգևել ինձ զջուր շնորհաց քոց, որով կարացից փրկել զհոգի իմ, և լուալ զգարշելի մեղս իմ, հաստատուն առաջադրութբ այլ ոչ ևս առնելոյ զայնս ։

## Աղօթք առ պահապան հրեշտակն ։

Ո՛վ բարի հրեշտակ իմ, որ կարգեալ ես 'ի պաշտպանութիւն անձին իմոյ, ամբաստան լինիմ զինէն այսօր առաջի քո․ զի արհամարհեցի զազդմունս քո, որովք զարթուցանէիր զիս․ և ոչ պատուեցի զայնս, որպ պարտն էր ։ Վսն խոնարհութբ խոստովան լինիմ

digitised by A.R.A.R.@

տուաջի քոյ. և աղաչեմ զքեզ, զի խնամարկեսցես զհոգի և զմարմին իմ, որպէս զի կարասցից զդէմ ունիլ փորձութեանց, և յարձակմանց թշնամեաց ազգի մարդկան:

## Առ սբ Միքայէլ հրեշտակապետն:

Ո՛վ ամենէրջանիկ սուրբ Միքայէլ հրեշտակապետ բարձրելոյն Այ. մատուցանեմ քեզ այսօր զհոգի իմ, և խնդրեմ սերտ սրտիւ, 'ի ժամու մահուան իմոյ դու լե՛ր ինձ պաշտպան և ձեռնտու, զօրացուցանելով ընդդէմ չար փորձութեանց, և մատո՛ զհոգին իմ առաջի աթոռոյ Ածային գթութեան: Վասն որոյ յայսմ օրէ մինչև 'ի վախճան, զքեզ ունիմ ինձ պաշտպան և աապնջական. ամէն:

Ողորմեա՛ ինձ Այ:

## Յաւուր չորեքշաբաթի:

Տէր իմ ամենազօր, ճանաչեմ և խոստովան լինիմ առաջի քոյ, զի պատուական մարմին քո վա-

Ձառնեցաւ առ 'ի գնել զթշուառ֊
հոգի իմ. արդ աղաչեմ զքեզ,
հաղո՛րդս արա զիս մեծագին այսր
գնոյ. զի նովաւ կարացից ընդու֊
նիլ զներումն ա̃մ մեղաց իմոց, և
զշնորհս քո, որովք կարող եղէց
ը̃դդիմանալ ամենայն պղտոյական և
մարմնաւոր փորձուե̃, որք յառ֊
նեն ը̃դեմ բանականութե̃։ Յօ֊
ժարութբ̃ սրտի ընդունիմ զպա֊
տիժս զաշխատանս և զմարմնա֊
ւոր խօթութի̃ս, զորս ածես 'ի
վ̃ր իմ. զի նոքօք կարացից վճա֊
րել զպատիժս մեղաց իմոց, զորս
արարի ը̃դեմ ա̃ծային մեծվայել֊
չութե̃ և բարութե̃։ Եւ ես ո՛վ
ամենաքաղցր յս̃, 'ի պատիւ պատ֊
ուական մարմնոյ քո մատուցա֊
նեմ զմարմին իմ, բառնալ յօժա֊
րութբ̃ զպատիժս որոց արժանի
եմ վասն մեղաց իմոց։ Վ̃ս որոյ
ա̃ր իմ և արարիչ, արա՛ ը̃ նա՝ ո՛չ
և հաճոյ է քեզ, միայն թէ կա֊
րացից ունել մասն և բաժին ընդ
ընտրելոց քոց յարքայութե̃ քում։
Տո՛ւր ինձ զշնորհս, տանիլ համ֊
բերութբ̃ ա̃մ նեղութե̃ց և հի֊
ւանդութե̃ց, որք պատահին ինձ.
քանզի բարւոք գիտեմ, թէ ա֊

digitised by A.R.A.R.@

ւանց օգնութեան քո ո՛չ կարեմ տանիլ և համբերել: Ամէն:

Ողորմեա ինձ ա̅ծ :

## Յաւուր հինգշաբաթի :

Տէր իմ, խոստովանիմ առաջի ա̅ծային իմաստութեան քո, զի յայսմ աւուր լուացեր զոտս աշակերտացդ ծայրագոյն խոնարհութ̅բ և մեծաւ սիրով. և 'ի սմին աւուր հաստատեցեր զամենասուրբ խորհուրդ մարմնոյ և արեան քո, կտակ աւանդեալ յօգուտ հոգւոց մերոց զազնիւ մարմին քո և ըղպատուական արիւնդ 'ի ներքոյ տեսակաց հացի և գինւոյ. յայսմ աւուր համբարձար յերկինս յաղթանակաւ և փառօք 'ի թագաւորել յաւիտեան ը̅ ա̅յ հօր քոյ: Արդ աղաչեմ զքեզ, տո՛ւր ինձ շնորհս լուանալ և մաքրել զխիղճ մտաց իմոց, և զանարժան գործս իմ, հեղմամբ արտասուաց. առ 'ի ծառայել քեզ, և պատուել զքեզ. զի կարացից արժանապէս և առանց բարկացուցանելոյ զքեզ

digitised by A.R.A.R.@

ընդունել զամենայնը հաղորդու-
թեն՝ խոնարհութբ սրտի, ջերմե-
ռանդութբ և յարգմամբ: Վ՜յ եր-
կրպագանեմ քեզ, արարիչ իմ.
գովեմ զքեզ, և գոհութիւս մա-
տուցանեմ, աղաչելով, զի հաղոր-
դակից եղէց ամենապատուական
մարմնոյ և արեան քո, և արժա-
նի եղէց տեսոյ ա̃ծային էութեդ,
և փառաւորեալ մարդկութեանդ
յարքայութե̃ քում: Ամէն:

Ողորմեա՛ ինձ ա̃ծ :

Յաւուր ուրբաթու :

Փրկիչ իմ յս̃, զմեղսալից և ըզ-
թշուառ անձն իմ հեղում առա-
ջի քո յաւուր յայսմիկ, յորում
կրեցեր զմահ վասն մեղաց իմոց:
Աղաչեմ զքեզ 'ի պատիւ այնր
մահուան, և չարչարանաց և ա̃մ
վերաց սրբազան մարմնոյ քոյ, զի
մասնակից արասցես զիս չարչա-
րանաց և վշտաց քոց, զորս կրե-
ցեր 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ.
բառնալ ուրախութբ զխաչն համ-
բերութե̃, և տանակոխ առնել զա̃մ

մեղս աշխարհի, և զսէր երկրաւոր և զգայական : Պարգևեա՛ ինձ զշնորհս քո . զի կրեցից 'ի սրտի իմում զյիշատակ դառնակսկիծ մահուան և չարչարանաց քոց՝ ը͞ մագդաղենացւոյն, որ կայր առ ոտս խաչի քոյ . և զի կարացից ճանաչել զքեզ որպէս ա͞մ արարածք ծանեան զքեզ 'ի չարչարանս և 'ի մահուան քում . և մանաւանդ որպէս աւազակն այն բարի : Եւ ես այսօր արարչիդ իմոյ մատուցանեմ զայն դառնակսկիծ մահ և զչարչարանս, առ 'ի ը͞ունիլ ըզթողութիւն մեղաց իմոց, և առ 'ի գտանիլ արդեամբք չարչարանացդ յընկերակցութե͞ երանելոց 'ի յարքայութե͞ . ամէն : Ողորմեա՛ ինձ ա͞ծ :

## Յաւուր շաբաթու :

Տէր իմ և դատաւոր իմ, ես ապիկար թշուառացեալս բարկացուցի զքեզ մեծապէս և անչափապէս . այլ աղաչեմ զքեզ յաւուր յայսմիկ, յորում սրբազան մարմին քո էր 'ի գերեզմանի, և

digitised by A.R.A.R.@

Հոգւովդ մխիթարէիր զմեզ հարս որ 'ի լիմպոսին, շնորհեա՛ ինձ պհանդարտութիւն խղճի մտաց, և զհոգևոր և զմարմնաւոր մխիթարութիւն, որչափ պիտոյն իցէ: Տ̃ր իմ և Ա̃ծ իմ, մատուցանեմ այսօր զա̃մ բարի գործս՝ զորս արարի վ̃ս սիրոյ քոյ. աղաչելով զքեզ, զի ընկալցիս զայնս 'ի պատիւ քո, և 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ:

Ո՛վ ամեներջանիկ կոյս և երանելի մայր Ա̃յ, որոյդ հաւատ յայսմ աւուր մնաց անխախտ. աղաչեմ զքեզ, զի բարեխօսութբ̃ քով և արդեամբք յարատևեցից հաստատաբար 'ի Ճշմարիտ հաւատս Ա̃յ իմոյ: Վ̃ոյ այսօր առաջի քաղցր որդւոյ քո խոստանամ, զի կամիմ կեալ և մեռանիլ 'ի Ճշմարիտ յուղղափառ հաւատս, թէ և փորձութիւնք զիս նեղեսցեն 'ի կենդանութե̃, և 'ի մահուան իմում: Դարձեալ հեծութեամբ աղաչեմ զքեզ, փրկիչ իմ և կեանք յո̃, և զքեզ մայր հրաշալի՛ և փառատաբան մեղաւորաց. ձեզ ընծայեալ մատուցանեմ այսօր զհոգի և զմարմին իմ, առաջնորդել ինձ Յ̃ ուղիղ Ճանապարհ, զի զկամս



digitised by A.R.A.R.@

ձեր կատարելով առաջէն, արժանի եղէց հասանել փառաց և յաւի-տենական երանութեանն. ամէն:

Ողորմեա՛ ինձ Ած:

Յաղագս երից [illegible] աղօթից, որոնք իւրաքանչիւրոք կարէ շահել յամ խորհրդս 'ի բանս և 'ի գործս իւր՝ զգանձս զայսոսիկ, այսինքն, զարդիւնս, զվճարումն վա մեղաց, և զշնորհս ընդունելոյ յամ զպէտս հոգւոյ և մարմնոյ:

Յորժամ քրիստոնեայն է'ի շնորհըս այ՝ առանց մահուչափ մեղաց, կարէ յամ խորհուրդս 'ի բանս և 'ի գործս շահիլ զերիս անգին գանձս զայսոսիկ. այսինքն, զարդիւնս, զվճարումն վա մեղաց իւրոց, և զշնորհս ընդունելոյ յայ զամ բարիս հոգևորս և մարմնաւորս. միայն թէ զխորհուրդս ըղբանս և զգործս իւր ուղղեսցէ'ի պատիւ և'ի փառս այ: Եւ օգուտս այս ոչ միայն ստացեալ լինի այնպիսի գործովք, որք ըստ բնուե



digitised by A.R.A.R.@

ցը ը̃ ինքեանց են բարիք և հաճոյք մտի, որպիսի են աղօթք, պահք, ողորմութիւնք, և այլ այսպիսի առաքինական գործողութիւնք. այլ և այնպիսեօք ոյք են անտարբերք, որպիսիք են ուտել՝ ըմպել՝ ննջել՝ շրջել՝ տուրևառ, և այլ սոցին նման անզանազան գործք: Եւ զայսոսիկ մեծամեծ գանձս կարէ ամ ոք շահիլ յամ օր, յամ ժամ, և յամ րոպէի, 'ի նստիլ 'ի տան, և 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել, և 'ի յառնել: Ուստի կարող ես իմանալ թէ որչափ մեծ է անմտութի քրիստոնէից, որք հեղգացեալ 'ի ոք կրթութէ առոն որ այսպէս դիւրին է, 'ի պատճառս անհոգութե իւրեանց զրկին 'ի գանձուցս յայսցանէ:

Արդ՝ արդիւնքն է յաւելումն շնորհացն մյ օրըստօրէ. որով շահով ընդունելոց եմք զփառս 'ի հանդերձեալ կեանս. և զարդիւնքս զայս ամ ոք մտ իւր միայն կարէ շահիլ:

Վճարումն է, ստացումն թողութե պատժոց, զորս կրելոց եմք 'ի քաւարանի. և զվճարումնս զայս կարեմք հաղորդել կենդանեաց՝

digitised by A.R.A.R.@

որք կան 'ի շնորհս, և ևս հոգ-
ւոց՝ որ 'ի քաւարանի:

Շնորհն ընդունողական է, յոր-
ժամ ընդունիմք յա՟յ զա՟մ բարիս
հոգևորս և մարմնաւորս վ՟ն մեր
և վասն այլոց:

Արդ որպէս զի կարողասցի ա՟մ
ոք շահիլ յա՟մ ժամ մանաւանդ
թէ յա՟մ բոպէի զերկս մեծամեծ
գանձս զայսոսիկ. կարէ 'ի գործ
ածել զերկս զայսոսիկ հետադայ
աղօթս, զմինն յառաւօտու, ըզ-
միւսն զկնի ճաշուն, և զերրորդն
ընդ երեկս նախ քան զմտանելն
յանկողին: Եւ դու ո՞վ սիրելի
ընթերցող, թէ կայ 'ի քեզ փոյթ
առաքինասէր վարուց, ողբա՛ զան-
մտութի՟ն ընկերաց քոց. որք յա-
ղագս անհոգութե՟ն իւրեանց կամին
զրկիլ յերից գանձուցս յայսցա-
նէ, զոր այնպէս դիւրաւ յամե-
նայն ժամ կարէին շահիլ:

digitised by A.R.A.R.@

## Աղօթք ը̃դ առաւօտու պահուն։

### Միայնում ա̃յ փառք և պատիւ։

Ո՛վ ամենակարող և մշտնջենաւոր ա̃ծ, 'ի ծունկս անկեալ խոստովանիմ, զի դու ես սկիզբն և վերջին վախճան իմ։ Վ̃ն որոյ երկրպագանեմ քեզ, և յարգեմ զքեզ։ Գիտեմ տ̃ր, զի ստեղծեր զիս, ո̃պ զի սիրեսցից զքեզ, և ծառայելով քեզ յայսմ աշխարհի, ապա զմայլեցայց քև յայնմ աշխարհի։ Վ̃նկ զա̃մ զխորհուրդս զբանս և զգործս այսր աւուր քեզ մատուցանեմ, և զա̃մ 'ի փառս և 'ի պատիւ քո առնել դիտեմ. և ոչ միայն զբարեգործութ̃իս, այսինքն զպահս, զաղօթս, զողորմութ̃ի, և զպատարագ տեսանել, այլ և զամենայն որինչ անտարբեր իցէ, 'ի պատիւ և 'ի փառս քո խորհիլ և գործել կամիմ. միացուցեալ զամենայն զխորհուրդս զբանս և ըզգործս իմ ը̃ վիրաց քոց, և ընդ սրբազան արեան քո, ը̃ արդեանց

սրբուհւոյ կուսին մարիամու , հրեշտակաց երկնից , և ամենայն արդարոց՝ որք մաքուր սրտիւ ծառայեն քեզ 'ի յերկրի ։ Որպէս զի լիցին քեզ հաճոյականք , և ինձ արդիւնականք , վճարողականք , և հայցուածոց շնորհողականք ։ Արդիւնք լիցին յօգուտ հոգւոյ իմոյ առ առաւելուլ զշնորհս քո ։ Վճարումն՝ յօգուտ հոգւոց քաւարանին , առ ազատութիւն նոցա ։ և շնորհելութիւնն՝ առ 'ի ընդունիլ յողորմութենէ քումմէ զշնորհս և զօգնութիւն քո ։ զոր 'ի դէպ ժամանակի խնդրիցեմ 'ի քէն ։ որոց գլխաւորքն են այսոքիկ ։ այսինքն զի պաշտպանութեամբ քո ապրեցուսցես զիս յորոգայթից դժոխային դիւաց ։ և զի զամենայն զգործս իմ մինչև ցոտնփոխ և ցքթթել ական ։ և զբանս իմ թէպէտ և դուզնաքեայս՝ 'ի փառս և 'ի պատիւ քո ընկալցիս ։ Եւ քեզ փառք և պատիւ յամենայն յաւիտեանս ։ ամէն ։

digitised by A.R.A.R.@

## Աղօթք Տ̃ն Միջօրէի, ընդ Ճաշուն :

### Միայնում ա̃յ փառք և պատիւ :

Ո՛վ ամենակարող և մշտնջենաւոր ա̃ծ, միաւանգամ անկեալ առաջի ա̃ծային փառաց քոց, խոնարհեալ անձամբ և բեկեալ սրտիւ հայցեմ 'ի քէն զթողութիւն մեղաց, զորս յառաւօտէ մինչև ցայս ժամ գործեցի՝ խորհրդով բանիւ և գործով: Գոհանամ ըզքէն յաղագս պահպանելոյդ զիս ամենակարող զօրութեամբ քով, և վերստին հաստատեմ ա̃մ կամօք զորինչ խոստացայ ա̃յդ իմոյ յայսմ առաւօտու: Վ̃ն որոյ կամիմ, 'ի ժամէ յայսմանէ մինչև 'ի ժամ երեկոյի զա̃մ ինչ խորհիլ խօսիլ և գործել 'ի փառս քո, և վասն սիրոյ քոյ: Աղաչեմ զքեզ մարդասէր ա̃ր, որովհետև յա̃մ սրտէ ցանկամ զտուր և առ շնչոյս նուիրել 'ի փառս քո, և վասն սիրոյ քո, ընկա՛լ զընծայս զայս, և օգնեա՛ ինձ: Վա՛յ է ինձ եղկել-

digitised by A.R.A.R.@

ւոյս, որ ոչ ժամանեցի 'ի կատա-րելութիւն, յոր այլք կատարեալ սրտիւ ծառայեն քեզ: Բայց ո-րովհետեւ ամենատուրք նախախնա-մութիւն քո եդ զիս յայս կացուի, յոր արդ գտանիմ, կամիմ յայսմ հնազանդիլ քեզ, սիրել զքեզ, և 'ի փառս քո կատարել զամենայն խորհուրդս, զբանս և զգործս իմ: Եւ 'ի պատիւ քո ծառայեցուցա-նել զհոգի և զմարմին իմ, զամե-նայն կարողուի հոգւոյս, և զամ զգայարանս և զանդամս մարմնոյս: Վնկ աղաչեմ զքեզ, զի որ պար-գևեցեր ինձ զաղդումնս զայս, տա-ցես և զշնորհս և զզօրութիւն կա-տարելոյ զայն ըստ կամաց քոց. ամէն:

## Աղօթք 'ի երեկոյի ժամուն, նախ քան զմտանելն յանկողին:

Միայնում Այ փառք և պատիւ

Ով ամենաքաղցր Տր իմ, գոհա-նամ զքէն, զի ողորմութբ շնոր-

հաց քոց կատարեցի զօրս զայս։ Եւ արդ նախ հայցեմ 'ի քէն ըղթողութիւն, զի ոչ ընթացայ ը͞ն ա͞ծային ազդեցութեանց քոց, և ոչ անցուցի զօրս զայս արժանապէս ըստ հաճոյից քոց. վ͞ն որոյ և խնդրեմ թողուլ ինձ զմեղս և զպակասութիւս, զորս արարի յաւուր յայսմիկ. ջանամ շնորհիւ քով առ վաղիւ ուղղել զն͞ս. և լաւ ևս կատարել զամենայն գործս իմ 'ի ծառայութե͞ն ա͞ծային փառաց քոց։ Ո՜վ բարերար տ͞ր, եհաս ժամն, յոր արժան է ինձ հատուցանել զպարտ բնութեանս 'ի ձեռն քնոյ. այլ մի խափանեսցէ սա զպարտաւորութի͞ն ծառայութե͞ն իմոյ առ քեզ, զի ստեղծուած քո եմ, և գործ ձեռաց քոց. և ո͞պ պարտ է ինձ ծառայել քեզ 'ի տունջեան, նոյնպէս և 'ի գիշերի։ Եւ արդ նուիրեմ զքունս իմ զայս 'ի պատիւ և 'ի փառս քո. զի զկնի հարկաւոր հանգըստեան մարմնոյս, առաւել զուարթութ͞բ կարօղ եղէց ծառայել քեզ։ 'Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի և զմարմին իմ յայսմ գիշերի. և վերստին հաստատեմ զկամս իմ,



digitised by A.R.A.R.@

առնել զամենայն 'ի փառս և 'ի պատիւ ամենա͞բ անուանքո: Եւ զնոյն խնկ զուարթառ շնչոյս, որ 'ի ննջել իմում, մատուցանեմ փառաց քոց. զի ընծայեալ զիս քեզ բոլորովին յաստի կեանս հանդերձ խորհրդովք, բանիւք և գործովք, ընկալցիս զքեզ բոլոր 'ի հատուցումն վարձուց 'ի հանդերձելումն, ը͞ ա͞ծային խոստմանց քոց. ամէն:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Աղօթք 'ի գովեստ ամենաս̄բ կուսին յղացելոյն առանց սկզբնական մեղաց։ Զոր արարեալ է Սիքստոսի չորրորդի քահանայապետին. որ և ասողաց զայս աղօթս շնորհեաց բազում ամաց ներո-ղութի̄ս։

Ո՛ղջ լեր ամենաս̄բ կոյս մա-րիամ, մայր ա̄յ, Թագուհի երկնից, դուռն արքայու-թեան, տիրուհի աշխարհի։ Դու ամենամաքուր կոյսդ աննման, յղա-ցար առանց սկզբնական մեղաց, վ̄ն որոյ անբիծ ես և անապական։ Անարատաբար յղացար զփրկիչն յ̄ն, և եղեր կոյս անապական և անարատ՝ նախ քան զծնունդդ՝ 'ի ծննդեան, և յետ ծննդեան։ Տո՛ւր մեզ 'ի ձեռն բարեխօսութե̄ քո կեալ սրբութ̄բ, մաքրութ̄բ, և ա̄ծպաշտութ̄բ. և աղաչեմ վասն մեր զյ̄ս ք̄ս զորդին քո սիրելի. զի

digitised by A.R.A.R.@

պարգեւեսցէ մեզ առնել միշտ զա-
մենայն կամս քո։ Եւ յետ մահ-
ուան ընկալ զմեզ, և յամենայն
չարէ հոգւոյ և մարմնոյ փրկեա
զմեզ։ Տուր մեզ շահել և զըն-
կերս, առանել զգործս ողորմու-
թե̄. և ՚ի փառս երկնից ցնծալ
ը̄ քեզ յաւիտեան. ամէն։

Այս ասացեալ ընդ երեկոպաշտման՝ Ող-
ջոյն քեզ մարիամ. երէք Հայր
մեր. և երէք Փառք հօր, ՚ի յիշա-
տակ երեկոպաշտման պարգևաց՝ որք շնորհե-
ցան յերեկոյ ա̄ծային անձանց՝ մեծի պե-
րոհոյն մարմնոյ՝ յղացելոյն առանց
արապրոյ սերմնական ձեռաց։ Այս որ մաղ-
թեմք ՚ի սերբ սրբէ, որպէս զի առաջի
արասցէ ամենայն որդւոյն իւրոյ զխարին
հոգւոյ և մարմնոյ մերոյ. և ընկալցի
զա̄ մեր ՚ի նման զօրութ̄ե արդեանց իւ-
րոց՝ զօգնութ̄ի նր̄ զա̄ծայինն։

Քեզ պատիւ և գովութ̄ի, քեզ
փառք՝ սէր՝ և գոհութիւն, ով
ամենօրհնեալ և փառաւորեալ սբ
երրորդութ̄ի և մի ա̄ծութ̄ի։ Ո՛ղջ
լեր դուստր հօր ա̄յ, ո՛ղջ լեր մայր
որդւոյն ա̄յ. ո՛ղջ լեր հարսն հոգ-
ւոյն սբ̄յ։

Առաջին հայրմերիւ գոհութիւն մա-
տուցանէ հօր տն, եւ պարգևացն շնոր-
հեցելոց անարատ և ամենայն կուսին,
որդւոյ ամենաօրհնելոյ տուաւ Երկրոյ:

Հայր մեր, որ յերկինս:

Ո՛վ կոյսըդ մը անբիծ յղացեալ,
հօրն լուսոյ դուստրըր ընտրեալ.
որդւոյն ծընօղ արժանացեալ,
'ի մը հոգւոյն յոյժ սիրեցեալ:
Ողջոյն քեզ մարիամ:
Ազատ բնաւին յաղտոյ մեղաց,
սկզբնական նախկին ծնողաց,
ներգործական, և ներելեաց,
զքեզ պահեաց տէրն փառաց:
Ո՛վ յղացեալդ առանց մեղաց:
Ողջոյն քեզ մարիամ:
Եղեր ընտրեալ, և նախ պահեալ,
յամէն մեղաց ազատացեալ.
կոյս մարիամ մայր երանեալ,
առ յայ շնորհըս գըտեալ:
Ո՛վ յղացեալդ առանց մեղաց:
Ողջոյն քեզ մարիամ:
Միջնորդ եղեր դու արժանի,
'ի նորոգումն մարդկան ազգի.
մեզ կեանըս տուր և յոյս բարի,
ճառաջնորդես ճանապարհի:
Ո՛վ յղացեալդ առանց մեղաց:

digitised by A.R.A.R.@

Ողջոյն քեզ մարիամ:

Փառք Հօր և որդւոյ և Հոգ՟ւ:

Երկրորդ հայրմերիւ գոհութիւն մատու-
ցանի որդւոյն ա՟յ, վ՟ս պարգևաց ընդու-
նեցելոց անապական կուսին, որպէս ար-
ժանապատուի մօր իւրոյ:

Հայր մեր, որ յերկինս:

Զի՛ք քան զքոյդ չքնաղագոյն,
ո՞ր կուսութիւն պայծառագոյն,
անհամեմատ և ամբծագոյն,
յետ ա՟յ կոյս սրբագոյն:
Ո՛վ յղացեալդ անապական:
Ողջոյն քեզ մարիամ:
Ամբիծ արգանդ քո կուսական,
եղև անախտ անապական.
քանզի չէր իսկ պարտ և արժան,
եթէ խախտէր բանին խորան:
Ո՛վ յղացեալդ անապական:
Ողջոյն քեզ մարիամ:
Իսկ յղութին քո աննըման,
եղև թեթև հըրաշական.
ո՛չ բեռն եղև քեզ ծանրութ՟ն,
և ոչ առիթ ինչ ամբոխման:
Ո՛վ յղացեալդ անապական:
Ողջոյն քեզ մարիամ:
Այլ և ծընունդ քո մարիամ,
ոչ ետ երկունըս տառապման.
այլ քոյդ սըրտի ծով ցընծութ՟ն,
առիթ մեծի ըսփոփութ՟ն:

Ո՛վ յղացեալդ անապական:
　　Ողջոյն քեզ մարիամ:
　　Փառք հօր և որդւոյ:

Երրորդ հայրմերիւ գոհութիւն մատու-
ցանի հոգւոյն սրբոյ, վասն պարգևաց շնոր-
հեցելոց անապական կուսին, որպէս ամե-
նամաքուր և ամենասրբեցելի հարսին նորա:

　　Հայր մեր, որ յերկինս:

Տաճար ինքեան՝ հարսն աննըման,
հոգին ա͞ծ ճըշմարտութե͞ն,
զքեզ ընտրեաց յաւէտ արժան,
և պճնեցոյց բարեօք համայն:
Ո՛վ յղացեալդ անապական:
　　Ողջոյն քեզ մարիամ:
Դու ամենայն շնորհօք ես լի,
առ քեզ են աչք իմ Թագուհի,
չըքնաղ և ս͞բ յամենայնի,
մաքուր ամբիծ և գովելի:
Ո՛վ յղացեալդ անապական:
　　Ողջոյն քեզ մարիամ:
Որ և կատա՛ր ես սրբութե͞ն,
առաւելեալ 'ի բարձրութե͞ն,
մինչ յարարածս չիք քեզ նման,
յետ ա͞յ՝ դու մի միայն:
Ո՛վ յղացեալդ անապական:
　　Ողջոյն քեզ մարիամ:
Դու ինքն ես մեր վստահարան,
մեղաւորացս յոյս՝ մա՛րիամ.
արդ մի մերժեր զաղերս հայցման,

digitised by A.R.A.R.@

զի դու ես մեր մեծ փաստաբան։
Ո՜վ յղացեալդ անապական։

Ողջոյն քեզ մարիամ։
Փառք հօր և որդւոյ։

Այլ և զերծո՛ զմեզ մարիամ,
՚ի բանութեց այլազգական.
յորոյ ՚ի ձեռս կալանական,
կամք ըմբռնեալ ժանիս նորայն։
Ո՜վ յղացեալդ անապական։

Աղօթք խնդրէ յանարատ կուսէն շնորհն ա̅ծ̅ային։

Ո՛ղջ լեր մա՛րիամ, լի շնորհօք և գթութբ̅, կոյսդ ընտրեալ և յղացեալ առանց մեղաց, դուռն փակեալ, կոյս ամենանբ̅. տունկ երջանկութե̅, որ ետուր աշխարհի զպտուղն ուրախարար, և բերկրալի. մ̅ո̅ սիրոյ և գթութեան քո մաղթեմ առ որդիդ քո սիրելի. զի տացէ ինձ միշտ սիրել զնա, և յա̅մ ժամ հաճոյ լինիլ նմա, միջնորդութբ̅ քո, ո՛վ մարիամ յոյս իմ. ո̅պ̅ զի կարօղ լինիցիմ ս̅բ̅ և մաքուր սրտիւ ծառայել նմա մինչև ցմահ. և յետ մահուան փառաբանել զնա երգովք օրհնութե̅։ Յ̅ս̅ և Մարիամ, զսիրտս և զհոգիս իմ ձեզ տամ։

digitised by A.R.A.R.@

## Նուիրումն կենդանութեան առ Երանուհի կոյսն :

Մատուցացուք զայսոսիկ երկոտասան ողջոյնս, զերիս հայր մերս, և զերիս փառք հօրս ամենամաքուր և անարատ կուսին, զի ընկալցի 'ի հօրէ և յորդւոյ և 'ի հոգւոյն սրբոյ զթողութիւն մեղաց մերոց, զյարատևութիւն 'ի շնորհս, և զերծումն 'ի յաւիտենական մահուանէ. և ապա մաքուր և ճշմարիտ ընծիւ մատուցացուք զայս աղերս :

Ո՛վ ամենամաքուր և անարատ տիրուհի կոյս մարիամ, գեղեցիկ դուստր հօր այ̃, սիրելի մայր որդւոյն միածնի, և սիրելի հարսն հոգւոյն սբյ̃. աւասիկ զզջանամ, ցաւիմ և ապաշաւեմ 'ի բոլոր սրտէ. և խոնարհեալ անձամբ անկանիմ առ ոտս ամենաս̃բ որդւոյ քո միածնի խնդրելով զթողութիւն, զողորմութիւն, և զներումն յանցանաց իմոց : Երանի թէ հեղձոյր սիրտ իմ քարեղէն, և բղխէր աղբիւրս արտասուաց. զի ծանեայ արդ զպակասութիւնս և զմեղս իմ : Մի հայիր 'ի յանդգնութիւնս իմ

digitised by A.R.A.R.@

ո՛վ մայրդ գթած և աղաւէնդ մե-
ղաւորաց ։ Զի ահա առաջադրեմ
ո՛չ ես բարկացուցանել մեղօք զմեծ
վայելչութիւն փրկչին իմոյ ո̃յ , օգ-
նութե̃ բարեխօսութե̃ քոյ ․ տո՛ւր
մեզ ո՛վ տիրուհիդ հզօր՝ յետ թըշ-
ուառալիր կենցաղոյս վայելել զեր-
ջանիկ եւս , քոյին պաշտպանութ̃
համանաւորեալ ։ Եւ որ աստ ՚ի
յերկրի ցնծամք տեսանելով ըզ-
քեզ պատկեալ աստեղօք , անդ ՚ի
յերկինս շնորհեա՛ մեզ ցնծալ տե-
սանելով զքեզ պսակեալ փառօք ․
և գոհանալով մեծացուցանել ըզ-
քեզ յաւիտեան ։ Գովեա՛լ լիցի
ամենայն խորհուրդն հաղորդու-
թե̃ ։ Եւ կեցցէ դշխոյ մայրն ո̃յ՝
յղացեալն առանց արատոյ սկըզ-
բնական մեղաց ։

Յաղագս արժանապէս ընդունելոյ զՔ̃է
խորհուրդն ապաշխարութե̃ ․ առ որ
խնդրին երեք ինչ ։

Առաջինն է երկար և մտադիր
քննութի̃ , վ̃ ՚ի միտ ածելոյ որոշակի
զա̃մ մեղս իւր ։ Երկրորդն է կա-

տարեալ զղջմամբ, թէ՝ ցաւ սաստիկ վ̃ս մեղաց իւրոց. այսմ ցաւոյ պարտ է լինել 'ի սրտի՝ սաստկագոյն քան զա̃մ բնական ցաւս, վասն բարկացուցանելոյն զանհուն բարին զա̃ծ. և զայս բաղում պաղատանօք պարտ է հայցել յերանելին կուսէն մարիամայ, զի վասն ցաւոց եօթանց վերաց իւրոց ընկալցի վ̃ս մեր յա̃յ. ընդ նմին և զհաստատ առաջադրութի̃ այլ ոչ երբէք գործելոյ զգործս անհաճոյս ա̃յ: Երրորդն է պատրաստական կամք ընդունելոյ 'ի խոստովանահօրէն զապաշխարանս վ̃ս մեղաց իւրոց, և զնոսին յօժարութե̃ կատարելոյ:

**Եօթն են իրք, որք զխոստովանութիւն առնեն ընդունայն:**

Առաջինն է, յորժամ վասն ամօթոյ կամ վ̃ս այլ ինչ նկատման, կամաւ զանց առնէ ոք ասել զմեղս ինչ մահուչափ:

Երկրորդն է, յորժամ 'ի խոստովանութեան ասէ սուտ ինչ 'ի սեռս մահացու մեղաց:

Երրորդն է յորժամ խոստովանի առանց ցաւելոյ 'ի վ̃ր մեղաց:

digitised by A.R.A.R.@

Չորրորդն է, յորժամ զկնի ընդերկար յապաղելոյն զխոստովանութիւն, մատչի 'ի խոստովանիլ առանց քննելոյ զխիղճ մտաց իւրոց։

Հինգերորդն է, յորժամ ոչ ունի զհաստատուն առաջադրութիւն 'ի բաց կալոյ 'ի մեղաց, և յառթից մեղաց։

Վեցերորդն է, յորժամ խոստովանի այնպիսի խոստովանահօր, որ բանադրեալ է, կամ հերետիկոս։

Եօթներորդն է, յորժամ խոստովանի այնպիսւոյ, որ չունի իշխանութիւն խոստովանեցուցանելոյ. որպիսիք են աշխարհականք, և որք չունին իշխանութիւն իրաւասութեան։

Իսկ թէ ոք այսպիսի կերպիւ խոստովանեալ իցէ, դեղ այն է, զի դարձեալ խոստովանեսցի, ասելով և զպակասութիւն, յոյր սակս խոստովանութիւն եղև ընդունայն. և լաւագոյն դեղ այն է, եթէ արասցէ խոստովանութիւն ընդհանրական։

Արդ՝ սկիզբն արասցուք քննութեան խղճի մտաց, 'ի վերայ տասն պատուիրանաց, և եօթն մահուչափ մեղաց։

digitised by A.R.A.R.@

'Ի Ը՟ պատուիրանըն ըստ 'ի վեր տան
պատճենայն :

Եթէ երկմտեցաւ 'ի վերայ մա-
սանց հաւատոյ :
Եթէ արար անպատուութի սրբա-
զան իրաց :
Եթէ էառ զանունն այ՟, և զբանս
սբ՟ գրոց 'ի սնոտիս :
Եթէ սիրեաց ինչ յա՟ի իրաց ա-
ռաւել քան զա՟ծ, կամ հաւա-
սար այ՟ :
Եթէ դիմեաց առ դևս, կամ ան-
սաց դիւթութեանց, կախարդու-
թեց, և հմայութեց, վս՟ իւր, կմ՟
վասն այլոց : Եթէ ուսաւ կամ
ուսոյց զայսպիսի իրս :
Եթէ պահեաց առ իւր զգիրս կա-
խարդականս կամ հմայիլս :
Եթէ հաւատաց երազոց, կամ
երազահանաց :
Եթէ պահեաց առ իւր, կամ ըն-
թերցաւ զգիրս հերետիկոսաց,
կամ զարգելեալ գիրս :
Եթէ յուսահատեցաւ յողորմու-
թէն այ՟, կամ յանդգնեալ յողոր-
մութին՝ յարատևեաց 'ի չարն առանց
յուղղութն գալոյ :
Եթէ ապաւինեցաւ կարէ յուշի-

digitised by A.R.A.R.@

մութիւն, 'ի հանճար, 'ի խոհեմութ̅ն, 'ի զօրութ̅ն, և 'ի վաստակ իւր։

'Ի Վերայ ոչ անուանելոյ զանունն Այ̅ ընդունայն։

Եթէ հայհոյեաց զանունն Այ̅, և սր̅ց նր̅։
Եւ եթէ յասելն՝ ունէր զազատ կամս բարկացուցանելոյ զԱ̅ծ, նախատելիս դնելով նմա։
Եթէ առանց հարկի երդուաւ։
Եթէ 'ի սուտ տեղիս երդուաւ գիտութ̅բ, կամ կարծեօք թէ գուցէ սուտ իցէ։
Եթէ հաստատեաց երդմամբ զիր ինչ, զորմէ երկբայէր։
Եթէ խոստացաւ ինչ երդմամբ, և ոչ պահեաց. կամ եթէ երդուաւ առնել չար ինչ, կամ ոչ առնել զբարի ինչ. կամ եթէ առիթ եղև այլում երդնուլ սուտ։

'Ի Վր̅ տբ̅ առնելոյն զտօնս։

Եթէ ոչ պահեաց զտօնս, ինքնին գործելով կամ այլոց գործել տալով զգործս արգելեալս

digitised by A.R.A.R.@

յեկեղեցւոյ :

Եթէ ոչ ետես զպատրաստ ամբողջ, կամ ոչ ջանաց թէ խուրքն եւ տեսցեն. կամ թէ առիթ եղեւ այլոց չտեսանելոյ :

Եթէ ոչ խոստովանեցաւ, կամ ոչ հաղորդեցաւ գոնէ միանգամ 'ի տարւոջ, մանաւանդ 'ի զատկին :

Եթէ լռեաց վասն ամօթոյ կամ վասն այլոյ նկատման՝ ասել զմեղս ինչ մահուչափ 'ի խոստովանութե :

Եթէ կարծելով լինել 'ի մեղս ինչ մահուչափ, ընկալաւ զխորհուրդ ինչ եկեղեցւոյ :

Եթէ ոչ պահեաց զպահս քառասնորդաց՝ հսկմանց, չորից եղանակաց, և զայլ հրամայեալ պահս տարւոյն :

Եթէ պղծեաց զեկեղեցի ինչ տետեղի մեղօք, կամ 'ի բանադրանս լեալ՝ հաղորդեցաւ խորհրդոց, կամ զժամակարգութիւնս և զածային պաշտօնս Է այլոց կատարեաց, և կամ 'ի դասս եկաց :

'ի Դ̄ պատուիրանին զՀայր և զՄայր :

Եթէ արհամարհեաց կամ բարկացոյց գործով և բանիւ անխրա-

ւաբար զհայր և զմայր։
Եթէ հայրն և մայրն անիծին կմ՛
հայհոյեցին զորդիս իւրեանց։
Եթէ չարաչար սնուցին զնոսա,
ոչ ուսուցանելով նոցա զաղօթս և
զքրիստոնէական վարդապետութի՛ն։

### 'Ի Ե̄ ոչ սպանանիցես։

Եթէ ատեաց զոք բաղձանօք
վրէժխնդրութե՛. և եթէ անեաց
'ի նոյն ժամանակս բազում։
Եթէ եհար, կամ վիրաւորեաց,
կամ սպան զոք սրով, թունով,
ժանտ հայեցիւք, կամ այլով օրի-
նակաւ, կամ եթէ այլում յանձ-
նեաց առնել զայսպիսի ինչ, կմ՛
հաւանակից եղև։
Եթէ ոչ կամեցաւ առնել կամ
խնդրել զհաշտութիւն, կամ նե-
րել ընկալեալ զվնասուն։
Եթէ բարկութբ՟ անէծ զինքն կմ՛
զայլս, եթէ զկենդանիս և եթէ
զմեռեալս. կմ՛ 'ի բարկութե՛ բանիւք
նախատանաց դառնացոյց զայլս։
Եթէ սերմանեաց տարաձայնութի՛,
ծաղր, և թշնամութիւն 'ի մէջ
այլոց. և թէ որպիսի չարիք յայնց
յառաջ եկին։

digitised by A.R.A.R.@

Եթէ գովեաց զայլս 'ի մեղանչական իրս:

Եթէ ետ օրինակ չար, և խորհուրդ չար, գովելով զյոռին, և պարսաւելով զբարին:

Եթէ բամբասեաց զընկերս:

### 'Ի Հինգ զգայարանս, և զգայարանականս հոգւոյ այլոց:

Ընդդէմ այսմ՝ պատուիրանի կարեն գործիլ բազում մեղք զանազանեալք ըստ տեսակին. և ըստ պարագայիցն՝ որք հանդիպին: Եւ զի նիւթ է ամօթալի, զորմէ ոչ վայելէ խօսիլ մանրամասն. վասն այն առաւել զգուշութիւն պիտի մտաց 'ի քննութեն խղճի զննել զայնս, որոց գլխաւորքն են. գազանականութիւն, սոդոմականութն, ազգապղծութն, պոռնկութիւն, կուսապղծութիւն, շնութիւն, և սերմնահեղուն: Այլ ամ ոք զմտաւ ածցէ:

Եթէ ունէր զխորհուրդս զազիրս և զպղծեղիս. և եթէ կամաւորապէս զուեղի էառ յայնպիսիս. կամ հեշտացաւ և հաւանեցաւ ընդ այնս. կամ գործով կատա~



digitised by A.R.A.R.@

րեաց՝ ինքնին, կամ ընդ այլում։

Եթէ կամաւորապէս ցանկացաւ մեղանչել. և այնպիսի ըղձիւ ակնարկեաց յոք, կամ սիրեաց զնա զգայականապէս։

Եթէ ընթերցաւ զանպարկեշտ գիրս զգայական հեշտութ̃, կամ վտանգիւ հեշտախտութե̃. կամ եթէ եկեր ինչ, առ 'ի գրգռել զինքն 'ի մեղս. եթէ գնաց չար մտօք 'ի տեղի ինչ, և կամ էանց ընդ այն վասն տեսանելոյ զոք, և հեշտանալոյ. կմ̃ թէ էարկ զանձն յայլ ինչ որոգայթ մեղաց. կամ թէ ննջեաց՝ կամօք գործելոյ ըղմեղս ինչ յերազի. կամ 'ի զարթնուլն հեշտացաւ ը̃ այն։

'Ի ՎԵՐԱՅ ՉԳՈՂԱՆԱԼՈՅ ԵՒ ՉՑԱՆԿԱՆԱԼՈՅ ԸՆՉԻՑ ԱՅԼՈՑ։

Եթէ գողացաւ զիր ինչ, և թէ որչափ էր. և միթէ էր սրբազան ինչ, կամ 'ի սբ̃ տեղւոջէ։

Եթէ պահեաց զինչս այլոց՝ ընդդէմ կամաց նց̃. յորժամ 'ի ձեռս իւր եկին ինչք այլոց՝ պահեաց զնս̃ վասն իւր։

Եթէ 'ի գնելն կամ 'ի վաճառելն

digitised by A.R.A.R.@

խաբեաց զընկեր իւր։
Եթէ կամեցաւ առնուլ կամ պա-
հել զինչս այլոց վ̃ս անիրաւ շահու։
Եթէ արար վաշխառութիւն, կմ̃
եղև ընկեր վաճառի ը̃ անիրաւս։
Եթէ ոչ բարւոք արար զգործ և
զպաշտօն իւր, յաղագս որոյ օր-
ըստօրէն ընդունէր թոշակ։
Եթէ յարոյց դատս անիրաւս.
կամ յարդար դատս 'ի գործ էած
զխաբէութիւնս, առ 'ի յաղթել
հակառակորդին։
Եթէ ստացաւ զինչ անպատշաճ
միջոցօք, զոր ոչ կարէր ստանալ
իրաւամբք, կամ արգել անիրա-
ւութ̃ զայլոց օգուտն և զշահն։
Եթէ մասնակից եղև գողութե̃
որով և իցէ օրինակաւ։

'Ի Ը̃ չվկայելոյն սուտ զընկերէն։

Եթէ վկայեաց սուտ 'ի դատաս-
տանի, կամ արտաքոյ նր̃. և ե-
թէ ստիպեաց զայլս առնել զայս-
պիսի ինչ։
Եթէ ասաց սուտ ինչ 'ի սեռի մա-
հուչափ մեղաց, 'ի վ̃նաս ընկերին։
Եթէ աւերեաց զհամբաւս այլոց։
Եթէ լուաւ յօժարամիտ զբամ-

digitised by A.R.A.R.@

բասանս, որ զընկերէն ։
Եթէ յայտնեաց զծանր և ըզ-
գաղտնի մեղս ինչ այլոց ։

’Ի Չ̅Ր ՀՊԱՐՏՈՒԹԵՆԷ ։

Եթէ ոչ ծանեաւ զբարիսն թէ են յԱ̃յ․ այլ համարեցաւ յիւրմէ, և յիւրոց արդեանց ։
Եթէ պարծեցաւ վ̃ն գործելոյն զմեղս ինչ, կամ զբարի ինչ՝ զոր թերևս չիցէ իսկ արարեալ ։

’Ի Չ̅Ր ԱԳԱՀՈՒԹԵՆԷ ։

Եթէ ’ի գնելն, կամ ’ի վաճառելն, կամ ’ի փոխելն, և կամ յայլ ընկերութիւնս անիրաւս խաբեաց զոք ’ի նշանաւոր իրս ։

’Ի Չ̅Ր ԲՂՋԱԽՈՀՈՒԹԵՆԷ ։

Եթէ գործեաց զմեղս ինչ մարմնական ընդ կնոջ ազատի, կամ ամուսնացելոյ, կամ ազգականի, կամ կուսի, հանդերձ ամենայն իւր պարագայիւք․ և կամ զայլ որևիցէ մեղս վավաշոտական ։

digitised by A.R.A.R.@

## 'Ի ՎՐ̄ ԲԱՐԿՈՒԹԵ̄Ն:

Եթէ ասաց 'ի բարկութե՛ն կամաւորապէս սրտիւ կա՛մ բերանով՝ նախատինս ինչ, կամ անէծս առ ա̄ծ, կամ առ սր̄ս նորա:

## 'Ի ՎՐ̄ ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԵ̄Ն:

Եթէ եդ զվերջին վախճան իւր յուտել և յըմպել. և յայնմանէ անկաւ 'ի մեղս ինչ մահուչափ: Եթէ եդ 'ի մտի ուտել մինչև ցշուայտիլ:

## 'Ի ՎՐ̄ ՆԱԽԱՆՁՈՒ:

Եթէ տխրեցաւ 'ի վերայ բարեաց ընկերին, կամ ցանկացաւ վնասուց նր̄:

## 'Ի ՎՐ̄ ԾՈՒԼՈՒԹԵ̄Ն:

Եթէ առաջադրեաց ո՛չ ուսանիլ և ո՛չ ուսուցանել զայն ինչ, որ հարկաւոր է քրիստոնէին: Եթէ 'ի հեղգութ̄է զանց արար տալ զարժանաւոր պատիւ ա̄յ, կա՛մ արհամարհեաց զազդեցութիւնս նր̄ առ բարին:



digitised by A.R.A.R.@

Եթէ պսակեցան 'ի մահուչափ մեղս գոլով, կամ 'ի բանադրանս։
Եթէ 'ի գործ ամուսնութեան 'ի կիր արկին զեղանակ անպատշաճ առ վախճանին, և վտանգաւոր. կամ եթէ արարին զայն յանդէպ ժամանակի։
Եթէ եղեն անհնազանդ միմեանց։
Եթէ բան եդին 'ի միջի իւրեանց՝ խառնակիլ կնոջն ընդ օտարս՝ վասն շահու։

Ներգործութիւնք առաքինութեանց, որք են հարկաւորք առ փրկութիւն, զորս նա պարտ է առնել յաճախ որքէ։

## Ներգործութիւն հաւատոյ։

Ես հաւատամ հաստատութեամբ՝ զի այսպէս յայտնեաց Աստուած անսխալ ճշմարտութիւն իւր կաթուղիկէ եկեղեցւոյ. և նովաւ յայտնէ նաև մեզ, թէ է մի միայն Աստուած յերիս աստուածային անձինս հաւասարս և զանազանեալս. որք կոչին հայր, որ-

դի, և հոգի ն՟ր: Եթէ որդին եղև մարդ, առնլով Ներգործութ՟ հոգւոյն ս՟բ զմարմին և զհոգի մարդկային յորովայնի ամենամաքուր կուսին մարիամու, և թէ մեռաւ վասն մեր 'ի խաչին. յարեաւ, և համբարձաւ յերկինս. և անտի գալոց է 'ի վախճանի աշխարհիս 'ի դատել զա՟մ կենդանիս, և զմեռեալս, առ 'ի տալ մշտնջենապէս բարեաց զարքայութի՟ն, և չարաց զդժոխս: Եւ ես վ՟ն նոյն պատճառի՝ հաւատամ զայն ա՟մ, զոր հաւատայ, և ուսուցանէ Նոյն ս՟բ եկեղեցին:

## Ներգործութի՟ն յուսոյ:

Ո Տ՟ իմ, քանզի ամենակարող ես, անչափ բարի, և ողորմած, յուսամ զի արդեամբք չարչարանաց և մահուան տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի՝ տացես ինձ զկեանս յաւիտենականս. զոր դու հաւատարիմդ յ՟ամի խոստացար՝ այնմ, որ առնէ զգործս բարեպաշտ քրիստոնէի. ո՟պ ես առաջադրեմ առնել քոյին ս՟բ օգնականութե՟դ:

digitised by A.R.A.R.@

## Ներգործութիւն սիրոյ ։

Ա̃ծ իմ, քանզի գերագոյն և ամենակատար բարի ես, սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ՝ գեր քան զա̃մ, և պատրաստ եմ մանաւանդ կորուսանել զա̃մ, քան վշտացուցանել զքեզ, և վասն սիրոյ քոյ սիրեմ, և կամիմ սիրել նաև զընկերն իմ իբրև զանձն իմ։

## Ներգործութիւն զղջման ։

Ա̃ծ իմ, քանզի ծայրագոյն բարի ես, վ̃ո որոյ սիրեմ զքեզ գեր քան զա̃մ. զղջամ և ցաւիմ ճշմարիտ սրտիւ վ̃ո զքեզ վշտացուցանելոյս. և հաստատապէս առաջադրեմ քոյին սուրբ օգնականութ̃ք՝ ոչ ևս մեղանչել յայսմ հետէ. և մանաւորապէս փախչել 'ի յառթից մեղաց ։

Բարեյիշատակ պապն Բենեդիկտոս չորեքտասաներորդն իւրով շնորհագրիւն, որ 'ի 11. դեկտեմբերի. 1754. շնորհեաց զներողութիւն եօթն ամաց, և եօթն քառասնորդաց յաղագս ա̃մ նուագի, յո-

digitised by A.R.A.R.@

քում ջերմեռանդութ՟ առաքեաց ըզ
զներգործութիւս վերոյասացեալ
առաքինութ՟ց։ Իսկ զլիակատար
ներողութի՟ շնորհեաց այնմ, որ
յետ առնելոյ զնո՟ յամենայնում
աւուր զամիս մի ողջոյն, խոստա-
վանեալ հաղորդեսցի. և առաքեաց
աղօթս առ ա՟ծ վ՟ն ն՟ք եկեղեցւոյ։

Զղջական աղօթք մանաւէն ԲԳՐԷՆ։

Տէր ամենակալ՝ ա՟ծ աբրահամու՝
իսահակայ՝ յակոբայ՝ և զաւակի
ն՟ց արդարոց. ամենակալ տ՟ր՝ թող
զմեղս իմ։
Որ արարեր զերկինս և զերկիր՝ և
զա՟մ զարդ ն՟ց. ամենակալ տ՟ր։
Որ կապեցեր զծով բանիւ հրա-
մանի քո, փակեցեր զխորս, և
կնքեցեր ահաւոր և փառաւորեալ
անուամբ քով. ամենա։
Որ ա՟մ ինչ սարսի և դողայ յերե-
սաց ահի զօրութ՟ե քո. ամենա։
Անբաւ է մեծվայելչութի՟ փառաց
սրբութ՟ե քո. սաստիկ է բարկութի՟
սպառնալեաց քոց 'ի վ՟ր մեղաւո-

digitised by A.R.A.R.@

րաց. անչափ և անքննելին են ողոր-
մութիւնք աւետեաց քոց. ամենա։

Դու տ̅ր բարձրեալ՝ գթած, եր-
կայնամիտ, բազումողորմ, և զղջա-
նաս 'ի վերայ չարեաց մարդկան.
ամենակալ տ̅ր։

Դու տ̅ծ՝ ոչ եդիր ապաշխարութիւն
վ̅ս արդարոցն՝ աբրահամու իսա-
հակայ և յակոբայ, որք ոչ մեղան
քեզ. ամենա։

Այլ եդիր ապաշխարութիւն վ̅ս իմ
մեղաւորիս. զի մեղայ աւելի քան
զաւազ ծովու, և բազմացան անօ-
րէնութիւնք իմ. ամենա։

Չեմ արժանի հայիլ և տեսանել
զբարձրութիւնս երկնից՝ 'ի բազմութենէ
անօրէնութեան իմոյ. ամենա։

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ
կապանաց երկաթեաց, և ոչ գոյ
ինձ հանգիստ. ամենա։

Բարկացուցի զսրտմտութիւն, և
չար առաջի քո արարի. կանգնեցի
պատկեր, և բազմացուցի զցա-
սումն անձին իմոյ. ամենակալ։

Եւ արդ տ̅ր՝ խոնարհեցուցանեմ
զծունկս սրտի իմոյ, և հայցեմ
'ի քաղցրութենէ քումմէ. ամենա։

Մեղայ տ̅ր մեղայ. և զանօրէնութիւնս
իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ։

digitised by A.R.A.R.@

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն, Թո՛ղ
ինձ տր, Թո՛ղ ինձ. և մի՛ կորու-
սաներ զիս ըստ անօրէնութե իմոյ.
ամէն:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ
տր, և մի՛ յիշեր զչարիս իմ. և մ՛
պարտաւորեր զիս ընդ իջեալսն
՚ի ներքոյ երկրի չարեօք. ամէն:

Զի դու տծ, տծ ապաշխարողաց
ես. և յիս ցո՛յց զբարերարութիդ
քոյ զի անարժան եմ. ամէն:

Կեցուսցես զիս ըստ բազում ողոր-
մութեան քում. և ես օրհնեցից
զքեզ զամենայն աւուրս կենաց
իմոց. ամէն:

Զքեզ տէր օրհնեն ամ զաւր-
Թունք երկնից, և քո են փառք
յաւիտեանս. ամէն:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն
սբյ: Այժմ և միշտ և յաւի՛՛:

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տր,
Թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումողորմ տր՝ ողորմեա՛ ինձ.
Ած քաւեա՛ զիս զմեղաւորս:
Արարիչ իմ և յոյս տծ, գթա՛
յիս ՚ի մեղուցեալ ծառայս, և ո-
ղորմեա՛ ինձ բազմամեղիս:
Ամենօրհնեալ սրբուհի և միշտ

digitised by A.R.A.R.@

կոյս ա՟ծածին մարիամ, բարեխօ-
սեալ առ Տ՟ր վ՟ն իմ մեղաւորիս :

Ամենայն ս՟րբք Տ՟յ բարեխօսեսցէք
առ Հայր յերկինս վասն մեր մե-
ղաւորացս :

Ք՟ն որդի Տ՟յ անոխակալ, ընկալ
զաղաչանս մեր . զի 'ի քեզ են ա-
պաւինեալ անձինք մեր :

Յաղթօղ զօրութ՟բ ն՟բ և կենդա-
նարար և պատուական խաչիւ քո
Տ՟ր, պահպանեա զմեզ :

Առաքեա Տ՟ր զհրեշտակ խաղա-
ղութ՟ե քո, որ եկեալ պահեսցէ
զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գի-
շերի :

Եւ մարդասիրութ՟բդ քո յիշեա
զմեզ Տ՟ր, յիշեա զմեզ . յորժամ
գաս արքայութ՟բ քով, և ողոր-
մեա մեզ :

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

3n

digitised by A.R.A.R.@

Ա
digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@